


743,5
Կ-70

Գ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. Գ. ԳԱԼՈՎՅԱՆ
Խ. Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԱՏ

ԸՄԲԻԱՄԱՐՏ



Վ.Բ.ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հ.Գ.ԳԱԼՈՅՅԱՆ,
Խ.Թ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՉՈՍ ԸՐՁԱՍՄԱՐՏ

Երևան
Հնդինակային հրատարակություն
2008

7A 3,5 (07)
ՀՏ 796.81 (07)
ԳՄԴ 75/715 գ 7
Ա. 706

Ա. 706 Ազատ ըմբշամարտ /Վ.Բ. Առաքնյան,
Հ.Գ. Գալստյան, Խ.Թ. Հարությունյան.- Եր.: Հնդի-
նակային հրատարակություն, 2008.- 315 էջ

*Տպագրման է երաշխավորել ֆիզիկական կուլտուրայի
հայկական պետական ինստիտուտի գիտական խորհուրդը*

ԳՐԱԽՈՍՏԵՐ՝

Բ.Զ. Սաղյան - մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ֆ.Գ. Ղազարյան - մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր


Մայրենի լեզվով առաջին ուսումնական ձևոնարկն է, որը նախատեսված է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ըմբշամարտով մասնագիտացող ուսանողների, ինչպես նաև մանկավարժական բուհերի ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետներում սովորողների և ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցներում մարզագործների համար: Այն կարող է ծառայել որպես մեթոդական ուղղուցույց մարզիչ-մանկավարժների համար: Զերնարկում ընդգրկված են ազատ ըմբշամարտի ծագման, պատմական գարգացման, տեսնիկատակտիկական կատարելագործման, տեսական և մեթոդական բազմաթիվ հարցեր:

ԳՄԴ 75. 717.5 գ7

ISBN 978-9939-53-149-6

© Վ.Բ. Առաքնյան, Հ.Գ. Գալստյան,
Խ.Թ. Հարությունյան, 2008 թ

(5717) 12591



ԳԼՈՒԽ 1. ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՊՈՏՄԱՆ ԱԿՆԱՐԿ

Ըմբշամարտը մարդկության կողմից ամենասիրված և հնագույն մարզաձևերից մեկն է: Ըմբշամարտի պատմությունը սկսվում է անհիշենի ժամանակներից: Նախնադարյան համայնական հասարակարգից սկսած մարդը ստիպված պայքարի մեջ է մտնել իր բնակավայրի, որսի, կյանքը պահպանելու համար և այլն: Այդ պայքարի ընթացքում էլ ձևավորել են ըմբշամարտի տարրերը և ըմբիշի տակտիկան մտահաղացումները: Մարդը օգտագործել է մենամարտի այնպիսի ձևեր, որոնք հնարավորություն են ընձեռնել ավելի քիչ ուժ գործադրվելով և ովակի դիմելով հասնել առավելագույն արդյունքի: Հնաց այդ մտահաղացումների միջոցով էլ ձևավորվել են ըմբշամարտի հնարքները, որոնք մեզ են հասնել սերնդեսնրունդ փոխանցվելով: Ենթավառ մարդկանց տոհմային, ցեղային և այլ առանձնահատկություններից տարրեր ազգերի և ժողովորդների մոտ հետզհետն ձևավորվել են ազգային ըմբշամարտի ձևերը: Ըազմաթիվ ժողովորդների ճակատագրեր հաճախ կախված են նոր մեծային պատերազմներից, որոնց ելքը հաճախ վճռվել է գոտնմարտի մասնակիցների միջոցով:

Ըմբշամարտը աստիճանաբար մտնել է մարդկանց առօրյա կենցաղի մեջ և զանգվածային հավաքույթների՝ հարսանիքների, խնջույքների և տոնախմբությունների ժամանակ նրիտասարդները գոտնմարտի միջոցով ցուցադրել են իրենց ուժը, ճարպկությունը և համարձակությունը: Հնտաքրքիր է, որ գոտնմարտները ծառայել են նաև որպես միջոց ուզմական ավարը բաժանելու համար: Օրինակ, Հռմերոսը իր հանրահայտ «Ֆլիական»-ում այսպես է նկարագրում Ողիսևսի և Այաքսի գոտնմարտը.

«... Կանգնեց իսկույն մեծ Այսաը Թելեմոնյան,
Ելալ նաև Ողիսնար ամենազետ ու խորամանկ,
Եւ երկուսն էլ, գոտուորված, անցան դեպի մոցաբենմ:
Միմյանց քռնած ու գրկախառըն, հաղթ ձեռքերով
փաթաթվեցին,
Ինչպես բարձր տան կտորի գերանակապ ծագելն ամուր,
Որը իբրև հողմարգելակ, հյուսն է կերտում ճարտարակի:
Բազուկների մեջ կորովի ճռնչացին մնջքերն իրենց,
Քաշքվեցին այս ու այն կողմ, քրտինքն հոսնց գետի նման,
Նրանց ուսին ու կողերին գոյացան շատ կապտած տներ,
Արյունալի կարմիր գծեր: Կռվում էին այդպես հուժկու,
Ոգերված նոռտանին ձնոք բերելու հաղթանակով.
Ոչ Ողիսն էր հաջողում գետին զարկել մեծն Այսաին
Ոչ Այսան էր կարողանում հաղթել ուժը Ողիսնի»:

Ըմբշամարտի լայն համաժողովրդականության մասին են վկայում մեզ հասած պատմական հուշարձանները: Ըմբիշների ամենահին պատկերները պատկանում են մ.թ.ա. VI-IV հազարամյակներին և հայտնաբերվել են Միջագետքում՝ Ժամանակակից Իրարի տարածքում: Նրանցից առաջինը համարվում է բարենոյան «Գիլգամեշ» էպոսի նկարազարդումը (նկ. 1): Նկարում պատկերված է Գիլգամեշը՝ առյուծի հետ մենամարտելիս, հնարքը հիշեցնում է ժամանակակից «ջրաղաց» հնարքը: Նկար 2-ում պատկերված է բրոնզն զարդաքանդակ, որտեղ ըմբիշները բռնել են խաչաձև բռնվածք: Այս բրոնզաձոյլ արձանը պատրաստվել է մ.թ.ա. 2800 թվականին և ցուցադրվում է Բարդարի թանգարանում:

Շուրջ 4000 տարվա պատմություն ունեն Եգիպտոսի Բեն Հասան տեղանքում հայտնաբերված փարավոնների դամբարանները, որոնց պատերը զարդարված են ըմբշամարտի գոտնամարտների պատկերներով (նկ. 3):




Նկ. 1 Գիլգամեշի մենամարտը առյուծի հետ
(Բարենոյ, մ.թ.ա. 6000-4000 թթ.)



Նկ. 2 Գոտնամարտող ըմբիշների բրոնզե քանդակ
(Միջագետք, մ.թ.ա. 2800 թ.)

Ներկայացված են 316 նկարներ, որոնք արտացոլում են ըմբշամարտի հնարքների տեխնիկան: Ազատ ըմբշամարտը ներկայացված է 214 նկարներում, որից 187-ում ըմբիշները կանգնած դրությունում են:



Նկ. 3 Բնն հաստի զարդանկարներ

Նկարները բավականաշափ տեսանելի ձևով ցուցադրում են ըմբշամարտի սկիզբը, հնարքների կատարման ընթացքում ըմբիշի կնյցվածքները և գոտեմարտի ավարտը:

Վերլուծելով այդ պատկերները, կարելի է նզրակացնել, որ նրանք գոտեմարտն են՝ կանգնած և ծնկած դրություններից, կիրառն են ցավեցնող հնարքներ և հարվածներ, իսկ գոտեմարտի նպատակը նդել է մրցակցի մեջքը գնտնին հպնլը:

Մի շարք հնարքներ պատկերված են կինոգրամայի տեսքով՝ առանձին նկարներ, ասեն հաջորդաբար դասավորված կադրներ են: Այդ նկարներից կարելի է ներառնել, որ դրանց հեղինակը ըմբշամարտի տեխնիկան պատկերնել է ոչ թե հիշողությամբ, այլ ինչ-որ աղբյուրի օգնությամբ, որը այդ պատկերները նկարվել են նախօրոք: Դա հիմք է տալիս ներառնելու, որ նկարիչը դեկավարվել է որոշակի դասակարգումով: Ունեցած տվյալները համոզիչ կերպով խոսում են այն մասին, որ Հին Եգիպտոսում ըմբշամարտը բավական բարձր գարգացում է ունեցել:

Եգիպտական բուրգերից զատ, հին հունական և հռոմեական մշակույթի հուշարձաններում նոյնպես հայտնաբերվել են բազմաթիվ քանդակներ ու նկարներ, որոնք պատկերում են գոտեմարտի տարրեր տեսարաններ:



Նկ. 4 Միջոն Կրոտոնացու մենամարտը առյուծի հետ

Անտիկ օլիմպիական խաղերի ծրագրում՝ մ.թ.ա. 708 թ. ըմբշամարտը ընդգրկվել է պենտատոլոն մարզաձևում որպես նզրակակիշ մրցաձև (Վազք, սկավառակի և նիզակի նետում, հնուցատկ և ըմբշամարտ): Հետագայում ըմբշամարտը դարձավ օլիմպիական առանձին մարզաձև:


Հին Հունաստանում բացի օլիմպիական խաղերից անցկացվում էին նաև այլ ավանդական խաղեր. Իսրամիական, Համարթենական, Պյութիական և Նեմիյական:

Այն մարզիկը, որը հայթում էր նշված բոլոր խաղերում ստանում էր «պնդիողնիկ» պատվավոր կոչումը:

Պատմությունից մեզ է հասնել անվանի ըմբիշ Միլոն Կրոտոնացու անունը (նկ. 4), որը համարվում է նշված խաղնիքի վնասկի հաղթող: Համեմատության համար ասենք, որ նման արդյունքի այսօր կարող են հասնել միայն թենիշստանները, ներև վեց անգամ անընդմեջ հաղթեն «Անծ սաղավարտի» բոլոր մրցաշարերում, ինչը շատ անհավանական է:



Նկ. 5 Դրվագներ ըմբիշների գոտեմարտերից (Խոտայիա, 1410թ.)



Նկ. 6
Միլոնցիոն
Ըմբիշներ
(Փարիզ, Լուկը)

Նկ. 7 Ա. Շյուրեր,
Ըմբշամարտի դրվագներ
(Գերմանիա, 1512 թ.)

Ցավոր հարյուրամյակներ գոյատևած այդ գնդեցիկ օլիմպիական մրցումները մ.թ. 394 թ. հռոմեական կայսր

Թնդողուի հոչակագրով արգելվեցին՝ դրանք դիտարկնելով որպես հակաքրիստոնեական, հեթանոսական ծեսեր:

Հին Հռոմը հունական մշակույթի հետ միասին յուրացրեց նաև ֆիզիկական դաստիարակության ավանդույթները: Հռոմում ստեղծվեց մշտական գործող պրոֆեսիոնալ բանակ, որը զենքի տիրապետությունից բացի զինվորները ձեռք էին բերում վազքի, ձողացատկի, մենամարտերի, լողի հմտություններ: Ավելի ուշ առաջ նկան գլադիատորական մարտերը, որոնց ժամանակ կիրառվում էին նաև ըմբշամարտի հնարքներ: Գլադիատորների ֆիզիկական պատրաստության հիմնական միջոցներից մեկը համարվում էր ըմբշամարտը:

Ըմբշամարտը մեծ ծաղկում էր ապրում նաև միջնադարյան Եվրոպայում: Այդ մասին են վկայում այդ ժամանակաշրջանի գրական կոթողները և նկարագրությունները (նկ. 5, 6, 7):

Ըմբշամարտի մասին առաջին գիրքն էլ աշխարհին նվիրել է միջնադարյան Եվրոպան՝ «Ըմբշամարտի արվեստը» (Ֆարիան Ֆոն Առներսվալդ, 1539 թ.):

1.1. ԸՄԲՇԱՄԱՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ ժողովրդի դարավոր մշակույթի մեջ առանձնակի տեղ են գրավում ֆիզիկական կուլտուրան և ռազմական արվեստը: Դրանք մեր ժողովրդի ստեղծած դարավոր մշակույթի ամենահին, կարևոր ու մասայականություն վայելող բնագավառներից են, որոնց արմատները սկիզբ են առնում դարերի խորքից և անցնելով բարելավման ու կատարելագործման երկար ուղի փոխանցվելով սերնդներունդ հասնել են մինչև մեր օրերը:

Կան բազմաթիվ վկայություններ, որ հայ ժողովուրդը կնրտել ու մշակել է ռազմաֆիզիկական վարժությունների բազմաբանակ ձևեր և տարրերակներ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրավել ռազմասպորտային մենամարտերը:

Դրանք հանդիսացնել են ոչ միայն նրիտասարդության ֆիզիկական կոփվածության, բարոյակամային հատկանիշների դաստիարակման, այլև՝ որպես խաղաղ մրցակցության, զվարճության և հաճնի ժամանցի միջոց:

Հայ ժողովուրդը հնագոյն ժամանակներից սկսած միշտ ունեցել է անվանի մենամարտիկներ, որոնք իրենց փառավոր հաղթանակներով քարձր են պահել նրա մարզական պատիվը:

Անգեն մենամարտերը՝ մասնավորապես ըմբշամարտը հայ ժողովրդի սիրած մարզաձևներից է, և պատահական չե, որ հայ գրականության մեջ, այդ թվում՝ հերիաթեներում և վիպերգում մեծ տեղ է հատկացվում ըմբշամարտին: Այսպես, ինչպես «Սասնա Ծոնք»-ում, այնպես էլ «Ավշու տղա» և «Զանիոլադ» հերիաթեներում աղջիկներն իրենց ամուսին են ընտրում գոտնմարտում հաղթած տղային:

Հայ դյուցազուների գոտնմարտերի նկարագրությունը մեծ տեղ է գտնել նաև մեր դյուցազներությունում: Դրա վառ օրինակն է Սանասարի գոտնմարտերը օտար նրկրի թագավորի 60 ըմբիշների հետ կամ Բաղդասարի հաղթանակը Պղնձն քաղաքի թագավորի պալատական ըմբիշների դեմ:

Պատմական աղբյուրները վկայում են, որ բազմաթիվ հնագոյն ժողովուրդների նման, հայերը նույնպես իրենց առօրյա սովորությունների մեջ մեծ տեղ են հատկացրել մենամարտերին, այդ թվում նաև ըմբշամարտի մրցումների կազմակերպմանը:

Հայաստանում մենամարտի մրցումները աննպատակ չեն եղել: Դրանց կազմակերպման և անցկացման հիմնական նպատակը եղել է ռազմական գործին նախապատրաստվելը, նրիտասարդների ֆիզիկական դաստիարակությունը և այլն:

Մրցությունները հիմնականում կազմակերպվել են տոնախըմբությունների, ուխտագնացությունների, հարսանիքների ժամանակ:

Կան տնդեկություններ, որ հայերը ըմբշամարտի մրցությունների հաղթողներին պարզեւարել են զանազան պարզեներով անորթներով, գավաթներով, նղյուրներով, ինչպես նաև պակներով: Ավելի ուշ, 19-րդ դարի վերջներին և 20-րդ դարի սկզբներին հիշատակվում են այլ կարգի պարզեներ: Այսպես օրինակ, Նոր Նախիջևանում հաղթողին գոմշի թարմ գլուխ են նվիրել, իսկ Վանի շրջանում ուկերրամ:

Հայտնի է, որ տարբեր ժամանակաշրջաններում հայ կինը, անհրաժեշտության դեպքում, մասնակցել է պատերազմական գործողությունների: Այս հանգամանքը ևս իր արտացոլումն է գտնել հայ գրականության մեջ: Մասնավորապես, հայկական պատմավեպում նկարագրվում է, որ և տղամարդ, և կին գրադիւն են զինավարժություններով, հմուտ են եղել «փակելանական» մրցախաղերի մեջ (Մ.Աքենյան, Կ.Մելիք-Օհանջանյան):

Հայ իրականության մեջ կինը կնոց դեմ մենամարտելու ոչ մի դեպք չի արձանագրվել: Մինչդեռ բազմաթիվ տնդեկություններ կան կնոց և տղամարդու միջև տեղի ունեցած մենամարտերի մասին:

Հայ ժողովրդի կենցաղում պահպանված այս երևոյթը հիմնականում առնչվում է ամուսնական խնդիրների հետ: Ակադեմիկոս Մ.Աքենյանը նշում է. «Լսությունի ամուսնությունը կատարելու հետ որից կհաղթվեր ինքը մենամարտի մեջ»: Իսկ վեճացողի պարտության դեպքում «ամուսնությունը գլուխ չէր գալիս»:

Պատմական մի շարք աղբյուրներ վկայում են այն մասին, որ հայ կինը գոտնմարտել է օտարազգի ըմբիշների դեմ և հաղթող ճանաչվել: Օրինակ, մատնադարանում պահպանվող մի ծննդրում նկարագրվում է, թե ինչպես Սիս քաղաքում, հայերի հմուտ զրավար Լիպարիտի քոյրը գոտնմարտի ժամանակ գնտնում է խսմանելացի ըմբիշին: Մեկ այլ ձեռագրում պատմվում

է այն մասին, որ հայ կինը հաղթել է Ազգայտական սուլթանի պալատական ըմբիշներին:

1.2. ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԸՄԲԻՇՆԵՐԸ

Հայաստանցի անվանի ըմբիշների թագավորությունը անշուշտ անհրաժեշտ է սկսն հայոց թագավոր Տրդատ 3-րդ Արշակունուց, որը 265 թ. 281-րդ օլիմպիական խաղներում հաղթող է դարձել ըմբշամարտից: Ազգայանգեղոսը նշում է, որ Գորաց թագավորը Հռոմի դեմ պատերազմնիս, մարդկային մեծ զոհերից խուսափելու համար Հռոմի կայսր Դիոկղետիանոսին առաջարկում է երկուսով գոտնմարտել, որտեղ պարտվողը պնտք է կամավոր հնազանդվի հաղթողին: Գոտնմարտի օրը կոմս Լուկիանոսը՝ ծանոթ լինելով իր մոտ ծառայող Տրդատի ահոնի ուժին, Հռոմի կայսերը առաջարկում է իր փոխարեն ասպարեզ հանել կայսեր հագուստով ծպտված Տրդատին: Տրդատի հաղթանակից հետո կայսր Դիոկղետիանոսը մեծ պարգևների հետ մեջտեղ նրան է հանձնում նաև հայոց գահը:

Սաղուն Արծրունի: Մադաքիա արեղան նկարագրելով թաթարական արշավանքը դնափ Հայաստան՝ տնդեկություններ է հարորդում նաև Սաղուն Արծրունու մասին:

Հուլավու խանը Անդրկովկասում նդած ժամանակ, մի հայտնի թաթար ըմբիշի միջոցով Մանգու խանից ստանում է նամակ, որտեղ ասվում էր. «Մի ըմբիշ նմ ուղարկում քեզ մոտ իմ նդրայր Հուլավու խան, եթե քեզ մոտ կցտնվի մի այնպիսի ուժնագույն մարդ, որը իմ ըմբիշին հաղթի, նույնպես տուր նվերներ և ուղարկիր ինձ մոտ որևէ մարդու ուղեկցությամբ»:

Հուլավու խանը կանչում է մեծամեծներին և հարցնում. «զիտեք մարդ թաթար կամ հայ, վրացի՝ որ զդա ձգն»: Հայ և վրացի իշխանները հայտնում են Սաղուն Արծրունու անունը:

Պատմիչի վկայությամբ գոտնմարտի կազմակերպման և անցկացման ողջ արարողությունը տևում է 3 ժամ և ավարտվում է: Սադունի փառավոր հաղթանակով: Հայ ըմբիշը գենեցիկ հնարքով իր մրցակցին գցում է հենց Հուլավու խանի առաջ:

Հիացած խանը որպես պարզ նրան մինչև ինը հանցանք գործելու ներում է շնորհում:

Հակոբ Զուղայնցի: XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ անվանի ըմբիշներից է Հակոբ Զուղայնցին (ծնված մոտավորապես 1675-80 թ.թ., մահացած 1722 թ.):

Ըստ մեզ հասած տվյալների, Պարսկաստանի պալատական ըմբիշներից ամենաուժներ դիմում է շահին և խնդրում, որ շահը կամ հայերից մի ուժեղ ըմբիշ գտնի իր հետ գոտնմարտելու համար, կամ տա այն ամենը ինչ ինքը կպահանջի: Շահը պատվիրակություն է ուղարկում Զուղա, որ այնտեղից պարսիկ ըմբիշին արժանի ըմբիշ գտնեն:

Զուղայի ողջ ժողովուրդը միաձայն որոշում է շահի մոտ ուղարկել ըմբիշ Հակոբին: Գոտնմարտը, որը տեղի է ունենում Մելյան-շահի հրապարակում ավարտվում է Հակոբի հաղթանակով: Շահը ականատես լինելով այդ փայլուն հաղթանակին նրան հրավիրում է արքունիք և ստիպում փոխել կրոնն ու անունը և դառնալ պալատական ըմբիշ: Շահը Հակոբին տնվանում է «Փնիլիվան Ղահիմ», բայց հայերը նրան անվանում են «Փնիլիվան Հակոբ»:

Ցատիկ: Զավակացի ըմբիշների մեջ իր ահոնի ուժով և բազմաթիվ հաղթանակներով աչքի էր ընկնում Հարություն Մելյունյանը, նույն ինքը՝ Ցատիկը (ծնված մոտավորապես 1812-13 թ.թ. Էրզրումի Թշանջ գյուղում, մահացած 1892 թ. Ալսալքարի շրջանի Վաչյան գյուղում):

Ըստ մեզ հասած տնդեկությունների Ցատիկը հաղթել է իր ժամանակի ուժնագույն թուրք ըմբիշ Մահմեդ Ալի-Բենկին, շամ-

շաղինցի Շելոյին, սակայն այդ գոտնմարտնքի մանրամասնությունները մեզ հայտնի չեն:

Թիֆլիսում անցկացված ըմբշամարտի մրցումներից մեկում Յատիկը փայլուն հաղթանակ է տարել անպարտելի ըմբիշի համարում ունեցող մի պարսիկ ըմբիշի նկատմամբ, որի համար, որպես պարզ ստացել է մեծ գումար:

Պատմում են, որ մի անգամ թուրք նշանափոր մի ըմբիշ, Յատիկի հետ գոտնմարտնլու համար գալիս է Վաչան և արտում պշխատող մի զյուղացուց հարցնում Յատիկի տան տեղը: Գյուղացին, որ հենց ինքը Յատիկն էր, կռահենլով դիմացինի նպատակը և ով լինելը մի ձեռքով բարձրացնում է արորը և ցույց տալիս իր տան տեղը: Թուրք ըմբիշը անմիջապես գլխի է ընկնում, որ իր առջև կանգնած է Յատիկը, մոտենում է և ձեռքով բարեւում նրան: Վերջինս այնպիսի ուժով է սնդմում մրցակցի ձեռքը, որ թուրք ըմբիշը առանց գոտնմարտնլու իրեն պարտված է համարում:

Մի ուրիշ անգամ, դարձյալ մի թուրք ըմբիշ գալիս է Վաչան Յատիկի հետ գոտնմարտնլու: Քանի որ ուշ է լինում որոշում են գոտնմարտել առավոտյան: Թուրք ըմբիշը հյուրընկալվում է Յատիկներ տանը: Գիշերը, երբ թուրք ըմբիշը քնած է լինում, Յատիկը նրա տրեխները դնում է հացահատիկով լի ամբարի ուրի տակ: Երբ առավոտյան թուրք ըմբիշը փորձում է ամբարի ուրի տակից հանել տրեխները և ուժը չի պատում, առանց գոտնմարտի իրեն պարտված է համարում:

Սիմոն Փեհլիկան: Սիմոնը ծնվել է 1856 թ.: Նա դեռ պատանի հասակից աչքի է ընկնում իր ուժով, թիկներ ու բարձր հասակով, որի համար արժանանում է սեբաստացի ըմբիշներ՝ Արթին Փեհլիկանի և Մրտոյի ուշադրությանը, որոնք ել դառնում են նրա մարզիչները: Սիմոն Փեհլիկանի մասին ժողովուրդը հյուսել է բազում գրույցներ ու պատմություններ, իսկ Օ.Չաթերյանի ու Պ.Սինասյանի «Սիմոն Փեհլիկան» վեպի համար հիմք է

հանդիսացնել Սիմոնի կյանքի ողջ պատմությունը:

Սիմոնը մեծ փառքի է արժանանում օտարազգի ըմբիշների դեմ տարած հաղթանակներից հետո: Պետք է հիշատակել նրա հաղթանակը անպարտելի ըմբիշ քուրդ Հասոյի դեմ: Հասոյի պարտությունը Սիմոնի դեմ է գրգռում մյուս քուրդ ըմբիշներին, որոնք ձգտում են ինչ գնով էլ լինի հաղթել նրան: Ինչպես նշում են գրքի հեղինակները Սիմոնի հաջորդ «զոհը» քուրդ ըմբիշ Ալոն էր: Գոտնմարտի ժամանակ Սիմոնը հանկարծակի գրկում է մրցակցի իրանը, բարձրացնում է վեր և նետում գորգի վրա:

Այսուհետև նա բնակություն է հաստատում Կոստանդնուպոլսում: Այստեղ էլ տեղի է ունենում նրա հանրահայտ գոտնմարտը Եվրոպայի չենացին հոյն ըմբիշ Ըանանու հետ: Այդ դժվարին գոտնմարտում ի վերջո հաղթանակ է տանում Սիմոն Փեհլիկանը և էլ ավելի հոչակվում:

1.3. ԱԶԱՏ ԸՄԲԵԱՄԱՐՏ

Ազատ ըմբշամարտի հայրենիքը համարվում է Անգլիան: Շարժումների ազատությունը ազատ ըմբշամարտում, այն դարձրել է դիտարժան և հետաքրքիր: Ըմբշամարտի այս մարզաձևը իր մեջ ներառել է ըմբշամարտի ազգային ձևերի լավագույն հնարքները: Դեռևս XVIII դարում անգլիական ազգային ըմբշամարտում թույլատրվում էր ոտքերով գործողություններ և գոտկատնից ներքև բռնվածքներ:

Ականած XIX դարից Եվրոպայում բուռն զարգացում ապրեց պրոֆեսիոնալ ըմբշամարտը: Պրոֆեսիոնալ սպորտը տարածվեց նաև Ամերիկայում: Ըմբշամարտի գոյություն ունեցող տարրերակներից՝ անգլիական կամ ազատ ըմբշամարտը առավել մեծ մասսայականություն ձնոր բերեց Ամերիկայում:

Հյուսիսային Ամերիկայում նախ սկսնակն կազմակերպվել երիտասարդական մարզական խմբեր, որոնք մեծ նշանա-

կուրյուն ունեցան ըմշամարտի զարգացման համար, իսկ ըմբշամարտին սկսնցին դիտել ոչ միայն որպես դրամ վաստակելու միջոց, այլ՝ հետաքրքիր և օգտակար մարզաձև:

Ազատ ըմբշամարտը ստացավ երկու ուղղություն՝ այրովնայի և սիրողական: Ուսանողության շրջանում այն դարձավ գրավիչ մարզաձև, որը մեծ դեր էր խաղում մարզիկի մարմնի ներդաշնակ զարգացման գործում, իսկ պրոֆեսիոնալների մոտ՝ վերածվեց դրամաշորթության և առողջության համար վտանգավոր մի մարզաձևի, որտեղ թույլատրվում էին հարվածներ, խնդրող և ցավանցող հնարքներ:

Ազատ ըմբշամարտի հետագա զարգացման գործում վճռական դեր խաղաց նրա ընդգրկումը ժամանակակից օլիմպիական խաղերի ծրագրում:

Հանրահայտ է, որ իին հունական օլիմպիական խաղերի արգելումից մենակ ու կես հազարամյակ անց օլիմպիական խաղերը վերականգնվեցին ֆրանսիացի բարոն Պիեռ դե Կուրենտենի ջանքներով:

Ժամանակակից առաջին օլիմպիական խաղերի բացման արարողությունը տեղի է ունեցել 1896 թ. ապրիլի 5-ին Հունաստանի մայրաքաղաք Աթենքում: Այդ խաղերի ծրագրում ընդգրկված էր «Փրանսիական» (դասական, ներկայում հունահոռմնական) ըմբշամարտը:

Այդ խաղերում հայթանակ տոնեց գերմանացի ըմբիշ Կարլ Շումանը: Հնտաքրքիր է, որ ըմբիշները մրցում էին առանց քաշային կարգերի բաժանման և սահմանափակման, իսկ ժամանակակից I օլիմպիական խաղերի ըմբշամարտի մրցումների չնմալիոն հոչակված Կարլ Շումանը իր բոլոր մրցակիցներից թերթ էր մոտ 16 կիլոգրամով:

1904 թ. ԱՄՆ-ի Մենտ-Լյուիս քաղաքում անցկացված III օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկեցին անգլիական ըմբշամարտի սիրողական տարբերակը, որը ԱՄՆ-ում մեծ

մասսայականություն էր վայելում: Միջազգային օլիմպիական կոմիտեն այս մարզաձևը անվանեց ազատ ըմբշամարտ: Եվրոպացիները ծանօթ չլինելով այս մարզաձևի կանոններին խուսափեցին մասնակցել խաղերին, որի հետևանքով բոլոր յոթ քաշային կարգերում հաղթողները դարձան ամերիկացիները: Բացառությամբ 1912 թ. V օլիմպիական խաղերի՝ ազատ ըմբշամարտը միշտ եղանակ է օլիմպիական խաղերի ծրագրում:

Խորհրդային Միությունը օլիմպիական խաղերին սկսել է մասնակցել 1952 թ. Հնևինկիի XV օլիմպիական խաղերից: Այս խաղերում ԽՍՀՄ ազատ ըմբշամարտի հավաքական թիմի կազմում օլիմպիական չնմալիոններ դարձան Դ. Յիմակուրիհենն և Ա. Մենկովիչին: Մեր հայրենակիցներ Ա. Յալտիրյանը և Գ. Սայադովը գրավեցին չորրորդ տեղը:

Ազատ ըմշամարտի Եվրոպայի առաջին առաջնությունը անցկացվել է 1928 թ. Փարիզում, իսկ աշխարհի առաջնությունը՝ 1951 թ. Հնևինկիում: Աշխարհի առաջնությունները նաև անցկացվում էին երկու տարին մեկ անգամ, իսկ 1961 թ. սկսնցին անցկացնել ամեն տարի, բացառությամբ այն տարիների, երբ անցկացվում են օլիմպիական խաղեր:

1.4. ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես՝ Էլ Հայաստանում ազատ ըմբշամարտը սկսնց զարգանալ 1945 թվականից, երբ առաջին անգամ անցկացվեց ԽՍՀՄ առաջնությունը: Այդ առաջնությանը 61 կը քաշային կարգում III տեղը գրավեց Երևանցի Արտաշեն Նազարյանը, որը 1946 թ. դարձավ Խորհրդային Միության չնմալիոն: Հենց նա էլ դարձավ մեր հանրապետությունում ազատ ըմբշամարտի առաջին մարզիչներից մեկը: 50-ական թվականներին հայաստանցի ըմբիշները մեծ համբավ ունեին ԽՍՀՄ-ում:

1952-1954 թվականներին ԽՍՀՄ առաջնություններում 67կգ քաշային կարգում III տեղը գրավեցին Բակուր Հասրաթյանը, Սերգեյ Մկրտչյանը և Սարգս Ավետյանը: Նորայր Մուշեղյանը 1958 թ. 62 կգ քաշային կարգում դարձավ Խորհրդային Միության չեմպիոն: Նույն թվականին Սոֆիայում նա դարձավ աշխարհի զավաթակիր, ընդ որում նորափակիչում ոչ որի ավարտն գոտնմարտը աշխարհուակ Մ.Դահստանլու հետ: Թուրք ըմբիշի կարինրայում դա միակ դեպքն էր, եթե նա բավարարվեց II մրցանակով:

Հայաստանի գյուղական վայրերում ընթամարտի զարգացման գործում մեծ դեր խաղացին Բ.Գրիգորյանը և Ա.Փիլիպոսյանը: 1968 թ. նրանց սանը՝ փարպեցի Ն.Ալբարյանը մասնակցելով Մեխիկոյի օլիմպիական խաղերին 52 կգ քաշային կարգում գրավեց IV տեղը:

1966-1970 թ.թ. ոռուսաստանցի մեր հայրենակից Յուրի Շահմուրադովը նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը և դարձավ Եվրոպյան չեմպիոն: Մուկվացի ըմբիչ Սանասար Հռիհանիսյանը երկու անգամ արժանացավ Եվրոպայի չեմպիոնի կոչմանը (1980, 1982), ապա՝ օլիմպիական խաղերի (1980) և աշխարհի չեմպիոնի կոչմանը (1981): Վանաձորի Ստեփան Սարգսյանը 1988 թ. նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը, ապա դարձավ օլիմպիական խաղերի II մրցանակակիր: Օլիմպիական խաղերի II (1996) և աշխարհի III մրցանակակիր (1995) դարձավ Եվրոպայի չեմպիոն (1994) Արմեն Մկրտչյանը: Արտաշատցի Արայիկ Գևորգյանը դարձավ աշխարհի նույնի չեմպիոն (1995, 1997, 1998), Եվրոպայի չեմպիոն (1997) և՝ հնգակի մրցանակակիր: Աշխարհի չեմպիոններ դարձան Վլադիմիր Մոդոյանը (1986, Ոռուսաստան) և Արտմ Մարգարյանը (2002, Հայաստան), իսկ Եվրոպայի չեմպիոններ՝ հայաստանցի Արշակ Սանդյանը, Գուրգեն Բաղդասարյանը, Գնել Մեջլումյանը, Անուշավան Սահակյանը և Մարտին Բերբերյանը:

Հայաստանցի ըմբիչների հաջողության գործում մեծ ավանդ ունեն նրանց մարզիչներ Ա.Նազարյանը, Ե.Մարտիրոսյանը, Բ.Հասրաթյանը, Յու.Բաբայանը, Շ.Զանյանը, Վ.Գննջյանը, Ռ.Կարապետյանը, Ռ.Գոլեցյանը, Վ.Ենոքյանը և ուրիշները:

Հայաստանցի և սփյուռքահայ ըմբիչների մարզական նվաճումները Եվրոպայի, աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բնրված են թիվ 1 առյուսակում:

Աղյուսակ I

Հայազգի ազատ ոճի ըմբիչների նվաճումները, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում

N	Ըմբիչները	Պետությունը	Գրաված տեղեր և տարեթվը								
			Եվրոպայի առաջնություն			Աշխարհի առաջնություն			Օլիմպիական խաղեր		
			I	II	III	I	II	III	I	II	III
1.	Նորայր Մոշոյսյան	Հայաստան	-	-	-	1958	-	1957	-	-	-
2.	Յուրի Տամարայնով	Ռուսաստան	1966 1967 1969	-	-	1970	-	-	-	-	-
3.	Պավիլ Մալյան	Հայաստան	-	1969 1970	-	-	-	-	-	-	-
4.	Արակի Մանեկյան	Հայաստան	1979	1980	-	-	-	-	-	-	-
5.	Սահմանը Հովհաննիսյան	Ռուսաստան	1980 1982	-	-	1981	-	-	1980	-	-
6.	Գորգեն Բաղդասարյան	Հայաստան	1980	-	1985	-	-	-	-	-	-
7.	Վլատիմիր Մոգիսյան	Ռուսաստան	-	1987	-	1986	-	1987	-	-	-
8.	Սովետական Մարգարյան	Հայաստան	1988	-	-	-	-	-	-	1988	-
9.	Գնել Մեջլումյան	Հայաստան	1989	-	-	-	-	1989	-	-	-
10.	Արայիկ Գևորգյան	Հայաստան	1997	1995 1994 1996 1998	1995 1997 1998	-	-	-	-	-	-
11.	Արմեն Մկրտչյան	Հայաստան	1994	1996	2001	-	-	1995	-	1996	-
12.	Անուշավան Սահման	Հայաստան	1994	-	-	-	-	-	-	-	-
13.	Արայիկ Բարյան	Հայաստան	-	1994	-	-	-	-	-	-	-
14.	Արտմ Մարգարյան	Հայաստան	-	-	-	2002	-	-	-	-	-
15.	Մարտին Բերբերյան	Հայաստան	2004	-	-	-	-	-	2005	-	-

1.5. ՄԻՋԱՋԱՅԻՆ ՄԻՌՈՂԱԿԱՆ ԸՄԲՉԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ (ՖԻԼԱ)

XIX դարի վերջնին և XX դարի սկզբներին ըմբշամարտը բուն կերպով սկսեց զարգանալ ամբողջ աշխարհում: Կազմակերպվեցին ըմբշամարտի բազմաթիվ ակումբներ և առանձին խմբակներ: Ըմբշամարտի մրցումները, բացառությամբ օլիմպիական խաղների, կազմակերպվում էին սիրողների և մեկնասնների ջանքերով: Գոյություն չունեին միասնական մրցականուններ: XX դարի սկզբներին անհրաժեշտություն էր առաջացել ստեղծել մի կազմակերպություն, որը կղեկավարեն և ուղղություն կտար ըմբշամարտի զարգացմանը: Այդ նպատակով 1912 թ. ստեղծվեց Միջազգային սիրողական ըմբշամարտի ֆենդերացիան՝ ՖԻԼԱ-ն, որը զբաղվում է ազատ և հունահռոմեական ըմբշամարտի զարգացման հարցերով:

ՖԻԼԱ-ի կազմի մեջ ներկայումս մտնում է ավելի քան 130 երկիր: ՖԻԼԱ-ի գլխավոր մարմինը հանդիսանում է կոնգրեսը, որը գումարվում է երկու տարին մեկ անգամ: Կոնգրեսների միջև ընկած ժամանակահատվածում ՖԻԼԱ-ի աշխատանքները դեկավարում են բյուրոն, որն իր նիստերը գումարում է տարին մեկ անգամ: ՖԻԼԱ-ն մեծ ուշադրություն է դարձնում ըմբշամարտի մրցականունների զարգացմանը, ձգտում է, որ գոտնմարտերը դառնան ավելի դիտարժան և գրավիչ:

ՖԻԼԱ-ի պաշտոնական լեզունները ֆրանսենը և անգլերենն են:

- 1. ՖԻԼԱ-ի նախագահներն են նդել՝
 1. Էյնար Ռայբերգը (Շվեդիա).
 2. Ալֆրեդ Բրյուլլը (Կունգարիա).
 3. Վիկտոր Սմեդսը (Ֆինլանդիա).
 4. Ռոժե Կուլոնը (Ֆրանսիա).
 5. Միլան Էրցենգանը (Հարավսլավիա).

6. Ուսաբայն Մարտինետին (Շվեդարիա):

Հայաստանի Հանրապետությունը ՖԻԼԱ-ին անդամակցում է 1993 թ-ից: Ի տարբերություն ՖԻԼԱ-ի Հայաստանում ազատ և հունահռոմեական ըմբշամարտի ֆենդերացիաները միավորված չեն և նրանցից յուրաքանչյուրն ուներ իր ինքնուրույն հանրապետական ֆենդերացիան: Ազատ ըմբշամարտի ֆենդերացիայի նախագահը Վահան Զատիկյանն էր:

Միայն 1997 թ. ֆենդերացիաները միավորվեցին և նախագահ ընտրվեց Եվրոպայի չեմպիոն, աշխարհի գավաթակիր, XXIV օլիմպիական խաղների II մրցանակակիր Ստեփան Սարգսյանը: 2003 թ. Ս. Սարգսյանը դարձավ ըմբշամարտի հանրապետական ֆենդերացիայի պատվագոր նախագահ, իսկ նախագահ ընտրվեց գործարար, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Սամվել Ալեքսանյանը:

ԳԼՈՒԽ 2.

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏ ԸՄԲԺԱՄԱՐՏՈՒՄ

Ըմբշամարտը՝ որպես ֆիզիկական վարժություն, ունի բազմադարյան պատմություն: Բնական է, որ նրա ծագումը և հնտագա զարգացումը սկսում է կապված նույն հասուլիք հասկացությունների, որոշակի գործողությունների, ըմբիշների տարրեր վիճակների բացահայտման հետ: Առանց այդպիսի հասկացությունների հնարավոր չէ այդ գործում առնչվող մարդկանց փոխհարաբերությունները:

Երկար ժամանակ ըմբշամարտը՝ որպես ֆիզիկական վարժություն կիրառվում էր մեկուսացված, իսկ նրա հիմնական հասկացություններն ունեին տարբեր ձևեր: Սակայն այդ հասկացությունների բովանդակությունը բավականաչափ ընդհանուր էր, քանի որ այն հիմնվում էր մեկ հիմքի՝ ըմբիշի գործողությունների վրա. «զցում», «տապալում», «ջրջում» և այլն, որոնք աշխարհի բոլոր ժողովորդների լնգուններով մոտավորապես նշանակում են մինույն գործողությունները:

Դրա հետ մեկտեղ ըմբշամարտի աշխարհագրական լայն տարածումը, նույնիսկ մի երկրի սահմաններում, անխուսափելի կնքով հանգեցնում էր կոնկրետ գործողությունների, ժողովրդական լնգվական արտահայտությունների, տեղական անվանումների, որոնք հասկանալի էին միայն մարդկանց նույն շրջանակներին:

Հասկացությունների և անվանումների ձևափորման տարերային գործընթացը անխուսափելի է խառնաշփոթության, որը դժվարացնում է մասնագետների շփումը:

հետևաբար և դառնում արգելապատճենշ նրանց գործունեության զարգացման ու կատարելագործման ճանապարհին:

Մարզական հասկացությունների կարգափորման անհրաժեշտությունը ըմբշամարտի տեխնիկայի դասակարգման, համակարգման և տերմինաբանության նախահիմքը հանդիսացավ:

Դասակարգման վերաբերյալ առաջին պաշտոնական փաստաթուղթը լույս է տեսել 1953 թ.¹ «Դասական և ազատ ըմբշամարտի դասակարգումը, համակարգումը և տերմինաբանությունը», որին 1959 թ. հաջորդնց դասակարգման առավել կատարյալ տարբերակ պարունակող մի այլ փաստաթուղթ՝ «Դասակարգումը, համակարգումը և տերմինաբանությունը դասական և ազատ ըմբշամարտում»:

1953 և 1959 թվականների դասակարգման համակարգերը ներկայացված են գծապատկերներ 1-ում և 2-ում:


2.1. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ, ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դասակարգման մեթոդները լայնորեն կիրառվում են գիտական հետազոտությունների մեջ: Հիմնավոր և ճիշտ կառուցված դասակարգումը արտացոլում է գիտելիքների տվյալ բնագավառի նվաճումները նրա ստեղծման պահին և ուղղություն է տալիս մասնագետ հետազոտողների ուսումնասիրություններին:

Դասակարգման հիմնական խնդիրը ուսումնասիրվող համակարգերի հնարավոր կառուցվածքն արտացոլող գծապատկերների ստեղծումն է:

Գծապատկեր 1

Ազատ ըմբշամարտի հնարքների դասակարգումը կանգնած դրույթունից



Դասակարգումը օբյեկտների, նրևույթների, առարկաների բաշխումն է առանձին խմբերի և դասերի, ըստ նրանց առավել էական հատկանիշների: «Դասակարգում» բառը գործածվում է նրկու նշանակությամբ. որպես առարկաների բաշխման գործընթաց և որպես այդպիսի բաշխման արդյունք՝ ներկայացված գծապատկերների տեսքով կամ բառային նկարագրությամբ:


Ըմբշամարտի մարզիչները իրենց ամենօրյա աշխատանքում մշտապես շփում են դասակարգման հետ: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում ստեղծել

մարզվողների միատարր խումբ՝ ըստ մարզվողների տարիքի, վարպետության աստիճանի: Ուսումնամարզական գործընթացում մարզիչները վարժությունների ընտրության, ըմբիշների զույգների ընտրման ժամանակ օգտվում են դասակարգման մեթոդներից:

Դասակարգումը հնարավորություն է տալիս տնηնկատվությունը օգտագործել այնպիս, որ այն համապատասխանի ուսումնական ծրագրերին:

Գծապատկեր 2

Ազատ ըմբշամարտի հնարքների դասակարգումը ծնկադիր և կանգնած դրույթուններից



Ըմբշամարտում դասակարգման լավ օրինակ է ըմբիշների բաշխումը քաշային կարգնի: Տվյալ դեպքում դասակարգման հիմնական նպատակը ըմբիշների բաշխումն է առանձին խմբների, որոնց ներսում նրանք կկարողանան մրցել միմյանց հետ: Այստեղ որպես գլխավոր չափանիշ ընտրվել է մարզիկի առանձնական քաշը: Ըմբիշներին կարելի է առանձին խմբների բաժանել որպես գլխավոր հատկանիշ վերցնելով ոչ թե քաշը, այլ՝ տարիքը, շարժողական ընդունակությունների ցուցանիշները կամ սպորտային պատրաստության աստիճանը: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծել մարզումների համար միատարր խմբներ, իսկ մրցակցության համար ավելի նպատակահարմար է ըստ քաշային կարգների դասակարգումը, քանի որ այն լիովին համապատասխանում է մրցակցական գործունության պահանջներին:

Դասակարգման տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հանրագումարի է քերում առարկայի մասին տեսական և գործնական գիտելիքների զարգացումը՝ միաժամանակ մատնանշելով այնտեղ նոր քաջթողությունները, օգնում է կազմակերպել հետազոտություններ և ստանալ նոր գիտելիքներ:

Դասակարգման արդյունքում առաջացած խմբների և դասերի միջև գոյություն ունեցող ներքին կապերը բացահայտվում են համակարգման միջոցով:

«Դասակարգում» և «համակարգում» հասկացությունները թեև հաճախ միասին են գործածում, սակայն հոմանիշներ չեն: Դրանք բազմաթիվ առարկաների ու երևույթների կարգափորման գործնաթացի նրկու տարբեր կողմերն են:

Համակարգումը գիտելիքների բնագավառ է, որը դիտարկում է դասակարգման Ազգունքները, մեթոդները և արդյունքները: Այն օբյեկտների կարգափորված բաշխման գործընթաց է, որն իրականացվում է ըստ որոշակի հատկանիշների նմանության կամ տարբերության: Ի տարբերություն դասակարգ-

ման, որի դեպքում դասակարգման առարկաները վերաբերվում են այս կամ այն ստորաբաժանմանը, համակարգման ժամանակ առարկաները հիմնականում համեմատվում են միմյանց հետ: Այն թույլ է տալիս բազմաթիվ իրարից անշատ օբյեկտները համախմբել և բնրել մեկ համախմբված համակարգի: Համակարգումը բացահայտում է տրված դասակարգման հնարավորությունները և թերությունները: Դասակարգման ենթակա օբյեկտների ընդհանուր քանակից համակարգումը հնարավորություն է տալիս առանձնացնել ենթախմբի առավել էական հատկանիշները, օգնում է զանազաններ հատկությունների ընդհանրությունները և տարբերությունները:

Համակարգման վերջնական արդյունքով կարելի է որոշել, թե արդյոք ճիշտ է կառուցված տվյալ դասակարգումը, որքանով է օրինաչափ այս կամ այն բաժանումը: Օրինակ, այս կամ այն հնարքը կարելի է դասել կանգնած կամ ծնկադիր դրությունով կատարվող հնարքների խմբին: Համակարգումը ուսումնասիրում է խմբների ներսում կատարվող փոփոխությունները, հատուտում օրգանական կապեր դասակարգված խմբների և օբյեկտների միջև, բացահայտում նոր խմբներ ձևավորելու կամ նոր խմբները միավորելու անհրաժեշտությունը: Այն մատնանշում է բնական սահմանների առկայությունը՝ ցույց տալով դասակարգման ուժները և թույլ կողմերը:

Դասակարգման և համակարգման խնդիրը է ության ճիշտ արտացոլումն է: Դասակարգման պատմությանը հայտնի են շատ օրինակներ, երբ դասակարգման պատկերները ստացվել են ոչ հարմար: Սակայն գլխավոր խնդիրը գծապատկերի հարմարությունը չէ, այլ՝ օգտակարությունը:

Հաջող կազմված դասակարգումը հիմք է հանդիսանում գիտականորեն հիմնավորված տեսրմինաբանության համար՝ այսինքն ճշգրիտ տեղեկություններ է հաղորդում դասակարգված

օբյեկտների էության մասին և ննթակա է նպատակառողջված կատարելագործման:

Նախ ստեղծվում է դասակարգումը, որի արդյունքում առաջ է գալիս որոշակի համակարգ, որի հիման վրա էլ ստեղծվում է տերմինաբանությունը:

Իրականում դասակարգումը և համակարգումը չեն կարող ստեղծվել առանց որոշակի հասկացությունների ճշտման (փոխադրում, գցում, կանգնած դրություն, ծնկադիր դրություն և այլն):

Տերմինաբանությունը գիտենիքների բնագավառ է՝ հասկացությունների, տերմինների ձևավորման օրինաչափությունների, հասկացությունների համակարգի դրսուրման սկզբունքների, դասակարգման մեջ նրանց գրանցման կանոնների ու սահմանների, ինչպես նաև հասկացությունների նշանակության մասին:

Տերմինաբանությունը, որ կառուցված է դասակարգման ու համակարգման հիման վրա, տեղմեկություններ է հաղորդում բարի իմաստի մասին: Դասակարգման էական փոփոխությունը, բնականաբար, հանգեցնում է տերմինաբանության փոփոխության:

Ըմբշամարտի տերմինաբանությունը բոլոր տերմինների ամբողջությունն է, որը կիրառվում է գիտամանկավարժական և ուսումնամարզական աշխատանքներում:

2.2. ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՖԻԱՆ

Ըմբշամարտում առավել մշակված և հիմնավորված է տեխնիկայի դասակարգումը: Ինչպես տեխնիկան, այնպես էլ նրա դասակարգումը քարացած չէ: Ըմբշամարտի՝ որպես մարզական, ուսումնական և գիտական գործնթացի զարգացման

ընթացքում, բնականաբար, տեղի են ունենում դասակարգման փոփոխություններ:

Ըմբշամարտի տեխնիկայի դասակարգման էվոլյուցիայի վերլուծությունը անհրաժեշտ է սկսել ին աշխարհի մշակույթի հուշարձաններից:

Սկսած, արդեն իսկ հիշատակված Միջագնտրի պետություններում, Եգիպտոսում, Հունաստանում և այլ պետություններում ըմբշամարտի գոյության, նրա հնտագա զարգացման և կատարելագործման հարցերից մինչև միջնադար և այնուհետ, ըմբշամարտը նեթարկվելով բազմապիսի փոփոխությունների, մեզ է հասել նրկու դասական մարզաձևերի տեսքով՝ հունականական և ազատ ոճի:

Գերմանացի հանրահայտ մանկավարժ, ֆիզիկական դաստիարակության տեսաբան Գութս-Մութսը (XVIII դ.) գոտնմարտերը բաժանում էր չորս տարատեսակի.

1. Թեթև մարտ, որի ընթացքում մրցակիցները միայն տեղաշարժվում են՝ միմյանց չհանելով հավասարակշռությունից:

2. Ոչ լիարժեն մարտ՝ որևէ բոնվածքով մրցակցին գնտնից պոկելը:

3. Լիարժեն մարտ՝ մրցակցին գնտնելու նպատակով հավասարակշռությունից դուրս բերելը:

4. Բարդ մարտ՝ բոլոր նախորդ ձևերի միավորում մեկ ընդհանուր գոտնմարտի մեջ:

Թեև այստեղ բացակայում են ըմբշամարտի կոնկրետ հնարքների նկարագրությունները, սակայն հեղինակը փաստորն սահմանում է ըմբշամարտի յուրատեսակ դասակարգում՝ հենվելով պայքարի բարդացման ընթացքի հաջորդականության վրա: Հարկ է նշել, որ մեթոդական առումով պայքարի նման բաժանումը նոյնիսկ ժամանակակից դիրքերից շատ գնահատելի է ինչպես մարզիկների նախնական պատրաստության, այնպես էլ պարագմունքների ժամանակ բարձրակարգ մարզիկների հնտ

առանձին ուսուցողական խնդիրների լուծման համար:

Եթե նման դասակարգումների մասին կարենի է որոշակի դատողություններ անել մշակույթի՝ մեր ժամանակները հասած հուշարձաններով, ապա ըմբշամարտի տերմինաբանության գոյության մասին մինչև XIXդ. կենարը ոչ մի փաստացի տվյալներ չկան: Տերմինաբանության զարգացումը, ըստ երևոյթին, կապված է XIX դարում ֆրանսիական պրոֆեսիոնալ ըմբշամարտի ծագման հետ: Այն ժամանակ երևան եկած մասնագիտական տերմինները (սուպլես, նելսոն, տուր դե բրա, բրա ուլն և այլն) արագործն տարածում գտան:

Ֆրանսիական տերմինաբանության ազդեցությունը նկատվում է 1930-1940 թթ. խորհրդային մասնագիտական գրականության մեջ: Նիկոլասի և Էքնրի (1929), Վ.Գոնչարովի ու Ն.Սորոկինի (1940) և այլ ձեռնարկներում ըմբշամարտի տեխնիկայի դասակարգման և տերմինաբանության բաժիններն իրենցից ներկայացնում են հետևյալ անվանումները. բնդրո, սուպլես, նելսոն և այլն: Այդ անվանումներից մի քանիսը աշխատանքային տերմինների ձևով կիրառվում են նաև ներկայումս:

Ազատ ըմբշամարտի խորհրդային մասնագետները գործնականում օգտվում էին 1959 թ. լույս տեսած «Դասակարգումը, համակարգումը և տերմինաբանությունը դասական և ազատ ըմբշամարտում» փաստաթղթից:

Նշված դասակարգումը ունենալով իր դրական կողմերը և թերությունները որոշակի ազդեցություն է ունեցնել ազատ ըմբշամարտի դասակարգման ու տերմինաբանության հետագա զարգացման և կատարելագործման վրա:

2.3. ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ըմբշամարտի տեխնիկայի առաջին դասակարգումը խորհրդային մասնագետները ստեղծեցին 1953 թվականին: Կա-

տարվածը նոր առաջադիմական մոտեցում էր տեխնիկայի դասակարգման բազմամակարդակ, բազմատիճան համակարգի ստեղծման ուղղությամբ:

Ասենք, երկրորդ մակարդակի համար («կանգնած» և «ծնկադիր» դրություններից հետո) ընտրվել էր այնպիսի դրույթ, որը պատասխանում էր այն հարցին, թե ինչ է տեղի ունենում գորգի վրա (փոխադրում, գցում), ապա փորձ էր արվում պատասխանել, թե մարմնի որ մասի վրայից է կատարվում հնարքը (մեջքի վրայից, կրծքի վրայից, ուսերի վրայից և այլն), այնուհետև տրվում էր հնարքի մանրամասները (բռնվածքներ, ուտբերով գործողություններ և այլն):

Սակայն ամբողջությամբ վերցրած այդ դասակարգումը զնիք չէր թերություններից: Հիմնական թերությունը այն էր, որ նրա գնահատենի կողմերը՝ բազմամակարդակությունը և միասնական հատկանիշի հիման վրա դասակարգման կառուցումը մինչև վերջ չէր իրագործվել:

Այսպես, տեխնիկայի դասակարգման մասին գծապատկերում ներկայացված համակցված բռնվածքները, առնչվում են ոչ թե ըմբշամարտի տեխնիկային, այլ՝ մարտավարությանը: «Ինչպես է կատարվում հնարքը» հարցին համապատասխանող դրույթը չէր ստացվել, քանի որ «ինչի վրայից» հարցը չի բացահայտում հնարքի կատարման նորանակը: Եվ, վերջապես, ձեռնրի, ուտբերի և իրանի միջոցով կատարվող գցումների բաժանումը, որը փոխառնված էր սամբռ ըմբշամարտի տեխնիկայի դասակարգումից, չէր ընդլայնում և հստակեցնում թվարկված հասկացությունները:

Երկրորդ պաշտոնական փաստաթղթում (1959 թ.) օգտագործվեց մինչ այդ կատարվածի լավագույն տարբերակը՝ բավականաչափ հստակորեն ցույց տալով հնարքի կատարման նորանակը (արտակորված, թերումով, պտուտանածև և այլն):

Այս դասակարգումն իր մեջ պարունակելով համապա-

տասխան խմբներ, հնարավորություն տվեց պարզաբանել հնարքի կատարման նղանակը: Սակայն այս դասակարգումը ևս զնո՞ծ չէր թերություններից: Առաջին հնրժին անհրաժեշտ է նշել, որ ազատ ըմբշամարտի դասակարգման գծապատկերում բացակայում էին ոտքերով կատարվող գործողությունները, որոնք որոշ հնարքների կատարման ժամանակ վճռական և առաջնային դեր են կատարում:

1959 թ. դասակարգումը իր ժամանակի համար բավականին լիարժեք էր և գործնական աշխատանքի համար թույլ տվեց ստեղծել ճշգրիտ և հարմար տերմինարկություն: Սակայն հնարքների լիարժեք անվանումների կազմավորման գործում նորից ծագեցին դժվարություններ, և արդյունքում պարզվեց, որ կան բավական թերություններ: Հարկ նղակ համակերպվել այն բանի հետ, որ հարձակվող ըմբիշի հիմնական գործողությունները բնութագրող տերմիններից (թերումով, արտակորված, ձգումով) բացի կան նաև տերմիններ (ոլորումով, ճկումով), որոնք բացահայտում են, թե ինչ է կատարվում հարձակման ննջարված ըմբիշի հետ:

Որոշ հնարքների անվանումների կազմավորման ժամանակ չէր պահպանվել նկարագրման սկզբունքը. օրինակ, «մեջքի վրայից», «ուսերի վրայից» կատարվող գցումները չէին պարզաբանում հնարքի կատարման նղանակը, հարձակվող ըմբիշի հիմնական գործողությունը:

Չնայած դասակարգումների մեջ տեղ գտած թերություններին, նրանց ստեղծման փորձի ընդհանրացումը մասնագետներին թույլ տվեց հասնել որոշակի հաջողությունների:

2.4. ԱԶԱՏ ԸՄԲԱՍՄԱՐՏԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դետր է ննջարել, որ հատուկ տերմինաբանության պահանջ ծագեց այն ժամանակ, երբ ըմբշամարտը ձևավորվեց

որպես մարզաձև կամ ֆիզիկական վարժության տեսակ: Տերմինները կուտակվում էին աստիճանաբար: Ըստ նրենութիւն, գոյություն չուներ տերմինների ձևավորման որևէ կանոն և դրա համար էլ չկար համապատասխանություն ըմբիշների շարժումների էռության և դրանք արտահայտող հասկացությունների միջև: Թեև, պետք է նշել, որ որոշ տերմիններ (բռնվածք, գցում և այլն՝ ունենալով ժողովրդական խոր արմատներ բավական հաջողված էին:

Թիշ թե շատ հստակ արտահայտված տերմինաբանությունը նրեան նկավ XIX դարում: Այն իրենից ննջայացնում էր ըմբշամարտի տարրենը հնարքների բազմազան անվանումների ցանկ՝ ստեղծված պատահական կերպով: Հնարքների իրանախական անվանումներին (տուր դե բրա, տուր դե տեստ, բրա ուլե և այլն) համահավասար Ռուսաստանում գործածվում էին «առաջնային գոտի», «հետին գոտի» ուսական անվանումները: Բացի այդ, լայնորեն գործածվում էին համակցված անվանումներ՝ կիսով չափ կազմված օտար բառներից (կիսաննլսոն, կիսասուպլես):

Իրենց նշանակությամբ այդ բոլոր անվանումները համապատասխանում էին հնարքների խմբերի անվանումներին, սակայն, որպես կանոն հանդես էին գալիս առանց բռնվածքի, հետևաբար նաև՝ առանց հնարքի կոնկրետ տարրերակի մատնանշման: Օրինակ, սուպլես՝ արտակորված գցում, ննլսոն՝ շրջում պարանոցի ոլորումով և այլն: Ըստ նրենութիւն, այն ժամանակ, երբ ծագեցին այդ անվանումները, կարծիք կար, որ կարևոր է բռնել մրցակցի գոտկատնից և նրան պոկել գորգից կամ՝ ծնկադիր դրությունից: Սակայն ժամանակակից ըմբշամարտում տարրենը դիրքներից նման բռնվածքով կարելի է կատարել գցում թերումով, շրջում ոլորումով, գցում արտակորված և այլն:

Ներկայումս համոզվածությամբ կարելի է ասել, որ ըմբիշների գործողությունների էռությանը համապատասխանող տերմինաբանությունը կարելի է ստեղծել միայն դասակարգման հիման վրա: Դասակարգման համակարգը, նախատեսնելով տարբեր գործողությունների միավորում՝ ընդհանրության հատկանիշով միևնույն մակարդակում և նրանց բաշխումը որոշակի հատկանիշի տարբերությամբ՝ միևնուն մակարդակի տարբեր բաժիններում, թույլ է տալիս մեծ կամ փոքր ճշտությամբ (կախված դասակարգման համապատասխանությունից) առվաճել գործողությունները, նրանց դասելով ըստ իրենց պատկանելիության:

Հայած բազում թերություններին՝ ֆրանսիական տերմինաբանությունը խաղացնել է բացառիկ առաջադիմական դեր ըմբշամարտի տերմինաբանության զարգացման գործում: Մինչ խորհրդային ըմբիշների միջազգային սապարնագործությունը գույքը, այն ըմբիշների և մասնագետների շփման միակ միջոցն էր:

Ներկայում շատ երկրների մասնագետներ (նաև Միջազգային սիրողական ըմբշամարտի ֆեդերացիայի ղեկավարները) լիովի համոզված են, որ ֆրանսիական տերմինաբանությունը լիովին չի համապատասխանում ժամանակակից ըմբշամարտի պահանջներին: Դա բնական է, քանի որ այն չի արտացոլում ըմբշամարտի տեխնիկայի ողջ բազմազանությունը: Հնարքների ֆրանսիական անվանումները որպես կանոն, իրենց հիմքում ունեն նմանություն ըմբշամարտին չառչվող ինչ-որ քանի ենտ. ինչպես մեր «ջրադաց», բուլղարական «գայլի բռվածք», անգլիական «թռչող զամբիկ» կամ ճապոնական «անկում հովտում», «փոթորիկ լնոան տակ» անվանումները:

Ըմբշամարտի տեխնիկայի բազմազանության պայմաններում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի տերմիններ, որոնք կարելի է ըմբռնել, ճանաչել հենց գործողությունը տեսնելով:

Մասնագետները այժմ լայնորեն օգտագործում են պատահականորեն առաջացած տերմիններ, որոնք նշանակում են հնարքներ, ըմբիշների գործողություններ և այլն: Դա ամենից առաջ վերաբերվում է այն երկրներին, որտեղ պաշտոնական փաստաթղթի տեսքով դասակարգում չկա: Պետք է նշել, որ այդ խոնդիրը, թենի փոքր չափով, բայց առկա է նաև այն երկրներում, որտեղ դասակարգումն ընդունված է պաշտոնապես:

Տերմինաբանության հարցերում նշած խառնաշփոթը տեղի եր ունենում այն պատճառով, որ դասակարգման մեջ մտցվում եր այն, ինչ հուշում էր պրակտիկան, և այն, ինչ երևան էր գալիս անհաջող դասակարգման արդյունքում:

Կարճ անվանումների կողմնակիցներին թվում է, թե երբ ասում են «պլոտան», «սուպլեն» կամ «ջրադաց», ապա տվյալ բառն իր մեջ պարունակում է տվյալ հնարքի լիարժեք անվանումը: Սա, իհարքեն սխալ դատողություն է, քանի որ լիարժեք անվանումը ներկայացնում է կոնկրետ հնարք՝ ստեղծելով դրա լուրջան համանալի նկարագիրը:

Ըմբշամարտի տերմինաբանությունը նպաստում է ուսումնամարզական աշխատանքների ճիշտ և ոյուրին կազմակերպմանը, ինչպես նաև մասնագետների շփմանը և փորձի փոխանակմանը:

Տերմինաբանությունը պետք է լինի գիտականորեն հիմնափորված, իսկ այդպիսի տերմինաբանության ստեղծման համար անհրաժեշտ է ըմբշամարտի խոր իմացություն, նրա յուրաքանչյուր հնարքի առանձնահատկությունների լիարժեք և ճշգրիտ ընկալում:

2.5. ՀՆԱՐՁԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Տերմինը բառ է կամ բառակապակցություն, որը խիստ որոշակի տեղեկություն է տալիս այս կամ այն երևույթի մասին:

Հնտևաբար, կարելի է ասել, որ ըմբշամարտի տեխնիկայի դասակարգման և համակարգման արդյունքների արտահայտումը տերմիններով կազմում է նրա տերմինաբանությունը: Ուստի, ըմբշամարտի տերմինաբանությունը կազմվում է այն տերմինների ամբողջությունից, որն օգտագործվում է ուսումնամարզական և գիտամանկավարժական աշխատանքներում:

Ըմբշամարտի էպիջան ըմբռնումը պահանջ առաջադրեց ստեղծել դասակարգման բազմամակարդակ համակարգ, առանց որի անհնար կլիններ արտացոլել գորգի վրա տեսի ունեցածը: Սակայն դասակարգումը ստեղծվում է ըմբշամարտի հիմքների խորը ուսումնասիրման հիման վրա, իսկ տերմինաբանությունը օգտագում է դասակարգման վերջնական արդյունքից:

Դասակարգման մակարդակների անվանումները, արտացոլելով դասակարգման գործընթացի արդյունքը, միաժամանակ ըմբշամարտի հնարքների անվանումների բաղկացուցիչ մասն են:

Հնարքի անվանման մեջ որպես կանոն, չի մատնանշվում կատարվող հնարքի դրությունը (կանգնած, ծնկադիր):

Հնարքի անվանումը պետք է ներառի նրել մաս, որոնք համապատասխանում են դասակարգման նրել մակարդակներին, և կմատնանշի տվյալ հնարքի տեղը տեխնիկայի ընդհանուր համակարգում.

1. Ինչ է կատարվել գորգի վրա (փոխադրում, գցում, տապալում կամ շրջում), այսինքն՝ որ դասին է պատկանում հնարքը:

2. Ինչպես է այն կատարվել (արտակորված, ձգումով, հրելագումով, գլորումով), այսինքն, ցույց է տալիս դասակարգման հաջորդ՝ ավելի փոքր մակարդակը՝ արտացոլելով հարձակվող ըմբիշի հիմնական գործողությունը:

3. Ինչպիսի բռնվածքով և որիշ ինչ առանձնահատկություններով է կատարվել հնարքը, այսինքն՝ տվյալ դնարքում հնարքի որ տարբերակն է նկատի առնվում:

Օրինակ, I մաս՝ գցում, II մաս՝ արտակորված, III մաս՝ բռնած ձնորը և իրանը: Եթե հնարքն ունի կատարման առանձնահատկություն, ապա այն նշվում է բռնվածքի նկարագրումից հետո: Օրինակ, «Գցում արտակորված բռնած ձնորը և իրանը, տակահատումով»:

Այսպիսով, հնարքների անվանումները կազմնիս նշվում է նրանց խումբը, ենթախումբը, բռնվածքը և եթե կան այլ մանրամասներ, ապա դրանք նշվում են բռնվածքից հետո:

Բռնվածքի նկարագրման ժամանակ կիրառվում է «և» շաղկապը առանձին կամ «միասին» բառի հետ մեկտեղ: Առաջինը կիրառվում է այն դնարքում, եթե բացի հիմնական բռնվածքից կա նաև այլ բռնվածք: Օրինակ, «շրջում վազանցումով բռնած հետո ձնորը և մոտիկ ազդյոր»: Սա ցույց է տալիս, որ ձնորի և ոտքի բռնվածքները կատարված են առանձինառանձին:

Երկրորդը կիրառվում է այն դնարքում, եթե գրոհի ենթարկված ըմբիշի մարմնի տարբեր մասերը բռնաված են մեկ բռնվածքով: Օրինակ, «շրջում գլորումով բռնած ձնորը և իրանը միասին»: Սա ցույց է տալիս, որ իրանը և ձնորը գտնվում են մեկ բռնվածքի մեջ:

Ըմբիշների ձնորի և ոտքի բռնվածքների նկարագրության հարմարության համար կիրառվում են «նոյնանուն» և «տարանուն» բառերը. նրել ըմբիշը աշ ձնորով բռնում է մրցակցի աշ ձնորը (ոտքը), ապա օգտագործում ենք նոյնանուն բառը, իսկ, նրել աշ ձնորով բռնում են մրցակցի ձախ ձնորը (ոտքը), ապա կիրառում ենք տարանուն բառը: Նույն սկզբունքով այս բառերը կիրառվում են ոտքերով կատարվող գործողությունների ժամանակ: Օրինակ, կառչում նոյնանուն (տարանուն) ոտքից:

Բռնվածքների լրացուցիչ մատնանշումը ապահովում են «ներքըսից», «վերըսից», «դրսից», «ներսից», «վողըսից», «առջևից» բառերը:

ԳԼՈՒԽ 3

ՀՄԲԺԱՄԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԵՆՍԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

3.1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԻՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հմբշամարտի տեխնիկան մրցականուններով թույլատրվող ավարտուն շարժողական գործողությունների կամ հնարքների ամբողջությունն է, որը հաղթանակի հասնելու հնարավորություն է ստեղծում: Հմբշամարտի գործնական կիրառումը հնարավորություն է ընձեռնել մշակելու ավարտուն շարժողական գործողությունների՝ հնարքների համակարգ, որն ուղղված է գորգի նկատմամբ մրցակցի դիրքի փոփոխությանը:

Հնարքները ըստ կիրառման բնույթի լինում են հարձակողական, պաշտպանողական և հակահարձակողական: Տեխնիկական վարպետության աճի համար առավել մեծ նշանակություն ունեն հարձակողական հնարքները:

Հմբշամարտի տեխնիկայի օրինաչափությունները բացահայտելու համար անհրաժեշտ է վերլուծել ըմբիշների հիմնական շարժումները: Այդպիսի վերլուծությունը պետք է սկսել հնարքների կատարման ժամանակ առաջացող մեխանիկական ուժերի փոխազդեցությունից:

Հայտնի է, որ մկանային շարժումը (հատկապես ներնդրանք այնպես բարդ են, ինչպես ըմբշամարտում) դժվար է վերլուծել շարժմանը մասնակցող մկանախմբների կազմի և գործունեության տեսանկյունից, քանի որ շատ դեպքերում շարժման ընթացքում փոփոխվում են և մկանախմբների կազմը, և մկանների գործունեության պայմանները: Ուստի ըմբշամարտի տեխնիկայի վերլուծության ժամանակ առանձին մկանախմբների աշխատանքը չի դիտարկվում, քանի որ ավելի կարևոր է ոչ թե այդ

կողմը, այլ՝ շարժման ուղղությունը, ուժը, տևողությունը և արագությունը:

Այսպիսով, ըմբիշների մկանային շարժման վերլուծության ժամանակ հաշվի են առնվում հնտևյալ ուժերը.

- ծանրության ուժը,
- մկանային քարշող ուժը,
- մարմնի պասիվ դիմադրությունը:

Հմբշամարտում գոյություն ունի շարժումների կենսամեխանիկական դասակարգման չորս խումբը.

- մարմնի դիրքի պահպանում,
- շարժում տեղում,
- շարժում առանցքի շուրջ,
- տեղաշարժներ:

Հմբշամարտի տեխնիկայի ուսումնասիրման ժամանակ պետք է նկատի ունենալ հնտևյալ նկանության տվյալները.

1. Գոտնմարտի յուրաքանչյուր պահին գոյություն ունի հարձակվող և հարձակման ննթարկվող ըմբիշ:

2. Ըմբիշների շարժողական գործունեության հիմնական լունդիրներից մեկը ընտրած դրության պահպանումն է:

3. Ըմբիշների ծանրության կենտրոնը ուղղված է դեպի գորգը:

4. Հարձակվող ըմբիշի խնդիրը կայանում է մրցակցին հավասարակշռված վիճակից դուրս բերելու մեջ:


5. Անհրաժեշտ ուժի ներդնումը մրցակցի մարմնի անհրաժեշտ մասում, այսինքն՝ ստեղծել «ուժերի պահ», «զույգ ուժեր» և օգտագործել ծանրության և իներցիայի ուժերը: Ուժի ներդրման պահը հանդիսանում է տեխնիկական տակտիկային միացնող օղակը:

3.2. ՀԱՎԱՍԱՐԱԿԾՈՂԻԹՅԱՆ ՊԱՇՊԱՆՈՒՄԸ

Մեխանիկայի տեսանկյունից ցանկացած հնարք իրենից ներկայացնում է մրցակցի շրջում կամ պտտում 90° -ից 270° անկյան տակ: Շրջում իրականցնելու համար անհրաժեշտ է մրցակցին դուրս բերել հավասարակշռված, կայուն վիճակից:

Բայց այդ ժամանակ գրոհող ըմբիշն իր հնրթին ևս կորցնում է կայուն վիճակը, քանի որ հնարավոր չէ առանց հավասարակշռված վիճակից դուրս գալու, մրցակցին դուրս բերել հավասարակշռությունից: Այսպիսով, գոտնմարտի ընթացքում նրկու ըմբիշներն են անընդհատ կորցնում և վնրականգնում են հավասարակշռությունը: Ծարժում կատարելիս առաջին պայմանը պետք է համարել հենման կետի (կետերի) և հենման դաշտի պահպանումը: Միանգամայն հասկանալի է, որ նրկու ըմբիշներն են ունեն որոշակի հենման դաշտ: Կայունության աստիճանը պայմանավորված է ըմբիշի մարմնի դիրքից (ծանրության կենտրոնի բարձրությունից, հենման դաշտի մեծությունից, կայունության անկյան մեծությունից), ինչպես նաև այդ վիճակը պահպանող մկանների աշխատանքից:

Մարդու ընդհանուր ծանրության կենտրոնը ուղղի կանգ-



Նկ. 8.


նած վիճակում գտնվում է 1-5-րդ ողնորի մակարդակում:

Ընդհանուր ծանրության կենտրոնը (ԸՇԿ) համարվում է ծանրության ուժի ներդրման կետը: ԸՇԿ համարվում է ոչ նյութական կետ, այն շարժուն է և ներենմ էլ կարող է գտնվել մարմնի

սահմաններից դուրս (ուժեղ արտակորման և թերման դնապրում): Բոնվածքների ժամանակ նրկու ըմբիշների մարմինների համար ձևավորվում է մեկ ընդհանուր ծանրության կենտրոն: Երկու ըմբիշների շարժումների հենտևանքով ԸՇԿ կարող է փոփոխել իր տեղը. բարձրանալ, իջնել:

Կանգնած ժամանակ ըմբիշի հենման դաշտը ձևավորվում է գորգին հենմած ոնտաթաթերի միջև ընկած տարածությամբ (Նկ. 8):

Ծնկադիր դրությունում հենման դաշտը ձևավորվում է գորգին հենմած կետերի միջև ընկած տարածությամբ (Նկ. 9):




Նկ. 9

Բնականաբար, որքան մեծ է հենման դաշտը, այնքան մեծ է կայունությունը: Հավասարակշռությունը խախտվում է, եթե ԸՇԿ մոտենում է հենման դաշտի սահմաններին, կամ դուրս է գալիս այդ սահմաններից: Ծարժումների ժամանակ շատ կարևոր է, որ ԸՇԿ մոտ լինի հենման դաշտին: Դա համենատարար բարենպաստ դիրք է մարմնի կայունության համար:

Կայունության աստիճանը պայմանավորված է կայունության անկյունով: Կայունության անկյունը ընդունված է համարել այն անկյունը, որը կազմվում է ծանրության կենտրոնից դեպի հենման դաշտ իջնեցված ուղղահայացի և ծանրության կենտրոնը հենման դաշտի եզրին միացնող գծի միջև (Նկ. 10): Այսպիսով կայունության անկյունը մեծանում է ծանրության կենտրոնը հենման դաշտին մոտենալիս, հենման դաշտը մեծացնելիս և ծանրության կենտրոնը հենման դաշտի

Եզրերից դնալի ներս բերնիս: Գոտնմարտի ժամանակ, եթե ավելի լայն դրվեն ուրբերը և մի փոքր ծալվեն, ապա մարմնի դիրքը կատարնա ավելի կայուն: Բայց, պետք է հաշվի առնել, որ չափից ավելի ծալված և լայն դրված ուրբերը փոքրացնում են մարմնի շարժման արագությունը: Բացի այդ, նման դնաքում դժվար է նաև կայունությունը բոլոր հարթություններում պահպանել:



Ակ. 10

Հավասրակշռությունը պահպանելու արվեստը կայանում է այնպիսի շարժումներ կատարելու մեջ, որոնք ապահովում են հենման դաշտի արագ փոփոխումը, կայունության անկյան մեծացումը համապատասխան կողմի վրա, ինչպես նաև մրցակցի շանքերը չնորացնելու նպատակով առանձին մկանախմբների կծկումը և թուլացումը ժամանակին ապահովելու կարողությունը:

3.3. ՇՆԱՐՁԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՈՒԺԵՐԸ

Հնարքի կատարման համար անհրաժեշտ են զույգ ուժեր: Զույգ ուժեր են կոչվում մոդուլով՝ հավասար և իրար զուգահեռ ուժերի համակարգը, որոնք ունեն հակառակ ուղղություն:

Զույգ ուժեր ստանալու համար գրոհող ըմբիշը պետք է կիրառի հետևյալ ուժերը:

- ներքին ուժ, այսինքն՝ մկանների ֆիզիկական ուժը,
- մրցակցի ֆիզիկական ուժը,
- սնփական ծանրության ուժը՝ քաշը,
- սնփական հենման ռեակցիայի ուժը,
- մրցակցի ծանրության ուժը՝ քաշը,
- մրցակցի հենման ռեակցիայի ուժը,
- իներցիայի ուժը (սնփական մարմնի, մրցակցի մարմնի)
- շփման ուժը (գորգի, մրցակցի),
- փոխադարձ շփման ռեակցիայի ուժը:

Այս ռեակցիայի ուղղվածությունը կարող է տարբեր լինել. ներն գրոհող ըմբիշի հրում է մրցակցին, ապա առաջանում է փոխադարձ շփման դրական ռեակցիա, իսկ, ներն ձգում է՝ բացասական ռեակցիա: Եթե գրոհողը մրցակցին ձգում է ներքև ապա ռեակցիան ուղղված է վեր, իսկ, ներն բարձրանում է վեր, ապա ռեակցիան ուղղված է ներքև:

Մկանային ուժ: Մկանային ուժը գլխավոր և միակ ակտիվ ուժն է ըմբշամարտում: Սա է առաջացնում մնացած ռեակտիվ ուժերը, բացառությամբ ծանրության և հենման ռեակցիայի ուժերի, որոնք գոյություն ունեն իրարից անկախ և հակազդում են միմյանց:

Մկանային ուժը ապահովում է մարմնի առանձին մասերի շարժումները, որոնք ուղղված են հաղթահարելու մրցակցի շանքերը և ծանրության ուժը՝ քաշը: Այս ուժը մարզումների շնորհիվ կարող է զգալի մեծանալ՝ իր հետ մեծացնելով ռեակտիվ ուժերը, ռեակցիայի աճը, իներցիայի ուժը, կենտրոնախույս ուժը: Մրցակցի վրա ազդող ուժը պայմանավորված է առանձին մկանների կամ մկանախմբների միաժամանակյա կամ հաջորդական կծկման ու թուլացման կարողությունով: Մրցակցի դի-

մադրությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է մոքիլիզացնել բոլոր ուժերը:

Քաշի նշանակությունը ըմբամարտում: Ըմբամարտի տեսանիկան ձևավորվում և կատարելագործվում է ծանրության ուժի կիրառմամբ: Այդ ուժը միշտ ազդում է նույն ուղղությամբ՝ ներքին: Քաշով մրցակցի վրա ազդելու կարողությունը բարձր տեսանիկական պատրաստության ցուցանիշ է: Որոշ հնարքների կատարման ժամանակ գլխավոր դերը պատկանում է ծանրության ուժին (փոխադրումներ, պտուտանած գցումներ):

Օգտագործելով քաշը կարելի է մրցակցին գցնել զորգին, կատարել շրջում, ինչպես նաև գորգից կտրել:

Հնաման ռեսակցիայի ուժ: Հնաման ռեսակցիայի ուժը այն ուժն է, որը հակագդում է ծանրության ուժին: Թվում է թե ըմբամարտի տեսանիկայում սա մեծ նշանակություն չունի: Բայց զորգի աննշան փափկությունն անգամ փորբացնում է ըմբիշի շարժման արագությունը, դժվարացնում է շարժունությունը, ինչը խախտում է շարժումների սովորական ռիթմը:

Մրցակցի հենման ռեսակցիայի ուժը մեծ դեր է խաղում զոյց ուժերի ստեղծման համար: Օրինակ՝ պտուտանած գցման ժամանակ, նրա թերքած իրանը օգտագործում է որպես լծակ: Այս դեպքում զոյցի մյուս ուժը հանդիսանում է մրցակցի հենման ռեսակցիայի ուժը: Եթե մրցակցը այդ պահին արագ ծալի ոտքերը և շնորհացնի հենման ռեսակցիայի ուժը, ապա զրոհող ըմբիշը մեջքով կհայտնվի զորգին:

Փոխադարձ ռեսակցիայի ուժը: Արագ փոխելով ուժի ազդեցության ուղղությունը հնարքավոր է դառնում օգտագործել մրցակցի սկզբնական ռեսակցիան: Այդ ժամանակ զրոհող ըմբիշին հաջողվում է մրցակցի ճիգերը ուղղել իր գործունեության ուղղությամբ: Արա հիման վրա են կառուցվում բազմաթիվ համակցությունները և հնարքների կատարման տակտիկական պատրաստության ձևերը:

Հայտնի է, որ դեպքի գրոհողի կողմը կատարվող հնարքների ժամանակ (մեջքի դարձումով գցումներ, պտուտանած գցում, առաջնային ուտնդիրներ) հարկավոր է դրական ռեսակցիա, իսկ հակառակ կողմի վրա կատարվող հնարքների ժամանակ (կաշումներ, հետին ուտնդիրներ) ավելի նպատակահարմար է բացասական ռեսակցիան, այսինքն ռեսակցիայի ուղղությունը պես է համբենիկ հնարքի կատարման ուղղությանը:

Ծփման ուժ: Հնարքների կատարման ժամանակ մեծ նշանակություն ունի նաև շփման ուժը: Թոյլ շփման դեպքում հնարքավոր է սայթարում, ինչը կխախտի հնարքի կառուցվածքը:

Կենտրոնախույս ուժ: Կենտրոնախույս ուժը առաջանում է, եթե գրոհողը ստիպում է, մրցակցին պտտվել: Ըմբամարտի ամբողջ տեսանիկան կապված է պտտման հետ: Ինչպես արդեն ասվել է, հաղթանակի հասնելու կամ միավոր վաստակելու համար անհրաժեշտ է մրցակցին շրջել: Գրոհողը իր մկանային ուժից բացի պես է կարողանա այլ ուժերն էլ օգտագործել զույգ ուժերում, որպեսզի կարողանա իրականացնել պտտումը: Պտտումը իրականացվում է իրանի պտտման միջոցով, որը հիմնականում կատարվում է ուղերի աշխատանքի հաշվին:

Պետք է նկատի ունենալ, որ տարբեր հնարքների կատարման ժամանակ պտտման առանցքները լինում են տարբեր: Օրինակ, մեջքի դարձումով գցումների ժամանակ զրոհող ըմբիշը ընդգրկում է մարմնի պտտման տարածական բոլոր առանցքները, մինչդեռ զրոհի ներարկված ըմբիշը պտտվում է հիմնականում ճակատային առանցքի շուրջ: Գլորումով շրջումների որոշ տարբերակների դեպքում երկու ըմբիշներն էլ պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ: Պտտուանածն, արտակորված գցումների ժամանակ զրոհող ըմբիշը դադարենցնելով մրցակցի պտտումը, ինքը դեռևս շարունակում է պտտվել: Ուստի վրայից գցումների, ուղիղ կաշումով կատարվող զորումով շրջումների ժամանակ ժամանակ զրոհող ըմբիշը դադարում է պտտվել և այնուհետև

միայն մրցակցին պտտելով գցում է վտանգավոր դրության մեջ: Միայն ծնկադիր դրությունում կատարվող որոշակի գուտուժային հնարքների ժամանակ (շրջում լծակով) գրոհող ըմբիշը գրեթե չի պտտվում:

Հներցիայի ուժ: Իներցիայի ուժի տակ հասկացվում է մարմնի կարողությունը պահպանել հանգստի կամ շարժման վիճակը, քանի դեռ այլ ուժ չի ազդեն:

Հնարքների կատարման ժամանակ իներցիայի ուժը օգտագործելու կարողությունը խոսում է ըմբիշի բարձր վարպետության մասին:

3.4. ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտպանությունները այն գործողություններն են, որոնք ուղղված են չեղոքացնելու գրոհող ըմբիշի ջանքերը:

Պաշտպանությունների բոլոր տարրերակները բնրված են թիվ 3 գծապատկերում:

Այժմ քննարկենք պաշտպանական գործողություններից յուրաքանչյուրը:

Կայունության անկյունը կարելի է մեծացնել.

- ա) ԸՆԿ մուտքնելով հենման դաշտին,
- բ) մեծացնելով հենման դաշտը,
- գ) հենման դաշտի ներփակում փոփոխել ԸՆԿ դիրքը:

Գրոհողի կայուն վիճակը կարելի խախտել.

- ա) փոքրացնելով նրա հենման դաշտը,
- բ) սահմանափակելով հենման դաշտը փոփոխելով մրցակցի հնարավորությունը,

գ) հենման դաշտի ներփակում սահմանափակելով մրցակցի ԸՆԿ դիրքը փոփոխելով հնարավորությունը:

Չոյզ ուժերի ստեղծմանը խոչընդոտել կարելի է.

- ա) մրցակցի գործողությունները կաշկանդելով,
- բ) խոչընդոտելով բռնվածքի իրականացումը,
- գ) խոչընդոտելով իրանի շրջանում հենման դաշտի ստեղծմանը,

դ) հաղթահարենով սեփական հենման դաշտի սահմանափակումները:


Չոյզ ուժերից մեկի չեղոքացման համար անհրժելու է.

- ա) ազատվել բռնվածքից,
- բ) ուժ հակազդենի,
- ե) ուժերի ազդեցության շրջանակից դուրս գալ:

Պոտոման առանցքը պետք է փոփոխել.

- ա) հնարքն սկսելուց անմիջապես առաջ կամ հնարքն սկսելու սկզբում՝ մինչև հավասարակշռության կորուստը,
- բ) հնարքի կատարման ընթացքում:

Գծապատկեր 3



3.5. ՀԱԿԱՀՆԱՐՔՆԵՐ

Հակահնարքներն այն տեխնիկական գործողություններն են, որոնք կատարվում են ի պատասխան գրոհող ըմբիշի հարձակողական գործողությունների, որոնց արդյունքում հակահնարք կիրառող ըմբիշը նյութական առավելություն է ձեռք բերում մրցակցի նկատմամբ: Իսկ ի՞նչ է հակահնարքը կենսամեջանիկայի տեսանկյունից: Գրոհող ըմբիշը հնարք կատարելով, մրցակցին պատում է խիստ որոշակի անկյան տակ՝ որոշակի առանցքի շուրջ: Սակայն, որպես կանոն գրոհող ըմբիշը նախև և առաջ ինքն է պատվում: Հետևաբար, հակագրոհող ըմբիշը հակագրող իրականացնելու նրկու ճանապարհ ունի:

1. Փոփոխել իր, մրցակցի կամ նրկուսի պտտման ուղղությունը:

2. Փոքրացնել կամ մեծացնել իր, մրցակցի կամ նրկուսի մարմինների պտտման անկյունը:

Ավելի հաճախ այս նրկու միջոցները համակցվում են, որից առաջ են զայխ հակահնարքների իրականացման մի շարք ձևներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

1. Հակահնարքից առաջ անհրաժեշտ է կիրառել պաշտպանություն:

2. Եթե հնարքի կատարման ընթացքում գրոհող ըմբիշը մեջքով ուղղվում է դեպի գորգը, ապա այդ պահին պնտը դադարեցնել նրա պտտումը: Միաժամանակ պնտը է չնեղորացնել գոյզ ուժերից մեկը, որպեսզի բացառվի ընդհանուր պտտման մեջ ընկնելը: Այսպիսի հակահնարքները կոչվում են փակումներ:

3. Հակահնարքից առաջ ոչ թե պաշտպանվել, այլ անմիջապես հակահնարք կիրառել գրոհողի ջանքերի դեմ, օրինակ, ուղերձի բռնվածքով իրենագումների ժամանակ պնտը է որպես հակահնարք կիրառել իրանի կամ ազդրի հակադարձ բռնվածքով արտակորված գցումի ժամանակ հակագրոհող ըմբիշը գորգից կտրում է գրոհողի սրունքը:

4. Որոշ հնարքների կատարման ժամանակ, օրինակ, մեջքի դարձումով գցումներ, հակագրոհող ըմբիշը պնտը է լրացուցիչ պտույտ հաղորդի իր մարմնին և գրոհողի պտույտը շարունակելով (նոյնիսկ 2 կամ 3 միավոր կորցնելով) մրցակցին գցի վտանգավոր դրության մեջ և հասնի մարուր հաղթանակի:

5. Որոշ դեպքերում հակահնարքները հիմնված են պլոտման առանցքի փոփոխության վրա: Օրինակ, քայլանցումով կատարվող անկման ժամանակ գրոհող ըմբիշը հետ ընկնելով, մրցակցին պտտում է մեջքի կողմով ճակատային առանցքի շուրջը: Գրոհի նենթարկված ըմբիշը սրան կարող է պատասխաննել պլոտուանաձև գցումով՝ ինքը պտտվելով ուղղաձիգ առանցքի շուրջ, իսկ մրցակցին պտտելով ճակատային առանցքի շուրջ:

6. Կան հակահնարքներ, երբ գրոհի նենթարկված ըմբիշը լրացուցիչ պտույտ է հաղորդում գրոհողին: Սովորաբար սրանը կիրառվում են այն ժամանակ, երբ գրոհողը հնարքի կատարման արդյունքում պնտը է ընկնի կողքի, իսկ հակագրոհող ըմբիշը ստիպում է նրան ընկնել այլ ուղղությամբ, որի հետևանքով գրոհողն ընկնում է վտանգավոր դրության մեջ: Օրինակ, երբ ազդրի հակադարձ բռնվածքով արտակորված գցումի ժամանակ հակագրոհող ըմբիշը գորգից կտրում է գրոհողի սրունքը:

3.6. ՀԱՄԱԿՅԱԾ ՀՆԱՐՔՆԵՐ

Ի՞նչ է իրենից ներկայացնում համակցված գործողությունը կենսամեջանիկայի տեսանկյունից: Այն իր մեջ ներառում է հնարք, պաշտպանություն այդ հնարքից և պաշտպանության ֆոնի վրա կատարվող վերջնական հնարք:

Վերջնական հնարքը պայմանավորված է առաջին հնարքից հետո կատարվող պաշտպանությամբ: Առաջին հնարքի պաշտպանության ժամանակ կիրառվում են այն բոլոր միջոցները, որոնց մեջ անդրադառները «Պաշտպանություններ»

բաժնում: Վերջնական հնարքը հնարավոր է կատարել առանց բռնվածքի փոփոխության, լրացուցիչ բռնվածքով՝ բռնվածքի փոփոխմամբ և ոտքերի օգնությամբ կատարվող լրացուցիչ գործողություններով:

3.7. ԴԻՆԱՄԻԿ ԻՐԱՎԻՃԱԿ

Հմբամարտը համարվում է չափազանց դինամիկ մարզաձև, որտեղ ստատիկ նկատմամբ դրույթունները հազվադեպ են պատահում: Գրեթե բոլոր հնարքները կատարվում են շարժման մեջ: Ուստի դինամիկ իրավիճակը հնարքի կատարումից առաջ բավական բարդ է: Այն առաջ է զալիս զանազան գործոնների փոխազդեցության հետևանքով. ըմբիշների դրույթունը, մկանային ճիգերի աստիճանը և ուղղությունը, ԸՇԿ դիրքը և տեղաշարժը, հենման դաշտը և այն փոփոխները հնարավորությունները և այլն:

Նշված գործոնները հնարքների կատարման ժամանակ ազդում են տարբեր կերպ, կարող են ունենալ տարբեր մեծություններ ու ուղղություններ և՝ անընդիատ փոփոխվել: Բոլոր գործոններն ել հնարքի կատարման ժամանակ որոշակի նշանակություն ունեն՝ զլասավոր կամ նրկորդական: Ուստի դինամիկ իրավիճակ առաջացնող բոլոր գործոնները պետք է ուսումնասիրվեն համատեղ, նրանց պետք է դիտել որպես մեկ ընդհանություն:

Օրինակ, հնարքի կատարման ժամանակ մրցակցի մասին տեղենկություններ ստանալու համար անհրաժեշտ է պարզ պատկերացնել նրա դիրքը, ճիգերի ուղղությունը, իմաստը նրա ծանրության կննտրոնի դիրքը, հենման դաշտի սահմանները և այլն:

Հարց է առաջանում. միթե յուրաքանչյուր հնարքից առաջ պետք է գիտակցորեն վերլուծել դինամիկ իրավիճակի բոլոր

բաղադրիչ մասները: Իրավիճակը արագ և ննթագիտակցաբար զնահատնելու ընդունակությունը ձևոք է բնրվում ուսումնամարզական գործընթացում, երբ ըմբիշը ստիպված է լուծել զանազան խնդիրներ: Ըմբիշները դա անվանում են «զգայունություն»:

Տելմնիկական գործողությունների կատարման զլասավոր պայմանը համարվում է համապատասխան դինամիկ իրավիճակի ստեղծումը:

ԳԼՈՒԽ 4

ԱԶԱՏ ՀՄԱՅԻՆ ԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՆ

4.1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹ ՅՈՒՆՆԵՐԸ

Կանգնած դրույթուն: Սա այն դրույթունն է, երբ ըմբիշները գոտենմարտում են ոտքերի վրա՝ կանգնած վիճակում: Կանգնած դրույթունը պետք է լինի կայուն, հնարավորություն տա հեշտությամբ տեղաշարժվել գորգի վրա, հարձակողական գործողություններից արագ անցնել պաշտպանողական գործողությունների և հակառակը:

Կանգնվածքն ընտրվում է հաշվի առնելով, ինչպես՝ սեփական, այնպես էլ մրցակցի ֆիզիկական, տեխնիկական պատրաստվածությունը և լուծվելիք տակտիկական խնդիրները:

Կանգնվածքներն ըստ բարձրության լինում են՝ բարձր, միջին և ցածր, իսկ ըստ ոտքերի դրույթան՝ աջակողմյան, ձախակողմյան և ճակատային:

Բարձր կանգնվածք. ըմբիշը կանգնած է իրանը ուղղած, ծնկները մի փոքր ծալված: Նման կանգնվածքը հնարավորություն է տալիս ոտքերի օգնությամբ կիրառվող հնարքներ կատարել, բայց այն չափոց դուրս «բաց» է մրցակցի գրոհների համար:

Միջին կանգնվածք. ըմբիշի իրանը թեքված է առաջ, իսկ ծնկները ծալված են մի փոքր ավելի, քան բարձր կանգնվածքի ժամանակ: Նման կանգնվածքը գորգի վրա հեշտությամբ տեղաշարժվելու հնարավորություն է տալիս, բարենպաստ է ինչպես պաշտպանողական, այնպես էլ հարձակողական գործողությունների և հակահնարքների կիրառման համար:

Միջին կանգնվածքը ազատ ըմբշամարտում ամենատարածվածն է:

Ցածր կանգնվածք. ըմբիշի իրանը շատ է առաջ թեքված, ոտքերը դրված են իրարից հեռու, ձնոքները համարյա դիպչում են

գորգին: Այս կանգնվածքը թեև հարմար է պաշտպանողական գործողությունների դրագում, սակայն լիստ անբարենպաստ է հարձակողական գործողությունների համար:

Աջակողմյան կանգնվածքի ժամանակ ըմբիշի աջ ոտքն է առաջ դրված, ձախակողմյան կանգնվածքի ժամանակ առաջ է դրված ձախ ոտքը, իսկ ճակատային կանգնվածքի ժամանակ ոտքերը դրված են մրցակցի հավասար հեռավորության վրա:

Գոտենմարտի ժամանակ ըմբիշների միջև եղած հեռավորությունը ըմբշամարտում ընդունված է անվանել տարածություն: Տարածությունները լինում են՝ մոտիկ, միջին և հեռու:

Մոտիկ տարածություն. մրցակցի ուսին կարելի է դիաչն նույնիսկ ծալված ձնոքներով: Այս տարածությունը հարմար է իրանի բռնվածքներով և ոտքերի գործողություններով կատարվող հնարքների կիրառման համար:

Միջին տարածություն. մրցակցի ուսին կարելի է հասնել ուղղված կամ մի փոքր ծալված ձնոքներով: Սա ամենից հաճախ հանդիպող տարածությունն է ազատ ըմբշամարտում: Այստեղից հեշտ է ինչպես հարձակվելը, այնպես էլ պաշտպանվելը:

Հեռու տարածություն. ըմբիշները գոտենմարտը վարում են միմյանցից քավական հեռու և նույնիսկ ուղղված ձնոքներով չեն կարող հասնել մրցակցի ուսին:

Ծնկառի դրույթուն: Սա այն դրույթունն է, երբ ըմբիշներից մեկը գորգին հենված է ծնկներով և չծալված ձնոքների ափերով: Գոտենմարտի ընթացքում ներքեսում գտնվող ըմբիշը կարող է փոփոխել դրույթունը և գոտենմարտել որովայնի վրա պառկած: Սա բարենպաստ դիրք է պաշտպանողական գործողությունների համար:

Կամուրջ: Արտակորված ըմբիշը գորգին հենված է՝ ուսինի լայնությամբ քացված ոտքերի ներքաններով և ճակատով:

Կիսակամուրջ դրույթան ժամանակ արտակորված ըմբիշը գորգին հենված է ներքաններով և մեկ ուսով:

Այս դրություններն ըմբիշների կողմից կիրառվում են որպես պաշտպանության միջոց՝ թիակները գորգին չհպնլու համար, ինչպես նաև, որպես մի շարք հնարքների և հականարքների բաղկացուցիչ տարր:

Վտանգավոր դրություն. սա այն դիրքն է, երբ ըմբիշը 90°-ից ավելի մեծքով թնքված է դեպի գորգը:

4.2. ԱԶԱՏՀԱՇՄԱՍՆԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՆԳՆԱԾ ԴՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

4.2.1. ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Փոխադրումները այնպիսի տեխնիկական գործողություններ են, որոնց կատարման արդյունքում մրցակիցը հայտնվում է ծնկադիր դրությունում: Փոխադրումները կարող են լինել՝ ձգումով, սուզումով, պտուտանածև և նստավերներով:

4.2.1.1. ՓՈԽԱԴՐՈՒՄ ՁԳՈՒՄՈՎ

Փոխադրումների այս խմբի բնորոշ տարրը ձգումն է, որը կատարվում է մրցակցի ձեռքի, պարանոցի, իրանի, ոտքի կամ ոտքերի բռնվածքով: Զգման հետևանքով խախտվում է մրցակցի հավասարակշռությունը, որից հետո գրոհող ըմբիշը մրցակցին մեծքով կամ կողքով շրջնով դեպի իրեն՝ փոխադրում է ծնկադիր դրության:


Ազատ ըմբշամարտում ձգումով փոխադրումների արդյունավետությունը կարելի է մեծացնել ոտքերով կատարվող գործողությունների հաշվին (տակահատում, ոտնդիր, կառչում):

ՓՈԽԱԴՐՈՒՄ ՁԳՈՒՄՈՎ ԲՐԵՋԱԾ ՊԱՐԱՆՈԾՐ ՎԵՐԿԻԾ և ՃԵՂՔՐ

Մրցակիցը գտնվում է զածը կանգնվածքում, մոտ կամ միջին տարածության վրա: Հնարք կատարող ըմբիշը մի ձեռքով բռնում է մրցակցի պարանոցը՝ վերկից, իսկ մյուսով՝ տարանուն

բազուկը դրսից և ձգում է դեպի ներքը՝ միաժամանակ ոտքերը հետ գցնելով (նկ.11 ա, բ):

Զերքը և պարանոցը կարելի է բռնել ինչպես միասին, այնպես էլ առանձին: Ձգումը պետք է կատարել ներքը և դեպի այն ոտքը, որը պետք է բռնել, ապա անհրաժեշտ է նախնական ձգում կատարել հակառակ կողմից վրա, որպեսզի մրցակիցն առաջ դնի հավասարակշռության ոտքը: Ձգումից հետո, երբ մրցակիցը ծնկները դնում է գորգին կամ իրանը մոտնցնում է իր ոտքերին, անհրաժեշտ է պարանոցի բռնվածքը բաց չթողնելով՝ բռնել տարանուն ազդրը դրսից: Բռնելով մրցակցի ազդրը՝ հնարք կատարող ըմբիշը պետք է անցում կատարի՝ ձգտնով նրան փոխադիր ծնկադիր դրության (նկ.11 գ): Նոյն հնարքը կարելի է կատարել՝ մրցակցի ազդրի փոխարեն բռնելով իրանը:



Նկ. 11

ԲՆՈՐՈՇ ԱԽԱԼԵՆԵՐԸ: 1. Գրոհող իրանը մոտնցնում է մրցակցին և հականարքի հնարավորություն ստեղծում: 2. Զերքը և պարանոցի բռնվածքի ժամանակ գրոհող ըմբիշը լավ չի օգտագործում իր բաշը, և բռնվածքը պահպանում է ձեռքերի ուժի շնորհիվ: 3. Ձգումն իրականացվում է ուղղագիծ և ոչ թե կորագիծ: 4. Գրոհող ըմբիշը ձեռքերը չափից ավելի է մտցնում մրցակցի

բազուկների տակ, ինչը մրցակցին հակահնարքի հնարավորություն է տալիս:

Տակտիկական պատրաստության միջոցները

Հավասարակշռությունից հանելը: Գրոհող ըմբիշը մի ձնորով մրցակցի գլուխը իջնցնելով ցած, մյուսով կատարում է պարանոցի բռնվածք վերսից, իսկ ազատ ձնորով բռնում է նրա բազուկը: Այնուհետև աջ և ձախ կորագծերով դնալի ներքի ձգումներ կատարելով՝ մրցակցին հանում է հավասարակշռությունից:

Սպառնալիք: Շնորհը առաջ տանելով՝ գրոհողը սպառնում է կատարել ոտքերի բռնվածք: Մրցակցը ոտքերը հետ տանելով՝ իրանը թերում է առաջ: Գրոհողը փոխում է գրոհի ուղղությունը՝ բռնելով մրցակցի պարանոցը և ձնորը:

Կանչ: Ընդունել բարձր կանգնվածք և առաջ դնել ոտքը: Եթե մրցակիցը փորձում է բռնել առաջ դրված ոտքը, գրոհողը բռնում է նրա պարանոցն ու բազուկը և կատարում ձգումով փոխադրում:

Տամակցումներ: Գցում արտակորված բռնած ձնորները, ասլա՝ Փոխադրում ձգումով բռնած պարանոցը վերսից և ձնորը: Պաշտպանվելով առաջին հնարքից՝ մրցակիցը հեռանում է հնարք իրագործող ըմբիշից՝ իրանը թերելով առաջ: Վճաց այդ ժամանակ պետք է փոխել բռնվածքը և կատարել ձգումով փոխադրում:

Պաշտպանությունները

Նախնական: Պահպանել բարձր կանգնվածք և գլուխը շիշնցնել:

Անմիջական: 1. Բռնելով պարանոցը բռնած ձնորի դաստակը՝ ձգել կողմ և ազատվել բռնվածքից: 2. Բռնել գրոհողի ոտքերից: 3. Անցման ժամանակ ձնորը դնել մրցակցի իրանին և թոյլ

չտալ անցում կատարել:

Հակահնարքները

1. Գցում արտակորված բռնած իրանը: Այն պահին, եթե գրոհող ըմբիշը կատարում է ձգում, անհրաժեշտ է մոտենալ և սուզում կատարելով՝ բռնել իրանը առջևից: Այնուհետև, կարելի է կատարել արտակորված գցում:

2. Գցում թերումով բռնած իրանը: Այն պահին, եթե գրոհող ըմբիշը կատարում է ձգում, անհրաժեշտ է մոտենալ և սուզում կատարելով՝ բռնել իրանը առջևից: Այնուհետև կարելի է կատարել թերումով գցում:


3. Անցում բռնած ձնորը և իրանը: Բռնվածքի մեջ գտնվող ձնորով պետք է բռնել մրցակցի համանուն ձնորի արմունկը, իսկ ազատ ձնորով՝ մրցակցի իրանը: Անցումով մրցակցին փոխադրել ծնկադիր դրության: Անցման ժամանակ մրցակցի ձնորը ձգել առաջ և գլուխն ազատվել բռնվածքից: Այս հնարքը կարելի է կատարել ինչպես կանգնած դրությունում, այնպես էլ ծնկադիր վիճակում:

4. «Չրադաց» բռնած տարանուն ձնորը: Եթե գրոհող ըմբիշը մրցակցին ձգելով ներքի փորձում է բռնել ոտքը, այդ պահին անհրաժեշտ է ազատ ձնորով բռնել մրցակցի տարանուն բազուկը և առաջ տանելով գլուխը՝ մյուս ձնորով բռնել համանուն ազդրը կամ ափով ներսից բարձրացնել տարանուն ազդրը:

Փոխադրում ձգումով բռնած ձնորը և ոտքը

Այս հնարքը նպատակահարմար է կատարել միջին և բարձր կանգնվածքներից, մոտ կամ միջին տարածությունից: Գրոհող ըմբիշը մի ձնորով բռնում է տարանուն ձնորի դաստակը, մյուսով՝ նոյնանուն ձնորի բազուկը արմնկային հողի մոտ: Այնուհետև, մրցակցի ձնորը պետք է ձգել բազուկը բռնած ձնորի ուղղությամբ՝ ներքին և նրան դուրս բերելով հավասա-

բակշուրթունից, մի փոքր կողմ քաշվելով՝ շրջել կողքի (նկ. 12 ա): Որից հետո, բաց թողնելով մրցակցի դաստակը, բռնել նրա տարանուն ոտքի ազդրը դրսից՝ միաժամանակ տարանուն ոտքը տեղափոխելով մրցակցի ոտքի կողը կամ հետևը: Շարունակելով մրցակցի բազուկը ձգել դնափի իրեն՝ ներքև և բռնած ոտքը բարձրացնել՝ գրոհող ըմբիշը մրցակցին փոխադրում է ծնկադիր դրույյան (նկ. 12 բ):



Նկ. 12

նի մկանների ուժը: 3. Զենքի և ազդրի բռնվածքից հետո փոխադրումը կատարում է սխալ հետազծով:

Տակտիկական պատրաստության միջոցները

Հայսարակշուրթունից հանելը: Բռնել մրցակցի տարանուն ձեռքի դաստակը, մյուս ձեռքով մրցակցի գլուխը տանել բռնած ձեռքի կողմ՝ ներքև: Այս պահին, երբ մրցակիցը հավասարակշուրթունը պահելու ջանքներ է գործադրում, գլուխը բռնած ձեռքով բռնել համանուն ձեռքի բազուկը ներսից և կատարել ձգումով փոխադրում:

Կաշկանդում: Երկու ձեռքով բռնել մրցակցի տարանուն դաստակներից: Այս պահին, երբ մրցակիցը ձգտում է ազատվել բռնվածքից, բաց թողնել ձեռքներից մեկը և ազատված ձեռքով բռնել համանուն բազուկը ներսից և կատարել ձգումով փոխադրում:

Սպառնալիք: Գրոհող ըմբիշը մրցակցին սպառնում է պարանոցի՝ վերսից և ձեռքի բռնվածքով, պաշտպանվող ըմբիշը բարձրացնում է իրանը և գլուխը՝ ընդունելով միջին կամ բարձր կանգնվածք: Այդ պահին պետք է կատարել ձգումով փոխադրում՝ համապատասխան բռնվածքով:

Համակցումներ: 1. Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը ուսի վրայից, ապա՝ Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և ոտքը: Պաշտպանվողը մի փոքր կրանսուում է և փորձում ազատել ձեռքը, իսկ գրոհողը շրջվում է դեմքով դնափի մրցակիցը և կատարում ձգումով փոխադրում:

2. Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և ոտքը: Պաշտպանվողը մի փոքր կրանսուում է և ազատ ձեռքով հենվում մրցակցի մեջքին, իսկ գրոհողը շրջվում է դեմքով դնափի մրցակիցը և իրանը բռնած ձեռքով բռնում տարանուն ձեռքի բազուկը և կատարում ձգումով փոխադրում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Պաշտպանվող ըմբիշը անընդհատ փոխում է կանգնվածքը: 2. Կաշկանդում է մրցակցին՝ բռնելով նրա դաստակները կամ նրկու ձեռքով բռնելով մեկ ձեռքը:

Անմիջական: 1. Պաշտպանվողը ազատում է ձեռքը բռնվածքից: 2. Բռնվածքի մեջ գտնվող ձեռքը բարձրացնում է և տարանուն ձեռքի տակով բռնում մրցակցի իրանը կամ ուսը:

Հականապրեները

1. Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և ոտքը: Զգման ժամանակ հականաքը կատարող ըմբիշը դեմքով շրջվում է դնափի մրցակիցը և նոյն ձեռքով բռնելով մրցակցի բազուկը ներսից, առաջ անցնելով մրցակցից՝ ինքն է կատարում ձգումով փոխադրում:

2. *Տապալում հրեշտագումով բռնած ձնոքը՝ համանուն ոտքի դրսից կառչումով:* Զգման ժամանակ հականարք կատարող ըմբիշը ազատ ձնոքով բռնելում է գրոհողի տարանուն ձնոքի բազուկը, ձգում դնափի իրեն և մյուս ձնոքի ուսը մտցնում մրցակցի համանուն ուսի տակ, ապա համանուն ոտքի դրսից կառչումով կատարում է հրեշտագումով տապալում:

3. *Տապալում հրեշտագումով բռնած տարանուն ձնոքը և՝ ափով հենված համանուն ոտքին՝ դրսից:* Զգման ժամանակ ազատ ձնոքով բռնելով գրոհողի տարանուն ձնոքի բազուկը, ձգում է դնափի իրեն և մյուս ձնոքի ուսը մրցակցի համանուն ուսի տակ մտցնելով՝ ափով հենվում է համանուն ոտքի ազդրին՝ դրսից կամ դրսից բռնում համանուն ոտքի ազդրը և կատարում հրեշտագումով տապալում:

4. *Գցում մեջքի դարձումով բռնած ձնոքը ուսի վրայից:* Զգման ժամանակ ուսը գրոհողի համանուն ուսի տակ մտցնելով, հականարք կատարող ըմբիշը բռնում է մրցակցի ձնոքը և կատարում մեջքի դարձումով գցում:


4.2.1.2. ՓՈԽԱԴՐՈՒՄ ՍՈԽՁՈՒՄՈՎ

Սուզումով փոխադրումների բնորոշ տարրը (սուզումը) նախնական անցումն է մրցակցի թևի տակից, որին հենտևում է մրցակցի փոխադրումը ծնկադիր դրություն՝ ձգման, պտտման և «կախ» ընկնելու միջոցով:

Փոխադրում սուզումով բռնած պարանոցը և իրանը՝ ոտնդիրով

Հնարքը հիմնականում կատարվում է միջին կամ բարձր կանգնվածքից և մոտ տարածությունից: Գրոհող ըմբիշը մի ձնոքով բռնում է մրցակցի պարանոցը, իսկ մյուսով մրցակցի տարանուն ձնոքի դաստակը բարձրացնում վեր և ձգում դնափի իրեն (նթե մրցակցի ձնոքը դրված է գրոհողի ուսին, ապա բռնում

է մրցակցի բազուկը ներքևից՝ արմնկային հողի մոտ և բարձրացնում վեր): Որից հետո, մի փոքր կքանատնելով և գլուխը մտցնելով մրցակցի բարձրացված ձնոքի տակ՝ կատարում է «սուզում» (նկ.13ա): Այնուհետև, ոտքը դնելով մրցակցի տարանուն ոտքի հետևեր, գլուխը տանելով դնափի ներքը՝ մարմնով շրջվում է դնափի մրցակիցը և բռնում նրա իրանը հետևից՝ կողքից: Ծարունակելով շրջվել՝ մրցակցի գլուխը կորագծով ձգելով դնափի իրեն՝ ներքն, իր առաջ դրված ոտքի վրայով նրան փոխադրում է ծնկադիր դրության (նկ.13 բ, գ):



Բնորոշ սխալները: 1. Պարանոցի բռնվածքը թույլ է: 2. Գրոհողը մրցակցի պարանոցը թույլ է ձգում: 3. «Սուզումը» և պարանոցի ձգումը համաձայնեցված չեն: 4. Գրոհող ըմբիշը շատ է կքանատում և մրցակցին ձգում է միայն դնափի իրեն:

Տակտիկական պատրաստության միջոցները

Հավասարակշռությունից հանելը: Գրոհող ըմբիշը բռնելով մրցակցի ձնոքը և պարանոցը, կատարում է ոլորում՝ դնափի իրեն և հնարքի հակառակ ուղղության: Մրցակիցը ձգելով պահպանել հավասարակշռությունը՝ ուղղվում է ոլորմանը հակառակ ուղղության: Գրոհող ըմբիշն օգտվելով մրցակցի այդ շարժումից, գլուխը ձգում է դնափի իրեն՝ ներքն, բարձրացնում է պաշտպան-

Վողի ձնոքը և ձնոքի տակից սուզվելով՝ կատարում փոխադրում:
Կաշկանդում: Գրոհող ըմբիշը բռնելով մրցակցի պարանցը և ձնոքը (դաստակից կամ բազկից) կաշկանդում է նրա գործողությունները: Եթե պաշտպանվողը փորձում է ձնոքն ազատն դնալի կողք՝ վեր տանելով, ապա գրոհող ըմբիշը բաց է թողնում ձնոքը և նրա տակից «սուզվելով»՝ կատարում է փոխադրում:

Համչ: Գրոհող ըմբիշը ընդունում է ցածր կանգնվածը և մոտենալով մրցակցին, նրան հնարավորություն է տալիս բռնելու իր պարանցը վերևից: Հնաց այդ պահին գրոհող ըմբիշը կրանստելով սուզվում է պարանցը բռնած ձնոքի տակից և մրցակցի պարանցը ձգելով դնալի իրեն՝ ներքև՝ կատարում է փոխադրում:

Համակցումներ: 1. Գցում մեջքի դարձումով բռնած ձնոքը և պարանցը, ապա՝ Փոխադրում սուզումով բռնած պարանցը և իրանը՝ ոտնդիրով: Հնարքի կատարման պահին, երբ մրցակցը պաշտպանվելով ուղղում է իրանը, գրոհող ըմբիշը շրջվում է կրծքով դնալի մրցակցը և ձնոքի տակից սուզվելով կատարում փոխադրում:

2. Փոխադրում ձգումով բռնած պարանցը վերևից և ձնոքը, ապա՝ Փոխադրում սուզումով բռնած պարանցը և իրանը՝ ոտնդիրով: Գրոհող ըմբիշը բռնելով մրցակցի պարանցը վերևից և բազուկը, փորձում է կատարել ձգումով փոխադրում: Այն պահին, երբ մրցակցը սկսում է պաշտպանվել՝ փորձելով ուղղել իրանը, գրոհող ըմբիշը բաց է թողնում բռնվածքը և ձնոքի տակից սուզվելով կատարում է փոխադրում:

Պաշտպանություններ

Նախնական: 1. Պաշտպանվող՝ ձնոքը, որի տակից փորձում է «սուզվել» մրցակցը, սեղմում է իրանին: 2. Պաշտպան-


փողը զանազան բռնվածքներով կաշկանդում է գրոհող ըմբիշի գործողությունները:

Անմիջական: 1. Պաշտպանվող «սուզումի» պահին ոտքը (այն ձնոքին համանուն ոտքը, որի տակից կատարվում է սուզումը) հնատ է դնում, արմունկն իջնցնում է վար, ձնոքն հնացնելով գրոհող ըմբիշից:

Հակահնարքները

1. **Տապայում ոլորումով բռնած պարանցը վերևից և տարանուն ձնոքը ներքից:** Հակագրոհող ըմբիշը ոտքը հնատ տանելով՝ բռնում է մրցակցի պարանցը վերևից և տարանուն ձնոքի բազուկը՝ ներքից և կատարում է ոլորումով տապալում (նկ. 14):

2. **Գցում մեջքի դարձումով բռնած պարանցը վերևից և ձնոքը՝ դրսից ոտնախփումով:** «Սուզումի» պահին, հակագրոհող ըմբիշը բռնելով գրոհողի պարանցը վերևից և տարանուն բազուկը՝ կատարում է մեջքի դարձում՝ համանուն ոտքի դրսից ոտնախփումով (նկ. 15):



Նկ. 14




Նկ. 15

Փոխադրում սուզումով բռնած ոտքերը

Հնարքը կարելի է կատարել բարձր և միջին կանգնվածքներից, բոլոր տարածություններից: Այս հնարքի կատարման

Ժամանակ գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի ազդենոք՝ գլուխը կողքից: Գրոհողի ծնկները կարող են հպվել գորգին (նկ.16 ա): Կարող են գորգին չհպվել (նկ.16 բ): Եվ կարող է գորգին հպվել միայն մեկ ծունկը (Եթե գրոհողի գլուխը գտնվում է մրցակցի աջ կողմում, ապա գորգին պնտը է դրվի աջ ծունկը): Հնարքը կարելի է ավարտել մի քանի նդանակով: Դիտարկենք այն դեպքերը, եթե գրոհողի գլուխը գտնվում է մրցակցի աջ կողմում:



Նկ. 17

1. Գրոհողը արագ շրջվում է աջ՝ ձախ ոտքը դնելով տարանուն ոտքի հետևել, աջ ձեռքով բռնում մրցակցի համանուն ոտքի ազդը ներսից, իսկ ձախով՝ իրանը և փոխադրում է ծնկադիր դրության:

2. Գրոհողը շրջվում է աջ՝ ձախ ոտքը դնելով տարանուն ոտքի հետևել, միաժամանակ գլխով երում աջ՝ հետ՝ ներքի, իսկ աջ ձեռքով՝ մրցակցի տարանուն ոտքի ազդը (ծնկի մոտից) հետ՝ ձախ՝ ներքի:

3. Գրոհողը շրջվում է ձախ՝ աջ ոտքը դնում տարանուն ոտքի հետևել և ձախ ձեռքով մրցակցի տարանուն ոտքը (ծնկի մոտից) ձգում հետ՝ աջ՝ ներքի:

Բնորոշ պխազները: 1. Գրոհողի բռնվածքը թույլ է (հարկավոր է կուրծքը ամուր սնդմել մրցակցի ոտքերին): 2. Գրոհողի գլուխը թերքած է ներքի կամ կպած չէ կողքին: 3. Իրանը հեռու է մրցակցից: 4. Գրոհողը մրցակցի ոտքերը բռնելիս քայլերը պխազ է կատարում. եթե գլուխը մրցակցի աջ կողմում է, ապա առաջին քայլը պնտը է կատարել աջ ոտքով:

Տակտիկական պատրաստության միջոցները

Հավասարակշռությունից հանելը: Զնորի և պարանոցի տարբեր բռնվածքներով ձգելով, հրելով կամ ոլորտումներ կատարելով, կարելի է մրցակցին հավասարակշռությունից հանել և իրագործել փոխադրումը:

Կրկնակի գրոհ: Գրոհող ըմբիշը ոտքերը բռնելու առաջին փորձից հետո արագ վնրադանում է ելման դրություն, ընդ որում առաջին փորձը հիմնականում լինում է կնդ. կատարվում է ոչ լրիվ ուժով և արագությամբ: Մրցակիցը ոտքերը հետ դնելուց հետո, եթե փորձում է ընդունել ելման դրություն, գրոհող ըմբիշը արդեն լրիվ ուժով և արագությամբ բռնում է մրցակցի ոտքերը և իրագործում փոխադրում:

Կաշկանդում: Գրոհող ըմբիշը ձեռքերի և պարանոցի տարբեր բռնվածքներով կաշկանդում է մրցակցի գործողությունները, եթե վերջինս փորձում է ազատվել բռնվածքից, նպաստավոր պահ է ստեղծվում ոտքերը բռնելու համար: Գրոհող ըմբիշը բռնելով ոտքերը՝ մրցակցին փոխադրում է ծնկադիր դրության:

Մանկրում: Գորգի վրա անընդհատ տեղաշարժների միջոցով գրոհող ըմբիշը մրցակցին ստիպում է տեղաշարժվել և, եթե վերջինս առաջ է դնում համապատասխան ոտքը, գրոհող ըմբիշը բարձրացնելով մրցակցի ձեռքերը, սուզումով բռնում է ոտքերը և փոխադրում ծնկադիր դրության:

Կանչ: Գրոհող ըմբիշը ոտքը առաջ է դնում կամ ընդունում է բարձր կանգնվածք: Եթե մրցակիցը փորձում է բռնել ոտքը կամ ոտքերը, գրոհողը պաշտպանվում է՝ ոտքերը հետ տանելով, որից հետո, եթե մրցակիցը բարձրանում և ընդունում է ելման դրություն, գրոհողը սուզումով բռնում է ոտքերը և կատարում փոխադրում:

Համակցումներ: 1. Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը ուսի վրայից, ապա՝ Փոխադրում սուզումով բռնած ոտքերը: Գրոհող ըմբիշի մեջքի դարձումից հետո, եթե մրցակիցը պաշտ-

պահանջման ուղղում է իրանը, գրոհողը կրծքով շրջվում է դեպի մրցակիցը և բռնած ձնորի տակից սուզումով բռնում ուղբերը, այնուհետև կատարում փոխադրում:

2. Փոխադրում ձգումով բռնած ձնորը և պարանոցը վերևից, ապա՝ Փոխադրում սուզումով բռնած ուղբերը: Եթե մրցակիցը փորձնով ազատվել պարանոցի բռնվածքից՝ գլուխը բարձրացնում է վեր, գրոհող ըմբիշը բաց է թռողնում պարանոցը, բռնած ձնորը բարձրացնում է և սուզումով բռնում ուղբերը, որից հետո կատարում է փոխադրում:

3. Գցում ուսերի վրայից բռնած տարանուն ձնորը և համանուն ուղբը ներսից, ապա՝ Փոխադրում սուզումով բռնած ուղբերը: Եթե պաշտպանվողը ձնորը բարձրացնելով վեր ազատում է բռնվածքից, գրոհող ըմբիշը ազատ ձնորով բռնում է տարանուն ուղբը, իսկ համանուն ուղբը բռնած ձնորով՝ բռնում է տարանուն ուղբը և մրցակցին փոխադրում ծնկադիր դրույթան:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Պետք է գոտնմարտել ցածր կանգնվածքով՝ ձնորներն առաջ մեկնած: 2. Ձնորների, ձնորի և պարանոցի զանազան բռնվածքներով կաշկանդել գրոհող ըմբիշի գործողությունները:

Աչմիջական: 1. Պաշտպանվող ըմբիշը ուղբերը հետ գցնելով՝ բռնում է գրոհողի պարանոցը վերևից և ձնորը: 2. Պաշտպանվող ըմբիշը ուղբերը հետ է գցում և ձնորները դնելով մրցակցի ծնկներին, չի թռողնում, որ գրոհողը մոտենա իրեն: 3. Պաշտպանվող ըմբիշը մոտիկ ձնորով հրում է մրցակցի կզակը և ուղբը հետ տալով ազատվում է բռնվածքից: 4. Պաշտպանվող ըմբիշը ուղբերը հետ է տանում և մոտիկ ձնորով մրցակցի պարանոցը վերևից սնկմում գորգին:

Հակահնապրները

1. **Փոխադրում ձգումով բռնած ձնորը և իրանը:** Հակահնապր կատարողը բռնում է համանուն ձնորի բազուկը ներսից, ուղբերը հետ է տանում և բռնած ձնորը ձգելով՝ անցնում մրցակցի կողը կամ հետևելը, բռնում է իրանը և կատարում ձգումով փոխադրում:


2. **Փոխադրում ձգումով բռնած ձնորը և ուղբը:** Հակահնապր կատարողը բռնում է համանուն ձնորի բազուկը ներսից, ուղբերը հետ է տանում և բռնած ձնորը ձգելով՝ անցնում կողը, բռնում է տարանուն ուղբի ազդրը դրսից և կատարում ձգումով փոխադրում:

3. **Փոխադրում ձգումով բռնած պարանոցը վերևից և ձնորը:** Հակահնապր կատարողը բռնում է պարանոցը վերևից և տարանուն ձնորի բազուկը դրսից: Ուղբերը հետ է գցում, ձգում է բռնած պարանոցն ու ձնորը և բռնած ձնորի կողմով անցնելով մրցակցի կողը՝ բռնում է տարանուն ուղբի ազդրը կամ իրանը և կատարում փոխադրում:

4. **Գցում արտակորված բռնած իրանը հակադարձ բռնվածքով:** Եթե գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի ուղբերը, պաշտպանվողը հակադարձ բռնվածքով բռնելով գրոհողի իրանը՝ կատարում է արտակորված գցում:

5. **Փոխադրում նստավերելքով բռնած համանուն ուղբը ձնորի վրայից՝ ներսից:** Եթե գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի ուղբերը, հակահնապր կատարողը գրոհողի համանուն ձնորի վրայից բռնում է համանուն ուղբի ազդրը ներսից (նթե գրոհողի գլուխը պաշտպանվողի աջ կողմում է, ապա՝ աջ ձնորով) և ուղբը ձգելով՝ ու ձնորի վրա հենվելով անցնում է նրա հետևելը (նկ 17):

6. **Տապալում ոլորումով բռնած պարանոցը վերևից և տարանուն ձնորը**



Նկ. 17

ՆԵՐՔԻՒԹ: Կատարման նղանակը նկարագրված է «Փոխադրում սուզումով բռնած պարանոցը և իրանը՝ ոտնդիրով» հնարքի 1-ին հակահնարքում:

4.2.1.3. ՓՈԽԱԴՐՈՒՄ ՊՏՈԽԱՆԱՁԵՎ

Այս խմբին բնորոշ տարրը համարվում է իրանի շարժումը, որն իր մեջ համակցում է արտակորումը՝ մեջքի դարձումով դեպի մրցակիցը և մրցակցի ձնորից կամ ոտքից կախվելը: Համատեղ կատարվում է պտույտ՝ բռնած վերջույթի շուրջը: Հենց այդ պտույտի համար էլ հնարքը ստացել է պտուտանաձև անվանումը:


Կախված բռնվածքի ամրությունից, ոտքնի դրությունից, արտակորման բնույթից և պտուտանաձև շարժման տևողությունից կարելի է կատարել նաև պտուտանաձև գցում:

Պտուտանաձև փոխադրումները կարելի են կատարել տարբեր դրություններից. բարձր, միջին և ցածր կանգնվածքներից կամ ծնկած դրությունից: Պտուտանաձև փոխադրումները կարող են կիրառվել որպես հակահնարքներ և հաջողությամբ համակցվում են այլ հնարքների հետ:

ՓՈԽԱԴՐՈՒՄ ՊՏՈԽԱՆԱՁԵՎ ԲՐՆԱԾ ՃՆՈՐԾ

Գրոհող ըմբիշը տարանուն ձնորով բռնում է մրցակցի դաստակը, իսկ համանուն ձնորով՝ համանուն բազուկը ներսից: Այնուհետև, համանուն ոտքը դնում է մրցակցի բռնվածքի մեջ գտնվող ձնորին համանուն ոտքի մոտ և արտակորվելով ու մեջքով դառնալով դեպի մրցակիցը՝ կախվում բռնած ձնորից և պտույտում նրա շուրջը: Արտակորումը կատարվում է մրցակցի բռնվածքի մեջ գտնվող ձնորին տարանուն ոտքի կողմը: Ձնորի շուրջը պտույտը սկսվում է այն ժամանակ, երբ գրոհողի գլուխը արտակորվելիս գտնվում է մրցակցի իրանի կրծքային և գոտկային հատվածների միջև: Պտույտը մրցակցի ձնորի շուրջն ավարտելուց հետո գրոհողի մարմնի պտուտանաձև շարժումը չի

ավարտվում, այլ՝ մրցակցի ձնորից կախվելով՝ շարունակվում է միջև գրոհողի ծնկները գորգին հպվելը: Այս ամենի հետևանքով մրցակիցը կորցնելով հավասարակշռությունը ընկնում է գորգին: Գրոհող ըմբիշը շարունակելով մրցակցի ձնորը բռնել համանուն ձնորով, մյուս ձնորով բռնում է իրանը կամ տարանուն ոտքի ազդրը և անցնում է մրցակցի հետևը (նկ.18):



ԲՆՈՐԾ ԱԽԱՂՅԵՐԸ: 1. Գրոհող ըմբիշը հնարքի կատարման սկզբում համանուն ձնորով ամուր բռնում է մրցակցի ձնորը, ինչը խանգարում է ձնորի շուրջը պտույտվելուն: 2. Ձնորի շուրջը պտույտվելուց հետո գրոհողը համանուն ձնորով ամուր չի բռնում մրցակցի ձնորը: 3. Գրոհող ըմբիշը մրցակցի ձնորից չի կախվում: 4. Ձնորի շուրջը պտույտը գրոհող ըմբիշը շուտ է սկսում:

ՏԱԿՄԻԿԱԼՅԱՆ ՊՏՈԽԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՂԵՆԵՐԸ

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԻց հանելը: Ձնորի և պարանոցի տարբեր բռնվածքներով, տարանուն ձնորի և իրանի բռնվածքներով ձգելով, իրենով կամ ոլորումներ կատարելով կարելի է մրցակցին հանել հավասարակշռությունից և իրագործել պտուտանաձև փոխադրում:

ԿԱԶԿԱՆԴՐՈՒՄ: Գրոհող ըմբիշը ձնորների և պարանոցի, ձնորի և իրանի տարբեր բռնվածքներով կաշկանդում է մրցակցի գործողությունները, երբ վերջինս փորձում է ազատվել բռնվածքից կամ փորձում է գրոհ կազմակերպել նպաստավոր պահ

ստեղծելով պտուտանաձև փոխադրման համար:

Մանկություն: Գորդի վրա անընդհատ տնդաշարժերի միջոցով՝ գրոհող ըմբիշը մրցակցին ստիպում է տնդաշարժվել: Եթե վերջինս դնալի առաջ քայլ կատարելով փորձում է ձեռքը դնել տարանուն ուսին, գրոհող ըմբիշը ձեռքը բռնելով՝ կատարում է պտուտանաձև փոխադրում:

Տամակցումներ: 1. Փոխադրում ձեռքի ձգումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Փոխադրում պտուտանաձև բռնած ձեռքը: Ձեռքի ձգումից հետո, նրա պաշտպանվող ըմբիշը ձեռքը ձգում է հետ, գրոհող ըմբիշի համար տնի է քացվում մրցակցի ձեռքի շուրջը պտուվելու համար: Գրոհող ըմբիշը արտակորվելով, մրցակցի ձեռքից կախվելով պտուվում է նրա ձեռքի շուրջը և իրագործում պտուտանաձև փոխադրում:

2. Տապալում հրելազգումով բռնած տարանուն ձեռքը և իրանը՝ տարանուն ոտքի ներսից կառչումով, ապա՝ Փոխադրում պտուտանաձև բռնած ձեռքը: Հնարի իրագործման ժամանակ, նրա պաշտպանվողը ոտքի կառչումից խուսափելու համար ոտքը հետ է դնում, նպաստավոր դիրք է ստեղծվում պտուտանաձև փոխադրման համար:

3. Տապալում հրելազգումով բռնած ձեռքը համանուն ոտքի հետին ոտնդիրով, ապա՝ Փոխադրում պտուտանաձև բռնած ձեռքը: Եթե պաշտպանվողը հետին ոտնդիրից խուսափելու համար ոտքը հետ է տանում, նպաստավոր դիրք է ստեղծվում պտուտանաձև փոխադրման համար, որից և օգտվում է գրոհող ըմբիշը:

4. Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը, ապա՝ Փոխադրում պտուտանաձև բռնած ձեռքը: Մեջքի դարձումից հետո, նրա պաշտպանվողը իրանը հետ է տանում և քայլում գրոհողի դիմացը, գրոհողն անմիջապես արտակորվելով, մրցակցի ձեռքից կախվելով և նրա շուրջը պտուվելով՝ կատարում է պտուտանաձև փոխադրում:

5. Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Փոխադրում պտուտանաձև բռնած ձեռքը: Գրոհող ըմբիշը կատարում է նոյնը, ինչ-որ վերը նշված համակցման ժամանակ:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Պաշտպանվողը գրտեմարտում է հեռու տարածությունից: 2. Պաշտպանվողը գրտեմարտում է ցածր կանգնվածքով: 3. Պաշտպանվողը տարբեր բռնվածքներով կաշ-կանդում է գրոհողի գրծողությունները:

Անմիջական: 1. Եթե գրոհողը սկսում է արտակորվել, պաշտպանվողը շարժվում է նրա պտույտի ուղղությամբ: 2. Եթե գրոհողն ավարտում է պտույտը մրցակցի ձեռքի շուրջը, պաշտպանվողը շարժվում է մրցակցի գլխի կողմն այնպես, որ հայտնավի նրա դիմացը, այնուհետև բռնվածքի մեջ գտնվող ձեռքով ձգում է նրա համանուն ձեռքը, իսկ մյուս ձեռքով իրանը բռնելով՝ անցնում է մրցակցի հետևելը:

Հականարքները

1. Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և իրանը: Եթե գրոհողն ավարտում է պտույտը մրցակցի ձեռքի շուրջը, պաշտպանվողը շարժվում է մրցակցի գլխի կողմն այնպես, որ հայտնավի նրա դիմացը, այնուհետև բռնվածքի մեջ գտնվող ձեռքով ձգում է նրա համանուն ձեռքը, իսկ մյուս ձեռքով մոտիկ ոտքը բռնելով՝ անցնում է մրցակցի հետևելը:


2. Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և ոտքը: Եթե գրոհողն ավարտում է պտույտը մրցակցի ձեռքի շուրջը, պաշտպանվողը շարժվում է մրցակցի գլխի կողմն այնպես, որ հայտնավի նրա դիմացը, այնուհետև բռնվածքի մեջ գտնվող ձեռքով ձգում է նրա համանուն ձեռքը, իսկ մյուս ձեռքով մոտիկ ոտքը բռնելով՝ անցնում է մրցակցի հետևելը:

4.2.1.4. ՓՈԽԱԴՐՈՒՄ ՆՍՏԱՎԵՐԵԼՔՈՎ

Նստավերելքով փոխադրումների բնորոշ շարժումը համարվում է նստավերելքը՝ ոտքն առաջ դնելով նստելը, ապա բարձրանալով մրցակցի հնտևն անցնելը: Նստավերելքով փոխադրումները կատարվում են բարձր և միջին կանգնվածքից, մոտ և հեռու տարածությունից: Նրանք կարող են կիրառվել նաև որպես հականարքներ:

Փոխադրում նստավերելքով բռնած սրուճները հետևից

Այս հնարքի կատարման համար ամենից առաջ անհրաժեշտ է չեզոքացնել մրցակցի ձեռքները, որոնք կարող են խանգարել գրոհող ըմբիշի գործողություններին: Այդ նպատակով, գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի տարածուն դաստակները և ձեռքները տարածում կողմ՝ վեր (նկ. 19 ա): Կարենի է նաև մրցակցի երկու ձեռքն էլ ձգել մի կողմի վրա՝ աջ կամ ձախ և բարձրացնել վեր: Այնուհետև գրոհող ըմբիշը համանուն ոտքով մեծ քայլ է կատարում և մրցակցի առաջ դրված ոտքի մոտ նստում՝ համանուն ձեռքով բռնելով մրցակցի սրուճը ներսից (նկ. 19 բ): Հենավելով մրցակցի բռնած ոտքին, գրոհող ըմբիշը մի փոքր բարձրանում է, անցնում նրա հնտևը և ազատ ձեռքով բռնում մրցակցի համանուն սրուճը ներսից (նկ. 19 գ): Ապա



կրծքով մրցակցին հրում է առաջ և զցում գորգին (նկ. 19 դ):

Բնորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիշը նստում է մրցակցի ոտքից հետու: 2. Գրոհող ըմբիշը մրցակցի հնտևն անցնելիս չի հենվում նրա ոտքին: 3. Մրցակցին գորգին զցնելիս գրոհողը չի կիրառում իր մարմնի քաշը:

Տակտիկական պատրաստության միջոցները

Մանկուում: Գորգի վրա անընդհատ տնդաշարժվելով՝ գրոհող ըմբիշը մրցակցին ստիպում է առաջ գննի համապատասխան ոտքը, ապա չեզոքացնելով նրա ձեռքները կատարում է նստավերելքով փոխադրում:

Համակցումներ: Փոխադրում ձգումով բռնած պարանոցը վերսից և ձեռքը, ապա՝ Փոխադրում նստավերելքով բռնած սրուճները հետևից: Զգումից հետո, երբ պաշտպանվող ըմբիշը փորձում է բարձրանալ, գրոհողը քաց է թողնում մրցակցի գլուխը և բռնած ձեռքը տարածելով՝ կատարում է նստավերելքով փոխադրում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Տարբեր բռնվածքներով կաշկանդել մրցակցի գործողությունները: 2. Գոտեմարտել ցածր կանգնվածքով:

Անմիջական: 1. Ոտքը հետ տանել և ձեռքներով հենվել գրոհողի ուսերին: 2. Եթե գրոհողը բռնել է մենք ուրք, ապա պաշտպանվողը մյուս ոտքը առաջ է տանում, մարմնով մրցակցի վրա հենվելով, նրա գլուխը սեղմում է գորգին՝ բռնած ոտքին համանուն ձեռքով:

Հականարքները

1. Փոխադրում ձգումով բռնած պարանոցը վերսից և ձեռքը: Եթե գրոհողը նստելով փորձում է բռնել մրցակցի ոտքը,

հականարք կատարող ըմբիշը ոտքը հնտ է տանում, բռնում նրա տարանուն ձեռքը և պարանցը վնրկից: Այնուհետև ձգում կատարելով անցնում է մրցակցի հետևը:

2. Ծրջում զլորումով բռնած ձեռքը և պարանցը ստույկ: Եթե գրոհողը նստելով փորձում է բռնել մրցակցի ոտքը, հականարք կատարող ըմբիշը հնտ է տանում ոտքը, բռնում նրա տարանուն ձեռքը և պարանցը վնրկից՝ միասին: Այնուհետև, հականարք կատարող ըմբիշը գլուխը դրսի կողմից մտցնելով մրցակցի բռնած թեփի տակ՝ կատարում է կամրջագլորում:

3. Ծրջում թափագլորումով՝ ազդի հակադարձ բռնվածքով: Եթե գրոհողը նստելով բռնում է մրցակցի ոտքը, հականարք կատարող ըմբիշը մյուս ոտքով մեծ քայլ է կատարում մրցակցի տարանուն ոտքի կողմը և հակադարձ բռնվածքով բռնում նրա հնոու ոտքի ազդը: Այնուհետև կրծքով շրջվում է դնափի մրցակցի իրանը, արտակորվում և կատարում թափագլորումով շրջում:

4.2.2. ԳՅՈՒՄՆԵՐ

Գյումները այն տեխնիկական գործողություններն են, որոնց կատարման ժամանակ գրոհող ըմբիշը մրցակցին գորգից կտրելով գցում է վտանգավոր դրության մեջ: Գյումները լինում են թեքումով, մեջքի դարձումով (մեջքի վրայից), արտակորված, ուսերի վրայից (պտտումով), պտուտանածև:


4.2.2.1. ԳՅՈՒՄ ԹԵՔՈՒՄՈՎ

Այս խմբի գցումներին բնորոշ տարրը գրոհող ըմբիշի իրանի թեքումն է՝ առաջ՝ հնարքի կատարման վերջնամասում: Այս խմբի հնարքները իրենց կառուցվածքով բարդ չեն, ուստի նրանց ուսուցումը և կատարելագործումը ուսուցման բոլոր փուլերում մատշելի են ըմբիշներին: Սակայն սրանց կատարումը պահանջում է ուժային կարողության բավական մեծ մակարդակ:

Թեքումով գցումները հեշտությամբ համակցվում են բազմաթիվ հնարքների հետ:

Գյում թեքումով բռնած իրանը և տարանուն ոտքը ներսից

Այս հնարքը թեքումով գցումների մեջ ամենատարածվածն է, և ամենաարդյունավետը: Այն նպատակահարմար է կատարել բարձր և միջին կանգնվածքներից, մտու և միջին տարածություններից: Այս հնարքը կատարելու համար գրոհող ըմբիշը նախ պետք է բռնի մրցակցի ոտքները՝ գլուխը կողքից և նրան բարձրացնի ուսերին: Եթե գրոհող ըմբիշի գլուխը մրցակցի աջ կողքին է, ապա նրան մոտենաւում է աջ ոտքի բայլով: Ակզրում կարող է բռնել մրցակցի աջ ոտքը, այնուհետև՝ ձախը կամ միանգամից բռնել երկու ոտքները: Մրցակցին բարձրացնելու ժամանակ գրոհող ըմբիշի ոտքները պետք է դրված լինեն մրցակցի ոտքների մոտ՝ ուսերի լայնությամբ, ուսերը նրա ոտքներին և իրանին հպած (նկ. 20 ա): Մրցակցին ուսերին բարձրացնելուց հետո գրոհող ըմբիշը տարանուն ձեռքով բռնում է ազդը ներսից (եթե գլուխը մրցակցի աջ կողքին է, ապա բռնում է նրա աջ ոտքը), իսկ մյուս ձեռքով բռնում է իրանը (նկ. 20 բ): Այնուհետև առաջ թեքվելով, մրցակցի իրանն ու ոտքը կորագծով դնափի ներքև՝ բռնած ոտքի կողմը ձգնելով՝ նրան գցում է մեջքի վրա (նկ. 20 գ):



Հնորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիշը գլուխը կախում է:
2. Գրոհողը ոտքները ուսերից լայն՝ կամ մրցակցից հնոու է դնում:
3. Գրոհող ըմբիշը չափազանց շատ է թերվում իրանը բռնած ձնորի կողմը:

Տակտիկական պատրաստության միջոցները

Նպաստավոր իրավիճակի ստեղծում: 1. Անհրաժեշտ է բռնել մրցակցի տարանուն ձնորների դաստակները և տարածել կողմ: Եթե մրցակցը ձնորները դնում է գրոհողի ուսերին, ապա Վերջինս տարանուն ձնորներով բարձրացնում է պաշտպանվողի ձնորները արմնկային հոդի մոտից: 3. Տարանուն ձնորով պնտը է բռնել մրցակցի բազուկը, իսկ մյուս ձնորով՝ պարանոցը և ձգնի դնակի բռնած ձնորի կողմը՝ հետ՝ ներք: Եթե պաշտպանվող ըմբիշը հակազդում է հարձակվողին և սկսում է բարձրանալ, հարկավոր է նրա պարանոցը ձգնի հակառակ ուղղությամբ և բռնած ձնորը տարածել կողմ:

Մանկրում: Գորգի վրա անընդհատ տեղաշարժվելով գրոհող ըմբիշը մրցակցին ստիպում է առաջ դնել համապատասխան ոտքը, ապա չնզորացնելով նրա ձնորները՝ բռնում է նախ մեկ ոտքից, ապա՝ մյուսից:

Կաշկանդում: Գրոհող ըմբիշը ձնորների և պարանոցի տարբեր բռնվածքներով կաշկանդում է մրցակցի գործողությունները, եթե Վերջինս փորձում է ազատվել բռնվածքից, ապա նպաստավոր պահ է ստեղծվում ոտքներից բռնելու համար: Գրոհող ըմբիշը բռնելով մրցակցի ոտքները՝ նրան բարձրացնում է կատարում թերպումով գցում:

Կրկնակի զրոհ: Գրոհող ըմբիշը ոտքները բռնելու առաջին փորձից հետո արագ վերադառնում է նշման դրություն, ընդ որում առաջին փորձը հիմնականում լինում է կենդ, որը կատարվում է ոչ լրիվ ուժով և արագությամբ: Մրցակցը ոտքները հետ դնելուց հետո, եթե փորձում է ընդունել նշման դրություն, գրոհող ըմբիշը

արդին լրիվ ուժով և արագությամբ բռնում է մրցակցի ոտքները և բարձրացնում ուսերին:

Կրկնակի տեսախարություն (խարկանք): Գրոհող ըմբիշը մրցակցի ոտքները բռնելու փորձը իրամցնում է որպես կեղծ հնարք՝ սպառնալիք: Նա միևնույն գործողությունը կատարում է նրկու և ավելի անգամ: Առաջին և մնացած փորձները բացի վերջինից կեղծ են: Այստեղ գլխավորը՝ տնապանվածությունն է: Մի քանի կեղծ գրոհները մրցակցին հաճախացնում են և նա թուլացնելով զգունությունը, այլևս չի արձագանքում գրոհներին:

Սպառնալիք: Գրոհող ըմբիշը մրցակցին սպառնում է պլարանոցի (վերևից) և ձնորի բռնվածքով, պաշտպանվող ըմբիշը բարձրացնում է իրանը և գլուխը՝ ընդունելով միջին կամ բարձր կանգնվածք: Այդ պահին բաց թողնելով պաշտպանվողի պարանոցը՝ գրոհող ըմբիշը բռնած ձնորը տարածում է կողմ և ոտքներից բռնելով՝ նրան բարձրացնում ուսերին:

Համակցումներ: 1. Փոխադրում ձգումով բռնած պարանոցը վերևից և ձնորը, ապա՝ Գցում թերպումով բռնած իրանը և տարանուն ոտքը ներսից: Պաշտպանվող ըմբիշը փորձնելով պաշտպանվել առաջին հնարքից, բարձրացնում է իրանը և գլուխը՝ ընդունելով միջին կամ բարձր կանգնվածք: Այդ պահին բաց թողնելով պաշտպանվողի պարանոցը, գրոհող ըմբիշը բռնած ձնորը տարածում է կողմ և ոտքները բռնելով՝ նրան բարձրացնում ուսերին:

2. Տապալում իրենագցումով բռնած համանուն ձնորը ներսից՝ համանուն ոտքի ներսից կառչումով, ապա՝ Գցում թերպումով բռնած իրանը և տարանուն ոտքը ներսից: Պաշտպանվելով առաջին հնարքից՝ մրցակցը ձգում է ձնորը և փորձում կանգնել ոտքների վրա: Կաթակվող ըմբիշը բաց է թողնում մրցակցի ձնորը և կառչած ոտքը գրոգին դնելով՝ բռնում է պաշտպանվողի ոտքները և նրան բարձրացնում ուսերին:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Տարբեր բռնվածքներով կաշկանդել մրցակցի գործողությունները: 2. Գոտնմարտել ցածր կանգնվածքով:

Անմիջական: 1. Ուժերը հետ տաճել և ձեռքներով հենվել գրոհողի ծնկներին: 2. Ուժերը հետ տաճել և մոտիկ ձեռքով մրցակցի գլուխ սեղմել գորգին: 3. Ուժերը հետ տաճել և բռնել մրցակցի պարանոցը (վերևից) և ձեռքը:

Հակահնարքները

1. Գցում արտակորված իրանի հակադարձ բռնվածքով: Եթե գրոհողը ըմբիշը բռնում է մրցակցի ոտքերը, հակահնարք կատարողը հակադարձ բռնվածքով բռնելով գրոհողի իրանը՝ կատարում է արտակորված գցում:

2. Գցում արտակորված բռնած պարանոցը վերևից և ձեռքը՝ միասին: Եթե գրոհող ըմբիշը փորձում է բռնել մրցակցի ոտքերը, պաշտպանվողը ոտքերը հետ է տաճում և բռնելով մրցակցի տարանուն ձեռքը և պարանոցը միասին՝ կատարում է արտակորված գցում:

3. Փոխադրում ձգումով բռնած տարանուն ձեռքը և պարանոցը վերևից: Եթե գրոհող ըմբիշը փորձում է բռնել մրցակցի ոտքերը, հակահնարք կատարողը ոտքերը հետ է տաճում և բռնելով պարանոցը (վերևից) և տարանուն ձեռքը՝ կատարում է ձգումով փոխադրում:

4. Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և ոտքը: Եթե գրոհող ըմբիշը փորձում է բռնել մրցակցի ոտքը կամ ոտքերը, հակահնարք կատարողը ոտքերը հետ է տաճում, ձգում է մրցակցի համանուն ձեռքը և բռնելով տարանուն ոտքը՝ անցնում է նրա հետևը:

4.2.2.2. ԳՅՈՒՄ (ՊՏՏՈՒՄՈՎ) ՈՒՍԵՐԻ ՎՐԱՅԲ (ԶՐԱԴԱՑ)

Այս խմբի հնարքների բնորոշ տարրը համարվում է պտտումը, որը կատարում է գրոհող ըմբիշը՝ մրցակցին պտտնելով իր պարանոցի շուրջը: Ուսերի վրայից գցումների հաճախակի կիրառումը բացադրվում է նրանով, որ այս հնարքներն իրենց կտուցվածքով համեմատաբար մատչելի և ավելի անվտանգ են, քանի որ կատարվում են ծնկների վրա կանգնած դրությունից և ունեն ոչ մեծ լայնույթ (ամպլիտուդա): Հակահնարքների տարբերակները շափազանց քիչ են, քանի որ գրոհող ըմբիշի թիավաները ամբողջովին «փակված» են մրցակցի իրանով և անհաջողության դեպքում՝ գրոհողը կարող է անցնել այլ հնարքների կատարման:

Ուսերի վրայից (պտտումով) գցումների բազմաթիվ տարբերակներ կան, որոնք միմյանցից տարբերվում են ձեռքի և ոտքի բռնվածքներով, գրոհողի ոտքերի դիրքով և գրոհի ուղղությամբ: Այս գցումների հաջող կատարման համար անհրաժեշտ է իրանի, ձեռքերի և ոտքերի մկանների մեծ ուժ:


Ուսերի վրայից (պտտումով) գցումները հեշտությամբ համակցվում են սուզումով փոխադրումների, թեքումով գցումների, հրելագցումով տապալումների հետ:

Գցում (պտտումով) ուսերի վրայից բռնած տարանուն ձեռքը և համանուն ոտքը

Սովորաբար այս հնարքը կատարվում է մրցակցի առաջ դրված ոտքի ուղղությամբ: Եթեն առաջ է դրված մրցակցի աջ ոտքը, ապա գրոհող ըմբիշը ձախ ձեռքով բռնում է նրա աջ ձեռքի բազուկը վերևից՝ և դեպի վեր՝ դեպի իրեն ձգնելով՝ սուզվում է բռնած թևի տակից (նկ.21 ա, բ): Գրոհող ըմբիշը մրցակցին մոտենում է աջ ոտքի քայլով և աջ ծունկը դնելով գորգին (մրցակցի ոտքերի միջև), աջ կողմով շրջվում է դեպի մրցակցից և աջ ձեռքով բռնում նրա համանուն ոտքի ազդը ներսից (նկ.21 գ):

Մրցակցի պտուղումը գրոհողի պարանոցի շուրջ իրականացվում է գրոհողի ձախ ձեռքի դնափի ներքև և աջ ձեռքի դնափի վեր ուղղված ջանքերի միջոցով: Վերջին գործողությունների հետ միաժամանակ գրոհողը պետք է իրանոլ թերքի հնարքի կատարման ուղղությամբ:

Մրցակցին ուսերի վրայից գցելուց հետո (նկ. 21 դ, ե) գրոհող ըմբիշը բաց է թողնում նրա ոտքը և բռնելով մրցակցի իրանը կամ պարանոցը փորձում է նրա թիակները սեղմել գորգին:



Նկ. 21

Հնորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիշը հնարքը կատարում է հետու տարածությունից: 2. Զենքի բռնվածքը գրոհողը կատարում է արմենկային հորի մոտից: 3. Գրոհողը մրցակցի ձեռքը բռնում է ոչ թե իր պարանոցի՝ այլ ուսի վրայից: 4. Գրոհող ըմբիշը իշնում է ծնկներին՝ առանց նախապես մրցակցի ձեռքից ձգնելու:

Տակտիկական պատրաստության միջոցները

Նույստավոր իրավիճակի ստեղծում: 1. Բռնել մրցակցի ձեռքը և պարանոցը: Պարանոցը ձգել դնափի բռնած ձեռքի

ուղղությամբ, այնուհետև, ձեռքը և պարանոցը ձգել ներքև՝ հետ: Եթե մրցակցը ձգուում է ընդունել նվազա դրություն, գրոհող ըմբիշը բռնած ձեռքը բարձրացնում է և թևի տակով սուզվելով բռնում է համանուն ոտքը և կատարում ուսերի վրայից (պտուղումով) գցում: 2. Բռնել մրցակցի բազուկները վերևից և նրան հրեն: Եթե մրցակցը փորձում է հակազդել, գրոհող ըմբիշը մրցակցին ձգում է դնափի իրեն և համապատասխան ձեռքը բարձրացնում, այնուհետև սուզվելով բռնում է համանուն ոտքը և կատարում ուսերի վրայից (պտուղումով) գցում:

Կաշկանդում: Գրոհող ըմբիշը բռնելով մրցակցի տարանուն ձեռքների բազուկները՝ կաշկանդում է նրա գործողությունները: Եթե մրցակցը փորձում է ազատվել բռնվածքից, գրոհող ըմբիշը սկսում է հնարքը և կատարում ուսերի վրայից (պտուղումով) գցում:

Սպառնալիք: Բռնելով մրցակցի տարանուն ձեռքի բազուկը՝ գրոհող ըմբիշը փորձում է մյուս ձեռքով բռնել նրա տարանուն ոտքը՝ դրսից: Եթե մրցակցը ոտքը հետ է դնում, գրոհողը բռնում է համանուն ոտքը ներսից և կատարում ուսերի վրայից (պտուղումով) գցում:

Համակցումներ: 1. Տապալում հրենազցումով բռնած տարանուն ձեռքը և համանուն ոտքը ներսից, ապա՝ Գցում (պտուղումով) ուսերի վրայից բռնած տարանուն ձեռքը և համանուն ոտքը: Այն պահին, եթե մրցակցը պաշտպանվում է առաջին հնարքից՝ իրանը թերթելով առաջ, գրոհող ըմբիշը կատարում է ուսերի վրայից (պտուղումով) գցում:

2. Գցում արտակորված բռնած ձեռքները վերևից տարանուն ոտքի նզրային տակահատումով, ապա՝ Գցում (պտուղումով) ուսերի վրայից բռնած տարանուն ձեռքը և համանուն ոտքը: Այն բանից հետո, եթե գրոհող ըմբիշը մրցակցին ձգում է դնափի իրեն և աջ՝ աջ ոտքով փորձելով կատարեն տարանուն ոտքի նզրային տակահատում, մրցակցը իրանը ձգում է հակառակ ուղղությամբ

և ձախ ոտքը հետ է տանում: Այդ պահին գրոհող ըմբիշը մրցակցի աջ ձնորի տակից սուզվելով՝ համանուն ձնորով բռնում է նրա աջ ոտքը ներսից և կատարում ուսերի փրայից (պտտումով) գցում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Պաշտպանվողը գոտեմարտում է բարձր կանգնվածքով; 2. Պաշտպանվողը զանազան բռնվածքներով կաշկանդում է մրցակցի գործողությունները:

Անմիջական: 1. Պաշտպանվողը բռնվածքի մեջ գտնվող ձնորով բռնում է մրցակցի ուսը ներքից; 2. Պաշտպանվողը ուսքը արագորեն հետ է տանում՝ բռնելով մրցակցի պարանոցը վերսից և տարանուն ձնորը:

Հականարձները

1. Փոխադրում ձգումով բռնած պարանոցը վերսից և ձնորը: Եթե գրոհող ըմբիշը մրցակցի ձնորը բռնելուց հետո փորձում է բռնել նաև համանուն ոտքը, հականարք կատարողը ուսքերը հետ է տանում և բռնվածքի մեջ գտնվող ձնորով բռնում է գրոհողի պարանոցը վերսից, իսկ մյուս ձնորով՝ տարանուն ձնորը և կատարում ձգումով փոխադրում:

2. Տապալում ոլորումով բռնած պարանոցը վերսից: Հականարք կատարող ըմբիշը բռնվածքի մեջ գտնվող ձնորով բռնում է գրոհողի պարանոցը վերսից և տարանուն ոտքը դնելով մրցակցի տարանուն ոտքի հետևը, իրանով պտտվելով պարանոցը բռնած ձնորին հակառակ՝ կատարում է ոլորումով տապալում (նկ. 22):



Նկ. 22

3. Տապալում ոլորումով բռնած տարանուն ուսը ներքից: Հականարք կատարող ըմբիշը բռնվածքի մեջ գտնվող ձնորով բռնում է մրցակցի ուսը ներքից և նրան մի փոքր ձգելով դնալի իրեն շրջում է բռնած ձնորին հակառակ և կատարում ոլորումով տապալում: Այս

հնարքի արդյունավետությունն ավելի է մեծանում, եթե «փակում» է մրցակցի տարանուն ոտքը (նկ. 23):



Նկ. 23


4.2.2.3. ԳՅՈՒՄ ՄԵԶՔԻ ԴԱՐՁՈՒՄՈՎ (ՄԵԶՔԻ ՎՐԱՅԻՑ)

Այս խմբի հնարքների բնորոշ տարրը գրոհող ըմբիշի մեջքի դարձումն է, դնալի մրցակիցը, որին հետևում է թեքումը և գորգին ընկնելը: Մեջքի դարձումով գցումները կատարվում են տարբեր բռնվածքներով, հեշտ են համակցվում այլ հնարքների հետ և կիրաւում են որպես հականարքներ: Այս հնարքները նպատակահարմար է կատարել բարձր և միջին կանգնվածքներից, մոտ և միջին տարածություններից:

Գցում մեջքի դարձումով բռնած ձնորը և պարանոցը

Գրոհող ըմբիշը տարանուն ձնորով բռնում է մրցակցի ձնորը արմնկային հոդից վեր (ձնորը կարճի է բռնել ներքից կամ վերսից), իսկ մյուս ձնորը դնում է մրցակցի տարանուն ուսին (նկ. 24 ա): Եթե գրոհող ըմբիշը բռնել է մրցակցի աջ ձնորը, ապա աջ ոտքը դնում է մրցակցի համանուն ոտքի մոտ ներսի կողմից և մեջքով դարնալով դնալի մրցակից՝ ձախ ոտքը դնում է համանուն ոտքի մոտ՝ ներսի կողմից (նկ. 24 բ, գ):

Այնուհետև աջ ձեռքով բռնում է մրցակցի պարանոցը և նրա կործը ամուր սեղմում է իր աջ կողքին, իսկ բռնվածքի մեջ գտնվող ձեռքը՝ կրծքին: Այս պահին գրոհող ըմբիշի կոնքը պետք է պտտված լինի աջ, այնպես, որ նստամկանի մի մասը միայն դիավակ մրցակցի աջ ոտքին, իսկ ոտքները պետք է ծալված լինեն այնքան, որ գրոհողի կոնքը հավասար կամ ցածր լինի մրցակցի կոնքից: Գրոհող ըմբիշի դիրքը պետք է հիշեցնի սեղմված զապանակ (նկ. 24 դ): Մեջքի դարձումն ավարտելուց անմիջապես հետո հարկավոր է մրցակցին կտրել գորգից: Դրա համար հարկավոր է ծալված ոտքերն ուղղելով թեքվել ներքի՝ աջ, իսկ ձեռքները ծագել ներքի՝ ձախ (նկ. 24 ե, զ): Գորգին հասնելուն պես հարկավոր է նստել, ձախ ոտքը հետ տանել՝ որպես հենման կետ, և առանց բռնվածքը բաց թողնելով՝ մրցակցի թիակները սեղմել գորգին (նկ. 24 է):



Բնորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիշը սխալ է կատարում մեջքով դարձումը: 2. Մեջքով դարձումից հետո գրոհող ըմբիշի կոնքը մրցակցի կոնքից ավել բարձր մակարդակի վրա է գտնվում: 3. Հնարքի կատարման ժամանակ գրոհող ըմբիշը բաց է թողնում ձեռքի բռնվածքը: 4. Առաջ դրված ոտքը գրոհողը դնում է մրցակցի ոտքի մոտ՝ դրսի կողմից: 5. Գրոհողի կոնքն ամբողջովին գտնվում մրցակցի ոտքի դրսի կողմում: 6. Հնարքի կատարման ժամանակ գրոհող ըմբիշը գլուխը դնում է գորգին:

Տակտիկական պատրաստության միջոցները


Նպաստավոր իրավիճակի ստեղծում: 1. Բռնել մրցակցի բազուկները և հրեն, իսկ երբ մրցակիցը փորձում է հակազդել, կատարել մեջքի դարձումով գցում: 2. Բռնել մրցակցի պարանոցը վերևից և ձեռքը: Երբ պաշտպանվող ըմբիշը սուզումով փորձում է բռնել մրցակցի մեջքը կամ ուղղակի գլուխն ազատել բռնվածքից, գրոհող ըմբիշն անմիջապես բաց թողնելով պարանոցը՝ կատարում է մեջքի դարձումով գցում:

Կաշկանդում: Տարանուն ձեռքով բռնել մրցակցի բազուկը վերևից, իսկ համանուն ձեռքով՝ դաստակը կողքից: Երբ պաշտպանվող ըմբիշը փորձելով ազատվել բռնվածքից, ազատ ձեռքը դնում է գրոհողի գլխին կամ բռնում է դաստակը բռնած ձեռքը, գրոհող ըմբիշը բռնելով նրա ձեռքը և պարանոցը՝ կատարում է մեջքի դարձումով գցում:

Մանկում: Գորգի վրա անընդհատ տնտաշարժների միջոցով գրոհող ըմբիշը ստեղծում է հնարքի կատարման համար նպաստավոր պահ և կատարում մեջքի դարձումով գցում:

Սպառնալիք: Գրոհող ըմբիշը մրցակցին սպառնում է պարանոցի՝ վերևից բռնվածքով: Պաշտպանվող ըմբիշը գլուխը բարձրացնելով՝ հարմար պահ է ստեղծում մեջքի դարձումով գցումի համար:

Համակցումներ: 1. Գցում արտակրոված բռնած ձեռքը և իրանը միասին, ապա՝ Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը և պարանցը: Պաշտպանվելով առաջին հնարից՝ ըմբիշը հեռանում է մրցակցի և կախվում: Գրիհող ըմբիշը, իրանը բռնած ձեռքով բռնում է մրցակցի տարանուն ձեռքը ներքսից, իսկ մյուս ձեռքով՝ պարանցը և կատարում մեջքի դարձումով գցում (նկ. 25):



2. Փոխադրում ձգումով բռնած պարանցը վերևից և ձեռք, ապա՝ Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը և պարանցը: Եթե պաշտպանվող ըմբիշը զլուս բարձրացնելով և իրանը ուղղելով պարանցը ազատում է բռնվածքից, գրիհող ըմբիշը, բռնելով ձեռքը և պարանցը՝ կատարում է մեջքի դարձումով գցում:


Պաշտպանություններ

Նախնական: 1. Գոտեմարտել ցածր կանգնավածքով; 2. Զանգան բռնվածքներով կաշկանդել մրցակցի գործողությունները:

Անհջական: 1. Կրանստել, հեռանալ մրցակցից, բռնել նրա իրանը կամ մոտիկ ոտքը:

Հակահնադրներ


Գցում արտակրոված բռնած իրանը՝ հետևից: Մեջքի դարձման ժամանակ ծանրության կենտրոնը իջնցնել ներքի և իրանը բռնելով կատարել արտակրոված գցում (նկ.26):



Փոխադրում սուզումով բռնած ոտքերը: Մեջքի դարձման ժամանակ ձեռքի տակով սուզվելով բռնել մրցակցի ոտքերը և կատարել փոխադրում:

Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը

Գրիհող ըմբիշը տարանուն ձեռքով բռնում է մրցակցի ձեռքը վերևից (դաստակից, բազկից), այնուհետև, կատարելով մեջքի դարձում՝ համանուն ձեռքով բռնում է մրցակցի բազուկը իր ուսի վրայից: Այդ պահին գրիհող ըմբիշի ոտքերը պնտք է ծալված լինեն այնքան, որ գրիհողի կոնքը հավասար կամ ցածր լինի մրցակցի կոնքից: Գրիհող ըմբիշի դիրքը պնտք է հիշեցնի սեղմված զապանակ: Որից հետո գրիհող ըմբիշը թերվելով դնափի առաջ և ձախ (աջակողմյան կանգնվածքի դնապրում), միաժամանակ մրցակցի ձեռքը ձգում է ներքի՝ ձախ և գորգին ընկնելով կատարում է գցում (նկ. 27 ա, բ, գ): Մրցակցի թիակները գորգին սեղմելու համար գրիհող ըմբիշը աջ ձեռքով բռնում է նրա համանուն ձեռքը և դնափի ձախ շարժվելով, ձախ ձեռքով բռնում մրցակցի պարանցը՝ վերևից (նկ. 27 դ):



Հնորոշ սխալները: 1. Գրիհող ըմբիշը սխալ է կատարում մեջքով դարձումը: 2. Հնարքի կատարման ժամանակ գրիհող ըմբիշը բռնում է մրցակցի համանուն ձեռքը արմնկային հողից ներքև: 3. Գրիհողի կոնքն ամբողջովին զտնվում մրցակցի ոտքի դրսի կողմում: 4. Գյման ժամանակ գրիհող ըմբիշը չի ընկնում գորգին:

Տակողիկական պատրաստության միջոցները

Նպաստավոր իրավիճակի ստեղծում: 1. Մրցակցի բազուկները կամ բազուկը և պարանոցը բռնելով՝ իրեն, եթե մրցակցը փորձում է հակագդել, ձեռքը բռնելով կատարել մեջքի դարձումով գցում: 2. Բռնել մրցակցի պարանոցը վերևից և ձեռքը: Եթե պաշտպանվող ըմբիշը սուզումով փորձում է բռնել մրցակցի մեջքը կամ ուղղակի գլուխն ազատել բռնվածքից, գրիհող ըմբիշը անմիջապես բաց է թողնում պարանոցը և ձեռքը բռնելով՝ կատարում է մեջքի դարձումով գցում:

Կաշկանդում: Տարանուն ձեռքով բռնել մրցակցի բազուկը վերևից, իսկ համանուն ձեռքով՝ դաստակը կողքից: Եթե պաշտպանվող ըմբիշը փորձելով ազատվել բռնվածքից, ազատ ձեռքը դնում է գրիհողի գլխին, գրիհող ըմբիշը, բռնելով նրա ձեռքը՝ կատարում է մեջքի դարձումով գցում:

Մանկրում: Գրիհող վրա անընդհատ տենդաշարժների միջոցով գրիհող ըմբիշը ստեղծում է հնարքի կատարման համար նպաստավոր պահ: Այսուհետև, ձեռքը բռնելով կատարում է մեջքի դարձումով գցում:

Սպառնալիք: Գրիհող ըմբիշը մրցակցին սպառնում է պարանոցի վերևից բռնվածքով: Պաշտպանվող ըմբիշը գլուխը բարձրացնելով հարմար պահ է ստեղծում մեջքի դարձումով գցումի համար:

Համակցումներ: 1. Գցում արտակորված բռնած ձեռքը և իրանը միասին, ապա՝ Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը: Պաշտպանվելով առաջին հնարքից՝ ըմբիշը հեռանում է մրցակցից և կալվում: Գրիհող ըմբիշը թուլացնում է բռնվածքը, եթե մրցակցը սկսում է բարձրացնել իրանը, այդ պահին պետք է բաց թողնել իրանը և կատարել մեջքի դարձումով գցում:

2. Փղսադրում ձգումով բռնած պարանոցը վերևից և ձեռքը, ապա՝ Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը: Եթե պաշտպանվող ըմբիշը, գլուխը բարձրացնելով և իրանը ուղղելով պարանոցն ազատում է բռնվածքից, գրիհող ըմբիշն անմիջապես բաց է թողնում պարանոցը և կատարում մեջքի դարձումով գցում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Գոտնմարտել ցածր կանգնվածքով: 2. Զանազան բռնվածքներով կաշկանդել մրցակցի գործողությունները:

Անմիջական: 1. Կրանստենլ, հեռանալ մրցակցից, բռնել նրա մոտիկ ոտքը:

Հականարքները

Գցում արտակորված բռնած ձեռքը և իրանը միասին՝ հետևից: Մեջքի դարձման ժամանակ ծանրության կենտրոնը

իշեցնել ներքև, և ձեռքն ու իրանը միասին բռնելով՝ կատարել արտակորված գցում:


4.2.2.4. ԳՅՈՒՄ ԱՐՏԱԿՈՐՎԱԾ

Այս խմբի հնարքների հիմնական շարժումը համարվում է դեպի հետ ընկնելիս գրոհող ըմբիշի արտակորումը և մրցակցին իր կրծքի վրայից գցնելը: Արտակորված գցումների ժամանակ գրոհող ըմբիշը պետք է այնպիսի դիրք ընդունի, որ իր ծանրության կենտրոնն ավելի ցածր լինի մրցակցի ծանրության կենտրոնից: Այս հնարքների արդյունավետությունը մեծանում է ուժքով կատարվող գործողությունների շնորհիվ (տակահատումներ, ուժնափառաթառումներ):

Արտակորված գցումները հնչությամբ համազգում են թեքումով գցումների և տապալումների հետ:

Գցում արտակորված բռնած ձեռքը և իրանը՝ ներսից ոտնափառաթառումով

Գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի տարանուն բազուկը վերևից, իսկ մյուս ձեռքով՝ տարանուն ձեռքի դաստակը, որից հնտո կատարում է տարանուն ուժի ներսից ուժնափառաթառում: (նկ. 28 ա):



Այսուհետև, գրոհող ըմբիշը մյուս ուժով դնում է մրցակցի ուժքորի միջև և դաստակը բռնած ձեռքով բռնում է մրցակցի իրանը: Գրոհողի այսպիսի փիճակը անկայուն է: Նա սկսում է արտակորվել և «փաթաթած» ուժքով մրցակցին գրգիծ կտրել: Գրոհող ըմբիշը շրջվնով «փաթաթած» ուժքի կողմը՝ մրցակցին գցում է կրծքի վրայից (նկ. 28 բ, գ):

Բնորդ սխալները: 1. Բռնվածքը թույլ է: 2. Գրոհող ըմբիշի իրանի, ձեռքորի և ուժքորի աշխատանքը համաձայնցված չէ: 3. Գրոհող ըմբիշը պահանջվածից քիչ է արտակորվում: 4. «Փաթաթած» ուժքով մրցակցի ուժքը չի բարձրացնում:

Տակտիկական պատրաստության միջոցները

Կանչ: Գրոհող ըմբիշը մրցակցին առջևից իրանի բռնվածք կատարելու հնարավորություն է ստեղծում, որից հետո համապատասխան բռնվածքով արտակորված գցում է կատարում:

Մաներում: Գրոհող ըմբիշը իրականացնում է տարանուն բազուկի վերևից բռնվածք և գորգի վրա տեղաշարժերի միջոցով հարմար պահ ստեղծում ուժնափառաթառման համար: Որից հետո համապատասխան բռնվածքով կատարում է արտակորված գցում:

Համակցումներ: 1. Տապալում ոլորումով բռնած ձեռքները՝ ներսից ուժնափառաթառումով, ապա՝ Գցում արտակորված բռնած ձեռքը և իրանը՝ ներսից ուժնափառաթառումով: Այն պահին, երբ մրցակցը պաշտպանվելով առաջին հնարքից՝ իրանը բարձրացնում է վեր, գրոհող ըմբիշը, բռնելով ձեռքը և իրանը՝ կատարում է արտակորված գցում:

2. Տապալում ոլորումով բռնած ձեռքները՝ ներսից կառչումով, ապա՝ Գցում արտակորված բռնած ձեռքը և իրանը՝ ներսից ուժնափառաթառումով: Այն պահին, երբ մրցակցը պաշտպանվելով առաջին հնարքից իրանը բարձրացնում է վեր, գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի ձեռքը և իրանը, իսկ կառչում կատարող ուժքով

իրականացնում տարանուն ոտքի ներսից ոտնափաթաթում, որից հետո կատարում է արտակորված գցում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Ընդունել զած կանգնվածք և գոտնմարտել հեռու տարածությունից: 2. Զանազան բռնվածքներով կաշ-կանդել գրոհող ըմբիշի գործողությունները:

Անմիջական: Պաշտպանվող ըմբիշը «փաթաթված» ոտքին համանուն ձեռքը իշեցնելով ներքը՝ դնում է մրցակցի կրծքին կամ որովայնին, և հրելով՝ հեռանում նրանից:

Հականարքները

1. Գցում արտակորված բռնած իրանը: Այն պահին, եթե գրոհող ըմբիշը կատարում է ոտնափաթաթում, մրցակիցը նրկում ձեռքներով բռնում է իրանը և «փաթաթված» ոտքը բարձրացնելով կատարում արտակորված գցում այդ ոտքի կողմը:

2. Տապալում հրելագցումով բռնած իրանը՝ համանուն ոտքի կառչումով: Հականարք կատարող ըմբիշը բռնում է մրցակցի իրանը, կողքով շրջվում դնափի «փաթաթված» ոտքի կողմ և «փաթաթված» ոտքով կառչելով համանուն ոտքից՝ կատարում հրելագցումով տապալում:

4.2.2.5. ԳՅՈՒՄ ՊՏՈՒՏԱՆԱԶԵՎ


Այս խմբի հնարքների բնորոշ տարրը համարվում է իրանի շարժումը, որն իր մեջ համակցում է արտակորումը՝ մեջքի դարձումով դնափի մրցակիցը և մրցակցի ձեռքից կամ ոտքից կախ ընկնելը: Դրա հետ մեկտեղ կատարվում է պտույտ բռնած վերջույթի շուրջը: Հենց այդ պտույտի համար էլ հնարքը ստացել է պտուտանած անվանումը:

Ի տարբերություն պտուտանածն փոխադրումների այստեղ արտակորումը ավելի շատ է կատարվում, իսկ պտուտողական շարժումը սկսվում է գրոհողի գլուխը մրցակցի ծնկներին հասնելուց ոչ շուտ:

Պտուտանածն գցումները նպատակահարմար է կատարել բարձր և միջին կանգնվածքներից: Պտուտանածն գցումները կարող են կիրառվել որպես հականարքներ և հաջորդությամբ համակցվում են այլ հնարքների հետ:

Գցում պտուտանածն բռնած ձեռքը

Գրոհող ըմբիշը տարանուն ձեռքով բռնում է մրցակցի դաստակը, իսկ համանուն ձեռքով՝ բազուկը ներքելոց: Եթե գրոհող ըմբիշը բռնել է մրցակցի աջ ձեռքը, ապա աջ ոտքը դնում է նրա համանուն ոտքի մոտ և արտակորվում է դեպի մյուս ոտքը: Պտույտը բռնած ձեռքի շուրջը սկսվում է այն ժամանակ, եթե մրցակիցը գրոհողի ծանրության ազդեցությունից սկսում է կորցնել հավասարակշռությունը: Դա տնդի է ունենում մոտավորաբն այն ժամանակ, եթե գրոհողի գլուխն արտակորվելիս հասնում է մրցակցի ծնկին: Պտույտը մրցակցի ձեռքի շուրջն ավարտելուց հետո մրցակիցը հայտնվում է վտանգավոր դրության մեջ: Այսուհետև գրոհող ըմբիշը շարունակում է



Նկ. 29

համանուն ձեռքով բռնել մրցակցի ձեռքը, իսկ մյուսով՝ դեպի ձախ (աջակողմյան կանգնվածքի դեպքում) շարժվելով բռնում է մրցակցի պարանոցը վերևից և թիակները սեղմում է գրգին (նկ. 29):

Բնորոշ պիտի ները: 1. Գրիհող ըմբիշը հնարքի կատարման սկզբում համանուն ձեռքով ամոր է բռնում մրցակցի ձեռքը, ինչը խանգարում է ձեռքի շուրջը պտտվելուն: 2. Ձեռքի շուրջը պտտվելուց հետո գրիհող համանուն ձեռքով ամոր չի բռնում մրցակցի ձեռքը: 3. Գրիհող ըմբիշը մրցակցի ձեռքից չի կախվում: 4. Գրիհող ըմբիշը ձեռքի շուրջը պտույտը շուտ է սկսում:

Տակտիկական պատրաստության միջոցները

Հավասարակշռությունից հանելը: Ձեռքի և պարանոցի, ձեռքի և իրանի բռնվածքներով ձգելով, իրենով կամ ոլորումներ կատարելով՝ մրցակցին հանել հավասարակշռությունից և իրագործել պտուտանած գցում: Այս հնարքի կատարման համար բարենպաստ են այն բոլոր միջոցները, որոնք ստեղծում են փոխադարձ շփման դրական ունակցիա, այսինքն՝ մրցակցի շարժումը համընկնում է հնարքի կատարման ուղղության հետ:

Կաշկանդում: Գրիհող ըմբիշը ձեռքերի և պարանոցի, ձեռքի և իրանի տարբեր բռնվածքներով կաշկանդում է մրցակցի գործողությունները, և երբ վերջինս փորձում է ազատվել բռնվածքից կամ գրի կազմակերպել, նպաստավոր պահ է ստեղծվում պտուտանած գցման համար:

Մանկում: Գորգի վրա անընդհատ տեղաշարժերի միջոցով գրիհող ըմբիշը մրցակցին ստիպում է տեղաշարժվել և երբ վերջինս դեպի առաջ քայլ կատարելով փորձում է ձեռքը դնել տարանուն ուսին, գրիհող ըմբիշը ձեռքը բռնելով՝ կատարում է պտուտանած գցում:

Համակցումներ: 1. Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Գցում պտուտանած բռնած ձեռքը: Գրիհող ըմբիշը կատարում է նոյնը, ինչ-որ վերը նշված համակցման ժամանակ:

հետո, երբ պաշտպանվող ըմբիշը ձեռքը տանում է հետ, գրիհող ըմբիշի համար տեղ է բացվում արտակորվելու և մրցակցի ձեռքի շուրջը պտտվելու համար: Գրիհող ըմբիշը արտակորվելով, մրցակցի ձեռքից կախվելով, պտտվում է նրա ձեռքի շուրջը և իրագործում պտուտանած գցում:

2. Տապալում իրենազգումով բռնած ձեռքը և իրանը՝ տարանուն ոտքի ներսից կառչումով, ապա՝ Գցում պտուտանած բռնած ձեռքը: Հարքի կատարման ժամանակ, երբ պաշտպանվողը ոտքի կառչումից խուսափելու համար ոտքը հետ է դնում, նպաստավոր դիրք է ստեղծվում պտուտանած գցման համար:

3. Տապալում իրենազգումով բռնած ձեռքը՝ ոտնդիրով, ապա՝ Փոխադրում պտուտանած բռնած ձեռքը: Երբ պաշտպանվողը հետին ոտնդիրից խուսափելու համար ոտքը հետ է տանում, նպաստավոր դիրք է ստեղծվում պտուտանած գցման համար:

4. Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը, ապա՝ Գցում պտուտանած բռնած ձեռքը: Մեջքի դարձումից հետո, երբ պաշտպանվողը հետ է ընկրկում և ապա քայլ կատարում գրիհողի դիմացը, գրիհողն անմիջապես արտակորվելով, մրցակցի ձեռքից կախվելով և նրա շուրջը պտտվելով՝ կատարում է պտուտանած գցում:

5. Գցում մեջքի դարձումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Գցում պտուտանած բռնած ձեռքը: Գրիհող ըմբիշը կատարում է նոյնը, ինչ-որ վերը նշված համակցման ժամանակ:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Պաշտպանվողը գոտնմարտում է հետո տարածությունից: 2. Պաշտպանվողը գոտնմարտում է ցածր կանգնվածքով: 3. Պաշտպանվողը տարբեր բռնվածքներով կաշկանդում է գրիհողի գործողությունները:

ԱՆՄԻՋԱԼԿԱՆ: 1. Եթե գրոհողն սկսում է արտակորվել, պաշտպանվողը շարժվում է նրա պտույտի ուղղությամբ:

Հակածնադրներ

Փոխադրում ձգումով բռնած ձնքը և իրանը: Եթե գրոհողը սկսում է արտակորվել, պաշտպանվողն անցնելով մրցակցի հետևը, բռնում է նրա ձնքը և իրանը ու կատարում փոխադրում:

4.2.3. ՏԱՊԱԼՈՒՄՆԵՐ

Տապալումներն այն տեխնիկական գործողություններն են, որոնց կատարման արդյունքում մրցակիցն ընկնում է վտանգավոր դրության մեջ՝ առանց գորգից կտրվելու: Լիարժեք կատարված բռնությունները զնահատվում են 3 միավորով:

Ազատ ըմբաշամարտում տապալումները կիրառվում են նրկու նողանակով՝ հրենագցումով և ոլորումով:

4.2.3.1. ՏԱՊԱԼՈՒՄ ՀՐԵԼԱԳՑՈՒՄՈՎ


Այս խմբի հնարքների բնորոշ տարրը համարվում է գրոհող ըմբիչի ուսուվ կամ կրծքով հրումը, որի հետևանքով՝ մրցակիցն առանց գորգից կտրվելու ընկնում է վտանգավոր դրության մեջ:

Հրենագցումով տապալումների կատարման համար անհրաժեշտ է այնպիսի շարժողական ընդունակությունների զարգացում, ինչպիսիք են պայթուցիկ ուժը և արագությունը: Սրանք հեշտությամբ համակցվում են փոխադրումների, մեջքի դարձումով, արտակորված, ուսների վրայից (պտտումով) գցումների հետ:

Տապալում հրենագցումով բռնած ձնքը՝ համանուն ոտքի դրսից կաշումով

Այս հնարքը նպատակահարմար է կատարել բարձր կանգնածքից, մոտ և միջին տարածություններից: Գրոհողը ըս-

թիշը տարանուն ձնորով բռնում է մրցակցի արմունկը ներքեկից և մի փոքր արտակորվելով, համանուն ուսը մտցնում մրցակցի ուսի տակ՝ կատարում համանուն ոտքի դրսից կաշում (նկ. 30 ա, բ): Որից հետո, գրոհող ըմբիչը սկսում է մրցակցին հրեն՝ իրանը ստուգ թերենլու և բռնած ձնորին հակառակ պտտվելու հաշվին: Միաժամանակ մրցակցի ձնորը կտրուկ ձգելով և կաշած ոտքը դնալի հետ՝ վեր տանելով՝ նրան գցում է վտանգավոր դրության մեջ (նկ.30 գ, դ, ե):



Նկ. 30

Բնորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիչը ուսը չի մտցնում մրցակցի ուսի տակ: 2. Գրոհողի իրանի, ձնորների և կաշած ոտքի գործողությունները համաձայնեցված չեն:

Տակտիկական պատրաստության միջոցները

Նպաստավոր իրավիճակի ստեղծում: 1. Գրոհող ըմբիչը բռնում է մրցակցի տարանուն բազուկը վերևից, իսկ մյուս ձնորով՝ համանուն դաստակը և սնդմում է ներքև: Մրցակցից իրանը

բարձրացնում է վեր և փորձում ազատ ձեռքով գրոհողի գլուխն հրելով՝ հնուանալ նրանից և ձեռքն ազատել: Գրոհող ըմբիշը բաց է թողնում բռնած ձեռքը և բռնկլով մրցակցի մյուս ձեռքը՝ կատարում համանուն ոտքի դրսից կառչում, ինչին էլ հնուելում է հրելագցումով տապալումը:

2. Գրոհող ըմբիշը տարանուն ձեռքով բռնում է ուսին դրված մրցակցի ձեռքի բազուկը վերևից (արմակային հողի մոտ) և պտտում դնափ ներս: Եթե մրցակիցը բազուկը բարձրացնում է հակառակ ուղղությամբ, հարմար պահ է ստնդվում հնարքի կատարման համար:

Մանկում: Գրոհող ըմբիշը գորգի վրա տեղաշարժնի միջոցով մրցակցին ստիպում է ձեռքը դնել իր ուսին:

Կամակցումներ: 1. Փոխադրում ձգումով բռնած պարանոցը վերևից և ձեռքը, ապա՝ Տապալում հրելագցումով բռնած ձեռքը՝ համանուն ոտքի դրսից կառչումով: Պաշտպանվելով առաջին հնարքից՝ մրցակիցը փորձում է իրանը ուղղել և հնտ զնալ: Այդ պահին գրոհող ըմբիշը բաց է թողնում մրցակցի գլուխը, երկու ձեռքերով բռնում է նրա ձեռքը և համանուն ոտքով դրսից կառչելով՝ կատարում հրելագցումով տապալում:

2. Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Տապալում հրելագցումով բռնած ձեռքը՝ համանուն ոտքի դրսից կառչումով: Եթե մրցակիցը պաշտպանվելով առաջին հնարքից՝ ձեռքը տանում է հնտ, գրոհող ըմբիշն անմիջապես համանուն ուսը մտցնելով այդ ձեռքի տակ և համանուն ոտքով դրսից կառչելով՝ կատարում է հրելագցումով տապալում:

Պաշտպանություններ

Նախնական: 1. Ընդունել ցածր կանգնվածք և գոտեմարտել հնորու տարածությունից: 2. Զանազան բռնվածքներով կաշկանդել գրոհող ըմբիշի գործողությունները:

Առմիջական: Պաշտպանվող ըմբիշը ոտքը հնտ է տանում գրոհողին թոյլ չտալով կառչում կատարել:

Հակահնարքներ

1. Փոխադրում ձգումով բռնած ձեռքը և իրանը: Այն պահին, եթե գրոհող ըմբիշը ուսը մտցնելով մրցակցի ձեռքի տակ՝ փորձում է իրականացնել ոտքի կառչում, հակահնարք կատարողը ոտքը հնտ է տանում և համանուն ձեռքը ձգնելով, բռնում է նաև իրանը և կատարում փոխադրում:

2. Տապալում հրելագցումով բռնած պարանոցը և ձեռքը՝ համանուն ոտքի դրսից կառչումով: Այն պահին, եթե գրոհող ըմբիշը փորձում է կատարել ոտքի կառչում, հակահնարք կատարողը բռնվածքի մեջ գտնվող ձեռքով բռնում է գրոհողի պարանոցը, իսկ մյուսով՝ տարանուն ձեռքի բազուկը վերևից և մրցակցից առաջ անցնելով՝ ինքն է կատարում ոտքի կառչում, այնուհետև՝ հրելագցումով տապալում:


4.2.3.2. ՏԱՊԱԼՈՒՄ ՈԼՈՐՈՒՄՈՎ

Այս խմբի հնարքների բնորոշ տարրը մրցակցի իրանի ոլորումն է՝ միաժամանակ նրան տեղաշարժնելով դնափ ներքի: Արդյունքում մրցակիցը մնջորով շրջվում է դնափի գորգը՝ առանց գորգից նախապես կտրվելու: Սրան հեշտությամբ համակցվում են ձգումով փոխադրումների, հրելագցումով տապալումների, ուսերի վրայից (պտտումով) գցումների հնտ:

Տապալում ոլորումով բռնած ձեռքերը՝ ներսից ոլորումափառքումով

Գրոհող ըմբիշը տարանուն ձեռքով բռնում է մրցակցի բազուկը վերևից, իսկ մյուս ձեռքով՝ տարանուն ձեռքի դաստակը: Լողքով պտտվելով դնափի մրցակցի այն ձեռքը, որի բազուկը գտնվում է բռնվածքի մեջ՝ կատարում է տարանուն ոտքի ներսից

ունափաթաթում (նկ. 31 ա): Այնուհետև շարունակելով պտտում՝ կատարում է թերում առաջ: Այս գործողությունների հետ միաժամանակ՝ գրոհող ըմբիշը մրցակցի բազուկը սեղմում է ներքև, դաստակը ձգում դնափի իրեն, իսկ «փաթաթած» ուրով մրցակցի ուրքը տանում է հետև և բարձրացնում վեր (նկ. 31 բ): Որից հետո, ոլորանման շարժումով մրցակցին հանելով հավասարակշռությունից՝ տապալում է գորգին (նկ 31 գ):



Հնորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիշը առաջ է թերփում առանց մրցակցի ուսը սեղմելու: 2. Գրոհողը «փաթաթած» ուրով շարժումը հետ՝ վեր թույլ է կատարում: 3. Գրոհողի շարժումները՝ մրցակցի ձնորնի սեղմումն ու ձգումը, իրանի ոլորումը, ուրով գործողությունը համաձայնեցված չեն:

Տակտիկական պատրաստության միջոցները

Նպաստվոր իրավիճակի ստեղծում: 1. Գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի տարանուն բազուկը վերևից և փորձում իրականացնել ձնորի և իրանի բռնվածքը: Եթե մրցակիցը իրանը հետ է տանում և առաջ թերփում, գրոհող ըմբիշն ազատ ձնորով բռնելով մրցակցի տարանքն դաստակից՝ կատարում է տարանուն ուրի ներսից ունափաթաթում և իրագործում հնարքը:

Կանչ: Գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի տարանուն դաստակները, ընդունում բարձր կանգնվածք և առաջ դնում ուրքներից մեկը: Այնուհետև, բաց թողնելով առաջ դրված ուրքին տարանուն ձնորը, մրցակցի համար նպաստավոր պահ է ստեղծում ուրի բռնվածքի համար: Այն պահին, նրա մրցակիցը փորձում է բռնել ուրքը, գրոհող ըմբիշը ազատ ձնորով բռնում է մրցակցի տարանուն բազուկը վերևից և կատարում ունափաթաթում: Որից հետո իրագործում է հնարքը:

Համակցումներ: Գցում արտակորված բռնած ձնորը և իրանը՝ ներսից ունափաթաթումով, ապա՝ Տապալում ոլորումով բռնած ձնորները՝ ներսից ունափաթաթումով: Այն պահին, նրա մրցակիցը «փաթաթված» ուրքը հետև է տանում և իրանով թերփում առաջ, գրոհող ըմբիշը կողքով դառնալով դնափի մրցակիցը՝ կատարում է ոլորումով տապալում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Ընդունել ցածր կանգնվածք և զուտնմարտել հետու տարածությունից: 2. Զանազան բռնվածքներով կաշկանդել գրոհող ըմբիշի գործողությունները:

Անմիջական: Պաշտպանվող ըմբիշը անընդհատ դնմքով շրջվում է դնափի մրցակիցը և «փաթաթված» ուրքին համանուն ձնորը իջնցնելով ներքև՝ դնում է մրցակցի կրծքին կամ որովայնին և հրենով հետանում նրանից:

Հակահնարքները

1. Գցում արտակորված բռնած իրանը: Այն պահին, նրա գրոհող ըմբիշը կատարում է ունափաթաթում, մրցակիցը երկու ձնորներով բռնում է իրանը, դնմքով շրջվում դնափի գրոհողը և «փաթաթված» ուրքը բարձրացնելով՝ կատարում արտակորված գցում այդ ուրի կողմը:

2. Տապալում հրեշտագցումով բռնած իրանը համանուն ոտքի կառչումով: Հականարք կատարող ըմբիշը բռնում է մրցակցի իրանը և «փաթաթված» ոտքով կառչնով համանուն ոտքին՝ կատարում հրեշտագցումով տապալում:

4.3. ԱԶԱՏ ԸՄԲԾԱՄԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՆ ԾՆԿԱՌԻ ԴՐՈՒՅՑՈՒՆՈՒՄ

4.3.1. ԾՐՁՈՒՄՆԵՐ

Ծրջումները այնպիսի տեխնիկական գործողություններ են, որոնց կատարման ժամանակ մրցակցը, առանց գորգից կտրվելու հայտնվում է վտանգավոր դրության մեջ. մեջրով 90°-ից ավելի թերքված դեպի գորգը:

Ծրջումները լինում են՝ գլորումով, ոլորումով, անցումով, վազանցումով, տարածումով և թափագլորումով:

4.3.1.1. ԾՐՁՈՒՄ ԳԼՈՐՈՒՄՈՎ


Այս խմբի հնարքների կատարման ժամանակ գրոհող ըմբիշը մրցակցին վտանգավոր դրության մեջ է գցում՝ ընդունելով կիսակամուրջ կամ կամուրջ դրություն:

Գլորումով շրջումների արդյունավետությունը բարձրացնելու համար ազատ ըմբշամարտում կիրապիւմ են նաև ոտքների օգնությամբ գործողություններ՝ կառչումներ:

Ծրջում գլորումով բռնած ձեռքը և իրանը՝ տարանուն ոտքի կառչումով

Գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի համանուն ձեռքը արմնկային հոդի մոտից, իսկ մյուս ձեռքով՝ իրանը (նկ. 32 ա): Այնուհետև, իրանը բռնած ձեռքով նրան հրում է առաջ և դեպի բռնվածքի մեջ գտնվող ձեռքը, ինչի արդյունքում մրցակցը հայտնվում է որովայնի վրա (նկ. 32 բ): Գրոհող ըմբիշը տարանուն ոտքի կառչումով կատարում է շրջում՝ կառչած ոտքը բարձ-

րացնելով և մրցակցին դեպի իրեն ձգելով (նկ. 32 գ, դ): Այնուհետև, մրցակցից կրծքով հնոանալով և կառչած ոտքը բարձրացնելով՝ նրան շրջում է մեջքի վրա, ապա բռնած ձեռքը բաց շրջունելով՝ կրծքով շրջվում է դեպի մրցակցը և մյուս ձեռքով պարանոցը բռնելով՝ նրա թիակները սեղմում է գորգին (նկ. 32 ե, գ, է):



Նկ. 32

Բնորոշ սխալներ: 1. Գրոհող ըմբիշը մրցակցի ձեռքը թույլ է ձգում; 2. «Կառչած» ոտքով մրցակցի ոտքը չի բարձրացնում; 3. Մրցակցին շրջելու ժամանակ գրոհող ըմբիշը նրանից չի հեռանում և նրան շրջում է իր վրա:

Տակտիկական պատրաստության միջոցները

Համակցումներ: 1. Շրջում անցումով բռնած ծնոտը՝ մոտիկ ոտքից կառչումով, ապա՝ Շրջում գլորումով բռնած ձեռքը և իրանը՝ տարանուն ոտքի կառչումով: Պաշտպանվելով առաջին հնարքից՝ մրցակիցը մեջքով շրջվում է դեպի գրոհող ըմբիշը՝ փոքրացնելով կայունության անկյունը առաջին հնարքի կատարման հակառակ ուղղության վրա: Օգտվելով դրանից, գրոհող ըմբիշը կատարում է գլորումով շրջում՝ միաժամանակ կատարելով տարանուն ոտքով կառչում:


Պաշտպանությունները

Նսխնական: 1. Պառկել որովայնի վրա, ձեռքերը տարածել կողմ, մեծացնել կայունության անկյունը հնարքի կատարման կողմի վրա: 2. Բռնելով գրոհող ըմբիշի համանուն ոտքը կաշկանդել նրա գործողությունները:

Անմիջական: 1. Պառկել որովայնի վրա, մեծացնել կայունության անկյունը, ձեռքերը միացնելով ձգել առաջ և ազատել բռնվածքից:


Հակահնարքները

1 Անցում վեր նստավերելով: Եթե գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի իրանը, հակագրոհող ըմբիշը իրանով մի փոքր առաջ է շարժվում և իրանը բռնած ձեռքի կողմը շրջվելով՝ նստում գորգին (նկ. 33 ա): Այնուհետև, իրանը բռնած ձեռքի վրայով բռնում է մրցակցի նոյնանուն ոտքը և բարձրանալով՝ անցնում մրցակցի հետևը (նկ. 33 բ, գ):



Նկ. 33

2. Փակում մոտիկ ոտքով: Եթե գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի իրանը, հակագրոհող ըմբիշը իրանով մի փոքր առաջ է շարժվում և իրանը բռնած ձեռքի կողմը շրջվելով, նստում գորգին՝ համանուն ձեռքով բռնելով իրանը բռնած ձեռքը: Այնուհետև, շրջվում է հակառակ կողմի վրա և մրցակցին մոտ ոտքով անցում կատարում նրա վրայով, իսկ ձեռքերով բռնում է իրենից հետո գտնվող ոտքը և բարձրացնում վեր (նկ. 34):



Նկ. 34

3. Շրջում մեջքի վրայից բռնած համանուն ձեռքը: Եթե գրոհող ըմբիշը բռնում է մրցակցի իրանը, հակագրոհող ըմբիշը համանուն ձեռքով բռնում է իրանը բռնած ձեռքի դաստակը և մրցակցին մոտիկ ոտքը հետ տանում: Այնուհետև, բռնած ձեռքի արմունկին հենվելով՝ նստում է ձեռքին համանուն ազդրի վրա: Մյուս ձեռքով հրելով մրցակցի կուրծքը և դեպի մրցակիցը շրջվելով՝ նրան շրջում է մեջքի վրա:



ա

թ

գ

Նկ. 35

Մրցակցին մեջքի վրա կարելի է շրջել նաև՝ ազատ ձեռքով նրա տարանուն ոտքից բռնելով (Նկ. 35):

4.3.1.2. ՇՐՋՈՒՄ ՈԼՈՌՈՒՄՈՎ

Ոլորումով շրջումները կատարվում են՝ մրցակցին իր մարմնի երկայնական առանցքի շուրջը պտտող շարժումների օգնությամբ:

Շրջում ոլորումով սրունքների խաչածն բռնվածքով


Բռնվածքը սովորաբար կատարվում է զածք ծնկադիր (որովայնին պառկած) դրությունից: Գրոհող ըմբիշը բռնում է



ա

թ

գ



ե

ն

Նկ. 36

մրցակցի համանուն ոտքը դրսից (ծնկից կամ սրունք-վեճային հոդի մոտից), բարձրացնում է, մյուս ոտքի հետ «խաչում» և նախարազուն անցկացնելով երկու սրունքների միջով՝ կատարում բռնվածքը (Նկ. 36 ա, թ): Այնուհետև, գրոհող ըմբիշը ոտքի է կանգնում, դեպի բռնած ձեռքին հակառակ շրջվելով և ոտքները ոլորնելով՝ մրցակցին շրջում մեջքով դեպի գրոգը (Նկ. 36 գ, դ, ե):

Բնորոշ սխալները: 1. Բռնվածքի ժամանակ մրցակցի ոտքները գրոհող ըմբիշի նախարազկի տակ չեն: 2. Գրոհող ըմբիշը մրցակցի ոտքները նախարազկով չի սնդմում իր մարմնին:

Տակուիկական պատրաստության միոցները

Նպաստավիր իրավիճակի ստեղծում: 1. Գրոհող ըմբիշը բռնելով մրցակցի համանուն ոտքները՝ ծնկներից, ուսով հրում է ազդրելու և զցում որովայնի վրա: 2. Համանուն ձեռքով բռնում է մրցակցի հեռու ոտքը դրսից (սրունքվեճային հոդի մոտից) և մյուս ուսով մրցակցին հրում դեպի կողմ՝ առաջ:

Համակցումներ: Շրջում թափագլորումով ազդրի և սրունքի հակադարձ բռնվածքով, ապա՝ Շրջում ոլորումով սրունքների խաչածն բռնվածքով: Եթե մրցակիցըն ընկնելով զածք ծնկադիր դրության մեջ, փորձում է ոտքը հետ ձգել և ազատել բռնվածքից՝ գրոհող ըմբիշը սրունքի բռնվածքը ջրողնելով, թույլ է տալիս ոտքը հետ տանել և գորգին չհասած՝ սրունքները «խաչնելով» կատարում է բռնվածքը:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Համանուն ձեռքով բռնել գրոհող ըմբիշի դաստակը և ձգելով ազատել ոտքը: 2. Բռնել մրցակցի համանուն ոտքը դրսից:

Անմիջական: 1. Եթե գրոհող ըմբիշը բռնվածքը կատարել է ձախ ձեռքով, ապա պաշտպանվողը, քանի դեռ մրցակիցը ոտքի չի կանգնել, իրանով և ոտքներով պտտվում է դեպի աջ, որպեսզի

«խաչված» ուտքները «քանդվեն» և աջ ուտքը բռնվածքից ազատելով՝ դարձյալ շրջվում է որովայնի վրա: 2. Պաշտպանվող ըմբիշը շրջվում է դեպի աջ և տարանուն ձեռքով, մոտիկ ուտքի վրայից բռնում հեռու ուտքը ներսից:

Հակահնարքները

1. Շրջում ոլորումով սրունքների խաչածն բռնվածքով: Պաշտպանվող ըմբիշը շրջվում է դեպի աջ և տարանուն ձեռքով մոտիկ ուտքի վրայից բռնում հեռու ուտքը ներսից: Այնուհետև, ուտքը ձգնելով դեպի իրեն, մրցակցին գցում է ծնկադիր դրույթան մեջ: Շարունակելով ուտքը ձգնել՝ «խաչում» է մրցակցի ուտքները և մյուս ձեռքով կատարում բռնվածք:

4.3.1.3. ՇՐՋՈՒՄ ԱՆՑՈՒՄՈՎ


Այս շրջումների բնորոշ տարրը գրոհող ըմբիշի անցումն է մրցակցի իրանի մի կողմից մյուսը: Անցումով շրջումները հաջողությամբ համակցվում են գլորումով, վազանցումով, ոլորումով և տարածումով շրջումների հետ:

Սրանց հաջող կատարման համար գրոհող ըմբիշը պնտը է կարողանա մեծացնել բռնվածքի լծակը և օգտագործել սնիփական մարմնի քաշը:

Շրջում անցումով բռնած մոտիկ ուտքը և կզակը՝ հեռու ուտքից կառչումով

Գրոհող ըմբիշը մի ձեռքով բռնում է մրցակցի տարանուն ազդրը, իսկ մյուսով՝ կզակը վերևից (նկ. 37 ա): Այնուհետև, բռնած ուտքը բարձրացնելով, տանում է դեպի մըրցակցի հեռավոր ուսը՝ միաժամանակ համանուն ուտքով կատարելով հեռու ուտքից կառչում (նկ. 37 բ): Հրենով և կառչած ուտքը բարձրացնելով գրոհող ըմբիշը կատարում է անցում՝ իր մարմինը տնդափոխելով

մրցակցի իրանի մի կողմից մյուսը: Անցման ժամանակ գրոհող ըմբիշը կարող է մրցակցի կզակը բռնել ներքսից: Արդյունքում մրցակցիցը հայտնվում է մեջքի վրա (նկ. 37 գ):



ա

բ

գ

Նկ. 37

Բնորոշ սխալները: 1. Ուտքով կառչումը կատարվում է սրունքի ստորին մասից: 2. Գրոհող ըմբիշը անցման ժամանակ գլուխը հեռացնում է մրցակցի գլխից:

Տակտիկական պատրաստության միոցները

Համակցումներ: 1. Շրջում թավագլորումով բռնած մոտիկ ուտքը և պարանցը վերևից, ապա՝ Շրջում անցումով բռնած մոտիկ ուտքը և կզակը՝ հեռու ուտքից կառչումով: Եթե մրցակցը պաշտպանվում է առաջին հնարքից, գրոհող ըմբիշը կատարում է համանուն ուտքի կառչում հեռու ուտքից և բռնելով ծնոտից՝ կատարում է անցումով շրջում:

2. Շրջում թավագլորումով՝ ազդրի հակադարձ բռնվածքով, ապա՝ Շրջում անցումով բռնած մոտիկ ուտքը և կզակը՝ հեռու ուտքից կառչումով: Եթե մրցակցը պաշտպանվելով առաջին հնարքից, իրանը թեքում է հնարքի կատարմանը հակառակ՝ գրոհող ըմբիշը տարանուն ձեռքով բարձրացնում է մոտիկ ուտքը, կատարում հեռու ուտքից կառչում և բռնելով ծնոտը վերևից՝ կատարում է անցումով շրջում:

3. Գցում թեքումով բռնած տարանուն ձեռքը և մոտիկ ուտքը, ապա՝ Շրջում անցումով բռնած մոտիկ ուտքը և կզակը՝ հեռու

ոտքից կառչումով: Եթե գորգից կտրված մրցակիցը գցումից խոսափելու համար ոտքը դնում է գորգին, գրոհող ըմբիշը կատարում է համանուն ոտքի կառչում, իրենիվ նրան գցում է գորգին և ծնոտը վերևից բռնելով՝ կատարում անցումով շրջում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Պառկել որովայնի վրա՝ մնջրով շրջվելով դնափի մրցակիցը: 2. Բռնել կզակը բռնող ձեռքը, թույլ չտալ կատարել կզակի բռնվածք և շարժվել առաջ:

Անմիջական: 1. Եթե գրոհող ըմբիշը բարձրացնում է պաշտպանվողի ոտքը, պաշտպանվողը այդ ոտքով կատարում է մոտիկ ոտքի դրսից ոտնափաթաթում կամ կառչում: 2. Գլուխը հնարավորինս հնոացնում է մրցակիցից և շարժվում առաջ:

Հակահնարքները

Փակում մոտիկ ոտքով: Եթե գրոհող ըմբիշը բարձրացնում է մրցակիցի մոտիկ ոտքը, հակագրոհող ըմբիշը այդ ոտքով անցում է կատարում նրա վրայով, իսկ ձեռքներով բռնում է իրենից հնոու գտնվող ոտքը և բարձրացնում վեր (տես՝ նկ. 34 գ, դ):

Շրջում անցումով բռնած կզակը՝ մոտիկ ոտքից կառչումով

Գրոհող ըմբիշը կատարում է մոտիկ ոտքից կառչում (նկ. 38 ա): Կառչումը կարենի է կատարել ինչպես համանուն, այպնա էլ տարանուն ոտքով: Հնարքի արդյունավետությունն ավելի է բարձրանում, եթե գրոհող ըմբիշը «կառչած» ոտքի ոտնաթաթը միացնում է մյուս ոտքի սրունքի վերին հատվածին (նկ. 38 բ): Ոտքերի նման միացնումը հաճախ անվանվում է «մկրատածե»: Եթե մրցակիցը գտնվում է բարձր ծնկադիր վիճակում, ապա անհրաժեշտ է նրան տեղափոխել ցածր ծնկադիր դրության: Դրա համար գրոհող ըմբիշը բռնում է մրցակիցի համանուն ոտքը սրունքի ստորին մասից, բարձրացնում է և

նրան իրում դնափի հնոավոր ուսը՝ միաժամանակ «կառչած» ոտքով բարձրացնելով մրցակիցի ոտքը: Եթե մրցակիցը հայտնվում է ցածր ծնկադիր վիճակում (որովայնի վրա), գրոհող ըմբիշը կատարում է անցում՝ բռնելով մրցակիցի կզակը (նկ. 38 գ): Կզակը կարենի է բռնել ինչպես վերևից, այնպես էլ՝ ներքևից:

Բնորոշ սխալները: 1. Կառչումը կատարվում է ծնկից ներքև: 2. Անցման ժամանակ գրոհող ըմբիշի գլուխը հնոու է մրցակիցի գլուխից: 3. Կզակի բռնվածքը թույլ է:



a

b
Նկ. 38

c

Տակտիկական պատրաստության միջոցները

Մպաստավոր իրավիճակի ստեղծում: Գրոհող ըմբիշը մինչև կզակը բռնելը, այդ նույն ձեռքի արմնելով մրցակիցի գլուխը հնոավոր ուսի մոտիկ իրում է դնափի իրեն և նոր կատարում անցումը: Այս շարժման հետևանքով մրցակիցը մնջրով թերքում է դնափի հնարքի կատարման ուղղությունը:

Համակցումներ: 1. Շրջում թափագլորումով՝ ազդիքի հակադարձ բռնվածքով, ապա՝ Շրջում անցումով բռնած կզակը՝ մոտիկ ոտքից կառչումով: Եթե պաշտպանվող ըմբիշը ոտքը տանում է հետ, իջնում ցածր ծնկադիր դրություն և դնմբրով շրջվելով դնափի մրցակիցը՝ մնջացնում է կայունության անկյունը, նպաստավոր պահ է ստեղծվում մոտիկ ոտքից կառչումով շրջում կատարելու համար:

2. Ծրջում գլորումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Ծրջում անցումով բռնած կզակը՝ մոտիկ ոտքից կաշումով: Այստեղ կատարման նղանակները նույնն են, ինչ-որ վերը նշված համակցությունում:

3. Ծրջում գլորումով բռնած համանուն ոտքը և ձեռքը՝ մոտիկ ոտքից կաշումով, ապա՝ Ծրջում անցումով բռնած կզակը՝ մոտիկ ոտքից կաշումով: Համակցության կատարման նղանակը տնս՝ առաջին համակցությունում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Պարկել որովայնի վրա՝ մեջքով շրջվելով դեպի մրցակիցը: 2. Ընդունել բարձր ծնկադիր դրություն:

Անմիջական: 1. Մեջքով շրջվել դեպի գրոհող ըմբիշը և առաջ շարժվելով ազատել ոտքը: 2. Գլուխը հնարավորինս հնոացնել մրցակիցի և շարժվել առաջ:

Կակահնարքները


Անցում վեր շրջվելով: Այն պահին, երբ գրոհող ըմբիշը ավարտում է անցումը, մրցակիցը գլխով կտրուկ շրջվում է դեպի գրոհողի ոտքերը, նստում, հնուու ձեռքով բռնում է նրա ոտքերը, իսկ մոտիկ ձեռքով մրցակիցի իրանին հնավելով՝ անցնում է վեր:

4.3.1.4. ՇՐՋՈՒՄ ՎԱԶԱՆՑՈՒՄՈՎ

Այս խմբի հնարքների բնորոշ տարրը համարվում է գրոհող ըմբիշի տեղաշարժը մրցակիցի գլխի շուրջը՝ պարանոցի կամ ձեռքի բռնվածքով: Հնարքի կատարման սկզբում գրոհող ըմբիշը գտնվում է մրցակիցի հնուում կամ կողքին՝ կրծքով դեպի նրա գլուխը: Հնավելով մրցակիցի իրանի վերին մասին՝ գրոհող ըմբիշը կատարում է վազանցում նրա գլխի շուրջը, ինչի արդյունքում մրցակիցը մեջքով շրջվում է դեպի գրոգը:

Ծրջում վազանցումով բռնած ձեռքը՝ բանալի և հենուու ոտքը
Գրոհող ըմբիշը բռնում է համանուն ոտքի սրունքը (սրունք-վեճային հոդի մոտիկ), այն ձգում դեպի իրեն և դեպի մրցակիցի մոտիկ ուսը, իսկ մյուս ձեռքով բռնում է համանուն ձեռքը՝ բանալի (նկ. 39 ա): Ոտքերով հենավելով գրոգին՝ գրոհող ըմբիշը շարունակում է մրցակիցի սրունքը ձգել դեպի իրեն և դեպի մոտիկ ուսը, իսկ մյուս ձեռքով նրա համանուն ձեռքը կտրում է գրոգից՝ շնչորացնելով հենման կետը, որից հետո նրան տեղափոխում է զածը ծնկադիր դրության (նկ. 39 բ, գ): Այսուհետև, կողքով հենավելով մրցակիցի կողքին, նրա բռնած ձեռքը դնում է իր համանուն ազդրի վրա և սրունքը դեպի իրեն ձգելով՝ սկսում շարժվել նրա գլխի շուրջը (նկ. 39 դ): Կատարելով շրջում՝ գրոհող ըմբիշը սրունքը բաց շռողնելով, կրծքով ճնշում է գործադրում մրցակիցի ձեռքի և կրծքի վրա, այսուհետև, նրա թիակները հպում գորգին (նկ. 39 ե):

Բնորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիշը բռնած սրունքը թույլ է ձգում: 2. Ձեռքի բռնվածքը ճիշտ չի կատարում: Հարկավոր է ձեռքը բռնել արմնակային հոդի մոտիկ և ձեռքի ափը ուղղահայաց դիրքով դնել մրցակիցի մեջքին: 2. Վազանցման ժամանակ գրոհողը բաց է թռողնում մրցակիցի սրունքը:



Նկ. 39

Տակուիկական պատրաստության միջոցները

Համակցումներ: 1. Ծրջում թափագլորումով՝ իրանի և հեռու սրունքի հակադարձ բռնվածքով, ապա՝ Ծրջում վազանցումով բռնած ձեռքը բանալի և հեռու ոտքը: Պաշտպանվող ըմբիշը առաջին հնարքի պաշտպանության ժամանակ կրծքով շրջվում է՝ դեպի մրցակիցը, որպեսզի մնացնի կայունության անկյունը: Այդ պահին փոքրանում է նրա կայունության անկյունը նրկորդի հնարքի կատարման ուղղության վրա: Գրոհող ըմբիշը բաց թռնելով իրանը, բռնում է մրցակիցի համանուն ձեռքը՝ բանալի և կատարում վազանցումով շրջում:

2. Ծրջում գլորումով բռնած համանուն ոտքը և ձեռքը՝ մոտիկ ոտքից կառչումով, ապա՝ Ծրջում վազանցումով բռնած ձեռքը բանալի և հեռու ոտքը: Առաջին հնարքից պաշտպանվելու համար մրցակիցը կրծքով շրջվում է՝ դեպի գրոհող ըմբիշը: Այդ պահին գրոհողն անմիջապես բռնում է՝ ձեռքը՝ բանալի և կատարում վազանցումով շրջում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Համանուն ձեռքով բռնել սրունքը բռնած դաստակից և ձգելով ազատել ոտքը: 2. Բռնած ձեռքը տանել առաջ և ձեռքները միացնել իրար:

Անմիջական: 1. Ծրջվել մնջքով դեպի մրցակիցը, գլուխը բարձրացնել:

Հակահնարքները

1. Ծրջում մնջքի վրայից բռնած համանուն ձեռքը: Հակահնարք կատարող ըմբիշը համանուն ձեռքով բռնում է սրունքը բռնած ձեռքի դաստակից: Հակահնարքի կատարման նորագործած է Ծրջում գլորումով բռնած ձեռքը և իրանը՝ տարանուն ոտքի կառչումով հնարքի 3-րդ հակահնարքում:

2. Ծրջում մնջքի վրայից բռնած համանուն ձեռքը՝ տարանուն ոտքի ներսից ոտնափաթաթումով: Հակահնարքի կատարման նորագործած նույնն է, տարբերությունը կայանում է բռնվածքի մնջք գրոհող ըմբիշը մրցակիցին մոտիկ ոտքով կատարում է տարանուն ոտքի ներսից ոտնափաթաթում:


4.3.1.5. ՇՐՋՈՒՄ ՏԱՐԱԾՈՒՄՈՎ

Այս խմբի հնարքների բնորոշ տարրը հանդիսանում է մրցակիցին իրանի տարածումը՝ նախնական ոտնափաթաթման կամ կառչման և պարանոցի, ձեռքների բռնվածքների միջոցով: Սրանք լավ համակցվում են գլորումով և անցումով շրջումների հետ:

Ծրջում տարածումով բռնած պարանոցը թևատակից՝ համանուն ոտքի կառչումով

Գրոհող ըմբիշը կատարում է համանուն ոտքի կառչում, այնուհետև համանուն ձեռքը հեռու ուսի տակով միացնում է մյուս ձեռքին, որը դրված է մրցակիցի պարանոցին (նկ. 40 ա): Ազատ ոտքը հենում է մրցակիցի համանուն ոտքի ազդրի ստորին մասին: (նկ. 40 բ): Որից հետո ոտքով մրցակիցի ազդրը կրում է հետ՝ միաժամանակ ձեռքների ուժի միջոցով ձեռքը բարձացնում վեր՝ դեպի մյուս ձեռքը, իսկ պարանոցը սեղմում ննքը՝ դեպի բռնած ձեռքը և իրանը տարածելով՝ նրան տնդափոխում ցածր ծնկադիր վիճակի, այնուհետև, շարունակելով ձեռքների շարժումը՝ մրցակիցին շրջում է մնջքով դեպի գորգը (նկ. 40 գ): Մրցակիցի թիակները գորգին հպելու համար գրոհող ըմբիշը բաց է թռնում պարանոցին դրած ձեռքը, իսկ մյուս ձեռքն ավելի խորացնելով հեռանում է նրանից (նկ. 40 դ):

Հնորոշ սխալներ: 1. Ոտքով կառչումը ճիշտ չի կատարում. ոտքը կամ խորն է մտցնում, կամ հակառակը: 2. Ձեռքների միացումը կատարում է մրցակցի պարանոցից բավական հնորու, ինչը թուլացնում է ազդեցության ուժը:



Ակ. 40

Տակտիկական պատրաստության միջոցներ

Համակցումներ: 1. Շրջում գլորումով բռնած ձեռքը և իրանը, ապա՝ Շրջում տարածումով բռնած պարանոցը թևատակից՝ համանուն ոտքի կառչումով: Պաշտպանվելով գլորումով շրջումից՝ պաշտպանվողը որպես հենակետ առաջ է դնում մոտիկ ոտքը և կրծքով շրջում դնափի մրցակցը: Գրոհող ըմբիշը համանուն ոտքով կառչում է առաջ դրված ոտքից և բռնելով պարանոցը հնորու ուսի տակից՝ կատարում է տարածումով շրջում:

2. Շրջում անցումով բռնած կզակը՝ մոտիկ ոտքից կառչումով, ապա՝ Շրջում տարածումով բռնած պարանոցը թևատակից՝ համանուն ոտքի կառչումով: Առաջին հնարքից պաշտպանվելու համար պաշտպանվողը պնտը է կամ մնջրով

շրջվի դնափի մրցակցը, կամ ընդունի բարձր ծնկադիր դրություն: Երկու դնաքում էլ գրոհող ըմբիշը բռնում է պարանոցը հնորու ուսի տակից և կատարում տարածումով շրջում:

3. Շրջում թափագլորումով՝ ազդրի հակադարձ բռնվածքով, ապա՝ Շրջում տարածումով բռնած պարանոցը թևատակից՝ համանուն ոտքի կառչումով: Առաջին հնարքի պաշտպանությունից հնորու գրոհող ըմբիշը համանուն ոտքով կառչելով և պարանոցը թևատակից բռնելով կատարում է տարածումով շրջում:


Պաշտպանություններ

Նախնական: 1. Հնորու ձեռքը սնդմնակ կրծքին: 2. Ընդունել ցածր ծնկադիր դրություն՝ մնջրով մի փոքր շրջվելով դնափի գրոհող ըմբիշը:

Անմիջական: 1. Գլուխը բարձր պահել: 2. Համանուն ձեռքով պարանոցին դրված ձեռքը արմնկային հողի մոտից իրեն հակառակ կողմի վրա և ազատել պարանոցը: 3. Տարանուն ձեռքով բռնել կառչած ոտքի կրունկից և իրանով սնդմնակ այդ ոտքի սրունքը գորգին:

Հակահնարքներ

1. **Շրջում նստավերներով բռնած սրունքը:** Հակահնարք կատարող ըմբիշը մնջրով շրջվում է դնափի գրոհող ըմբիշը և նստում «կառչման» մեջ գտնվող ոտքի ազդրին (Ակ. 41 ա): Այնուհետև, տարանուն ձեռքով բռնում է «կառչում» կատարած ոտքի սրունքը դրսից և մյուս ձեռքով ու ոտքներով հենավելով գորգին՝ բարձրացնում է մրցակցի սրունքը (Ակ. 41 բ): Տարունակելով մրցակցի սրունքը և իր կոնքը բարձրացնել՝ հակահնարք կատարող ըմբիշը մրցակցին մնջրով հրում է հնտ՝ բռնած ոտքի ուղղությամբ, որի արդյունքում մրցակցը հայտնվում է վտանգավոր դրության մեջ (Ակ. 41 գ):



2. Ծրջում մեջքի վրայից բռնած համանուն ձեռքը: Հակահնարք կատարող ըմբիշը նախ և առաջ ազատում է ոտքը, այնուհետև համանուն ձեռքով բռնում է ուսի տակ գտնվող ձեռքի դաստակը և գլուխը բարձրացնելով ու բազուկը կողքին սեղմելով՝ ազատում պարանոցը: Հակահնարքի կատարման նորանակը նկարագրված է Ծրջում գլորումով բռնած ձեռքը և իրանը՝ տարանուն ոտքի կառչումով հնարքի 3-րդ հակահնարքում:


4.3.1.6. ԾՐՋՈՒՄ ԹԱՎԱԳԼՈՐՈՒՄՈՎ

Այս խմբի հնարքների բնորոշ տարրը համարվում է մրցակցի շրջումը՝ գլխի վրայով առաջ: Գրոհող ըմբիշը թափագլորումով շրջումների ժամանակ գտնվում է մրցակցի կողքին կամ առջևում՝ կոճքով դեպի նրա գլուխը, կորոր կամ ոտքները:

Ծրջում թափագլորումով բռնած պարանոցը և ազդրը միասին

Գրոհող ըմբիշը տարանուն ձեռքով բռնում է մրցակցի ազդրը կողքից, իսկ մյուս ձեռքով՝ պարանոցը կամ կզակը՝ վերևից (նկ. 42 ա): Մրցակցին հրենով դեպի հեռու ուսը և մեջքը կորացնելով՝ գրոհող ըմբիշը ձեռքները միացնում է իրաք (նկ. 42 բ): Այնուհետև, հենավենով կողքին, մրցակցին գլխի վրայով շրջում է առաջ (նկ. 42 գ): Ոտքներով շարժվենով մրցակցի ոտքների կողմը՝ նրան իրանով վերևից սեղմում է գորգին (նկ. 42 դ): Կարելի է

կատարել նաև համանուն ոտքի ներսից կառչում:



Բնորոշ սխալները: 1. Ազդրը բռնում է ոչ թե ծնկի, այլ լոնքագրդային հողի մոտից: 2. Ավելի խորն է մտցնում պարանոցը բռնած ձեռքը, ինչը խոչընդոտում է մրցակցին գլխի վրայով շրջնուն: 3. Մրցակցին ձգում է իր վրա: 4. Մրցակցին շրջնուն հնտո իրաք միացրած ձեռքները բաց է թողնում:

Տակտիկական պատրաստության միջոցները

Համակցումներ: Ծրջում թափագլորումով՝ ազդրի հակահնարք բռնվածքով, ապա՝ Ծրջում թափագլորումով բռնած պարանոցը և ազդրը միասին: Պաշտպանվելով առաջին հնարքից՝ մրցակցիը կոճքով շրջում է դեպի գրոհող ըմբիշը և մեջքը մի փոքր կորացնում, ինչը նպաստավոր պահ է պարանոցի և ազդրի բռնվածքով թափագլորումով շրջում կատարելու համար:

Պաշտպանությունները


Նախնական: 1. Գլուխը բարձրացնել, մոտիկ ոտքը ձգել հնտ: 2. Ընդունել ցածր ծնկադիր դրություն, մեջքով շրջվել դեպի մրցակցը:

Անմիջական: 1. Գրոհողի միացված ձեռքների բռնվածքը

բացելով, գլուխը բարձրացնելով և ոտքը հետ տաճելով՝ կորացած մնջըն ուղղել: 2. Բռնել գրիհողի մոտիկ ոտքը համանուն ձեռքով, մյուս ձեռքով գորգին հենվելով՝ բռնվածքի մեջ գտնվող ոտքի ոտնաթաթի վերին մասով կատարել տարանուն ոտքի ներսից կառչում:

Հակահնարքներ

Ծրջում ուսերի վրայից հետ բռնած տարանուն ձեռքները: Եթե գրիհողը փորձում է ձեռքները միացնել իրար, հակահնարք կատարող ըմբիշը կատարում է պարանոցը բռնած ձեռքի տառքից՝ և ազդրը բռնած ձեռքի հետևից բռնվածք, այնուհետև, բարձրացնում է ազատ ոտքի ծունկը (նկ. 43 ա): Պարանոցը բռնած ձեռքը բարձրացնում է վեր՝ գլուխը գրիհողի ձեռքի տակով բարձրացնելով, իսկ մյուս ձեռքով ձգում է մրցակցի տարանուն ձեռքը և նրան շրջում հետ (նկ. 43 բ):




Նկ. 43

Ծրջում թափագլորումով՝ ազդրի հակադարձ բռնվածքով

Գրիհող ըմբիշը գտնվում է մրցակցի մի կողմում՝ գլխով դեպի ուղիղը: Նա երկու ձեռքները միացնում է՝ բռնելով հետու ազդրը հակադարձ բռնվածքով (նկ. 44 ա): Վենվելով մրցակցի մնջքին և արտակորվելով՝ մրցակցի ոտքները կտրում է գորգից (նկ. 44 բ): Այնուհետև, գրիհող ըմբիշը մրցակցին շրջում է գլխի և մոտիկ ուսի վրայով (նկ. 44 գ): Ասլա պեսք է բաց թողնել բռնվածքը և դեպի մրցակցից պտտվելով՝ կրծքով շրջվել դեպի

զորգը (նկ. 44 դ):



Նկ. 44

Բնորոշ սխալները: 1. Գրիհողի մոտիկ ոտքը չի գտնվում մրցակցի համանուն ազդրի մոտ՝ ներսի կողմից: 2. Գրիհողը մրցակցին փորձում է շրջել գլխի և հետու ուսի վրայով: 3. Մրցակցին շրջում է իր վրայով:

Տակորիկական պատրաստության միջոցները

Համակցումներ: 1. Ծրջում անցումով բռնած կզակը՝ մոտիկ ոտքից կառչումով, ապա՝ Ծրջում թափագլորումով՝ ազդրի հակադարձ բռնվածքով: Պաշտպանվող ըմբիշն առաջին հնարից խոսափելու համար մնջքով դառնում է դեպի մրցակցը կամ ընդունում է բարձր ծնկադիր դրություն: Գրիհող ըմբիշը կատարում է հետու ազդրի հակադարձ բռնվածքը, դադարեցնում է ոտքով կառչումը և այդ ոտքի վրա հենվելով՝ կատարում թափագլորումով շրջում:

2. Ծրջում տարածումով բռնած պարանոցը թափակից՝ համանուն ոտքի կառչումով, ապա՝ Ծրջում թափագլորումով՝ ազդրի հակադարձ բռնվածքով: Պաշտպանվելով առաջին հնարից՝ մրցակցին ընդունում է ցածր ծնկադիր դրություն: Այդ ժամանակ գրիհողը կատարում է հետու ազդրի հակադարձ բռնվածքը, դադարեցնում է ոտքով կառչումը և այդ ոտքի վրա հենվելով՝ կատարում թափագլորումով շրջում:

Պաշտպանություններ

Նախնական: 1. Ընդունել զածը ծնկադիր դրություն: 2. Չքողնել, որ գրոհող ըմբիշը մոտիկ ոտքը մտցնի համանուն ոտքի տակ:

Անմիջական: 1. Ընդունել զածը ծնկադիր դրություն, կրծքով շրջվել դեպի գրոհող ըմբիշը: 2. Համանուն ձեռքի արմունկով հրել մոտիկ ոտքի ազդը դրսից և հեռանալ գրոհող ըմբիշից:

Հակահնարքներ

1. Անցում վեր նստավերելքով՝ սրունքի հակադարձ բռնփածքով: Հակահնարք կատարող ըմբիշը կրծքով շրջվում է դեպի մրցակցի, նստում հնոու ազդրի վրա, մոտիկ ձեռքով բռնում համանուն ոտքի սրունքը (սրունքմեզային հոդի մոտից) դրսից կամ ներսից և բարձրանալով անցնում է նրա հետևը:

2. Փակում կաշումով բռնած ոտքը: Այս պահին, նրա գրոհողը մրցակցի ոտքերը կտրում է գորգից, հակահնարք կատարող ըմբիշը զլխով մոտենում է նրա ոտքերին, մոտիկ ոտքով կատարում տարանուն ոտքի դրսից կաշում և մյուս ոտքը բռնելով՝ մեկ կամ երկու ձեռքով բարձրացնում է վեր:

4.3.2. ԳՅՈՒՄՆԵՐ

Ծնկադիր դրությունից կատարվող գցումները լինում են՝ թերումով, արտակորված և մնջքի դարձումով:


4.3.2.1. ԳՅՈՒՄ ԹԵՐՈՒՄՈՎ

Այս խմբի հնարքներն իրենց կատարման նորանակով շատ նման են կանգնած դրությունից կատարվող թերումով գցումներին: Գրոհող ըմբիշը կատարելով բռնվածք, մրցակցին կտրում է գորգից և առաջ թերվելով՝ նրան գցում մնջքով դեպի գորգը: Թերումով գցումների հաջող կատարման համար, գրոհող

ըմբիշը պնտը է ունենա ձեռքների, ոտքների և իրանի լավ զարգացած մկանային համակարգ:

Գցում թերումով բռնած հնոու ձեռքը և մոտիկ ոտքը

Գրոհող ըմբիշը տարանուն ձեռքով բռնում է մոտիկ ոտքի ազդը՝ կոնքագլուխին հոդի մոտից, իսկ մյուս ձեռքով՝ մոտիկ ձեռքի տակից բռնում է հնոու ձեռքի բազուկը և կտրում գորգից: (նկ. 45 ա, բ): Այսուհետև, առաջ թերվելով՝ մրցակցին գցում է մնջքով դեպի գորգը և կրծքով սեղմելով թիակները հպում գորգին (նկ. 45 գ, դ):



Նկ. 46

Բնորոշ սխալները: 1. Բռնվածքը թույլ է կատարում: 2. Գրոհող ըմբիշը թերվում է, բայց մրցակցի հետ չի ընկնում:

Տակտիկական պատրաստության միջոցներ

Նպաստավոր իրավիճակի ստեղծում: Համանուն ձեռքով բռնել մրցակցի հնոու ձեռքը հետևից՝ արմնկային հոդի մոտից, իսկ մյուս ձեռքով, համանուն ձեռքի տակից բռնելով հնոու ձեռքը՝ կատարել վազանցում՝ համանուն նախարարկով հրելով մոտիկ ձեռքի արմունկը դեպի մյուս ձեռքը:

Համակցումներ: Շրջում ոլորումով բռնած հնոու ձեռքը և մոտիկ ոտքը, ապա՝ Գցում թերումով բռնած հնոու ձեռքը և մոտիկ

ոտքը: Պաշտպանվելով առաջին հնարքից՝ մրցակիցը բարձրացնում է իրանը և մնջրով շրջվում դնափի գրոհող ըմբիշը: Հնաց այդ պահին գրոհողը նրան կտրում է գորգից և կատարում թերումով գցում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Ձեռքները լայն դնել և թույլ չտալ հեռու ձնորից բռնվածք կատարել: 2. Ընդունել ցածր ծնկադիր դրություն, մնջրով շրջվել դնափի մրցակիցը:

Անմիջական: 1. Ազատ ձնորով բռնել մոտիկ ոտքի կրունկը և բարձրացնել՝ թույլ չտալով մրցակիցին կանգնել: 2. Բռնած ոտքով դրսից կառչել գրոհող ըմբիշի տարանուն ոտքից:

Հակահնարքները

Փակում կառչումով բռնած ոտքը: Այն պահին, երբ գրոհող ըմբիշը փորձում է մրցակիցին բարձրացնել, հակահնարք կատարող ըմբիշը բռնվածքի մեջ գտնվող ոտքով կատարում է փակում՝ դրսից կառչելով տարանուն ոտքից, իսկ ազատ ձնորով բռնելով համանուն ազդրը դրսից՝ բարձրացնում է վեր:

4.3.2.2. ԳՅՈՒՄ ԱՐՏԱԿՈՐՎԱԾ


Այս խմբի հնարքների բնորոշ տարրը հանդիսանում է գրոհող ըմբիշի իրանի արտակորումը: Դրանք իրենց կատարման նղանակով նման են կանգնած դրությունից կատարվող արտակորված գցումներին: Արտակորված գցումների հաջող կատարման համար ըմբիշը պետք է ունենա ոտքնրի, ձեռքների և իրանի լավ զարգացած մկանային համակարգ և իրանի ճկունություն:

Գցում արտակորված՝ ազդրի հակադարձ բռնվածքով

Գրոհող ըմբիշը գտնվում է մրցակիցի մի կողմում՝ գլխով դնափի ոտքները: Կատարելով հեռու ազդրի հակադարձ բռնվածք՝

գրոհող ըմբիշը մրցակիցի ոտքները կտրում է գորգից (նկ. 46 ա): Շարունակելով մրցակիցի ոտքները բարձրացնել՝ գրոհողը արտակորվում է՝ նրան լրիվ կտրելով գորգից (նկ. 46 բ): Այնուհետև, ընկնելով հետ՝ մրցակիցին գցում է մնջրով դնափի գորգը (նկ. 46 գ):

Ընորոշ սխալները: 1. Գրոհող ըմբիշը հետ ընկնելուց չի շրջվում կրծքի վրա: 2. Գցումից հետո բռնվածքը բաց չի թռնում: 3. Շուտ է սկսում գցումը:



Նկ. 47

Տակուիկական պատրաստության միջոցները

Համակցումներ: Ծրջում անցումով բռնած կզակը՝ մոտիկ ոտքից կառչումով, ապա՝ Գցում արտակորված՝ ազդրի հակադարձ բռնվածքով: Պաշտպանվող ըմբիշն առաջին հնարքից խուսափելու համար ընդունում է բարձր ծնկադիր դրություն: Գրոհող ըմբիշը կատարում է հեռու ազդրի հակադարձ բռնվածք, դադարեցնում է ոտքով կառչումը և այդ ոտքի վրա հենվելով մրցակիցին կտրում է գորգից և կատարում արտակորված գցում:


Պաշտպանությունները

Տես՝ Ծրջում թափագլորումով՝ ազդրի հակադարձ բռնվածքով հնարքի պաշտպանությունները:

Հակահնարքներ

1. *Փոխադրում նստավերելքով բռնած հնոու ոտքը:* Այն պահին, եթի գրոհողը մրցակցի ոտքնը կտրում է գորգից, նա կրծքով շրջվում է դեպի գրոհողի ոտքնը, տարանուն ձնորով մոտիկ ոտքի վրայից բռնում հնոու ոտքը ներսից (ցանկալի է ծնկի մոտից) և բռնած ոտքը ձգելով իրեն, կոնքը կտրուկ ձգում է ներքն՝ դեպի գրոհողի ոտքնը: Այնուհետև, նստավերելքով անցնում է մրցակցի հետևը:

2. *Տապալում հրելազցումով բռնած կրունկը՝ ներսից կաշումով:* Այն պահին, եթի գրոհողը մրցակցի ոտքնը կտրում է գորգից, նա տարանուն ձնորով բռնում է մրցակցի կրունկը դրսից, բարձրացնում, մյուսով հենվում գորգին՝ միաժամանակ տարանուն ոտքով ներսից կաշելով մյուս ոտքից: Շարունակելով ոտքը բարձրացնել՝ մեջքով շրջվում է դեպի մրցակցը և կատարում հրելազցում (նկ. 47):



Նկ. 47


4.3.2.3. ԳՅՈՒՄ ՄԵԶՔԻ ԴԱՐՁՈՒՄՈՎ

Այս գցումների կատարման ժամանակ, գրոհող ըմբիշը մրցակցին բարձրացնելով մասամբ կամ ամբողջովին՝ կտրում է գորգից և մեջքով դաշնալով դեպի մրցակցը՝ նրան գցում մեջքի վրայից:

Գցում մեջքի դարձումով բռնած մոտիկ ոտքը և ձնորը

Գրոհող ըմբիշը գտնվում է մրցակցի մի կողմում: Նա բռնում է մրցակցի համանուն բազուկը և ազդը (նկ. 48 ա): Բարձրացնելով մրցակցին ամբողջությամբ կամ մասամբ՝ կտրում է գորգից և մեջքի դարձումով կոնքը մտցնում նրա տակ (նկ. 48 թ): Այնուհետև, գրոհողը թեքվում է առաջ՝ մրցակցից հետո գտնվող ոտքը, միաժամանակ բռնած ձնորը ձգելով նոյն ուղղությամբ և ոտքը բարձրացնելով վեր՝ նրան կոնքի վրայից գցում է մեջքը դեպի գորգը (նկ. 48 զ): Գցումից հետո, գրոհողը բաց է թողնում ազդը բռնած ձնորը և մրցակցի թիսկները սեղմում գորգին (նկ. 48 դ):

Բնորոշ սխալներ: 1. Կոնքի փոխարեն՝ գրոհողը ոտքն է մտցնում մրցակցի տակ: 2. Գյման ժամանակ իրանու միայն առաջ է թեքվում: 3. Գյման ժամանակ կոնքով չի հարվածում: 4. Ձնորնի և իրանի գործողությունները համագործակցված չեն:



Նկ. 48

Տակտիկական պատրաստության միջոցները

Համակցումներ: Ծրջում վազանցումով բռնած համանուն ձնորը՝ բանալի, ապա՝ Գցում մեջքի դարձումով բռնած համանուն ձնորը և ոտքը: Պաշտպանվողը, փորձելով խուսափել վազանցումով շրջումից՝ ընդունում է բարձր ծնկադիր դրություն: Գրոհող ըմբիշը բռնում է նաև մրցակցի համանուն ազդը և նրան

կտրնելով՝ կատարում մեջքի դարձումով զցում:

Պաշտպանությունները

Նախնական: 1. Ընդունել ցածր ծնկադիր դրություն: 2. Խոչընդոտել ձեռքի և ոտքի բռնվածքին:

Անմիջական: 1. Ընդունել ցածր ծնկադիր դրություն: 2. Շարժվել առաջ, մեջքով դառնալ դեպի գրոհողը:

Հակահնարքները

Տապալում հրելազգումով բռնած ոտքը՝ տարանուն ոտքի դրսից կառչումով: Հակահնարք կատարող ըմբիշը, գորգից կտրվելու պահին, մոտիկ ոտքով կատարում է տարանուն ոտքի դրսից կառչում: Այնուհետև, կատարելով տարանուն ոտքի բռնվածք՝ (բռնել կրունկը դրսից կամ սրունքը ներսից) ոտքը բարձրացնելով՝ կատարում է հրելազգումով տապալում:

ԳԼՈՒԽ 5

ԱԶԱՏ ԸՄԲԵԱՄԱՐՏԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըմբշամարտում «մարտավարություն» տերմինը կիրավում է որոշելու համար այն գործողությունը, որն ընտրում է մարզիկը իր առջև դրված նպատակին հասնելու համար: Մարտավարության ճիշտ ընտրությունը ըմբիշին հնարավորություն է, տալիս գոտնմարտի ընթացքում առաջացած իրավիճակներին համապատասխան որոշումներ ընդունել:

Մարզական բարձր արդյունքների հասնելու համար ճիշտ մարտավարությունը մարզիկին թույլ է տալիս առավել արդյունավետ օգտագործել տեխնիկական հմտությունները, ինչպես նաև իր ֆիզիկական և բարոյակամային հատկությունները:

Մարտավարության ընդհանուր և մասնավոր խնդիրները կայանում են մարզիկի կողմից հաղթանակի հասնելու առավել արդյունավետ նդանակների և ուղիների օգտագործման մեջ. ինչպես մեկ հնարքի կատարման, այնպես էլ՝ առանձին գոտնմարտի և ամբողջ մրցման ժամանակ: Այսպիսով, ըմբշամարտում մարտավարությունը իրենից ներկայացնում է հնարքի կատարման (հնարքների կատարման մարտավարություն), գոտնմարտի վարման (գոտնմարտի վարման մարտավարություն) և մրցման մասնակցության (մրցումների մասնակցության մարտավարություն) յուրատեսակ սցենար: Այստեղ նախատեսվում են հարձակվող ըմբիշի՝ և նրա մրցակցի նպատակները, գոտնմարտի վարման ձևերը, նդանակներն ու միջոցները, որոնք առավել չափով համապատասխանում են կոնկրետ իրավիճակներին ու նպաստում են ըմբիշի հաջողությանը: Այլ կերպ ասած՝ մարտավարություն ասելով կարելի է հասկանալ ըմբիշի պլանը կոնկրետ իրավիճակներում (բռլոր էական գործոնների ամբողջությունը, որոնք ազդում են ըմբիշի գործողությունների արդյունքի վրա):

Պլանի որակից է կախված գործողությունների արդյունավետությունը, հետևաբար նաև մարզական արդյունքները:

Ըմբշամարտում մարտավարությունը մշտապես առաջադիմություն է ապրում, այն մշտապես մշակվում է և նորացվում, շարունակվում է կատարելագործվել ստանալով գիտական հիմնավորում:

Մարտավարության պլանն ըմբիշի գործողությունների դեկավարման անհրաժեշտ բաղադրամասն է:

Ի՞նչ է հարկավոր ըմբիշին մարտավարության ճիշտ պլան մշակելու և այն անթերի իրականացնելու համար:

Իրականում շատ բան կախված է ըմբիշի բնափորությունից, վճռականությունից, նուանդից: Բացի այս ամենից, մարտավարության մշակման համար ըմբիշից պահանջվում է բազմակողմանի խոր գիտելիքներ, պահը ճիշտ ընտրելու և արագ կողմնորոշվելու ընդունակություն:

Ամենից առաջ ըմբիշը պետք է կարողանա ճշտորեն որոշել գուտնմարտի նպատակը: Նրա գործողությունները պետք է սահմանափակվեն այդ նպատակի շրջանակներում, որը թելադրվում է ինչպես անձնական, այնպես էլ կոլեկտիվի շահերով:

Երկրորդ՝ ըմբիշը պետք է կարողանա ճիշտ ընտրել իր առջև դրված նպատակին հասնելու ուղիները, այսինքն՝ նա պետք է ընտրի և հաստատի նպատակից բխող խնդիրների լուծման լավագույն հերթականությունը:

Երրորդ՝ ըմբիշը պետք է խելամտորեն հաշվի առնի առաջարկած նպատակի և մարտավարության իրականացման ուղիների համապատասխանությունն իր հնարավորություններին:

Այսպիսով, առանձին գործնմարտների նպատակների կանխորոշումը, համապատասխան մարտավարության մշակումը և դրա իրականացումը այն նրեք գործոններն են, որոնք պետք է

համակցված ձևով կարողանա իրականացնել յուրաքանչյուր րմբիշ:

Ըմբիշները պլանավորում, կառուցում և իրականացնում են գուտնմարտի մարտավարությունը՝ առաջին հերթին կիրառելով անձնական գիտելիքներն ու փորձը: Դա նշանակում է, որ նրանք օգտագործում են իրենց, ինչպես նաև իրենց մրցակիցների հնարավորությունների մասին ունեցած տեղեկությունները, որպեսզի որոշեն գուտնմարտի նպատակը, ընտրեն անհրաժեշտ մարտավարությունը և ընդունեն մարտավարության պլանի իրականացմանը համապատասխան ուղիները:

Սպորտում տիրում է այն կարծիքը, որ մարտավարության իրականացումը արվեստ է: Դա իրոք այդպես է: Բայց դա նաև գիտություն է, որտեղ մեծ նշանակություն ունի գիտելիքները համակարգելու և հանրագումարի բերելու ունակությունը:

Որոշում ընդունելու համար հարկավոր է տրամադրության տակ ունենալ անհրաժեշտ տեղեկություններ: Հասկանալի է, որ առաջին հերթին հարկավոր է կատարել մրցակիցների պատրաստվածության համալիր, խոր վերլուծություն: Պատրաստվածության ու պայքարի պայմանների վերլուծության տվյալներից գծագրվում է իրավիճակը: Ըլլորովին նոր իրավիճակներ համարյա չեն հանդիպում, յուրաքանչյուր այս կամ այն չափով հիշենանում է անցյալի ծանոթ փորձը կամ իրավիճակներից մեկը: Այնպիսի նոր իրավիճակ, որ անհնար լինի համեմատել անցյալի իրադրություններից որևէ մեկի հետ, ըմբշամարտում հազվադեպ է պատահում:

Այս «Ճանաչմանը» ըստ էության հետևում է ընտրության փուլը, գիտենալով նախորդ համանման իրավիճակում ընդունված որոշումը և հաշվի առնելով դրա արդյունքը, կարելի է ընդունել այնպիսի որոշում, որն առավել չափով հարմար է տվյալ իրավիճակի համար:

Ըմբշամարտում մարտավարական որոշումները ընդունելու ունակությունը ձեռք է բնրվում ուսուցման, մարզման և մրցումների ժամանակ: Թե ինչպես է տեղի ունենում ըմբիշի կողմից մարտավարության պլանի կառուցման ընթացքը, ինչ փուլերից է այն ձևափրկում, կամ կառնենք ստորև:

5.1. ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈԽԵՐԸ

Ինչպես վերևում նշվեց, որոշման ընդունմանը նախորդում է տնդեկատվության հավաքումը, որն ընդունված է անվանել «հենտախուզում»: Այնուհետև իրականացվում է հավաքված տնդեկատվության գնահատումը, դասակարգումը և ստեղծված իրավիճակի մոդելի կառուցումը: Վերջապես, ելենով նպատակից, տեղի է ունենում մարտավարության լավագույն տարրերակի ընտրությունը և ապա՝ մարտավարության իրականացման ընթացքը: Իրականացումը սովորաբար իր մեջ ընդգրկում է մարտավարության շտկումներն ըստ արդյունքների:

Այսպես, օրինակ, մրցումների մասնակցության մարտավարության պլանը կազմվում է մրցումներն սկսելուց շատ առաջ. մարզումների ընթացքում իրականացվում են հիմնական նախապատրաստական աշխատանքները: Մրցման ժամանակ ըմբիշը ձեռնամուխ է լինում մարտավարության իրականացմանը և նրա առանձին տարրերի շտկմանը:

Մարտավարական որոշումների առավել կարևոր տնսակները նախապես կատարվող քննարկումներն են: Այսպես՝ մրցումների մասնակցության մարտավարության ժամանակ կարող է դիտարկվել գոտումարտ չպահապորված կամ անհայտ մրցակցի հետ, ուստի անհրաժեշտություն է դառնում գոտումարտի վարման և հնարքների կատարման նոր մարտավարության պլանի մշակումը:

5.2. ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ

Ըմբիշին անհրաժեշտ իրավիճակի էական գործոնների մասին տնդեկատվության հավաքումը սովորաբար իրականացվում է զանազան մեթոդներով և միջոցներով. հարցում, դիտարկում, գոտումարտ (մրցակցի հնարավորությունների ուսումնասիրում):

Հարցումը տնդեկատվություն ստանալու մեթոդներից մեկն է (գրույցներ մարզիկների, մարզիկների, մրցավարների հետ): Մարտավարության մշակման ժամանակ պնտը է հաշվի առնել, որ նման տնդեկատվությունը կարող է ոչ միայն անբավարար, այլև անստույգ լինել: Հարցուղները կարող են ճիշտ չգնահատել իրավիճակը, քանի որ յուրաքանչյուր մարդ իր դիրքներից է գնահատում այն:

Դիտարկումը ևս տնդեկատվություն հավաքնելու մեթոդ է, որն իրականացվում է տարբեր գործոնների արձանագրման ճանապարհով (նախավարժանք, մարզումներ, գոտումարտեր և այլն): Դիտարկումը կարող է լինել տնտեղական ապարատի կամ հասուն գործիքների օգնությամբ:

Տնտեղական դիտարկման ժամանակ կարելի է հիշել փաստերը կամ դրանք գրանցել հասուն այդ նպատակի համար նախատեսված արձանագրության մեջ: Ներկայումս, ըմբշամարտում լայնորեն տարածված է ըմբիշի գործողությունների սղագրման մեթոդը, որը թույլ է տալիս ամրագրել պայքարի ողջ ընթացքը և այսպիսով ստանալ առավել լիարժեն ու առարկայական տնդեկատվություն:

Սղագրումը իրականացվում է խորհրդանշիշների օգնությամբ: Ինչպես սպորտային ըմբշամարտի մյուս ձևերը, այնպես էլ ազատ ըմբշամարտը ունի խորհրդանշիշների իր մշակված համակարգը:

Տնտղական դիտարկումը հիշողության մեջ փաստնիք ամրագրումով դիտարկման ամենատարածված միջոցն է: Այն, հավանաբար, հնտագայում էլ պետք է լայնորեն կիրառել հնարքների կատարման, գոտնմարտի վարման և մրցումների մասնակցության մարտավարության մշակման ժամանակ:

Դիտարկումը նպատակահարմար է անցկացնել մրցումներն սկսվելուց առաջ, որպեսզի տեղեկատվության գնահատման և մշակման համար լինի բավարար ժամանակ:

Հատուկ մեթոդներով՝ մասնավորապես, տնտագրման միջոցով գրանցումն ունի ինչպես դրական, այլև էլ՝ բացասական կողմեր, օրինակ, կապված է նյութական մեծ ծախսնի հետ: Դիտարկման այս ձևը հատկապես օգտակար է սղագրական համալիր գրառման դեպքում, քանի որ ցանկացած ժամանակահատվածից հետո կարելի է նորից վերանայել և ի հայտ բերել կարևոր տվյալներ այս կամ այն մարզիկի մասին, մինչդեռ հիշողության մեջ հնարավոր չէ մեծաքանակ փաստնիք ամրագրումը և պահպանումը:

Գոտնմարտի ժամանակ կատարվող հնտախուզումը կատարվում է տեղեկատվություն հավաքման նպատակով, որն անհրաժեշտ է գոտնմարտի վարման մարտավարության իրականացման և հնարքների կատարման մարտավարության մշակման համար:

Քանի որ մարտավարությունը պետք է մշակվի նախօրոք, ուստի հնտախուզուման այս ձևից օգտվելու նպատակով անցկացնում են համատեղ մարզումներ, մարզական գոտնմարտներ, փորձամրցումներ: Այս ճանապարհով հավարկած տեղեկատվությունը կարող է ծառայել ինչպես առաջիկա մրցումների ժամանակ՝ այնպես էլ հնտագայում մարտավարության մշակման համար: Այսպիսով, հնտախուզուման ճանապարհով ձևոր բերված տեղեկատվությունը ծառայում է ընթացիկ և հնուանկարային խնդիրների լուծմանը:

Իրավիճակի մասին առավել լիարժենք տեղեկությունների հավաքագրման համար անհրաժեշտ է օգտագործել հնտախուզման բոլոր ձևերը:

5.3. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Իրադրության գնահատումն իրենից ներկայացնում է հավաքված տեղեկատվության վերլուծության ընթացքը: Այս ժամանակ հավաքված տեղեկությունները դասակարգվում, համակարգվում և համեմատվում են: Այսպիսով, ձևակորպում է պայքարի իրավիճակի մտահայնցողական մոդելը: Որպեսզի իրավիճակի մոդելը ավելի ճշգրիտ և մանրամասն լինի, հարկավոր է տեղեկությունները բաշխել ըստ խմբերի.

1. տեղեկություններ մրցակիցների մասին,
2. տեղեկություններ պայքարի պայմանների մասին:

Սուածին խմբի մեջ մտնում են մրցակցի տեխնիկական, ֆիզիկական, բարյակամային պատրաստության և մարտավարության մասին նյած տեղեկությունները:

Հնարավոր մրցակիցներից յուրաքանչյուրի տեխնիկական պատրաստության մակարդակը որոշելու համար անհրաժեշտ է տեղեկություններ հավաքել նրանց տեխնիկական պատրաստության մակարդակը բնութագրող բաղադրիչների մասին: Այսինքն՝

1. Հնարքների ընդհանուր քանակը, որն ընդհանրապես փորձում է կատարել մրցակիցը, և որ կողմի վրա է կատարում, ինչ հնարքներ են փորձում նրա հետ գոտնմարտների կիրառել: Սա հնարավորություն է տալիս կարծիք կազմել մրցակցի տեխնիկական պատրաստության «զինանոցի» մասին և բացահայտել նրա պաշտպանության թույլ և ուժեղ կողմերը:

2. Հնարքների և պաշտպանությունների արդյունավետությունը համարվում է մարզական վարպետության գնահատման

հիմնական չափանիշը: Սահմանելով փորձնրի արդյունավետությունը՝ ստեղծվում է մրցակցի տնիսնիկական պատրաստության իրական պատկերը:

3. Իմանալով մրցակցի կողմից կիրառվող հնարքների և պաշտպանությունների հաճախականությունը, կարելի է որոշել այս կամ այն նզրահանգման ճիշտ կամ սխալ լինելը, հարմար իրավիճակներ ստեղծելու նրա ունակության աստիճանը:

4. Ծատ կարևոր է որոշել մրցակցի ակտիվությունը՝ հնարք կատարելու փորձնրի քանակը ժամանակի միավորի ընթացքում:

5. Պակաս կարևոր չէ նաև հնարքների կատարման արդյունավետությունը՝ հաջող և անհաջող փորձնրի հարաբերակցությունը: Որքան բարձր է ըմբիշի հարձակողական գործողությունների արդյունավետությունը, այնքան մնան է նրա տնիսնիկական վարպետության աստիճանը:

Մրցակցի մարտավարությունը որոշելու համար հարկավոր է պարզել.

ա) թե մարտավարության որ տեսակին է նախապատվություն տալիս (հարձակողական, հակահարձակողական, պաշտպանողական) և ինչպիսին է այդ տեսակների հարաբերակցությունը գոտեմարտի ընթացքում,

բ) մարտավարության տեսակն ընտրելիս ինչպես է հաշվի նստում մրցակցի անհատական առանձնահատկությունների, թույլ և ուժեղ կողմերի հետ,

գ) մարտավարական պատրաստության ինչպիսի ձևեր է կիրառում (ճնշում, մանկրում, քողարկում),

դ) հնարքների կատարման ինչպիսի մարտավարություն է ավելի հաճախ կիրառում,

ե) մրցումների մասնակցության ինչպիսի մարտավարություն է ընտրում և այլն:

Մրցակցի շարժողական ընդունակությունների (ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն և ճկունություն) զարգացման մակարդակը որոշվում է ունեցած տնիսնկատվության վերլուծության իմաստ վրա:

Նոյն ճանապարհով որոշվում է բարյակամային հատկանիշների (համարձակություն, համառություն, վճռականություն, աշխատափրություն, սկզբունքայնություն, գիտակցական կարգապահություն, հայրենասիրություն, կոլեկտիվիզմ, կամքի ուժ և այլն) մակարդակը:

Այս ամենի օբյեկտիվ գնահատականը թույլ է տալիս պատկերացում կազմել մրցակցի հոգնբանական առանձնահատկությունների մասին:

Առաջնորդվելով վերոհիշյալ գուցանիշներով ըմբիշը կարող է մրցակիցների հնարավորությունները համեմատել իր պատրաստվածության հետ՝ ստեղծելով ուժերի հարաբերակցության մողելներ: Այդ մողելները հիմք են հանդիսանում մարտավարական պահանջների մշակման համար:

«Տնիսնկություններ պայքարի պայմանների մասին» խմբի մեջ մտնում են տվյալներ կլիմայական պայմանների, սարքավորումների և գույքի, մրցումների ծրագրի, վիճակահանության, մրցավարության առանձնահատկությունների, հանդիսատեսի ռեակցիայի և այլնի մասին: Գնահատվում է այդ գործոնների հնարավոր ազդեցությունը (դրական կամ բացասական) մրցումների ընթացքի, գոտեմարտների ելքի, հնարքների կատարման արդյունքների վրա:

Պայքարի պայմանների մասին տնիսնկությունները թույլ են տալիս ճշգրտել իրավիճակի մողելը և ընդունել ավելի ճիշտ մարտավարական որոշումներ:

Մողելի կառուցման ժամանակ, բացի օբյեկտիվ գործոններից, իրավիճակի գնահատման և մարտավարական որոշումների ընդունման վրա ազդում են նաև սուբյեկտիվ գործոնները,

որոնք իրենցից ննրկայացնում են յուրատնսակ ներքին արգելվներ: Դա հաճախ դրսնորվում է մրցումների բարդ պայմաններում, եթե նախադրյալներ են առաջանում հոգական գրգռվածության համար: Արդյունքում ըմբիշն ընդունում է որոշում (կամ փոխում է ավելի վաղ ընդունած որոշումը)՝ ելնելով իրադրության մասին ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ պատկերացումներից: Դա տեղի է ունենում հիմնականում այն պատճառով, որ որոշ ըմբիշներ իրենց հոգեկան կողմնորոշման պատճառով ընկալում են միայն այն տեղեկատվությունը, որն ուզում են ընկալել՝ գիտակցարար ուշադրություն շնարձնելով մյուս փաստների ու հանգամանքների վրա:

Որոշումների ընդունման տեսությանը նվիրված գրականության մեջ համակարգված են որոշ բացասական (սուբյեկտիվ հոգական և անհատական) գործոններ. կանխակալությունը, թերի որոշումները և ինքնապահովումը:

Կանխակալությունը առանձնապես ուժեղ կերպով դրսնորվում է մրցակիցների գործողությունների գնահատման ժամանակ և արտահայտվում է նրանց հնարավորությունների (կախված այն բանից, թե ինչպես է այդ մրցակիցը նախկինում գնահատվել ըմբիշի, նրա ընկերների և մարզի կողմից) չափից ավելի բարձրացման կամ իջեցման մեջ: Իրավիճակը կարող է փոխվել, բայց ըմբիշը առաջար նման ձգտում է հավատարիմ մնալ նախկին գնահատականին և դրան համապատասխան է գնահատում բոլոր փաստները՝ կարծես թե «չհավատալով» իր աշքերին:

Իրական պատկերի խնդարյուրումը ցանկալիով բացատրվում է դժվարությունների և չլուծված խնդիրների նկատմամբ անուշադրությամբ: *Սովորաբար* դա տեղի է ունենում այն ժամանակ, եթե ըմբիշը չի կարողանում անհրաժեշտ չափով վերլուծել բոլոր տվյալները կամ վերլուծությունից հետո գտնել գործողությունների բավականին հիմնավորված ուղղություն՝

առաջադրված խնդրի լուծման համար: Նա ձգտում է պահպանել իր հեղինակությունը, իր ոգին, և արդյունքում մարտավարությունը ձևակերպվում է այսպես. «գուցե հաղթեմ»: Զարդարացված լավատեսությունը, ինքնախարենությունը հանգնցնում են նրան, որ ընտրած մարտավարությունը դուրս է գալիս անիրական:

Թերի որոշումները որպես կանոն, ընդունվում են ոիսկի պայմաններում, եթե առկա են պարտության վտանգը մեծացնող գործոններն ու հանգամանքները և միևնույն ժամանակ ըմբիշին հարկավոր է ինչ-որ կերպ գործել: Ըմբիշը մորիդիզացնում է «պաշարների» անբավարար քանակ հարձակողական մարտավարության իրականացման համար: Հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես ուժեղ մրցակիցի հետ պայքարում ըմբիշները հարձակվում են, բայց նրանց գրոհները չեն կրում վճռական բնույթ, հաղթանակի հասնելու համար չի գործադրվում բավական նուանդ:

Ինքնաստպահովումն արտահայտվում է հնարավոր անախորժություններից իրեն նախօրոք ապահովագրելու ձգտման մեջ: Այսպես, օրինակ, ըմբիշը զտնում է, որ մրցակիցն իրենից թույլ է, բայց միևնույն ժամանակ չի բացառում պատահականությունը, որը կարող է թույլ տալ մրցակիցին հաղթանակ տանել: Ըմբիշը չարդարացված շատ ժամանակ և ուժեր է հատկացնում պաշտպանությանը և միևնույն ժամանակ, հաստատապես գործելու նկատառումով, հարձակողական գործողությունները կատարում է ուժերի ավելորդ վատնումով: Ավելորդ զգուշությունը և «միայն ինչ-որ բան դուրս չգա» սկզբունքով գործողությունները ինքնապահովման սնուցիչ միջավայրն են:

Մարտավարական որոշումների վրա բացասական գործոնների ազդեցությունը խոչընդոտող լավագույն միջոցը լիարժեք տեղեկատվությունն է և բոլոր գործոնների սթափ և իրատեսական վերլուծությունը:

Մարտավարական որոշումների ընդունումն իրենից ներկայացնում է գործողությունների լավագույն տարբերակների ընտրության գործընթացը:

Եթե մարտավարական որոշումների ընտրության նպատակներն ու իրավիճակը ստանդարտ են և լավ հայտնի, ապա նման դեպքերում կարելի է որոշումներ ընդունել առանց հապաննոլու:

Սակայն իրավիճակի մասին նախնական պատկերացումը տեղեկատվության անբավարարության պատճառով կարող է լինել անորոշ: Այսպիսի դեպքերում ըմբիշը չպետք է համեմատ որոշումներ կայացնի: Պետք է որոշակի քայլեր ձեռնարկել անորոշության պարզեցման նպատակով: Ըմբիշը պետք է կանխագուշակումներ անի՝ և որոշման բազմաթիվ տարբերակների վերլուծությամբ զբաղվի այնքան ժամանակ, մինչև չգտնի որևէ օպտիմալ տարբերակ:

Գոտնմարտի մարտավարության մշակման ժամանակ ըմբիշը հաճախ կանգնում է ընտրության առաջ. ընտրել գործողություններ, որոնք ուղղված են «մաքուր» հաղթանակի, բայց գուգակցվում են պարտության մեծ ռիսկի հետ, թե ընտրել այնախի գործողություններ, որոնք առանց մեծ ռիսկի թույլ կտան հաղթանակի հասնել ոչ մեծ առավելությամբ:

Նմանատիպ հարցը ըմբիշի առաջ ծառանում է մրցումների մասնակցության մարտավարության ընտրության ժամանակ. ձգտել դառնալ չնմապիսն՝ ռիսկի դիմելով պարտվել և շմտնել նոյնիսկ մրցանակակիրների թվի մեջ, թե առանց ռիսկի դիմելու դառնալ մրցանակակիր:

Նոյն հարցը առաջ է գալիս նաև ըմբիշի կողմից ուժների բաշխման հարցը քննարկելիս. մի գոտնմարտում հաղթանակի հասնելու համար ներդնել ամբողջ ուժը՝ կասկածի տակ դնելով մյուս գոտնմարտներում վերականգնելու հնարավորությունը, թե խնայել ուժները հաջորդ գոտնմարտների համար:

Այս հարցի մարտավարական լուծումը սովորաբար պարունակում է հետևյալ կետերը.

1. Նպատակը, որը սովորաբար իրենից ներկայացնում է տվյալ պահին համապատասխանող մարզական արդյունքը: Մրցումների մասնակցության մարտավարության մեջ այն տեղը, որն ըմբիշը ուզում է զբաղեցնել, գոտնմարտի մարտավարության մեջ այն արդյունքը, որը հարկավոր է ձնոր քերել (մարուր հաղթանակով, միավորներով և այլն), հնարքների կատարման մարտավարության մեջ՝ գործողության արդյունքը կամ գնահատականը (գցում, պահում և այլն):

2. Գործողությունները, որոնք տվյալ պայմաններում առավել շահավետ են: Այսինքն՝ ըմբիշի խնդիրն է գործողությունների զանազան ուղղությունների մեծ քանակից ընտրել մեկը, որը տվյալ պայմաններում առավել նպատակահարմար է և արդյունավետ:

3. Միջոցները, որոնք պահանջում են առաջադրված նպատակին հասնելու համար: Այս կետում նախատեսվում է ըմբիշի ֆիզիկական, հոգեկան հնարավորությունների և տեխնիկայի ճիշտ բաշխումը առաջադրված խնդիրները լուծելու համար:

5.4. ՀՆԱՐԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հնարքների կատարման մարտավարությունը գոտնմարտի ընթացքում առաջացած բարենպատ պայմանների իրագործումն է, ինչպես նաև տակտիկական զանազան միջոցներով հնարքի կատարման համար բարենպատ պայմանների ստեղծումը: Ըմբիշը որքան շատ է կարողանում ստեղծել բարենպատ պայմաններ, այնքան մեծ է նախասիրած հնարքները իրագործելու հնարավորությունը:

Գոտնմարտի ընթացքում անընդհատ փոփոխվում են ըմբիշների դրությունները միմյանց նկատմամբ, գործադրած

ճիգերի ուղղությունը և աստիճանը: Փոփոխվում են նաև ֆիզիկական և հոգեկան վիճակները:

Ըմբիշների կողմից ընդունած մարմնի դիրքը շատ թե քիչ չափով դժվարացնում է մի շարք հնարքների կիրառումը և նպաստում է մյուսների կատարմանը: Օրինակ, բարձր կանգնվածքի դեպքում հեշտ է կատարել արտակրոված գցումներ և դժվար է կատարել փոխադրումներ:

Մրցակցի ջանքերը նույնպես կարող են որոշ հնարքների համար բարենպաստ լինել և դժվարացնել որոշ հնարքների կատարումը:

Եթե հնարքը կատարվում է մրցակցի շարժման ուղղությամբ, ապա ստեղծված իրավիճակը կարելի է համարել բարենպաստ:

Հոգնած մրցակիցը կորցնում է ռեակցիայի արագությունը, գգոնությունը, ուժը, ինչը բարենպաստ է հնարքի իրագործման համար: Թույլ հոգեբանական պատրաստությունը ևս նպաստավոր պայմաններ է ստեղծում հնարքների կատարման համար: Օրինակ, մրցակցին թերազնահատելը կամ զերազնահատելը:

Գոտենմարտի ընթացքում բարենպաստ պայմաններ են առաջանում պաշտպանվելու և գրոհելու ժամանակ, ինչպես նաև թույլ տրված սխալների հետևանքով: Ցանկացած պաշտպանության ժամանակ բարենպաստ պայմաններ են ստեղծվում մեկ այլ հնարքի կատարման համար:

Գրոհելիս ըմբիշը կննտրունանում է կատարվող հնարքի վրա և սկզբնական պահին ունենում է անկայուն վիճակ: Սա համարվում է բարենպաստ պայման մրցակցի գրոհի համար: Բարենպաստ պայմաններ են ստեղծված նաև մի հնարքի ավարտից անմիջապես հետո, եթե մրցակիցը դնելու թույլացած է: Գոտենմարտի ընթացքում ըմբիշները թույլ են տալիս տեխնիկական և տակտիկական բնույթի զանազան սխալներ, ինչ բարե-

նապատ պայման է հանդիսանում մրցակցի կողմից հնարքների կիրառման համար:

Հարկավոր է կարողանալ օգտագործել մրցակցի սխալը և ժամանակին համապատասխան շարժումներով պատրաստած մրցակցի գործողություններին:

5.5. ԳՈՏԵՆՄԱՐՏԻ ՎԱՐՄԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ըմբիշի ընտրած գոտենմարտի վարման մարտավարությունը մնանակամք կախված է նրա անհատական առանձնահատկություններից: Յուրաքանչյուր բարձրակարգ մարզիկ ունի գոտենմարտի վարման իր ձեռագիրը: Բայց գոտենմարտի վարման մարտավարության հիմնական ձևերն ընդհանուր են բոլորի համար: Ներկայումս ընդունված է տարբերել մարտավարության երեք ձև: հարձակողական, պաշտպանողական և հակահարձակողական:

Մարտավարության ձևն ըմբիշի կողմից ընտրվում է համաձայն ընտրված նպատակի՝ հաշվի առնելով մրցակցի՝ և սնակական հնարավորությունները:

Հարձակողական, պաշտպանողական և հակահարձակողական մարտավարությունը «մաքրու» տեսքով հազարդնապ են կիրառվում: Գոտենմարտի ընթացքում ըմբիշները հաճախ գուզորդում են մարտավարության ձևերը:

Հարձակողական մարտավարությունը ըմբիշից պահանջում է բարձր ակտիվություն: Այն ներադրում է ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակ:

Հարձակողական մարտավարությունը կարող է լինել անընդհատ և՝ էպիզոդիկ հարձակողական:

Անընդհատ հարձակողական մարտավարությունը բնութագրվում է գոտենմարտի վարման բարձր տևականությունով և անընդհատ կրկնվող գրոհներով: Այսպիսի տակտիկա կիրառում են բարձ-

դիմացկունություն ունեցող ըմբիշները: Մարտավարության այս ձևը իրականացվում է կենդ գրոհների, բռնվածքների կաշկանդումների միջոցով:

Հպաղողիկ հարձակողական մարտավարության էությունը կայանում է նրանում, որ ըմբիշը գրոհում է ժամանակ առ ժամանակ: Գրոհների միջև ընկած ժամանակահատվածում ըմբիշը հետևում է մրցակցին, մանկրում է, իրազրծում այս կամ այն կենդ բռնվածքները, մտածված կնրպով հրաժարվում է ակտիվ պայքարից և այն:

Պաշտպանողական մարտավարությունը բնութագրվում է նրանով, որ ըմբիշը անընդհատ պաշտպանվում է սպասելով մրցակցի սխալին կամ ձգտելով պահպանել ձեռք բնրած նյութական առավելությունը: Այս դեպքում ըմբիշի գործողությունները լիովին պայմանավորված են մրցակցի գործողություններով:

Հակահարձակողական մարտավարության ժամանակ ըմբիշը գոտեմարտը կառուցում է հանդիպակած գրոհների վրա: Սա հատկապես արդյունավետ է այն դեպքում, եթե մրցակիցը զիջում է արագությամբ: Մարտավարության այս ձևն ընտրած ըմբիշը պետք է ունենա արագ ոնակցիա, ճարպկություն, հղկված տեխնիկա:

5.6. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցումների մասնակցության մարտավարությունը ուղղված է հաջողության հասնելու համար ըմբիշի բոլոր հնարավորությունները լավագույնս իրազրծելուն:

Մրցումների նախօրյաժմին հատակնեցվում են մարզիկի տոք դրված նպատակը և խնդիրները՝ հաշվի առնելով մարզիկի հնարավորությունները, մրցումների մասշտաբը, բնույթը,

անցկացման պայմանները, մասնակիցների կազմը: Կշռումից և փիճակահանությունից հետո ըմբիշը տեղեկություն է ստանում մասնակիցների քանակի և իր առաջիկա մրցակիցների մասին:

5.7. ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

«Մարտավարական պատրաստության» տակ հասկանում ենք ըմբիշի այն գործողությունների համակարգը, որը թույլ է տալիս ստեղծել մարտավարության իրականացման և առաջադրված խնդիրների կատարման համար բարենպաստ իրավիճակներ:

Կարենի է առանձնացնել մարտավարական պատրաստության հետևյալ հիմնական միջոցները՝

1. Ճնշում.
2. մանկրում.
3. բողարկում:

Մարտավարական պատրաստության այս միջոցներն ընդգրկում են բազմաթիվ տարատեսակներ: Այժմ դիտարկենք դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Ճնշում: Ճնշումը մարտավարական պատրաստության այնպիսի ձև է, եթե ըմբիշն ունի կամ կարող է մրցակցի վրա ստեղծել իր պատրաստության որևէ կողմի (տեխնիկական, մարտավարական, ֆիզիկական, հոգեբանական) ակնհայտ գերազանցություն:

Տեխնիկայով ճնշումը կիրառվում է, եթե ըմբիշը տիրապետում է այնպիսի հնարքների, որոնց մրցակիցը չի կարող հակադրել արդյունավետ պաշտպանություն, կամ էլ այնպիսի հականարքների, որոնք արդյունավետորեն կիրառվում են ի պատրաստական մրցակցի հարձակողական գործողությունների: Տեխնիկայով ճնշման ժամանակ ըմբիշը գրոհի համար կիրառում է իր ամենահաջող, նախասիրած հնարքները, այսինքն այն

հնարքները, որոնց կատարումը հասցված է կատարելության։ Կարող են կիրառվել նաև նոր, մրցակիցներին անհայտ հնարքներ, որոնց պաշտպանությանը նրանք դեռ ծանոթ չեն։

Գոտեմարտի վարման մարտավարության մշակման ժամանակ հաստատվում են այն հնարքներն ու հականարքները, որոնց միջոցով կարենի է ճնշում գործադրել մրցակցի վրա և հասնել հաղթանակի։

Մարտավարությամբ ճնշման էությունը կայանում է հաղթանակի հասնելու համար ավելի արդյունավետ ուղիների որոնման, իրավիճակի փոփոխություններին համապատասխան արագ և ճիշտ որոշումների ընդունման, մրցակցի համար անսպառ իրադրությունների ստեղծման մեջ, ինչպես նաև այն բանում, որ ըմբիշը մրցակցին պարտադրում է իր մարտավարությունը և ստիպում մարտ վարել իր համար բարենպաստ ընթացքով։

Ֆիզիկական գերազանցությամբ ճնշումը կիրառվում է, եթե ըմբիշն իր մրցակցի նկատմամբ ունի ֆիզիկական պատրաստվածության առավելություն։

Հոգեբանական ճնշումը կիրառվում է հոգեբանական և բարոյակամային պատրաստվածության առավելության դեպքում։ Այսունական մարտավարությունը պնդում է այնպես կատուցնել, որ մրցակիցը մշտապես գտնվի հոգեկան լարվածության մեջ և անընդհատ ստիպված լինի դրսորել իր բարոյակամային հատկանիշները, որոնց մակարդակը բավարար չէ հաղթանակի հասնելու համար։

Մանկում: Սրա նպատակն է տեղաշարժների միջոցով, մարտավարական խնդիրների լուծման համար ստեղծել բարենպատճ իրավիճակներ։ Բարենպատճ իրավիճակը արտահայտվում է մրցակցի նկատմամբ ունեցած ըմբիշի դիրքով։ Մրցակիցը գտնվում է անհավասարակշռված դիրքում, իսկ գրոհող ըմբիշի

դիրքը հարմար է հնարքի կամ հականարքի կատարման համար։

Ըմբշամարտում գոյություն ունի մանկրման հետևյալ ձևները։

1. Կանգնած դրությունում՝ աջ, ձախ, հնտ, առաջ տեղայարժներն են (քայլերը), թերումները, սուզումները և դարձումները։ Մանկրմանը կարենի է վերագրել մրցակցի այն տեղաշարժները, որոնք նա կատարում է ի պատասխան գրոհողի գործողություններին։ թնքում, շտկում, քայլ առաջ, քայլ հնտ, դարձումներ և այլն։

2. Մանկրումը ծնկադիր դրությունում՝ մրցակցի աջ և ձախ կողմով անցումներն ու վազանցումներն են, գլորումներն ու ձկումները, գորգի կտրումներն ու բռնվածքների փոփոխումները։

Քողարկում: Սա մարտավարական պատրաստության միջոց է, որը նպատակ ունի մրցակցի մեջ թյուր պատկերացում ստեղծել ըմբիշի հնարավորությունների և մտադրությունների մասին։

Դիտարկենք քողարկման երկու հիմնական ձևեր՝ սպառնալիքն ու մարտահրավերը։

Սպառնալիքը նպատակ ունի մրցակցին մշտապես լարվածության մեջ պահելով դեմորիլիզացնել։

Սպառնալիքը որպես մարտավարական պատրաստության միջոց, հիմնականում կիրառվում է հնարքների կատարման ժամանակ։ Այս իրականացվում է հնարքների գուգակցման, կրկնակի գրոհի, կրկնակի տեսախարության, հետադարձ մարտահրավերի ձևով։ Սպառնալիքը իրականացվում է որոշակի իրավիճակ ստեղծելով կամ հնարքների կատարման փորձներով։

Համակցված հնարքներ իրագործելիս, գրոհող ըմբիշը սպառնալով մի հնարքի կատարմամբ, մրցակցին մղում է պաշտպանողական գործողությունների, պյու հաշվով, որ արդյունքում

ստնդվում է բարենպաստ պայմաններ նախօրոք մտածված հնարքի կատարման համար:

Կրկնակի գրոհի ժամանակ հնարքն առաջին անգամ կատարվում է ուժի ոչ լրիվ գործադրումով կամ ոչ լրիվ արագությամբ, ապա գրոհը կրկնվում է նոյն հնարքով, բայց այս անգամ արդեն լրիվ ուժով և ողջ արագությամբ: Մրցակիցը երկրորդ գրոհը հետ մղելու համար մորթիլիզացնում է նոյնքան ուժ, որքան որ առաջին դեպքում, բայց պարզվում է, որ դա բավական չէ: Կրկնակի գրոհը կարելի է կատարել նաև առաջին գրոհից անմիջապես հետո, այն պահին, երբ մրցակիցը հետ մղելով առաջին գրոհը դեռևս գտնվում է անհավասարակշիռ վիճակում:

Կրկնակի տեսախարություն (խարկանք)՝ ըմբիշը իրագործող հնարքը մրցակցին հրամցնում է, որպես կենդ հնարք՝ սպանալիքի ձևով: Նա միննոյն հնարքը կատարում է երկու և ավելի անգամ: Առաջին և մնացած փորձերը բացի վնրքինց կենդ են: Այստեղ զլսավոր դերը կատարում է անսպասելիությունը: Մի քանի կենդ գրոհերը մրցակիցին հանգստացնում են և նա թուլացնելով զգոնությունը չի արձագանքում գրոհներին: Օգտվելով այս վիճակից հարկավոր է գրոհել նոյն հնարքով:

Մարտահրավերի ժամանակ ըմբիշը պայմաններ է ստեղծում մրցակցի ակտիվ գործողությունների համար, որպեսզի կիրարի հականարք: Այստեղ նկատի են առնվտում այն գործողությունները, որոնք նպատակահարմար են մարտահրավեր նետող ըմբիշին, այսինքն՝ նա միտումնավոր բարենպաստ պայմաններ է ստեղծում այն հնարքի համար, որի հականարքը նախօրոք մշակել է:

Հակառակ մարտահրավեր: Ըմբիշը մի պահ դադարում է ակտիվորեն ազդել մրցակցի վրա և արդյունքում նրա կողմից ևս նոյն ռեակցիան է ստանում, որից հետո անսպասելի գրոհում է:

Մարտահրավերը որպես քողարկման ձև, սովորաբար կապված է այն քանի հետ, որ ըմբիշը մրցակցից թարցնում է իր

հնարավորությունները՝ նվազնելով դրանք: Մրցակիցը ընդունելով «խայջը» անցնում է վճռական գործողությունների և ընկնում է նախօրոք պատրաստած ծուղակը:

Քողարկել կարելի է տեսնիկան, մարտավարությունը, ֆիզիկական և բարոյակամային պատրաստության մակարդակը, ակնկալիքները և այլն:

5.8. ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Առավել նպատակահարմար է ըմբիշի մարտավարական մտածողության այնպիսի ձև, որում մարտավարության տարրների ուսուցումը դիտարկում է որպես գործնյաց և ննրառում է հետևյալ փուլները:

1. մարտավարական խնդիրների դրսնորում և լուծում անցյալի փորձի և հավաքագրած տվյալների հիման վրա,

2. մարտավարական որոշման ընդունում և իրականացում,

3. ընդունած մարտավարական որոշման արդյունքների վերլուծություն (մարզումներից և մրցումներից հետո)՝ նրա հնարավոր փոփոխման և փորձի կուտակման նպատակով:

Այսպիսով, մարտավարության ուսուցումը կարելի է դիտարկել որպես իմացության գործնյաց, որտեղ ըմբիշի և մարզի աշխատանքը ամբողջանում է նկատի առնելով հետևյալ դրույթները.

1. Ուշադրության արժանի վարկածների առաջադրում՝ հիմնված մարզիչների և ըմբիշների կուտակած փորձի վրա:

2. Այդ վարկածների ստուգման և հաստատման համար (մարզման ընթացքում) յուրատեսակ գիտափորձի կազմակերպում:

3. Ըմբիշի փորձը լրացնելու, նոր հիմունք առաջադրելու, գիտափորձ կազմակերպելու և բազա ստեղծելու նպատակով ստուգման արդյունքների օգտագործում:

Մարտավարության ուսուցման համար կիրառվում են ընդհանրացված կանոնների, գիտափորձների և փորձի կուտակման, մոդելավորման և ինտուիցիայի զարգացման մեթոդները:

Ընդհանրացված կանոնների մեջոդ: Կիրառվում է ըմբիշի գործունեությունը նոյնանման իրավիճակների՝ յուրաքանչյուր կոնկրետ դնապրում իրագործելու համար:

Ահա այդ կանոններից մի քանիսը՝ «մրցակցի վրա հարկավոր է ուժ ազդել այն ուղղությամբ, որը նա ուղղում է իր ջանքները», «հնարքների իրագործման ժամանակ պետք է մրցակցին հանել հավասարակշռությունից», «հնարքի կատարման համար անհրաժեշտ է ստեղծել «պտտվող պահ» և այլն:

Գիտափորձների և փորձի կուտակման մեջոդ: Գործնական փորձի կուտակման ճանապարհով մարտավարության ուսուցումը մարտավարական պատրաստության անհրաժեշտ պաշարների ձեռք բերման ավանդական միջոցն է:

Այստեղ կարենի է դիտարկել նրկու սկզբունքորեն տարրեր ուղիներ. մեկը փորձի տարրերակային կուտակումն է մրցումների և մարզումների գործնական մասնակցության ընթացքում, երկրորդը՝ մարզումների ընթացքում գիտափորձների կազմակերպման միջոցով:

Մարտավարության ուսուցման պրակտիկայում ավելի շատ կիրառվում է առաջին միջոցը:

Սողելափորման և ինտուիցիայի զարգացման մեջոդ: Քաջ հայտնի է, որ մարտավարության մեջ կարևոր դեր է խաղում ինտուիցիան: Ուստի ըմբիշների մարտավարական պատրաստության կարևոր խնդիրներից մեկը նրանց մեջ ինտուիցիայի զարգացումն է: Որքան ավելի փորձառու է ըմբիշը կամ մարզիչը, այնքան ավելի մեծ է հավասարականությունը, որ նրա մեջ լավ զարգացած լինի ինտուիցիան: Մարտավարության մշակման տարրեր փուլերում ինտուիտիվ կերպով ընդունված որոշումները տարրեր են: Հնարքների կատարման մարտավարության,

գոտենմարտի վարման մարտավարության ժամանակ, երբ հաճախակի փոփոխվում է իրավիճակը, մեծ է ինտուիտիվ կերպով ընդունած որոշումների դերը: Իսկ մրցումների նախապատրաստման ժամանակ՝ փաստերի գնահատման, նոր երևոյթների բացահայտման ու ննթադրությունների առաջադրման համար ըմբիշը թեև օգտվում է ինտուիտիվ որոշումներից, սակայն, այնուամենայնիվ նա հիմնվում է «օբյեկտիվության» վրա: Սա չի նշանակում, որ ինտուիցիան վատ է, այլ միայն մատնանշում է, որ այն պետք է ստուգի պրակտիկայում, տրամաբանությամբ և գիտափորձով:

Այսպիսով, մարտավարության ուսուցումը կարենի է բաժանել նրկու գործընթացի. ննթադրության կառուցման ինտուիտիվ գործընթաց և ննթադրության ստուգման գործընթաց: Ստեղծվում են առաջիկա գոտենմարտերի իրավիճակների մոդելներ և մարզական գոտենմարտերում ստուգվում են մարտավարական որոշումները:

Օրպնազի ըմբիշը սովորի ինտուիտիվ գործել, հարկավոր է ստեղծել որոշակի իրավիճակ, որտեղ նա պետք է կողմնորոշվի և որոշումներ ընդունի ակնյալարթորեն:

Աշխատանքի ծավալը և նրա բարդությունը պետք է մեծ պահանջներ ներկայացնեն ըմբիշի մարտավարական մտածողության արագությանը: Միևնույն ժամանակ հարկավոր է հաշվի առնել հանձնարարությունների բարդությունն ու դժվարությունը: Չլուծված մարտավարական խնդիրները չեն նպաստում ինտուիցիայի զարգացմանը: Ինտուիցիան լավ է զարգանում ըմբիշների մրցակցական մեծ փորձի առկայության պայմաններում:

Մարտավարության ուսուցման համար կիրառվում են մի շարք մեթոդական հնարքներ, որոնք կիրառվում են «գոտենմարտի միջադիմումների» քննարկման և վերլուծության ժամանակ:

ԳԼՈՒԽ 6

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Մասնատում: Մեթոդական այս հնարքի էությունը կայանում է նրանում, որ մարզման ժամանակ ըմբիշին հանձնարարություն է տրվում մրցակցի կողմից ստեղծված իրավիճակին հակագդել որոշակի գործողություններով: Մրցակիցը կարող է վերարտադրել տարբեր իրավիճակներ՝ բարենպաստ և ոչ բարենպաստ, այն նպատակով, որ մարզվողը կարողանա տարբերել և ժամանակին օգտվել բարենպաստ իրավիճակից: Ընդ որում բարենպաստ «իրավիճակը» պետք է պահպանել որոշակի սահմանափակ ժամկետում (2-5 վայրկյան): Այս ժամկետուր հարկավոր է աստիճանաբար կրճատելով հասցնել նվազագույնի:

Ամրագրում: Մարզիչը ուսումնամարզական գոտենմարտի ժամանակ հետևելով ըմբիշների գործողությունների կատարման մարտավարությանը՝ ամրագրելով իրավիճակը դադարեցնում է գոտենմարտը և համատեղ վերլուծում այդ իրավիճակը՝ հուշելով լավագույն որոշման ընդունման ճանապարհը:

Տարափոխում: Այս բավական արդյունավետ մեթոդական հնարքը ըմբիշներից պահանջում է մարզումների և մրցումների ժամանակ ամենատարբեր մարտավարական որոշումների փորձարկում: Ըմբիշների կողմից գոտենմարտում հանդիպող իրավիճակները որքան ավելի շատ փորձարկվեն, որքան որոշումների մեծ քանակ ստուգվի պրակտիկայում, այնքան ավելի բարձր կլինի ըմբիշների մարտավարական վարպետությունը:

Ըմբշամարտի ուսուցումը մանկավարժական գործընթաց է: ուղղված գիտելիքների, ոնակությունների և հմտությունների ձեռք բնրմանը, շարժողական ընդունակությունների և բարոյակամային հատկանիշների կատարելագործմանը: Ուսուցման գործընթացը իր մեջ ընդգրկում է մարզիչ-մանկավարժի և մարզվողների համատեղ գործունեությունը:

Ըմբիշների ուսուցման և դաստիարակման գործում գլխավոր դերը պատկանում է մարզիչ-մանկավարժին:

Ուսուցման գործընթացը ուղեկցվում է ըմբիշների անհատական ձևավորմանը գույքընթաց:

Ուսուցման հիմնական նպատակն է պատրաստել սպորտային բարձր արդյունքներ ունեցող մարզիկներ և հայրենիքն պիտանի, բարոյակամային բարձր հատկանիշներով օժտված անհատներ: Այս ընդհանուր նպատակը ուսուցման ընթացքում կարող է կոնկրետանալ և կրել նեղ ուղղվածություն՝ կարգային մարզիկների, մարզիչների և մրցավարների պատրաստում:

Ուսուցման գործընթացում մարզվողների ֆիզիկական զարգացման և տեխնիկական պատրաստվածության մակարդակը հաշվի առնելուց բացի, մարզիչը պետք է իմանա ինչպես է ուսումնական նյութը կապված ուսումնամանկավարժական աշխատանքների ողջ համակարգի, նրանց ձևավորվող աշխարհացքի և բարոյակամային հատկանիշների հետ:

Բարձրակարգ մարզիկներ պատրաստելու համար նախ և առաջ անհրաժեշտ է տեխնիկայի և տակտիկայի ճիշտ ուսուցում: Տակտիկական վարպետությունը հիմնականում պայմանավորված է տեխնիկայի տիրապետման աստիճանից, տեխնիկական գործողությունների յուրացման հմտությունների ճշգրտությունից

և ամրությունից:

Ուսուցման նպատակներին հասնելու համար լուծվում են հետևյալ խնդիրները.

- ա) առողջության ամրապնդում,
- բ) շարժողական ընդունակությունների մշակում,
- գ) բարոյակամային հատկանիշների դաստիարակում,
- դ) տեսական գիտելիքների ձեռք բերում,
- ե) տեխնիկատակտիկական գործողությունների տիրապետում և այլն:

Ուսուցման հիմնական խնդիրներն իրենց հերթին ընդգրկում են մի շարք ներ խնդիրներ՝ ուսուցման մեթոդիկայի, մրցականունների, հիգիենիկ պահանջների, վնասվածքների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների ձեռք բերում:

6.1. ԸՄԲԻՇԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի տարբերություն այլ մարզաձևների, որտեղ մարզիկները գործ ունեն տարբեր գործիքների և սարքավորումների հետ, ըմբշամարտը բնութագրվում է մրցակցի հետ անհաջող հակամարտությամբ: Որտեղ պետք է ոչ միայն հաղթահարն մրցակցի դիմադրությունը, այլև անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել հարձակողական գործողություններ՝ հաղթահարնելով մրցակցի դիմադրությունը: Ելնելով այն հանգամանքից, թե որ ըմբիշն է փորձում իրականացնել ակտիվ գործողություններ, նրանց կարևոր է բաժանել հարձակվողների և պաշտպանվողների: Եվ հարձակվող, և պաշտպանվող ըբմիշները գոտնմարտի ընթացքում հաճխակի փոփոխում են իրենց մարմնի դիրքը գորգի և մրցակցի նկատմամբ: Մարզիշը պետք է բացատրի թե ինչու է այս կամ այն դիրքը հարմար տվյալ հնարքի կատարման կամ պաշտպանության համար:

Բազմակի փորձների միջոցով ստացված գիտելիքները՝ ներառյալ չպաշտպանվող մրցակցի վրա և բարդացված պայմաններում կատարվող հնարքները լրացվում են համապատասխան ունակություններով: *Ունակությունը ճիշտ*, ոչ ավտոմատացված և դետալների վրա ուշադրության կենտրոնացումով նոր տեխնիկատակտիկական գործողություններ կատարելու ընդունակությունն է:

Ուսուցանվող գործողությունների բազմակի կրկնությունները մարզումների, մարզական և մրցակցական գոտնմարտների ժամանակ ունակություննը հասցնում են ավտոմատացման և այն վերածվում է հմտության:

Շարժողական հմտության ձևավորումը: Ըմբշամարտում հմտությունները ձեռք են բերվում վարժությունների նպատակամղված կրկնությունների միջոցով: Կարենք է, որ յուրաքանչյուր կրկնություն որակապես տարբերվի նախորդից:

Հմտության ձևավորումը միշտ չէ, որ տեղի է ունենում հավասարաչափ: Սովորաբար այս կամ այն գործողության յուրացման սկիզբը հաջող է լինում, իսկ հետո հնարքի կատարման որակը դանդաղ է բարելավվում: Հմտության զարգացման հապալումները կարող են ունենալ զանազան պատճառներ:

- ա) ուսուցման հաջորդականության խախտումը,
- բ) մրցակցի ոչ ճիշտ ընտրությունը,
- գ) մարզիկի անվստահությունը կամ չափից դուրս ինքնավստահությունը,
- դ) վատ ինքնազգացուղությունը և այլն:

Կարող է լինել նաև հակառակ՝ մարզիկի մոտ սկզբում դժվարությամբ է ձևավորվում հմտությունը, իսկ հետագա զարգացումը տեղի է ունենում բավական արագ: Դա մեծապես կախված է ուսուցման մեթոդիկայից և մարզվողի անհատական առանձնահատկություններից:

Գոյություն ունի հմտության ձևավորման երեք փուլ՝ ընդանրացման, կենտրոնացման և կայունացման:

Հնդիանրացման փուլում մարզվողները հնարքների ցուցադրման, բացատրությունների և այլնի միջոցով կոնկրետ պատկերացում են կազմում տվյալ հնարքի կատարման մասին։ Այս փուլում մարզվողները ուշադրություն են դարձնում ոչ միայն հնարքի կարևորագույն մասնին (հիմնական մաս), այլև զանազան դնտալներին, որոնք նկատում են մարզի ցուցադրման ժամանակ։ Նոր հնարքի մասին տեղեկությունները ընդգրկում են գլխուղեղի կենտրի զգալի մասը և սկսվում են այսպես ասած ճառագայթման գործընթացները։ Արտաքնապես դա արտահայտվում է հնարքի կատարմանը չմասնակցող բազմաթիվ մկանների լարվածությամբ և կաշկանդվածությամբ, ընկնում է շարժման լայնությը, վատթարանում է կոռորդինացիան և այլն։ Կաշկանդվածության պատճառ կարող է հանդիսանալ նաև մարզվողների ամաչկուտությունը, նախորդ հնարքի վատ կատարումը և այլն։

Մարզվողների մոտ կաշկանդվածության առկայությունը պետք է լրջորեն մտահոգի մարզչն։ Այդ դեպքում անհրաժեշտ է դադարեցնել տեխնիկայի ուսուցումը։ Մոտեցնող վարժությունները և ավելի պարզ, նույնիսկ ուսուցանվող հնարքից հեռու, հնարքների կրկնությունը կարող է նպաստել կաշկանդվածության թուլացմանը։

Սկսնակները ստվորաբար չեն կարողանում տարբերել գլխավորը երկրորդականից, ուստի մարզիչը պետք է նրանց ուշադրությունը սևնուի հնարքի այս կամ այն տարրերի և նրանց կատարման արագության վրա։ Հնդիանրացման փուլում մարզիչը չպետք է մարզվողներին ծանրաբեռնի լրացուցիչ տեղեկատվությամբ։

Ենտոռնացման փուլում հնարքի կրկնություններին համատեղ գրգռման գործընթացների ճառագայթումը փոխարինվում է կենտրոնացմամբ։ Մարզվողները սկսում են յուրացնել

հնարքի հիմնական մասերը և վերացնել ավելորդ շարժումները։ Ալգրում հիմնական մասը, այնուհետև հնարքն ամբողջությամբ դառնում է կատարման համար ավելի մատչնի։

Այս փուլում մարզվողները դնում թույլ են տալիս սխալներ, սակայն կատարման որակը գնալով բարձրանում է։ Եթե սկզբում մարզվողները շարժումները կառավարում են հիմնավոր հնարքի մասերի որոշակի հաջորդականությամբ կատարման անհրաժշտության վրա, ապա աստիճանաբար շարժումները սկսում են կառավարել հիմնավոր շարժման ընկալման և նրա մասին եղած տեղեկությունների հիման վրա։

Այս փուլում մարզիչը պետք է բացահայտի և վերացնի սխալները և ձգտի ամրապնդել ճշգրիտ շարժումները։ Պրակտիկան ցույց է տալիս, որ ավելի հեշտ է պայքարել սխալների դեմ հմտության ձևավորման ժամանակ, քան այն ժամանակ, երբ հմտությունը ձևավորվել է, առավել ևս ամրապնդվել։

Շարժողական հմտության ալյուտմատացման փուլում հնարքների ճիշտ կատարումը կայունանում է։ Մարզվողներին հնարավորություն է ընձեռվում, պահպանելով կատարման բարձր որակը, ավելի մանրակրկիտ ձևով անդրադառնալ հնարքի կատարման առանձին մասերին։

Այսպիսով, ալյուտմատացումը ըմբիշների նյարդային կենտրոններին ազատում է հնարքի կատարման դնտալային կառավարություն և հնարավորություն է տալիս կենտրոնանալ հնարքի կատարմանը նպաստող տակտիկական մտահայտումների վրա։

Դինամիկ ստերիոտիպների ձևավորման և հնարքների հիմնական խմբերի կատարման ալյուտմատացմանը զուգընթաց հնշտանում է հնարքից հնարք անցումը։ Այս հանգամանքը կարևոր է նրանով, որ ժամանակակից ըմբշամարտում հաջողության գրավականը ոչ թե առանձին հնարքներն են, այլ՝

նրանց համակցումները՝ նրբ մի հնարքը նախապատրաստում է մյուսի կատարումը:

Առկա հմտությունների ազդեցությունը ուսուցման վրա: ՈՒսուցման ընթացքում ակնհայտորեն նրեսում է առկա հմտությունների փոխազդեցությունը միջանց վրա: Հաջորդական ուսուցման լավ դպրոց անցած մարզիկները հեշտ են յուրացնում նոր հնարքները: Այս դեպքում հմտության ձևավորման ընդհանրացման և կենտրոնացման փուլերը հեշտ և արագ են անցնում:

Տարժողական հմտությունների առկայությունը նոր հնարքների տիրապետման գործընթացի վրա կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն, կարող է հեշտացնել կամ դժվարացնել նոր հմտության ձևավորումը: Առկա հմտությունների ազդեցությունը նոր ձևավորվող հմտության վրա կոչվում է հմտության փոխանցում:

Դրական փոխանցումը լինում է նրկողմ, սահմանափակ, ընդհանրացված:

Երկրորդ փոխանցումը իրականացվում է հնարքների աջ և ձախ կողմի վրա ուսուցման ժամանակ: Եթե հնարքի ուսուցումը հակառակ կողմի վրա սկսում են, նրբ հմտությունը ձևավորվել է, բայց ավտոմատացման աստիճանը դեռ մեծ չէ, ապա հմտության փոխանցումը համեմատաբար հեշտ է իրականացվում: Երկրորդական փոխանցման զգալի, նրբնմն նաև անհաղթահարելի դժվարություններ հանդիպում են այն ժամանակ, երբ հակառակ կողմի ուսուցումը սկսում են արդեն ամրապնդված հմտության ժամանակ:

Հմտության ձևավորումը դժվարանում է, երբ համանման շարժողական խնդիրների (մրցակցի մարմնի դիրքի փոփոխությունը գորգի նկատմամբ) լուծման միջոցները տարբեր են: Նման փոխանցումը ընդունված է անվանել սահմանափակ: Սահմանափակ փոխանցման օրինակի կարելի է հանդիպել դա-

սակարգման տարբեր խմբերի հնարքների ուսուցման ժամանակ:

Ըմբշամարտի պրակտիկայում ավելի հաճախ հանդիպում է. ընդհանրացված փոխանցումը, նրբ ձեռք բնրված հմտությունը նպաստում է նոր հմտության ձևավորմանը, նրա հետ չունենալով կառուցվածքային նմանություն: Օրինակ, մեջքի դարձումով զցումները նպաստում են դեպքի առաջ կատարվող հնարքների (թերպումով զցումներ, տապալումներ և այլն) ուսուցմանը:

Բացասական փոխանցումը ավելի հաճախ նկատվում է սխալ յուրացված շարժումների շտկման ժամանակ: Դա որպես օրենք գրոհող ըմբիշի շարժումներն են. արտակորում, մեջքի դարձում, թերպում, սուզում վազանցում, գլորում և այլն:

6.2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒԹԵՐԸ

Այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա կառուցվում է ուսուցման գործընթացը հետևյալն են.

1. գիտակցականության.
2. ակտիվության.
3. զննականության.
4. համակարգման.
5. մատշնիշության.
6. հաստատունության և կայունության:

Գիտակցականության սկզբունք: Որպեսզի մարզիչը ապահովի մարզիկների գիտակցական գործունեությունը, նա պետք է մարզիկներին հաղորդի որոշակի գիտելիքներ և հասնի նրան, որ դրանք յուրացվեն:

Դրա համար հարկավոր է.

1. Դնել որոշակի խնդիր և բացատրել, թե ինչ է տալիս դրա լուծումը և ինչու է անհրաժեշտ դրա կատարումը (հնարքի ուսուցման ժամանակ պետք է բացատրել, թե նրբ և ինչպիսի

պայմաններում է հարկավոր այն կատարել և ինչպիսի արդյունք կարենի է ավնկալն):

2. Յույց տալ դրված խնդրի լուծման ուղին (մեթոդ):
3. Յույց տալ դրված խնդրի լուծման միջոցները:

Ակտիվության սկզբունք: Ուսուցման գործընթացը պետք է այնպիսի կառուցել, որպեսզի ըմբիշները կարողանան գործածել իրենց ձեռք բերած գիտելիքները:

Մարզվողների ակտիվությունը մարզիչը զարգացնում է հանձնարարությունների և դրանց կատարման պարբերական ստուգումների միջոցով: Մարզվողների ակտիվությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է նրանց նպատակառուղին ստեղծագործ աշխատանքի:

Զննականության սկզբունք: Նյութի յուրացումը պետք է կազմակերպել այնպես, որ մարզվողները նրա մասին ճիշտ և լիարժեք պատկերացում կազմեն:

Ցուցադրման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ամենազլավորի վրա և չպետք է ուշադրությունը կենտրոնացնել շարժման տարրեր տարրերի վրա:

Նորը լավ է ընկալվում, եթե այն կապակցվում է նախօրոք յուրացվածի հետ:

Հնարքները և վարժությունները պետք է ցուցադրել հատակ, առանց ավելորդ շարժումների:

Համակարգման սկզբունք: Ուսուցումը պետք է իրականացնել որոշակի համակարգով, պահպանելով նյութի հաղողման հաջորդականությունը:

Մարզումը պլանավորենիս հարկավոր է մշակել որոշակի համակարգ, համաձայն որի կյուրացվի և կկատարելագործվի ուսուցանվող նյութը: Համակարգը պետք է կառուցել համաձայն դիդակտիկայի օրենքներին. պարզից՝ բարդ, հեշտից՝ դժվար, հայտնից՝ անհայտ:

Մատշելիության սկզբունք: Ուսուցումը պետք է այնպիսի կառուցել, որ մարզվողները կարողանան լուծել իրենց առջև դրված խնդիրները: Սա հնարավոր է միայն այն դեպքում, եթե մարզվողները պատրաստ լինեն տվյալ խնդրի լուծմանը:

Մարզվողներին ուժներից վեր խնդիրներ առաջարկելիս կարող են առաջանալ մի շարք դժբարություններ՝ անվստահություն սեփական ուժների նկատմամբ և հոգեբանական տարրեր արգելքներ, որոնք կարգելակեն ուսուցման գործընթացը:

Կայունության սկզբունք: Ուսուցումը պետք է իրականացնել այնպես, որ մարզվողների ձեռք բերած գիտելիքները ունակությունները և հմտությունները լինեն հաստատուն: Դրա համար անհրաժեշտ է պարբերաբար կրկնել ձեռք բերածը և այն կիրառել գոտեմարտերի ժամանակ:

Նյութի ամրապնդման համար մարզիչը կարող է կազմակերպել յուրօրինակ մրցություն և սահմանել հատուկ կանոններ, որը կնպաստի ուսուցանվող նյութի ամրապնդմանը:

6.3. ՈՒՍՈՒՅՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ուսուցման գործընթացում մարզիչը օգտվում է հետևյալ մեթոդներից:

1. Խոսքի.
2. ցուցադրման.
3. Վարժությունների.
4. Լսադային:

Խոսքի մեթոդ: Բազատրությունները, պատմությունները և գրույցները համարվում են գիտելիքների բանավոր փոխանցման հիմնական միջոցները: Դրանց միջոցով մարզվողների մոտ պատկերացում է ստեղծվում տվյալ հնարքի մասին:

Բացատրություն: Նոր հնարքների ուսուցման ժամանակ անհրաժշտ է պատկերացում ստեղծել նրա կատարման օրինաչափությունների մասին: Բացատրության գլխավոր արժեքը կայանում է նրանում, որ մարզիչը դրա միջոցով մարզվողներին առացուցում է տվյալ հնարքի կամ կատարման նղանակի անհրաժշտությունն ու արյունավետությունը: Բացատրությունը պետք է լինի կարճ և հասկանալի:

Բացատրությունը հեշտությամբ գուգակցվում է ցուցադրման հետ:

Պատմություն: Եթե անհրաժշտ է մարզվողների մոտ պատկերացում ստեղծել տրամաբանորեն կաված փաստների և նրանց հետևանքով զարգացող դեպքերի կամ նրենույթների մասին օգտվում են պատմությունից: Ժամանակ առ ժամանակ անհրաժշտ է պատմությունների միջոցով անդրադառնալ ըմբշամարտի տեսնիկայի, տակտիկայի և հոգեբանական առանձնահատկություններին:

Զրոյց: Եթենմն բացատրությունների կամ պատմությունների ժամանակ մարզիչը մարզվողներին հնարավորություն է տալիս ավելի շատ հարցեն՝ տալ աստիճանաբար այն վերածնով հարց ու պատասխանի: Գիտնիքների հաղորդման այս ձևը կոչվում է զրոյց:

Ցուցադրման մեթոդ: Այն իրականացվում է անձնական, լավագույն կատարողների, պլակատների, տեսաժապավենների ցուցադրման միջոցով: Ընդ որում մարզչի և լավագույն կատարողների ցուցադրումը պետք է լինի տեսնիկապես անթերի: Հնարքի ցուցադրումը գրեթե միշտ ուղեկցվում է բացատրություններով: Ցուցադրումը պետք է այնպես կազմակերպեն, որ այն ամբողջապես տեսանելի լինի բոլորին: Հնարքը ցուցադրվում է ինչպես արագ և ամբողջական, այնպես էլ դաշտայի մաս մաս:

Վարժությունների մեթոդ: Ուսուցումն անհնար է, իբրա կանացնել առանց ուսուցանվող նյութի բազմակի կրկնության:

Ուսումնական աշխատանքի ընթացքում վարժությունները կիրառվում են հատուկ ֆիզիկական պատրաստության մակարդակը բարձրացնելու և շարժողական ունակություններ և հմտություններ ձեռք բերելու նպատակով:

Նոր հնարքների յուրացման ժամանակ մարզչի խնդիրը կայանում է նրանում, որ մարզվողները յուրաքանչյուր կատարում իրականացնեն հնարավորինս անսխալ: Վարժությունները հատուկ իմաստ են ձեռք բերում սխալների ուղղման ժամանակ: Յուրաքանչյուր ոչ ճիշտ կատարում ամրապնդում է սխալը: Այս դեպքում մարզչի խնդիրը կայանում է նրանում, որ կարողանա մոտենանող վարժությունների միջոցով մարզվողին բերել հնարքի ճիշտ կատարմանը: Վարժությունների մեթոդի հաջողությունը պայմանավորված է հետևյալ գործուներով.

1. Վարժությունները կարող են կիրառվել որոշակի համակարգի տեսքով, և ուղղված լինեն մանկավարժական կրնկրեն խնդիրի լուծմանը: Որոշակի հաջորդականությամբ կիրառված յուրաքանչյուր վարժություն պետք է նպաստի ուսուցման առաջընթացին՝ հաշվի առնելով նախորդ վարժությունից ստացված շարժողական փորձը:

2. Վարժությունների նպատակամղված համակարգը նպաստում է մարզվողների հատուկ ֆիզիկական և շարժողական պատրաստվածության թերի կողմերի բացահայտմանը:

3. Վարժությունների նպատակամղված համակարգը կիրառվում է մարզվողների ուշադրության և ակտիվության պայմաններում: Նրանց պետք է պարզ լինի կիրառվող վարժությունների նպատակը և կատարման առանձնահատկությունները: Դա նպաստում է ուսուցանվող նյութի հաջող յուրացմանը:

4. Շատ կարևոր է, որ մարզվողները վարժության կատարման ընթացքում իրենք կարողանան հսկել վարժության

ճիշտ կատարումը (առաջնորդվելով տարածական, ժամանակային և ձայնային կողմնորոշչներով):

Հսկողությունը հեշտացնելու նպատակով շարժման յուրացման սկզբնական փուլում հրահանգ է տրվում վարժությունը կատարել փոքր կամ միջին արագությամբ:

Խորային մեթոդ: Ըմբշամարտում ուսուցումը չի սահմանափակվում գիտելիքների կարողությունների և հմտությունների ձեռք բերմամբ: Այն անպայման ենթադրում է դրանց կիրառումը գուտնմարտի ընթացքում՝ տարբեր մրցակիցների հետ և տարբեր պայմաններում:

ՈՒսուցման գործընթացում այս բարդ խնդրի լուծմանը նպաստում է խաղային մեթոդի կիրառումը: Ընդ որում ըմբշամարտի պարզագույն հնարքները (բռնվածքները և տեղաշարժները համակցված անհրաժեշտ նպատակի հետ) աստիճանաբար մտնում են մարզվողների տեխնիկատակտիկական զինանոցի մեջ:

Այսպիս, պայքարը որոշակի իրի (ծանրացված գնդակ, մարմնամարզական փայտ, պարան) ստիպում է մարզվողներին իրենց ճիգերը ժամանակին կենտրոնացնել որոշակի բռնվածքի վրա և անհրաժեշտության դեպքում փոփոխել այն:

Ըմբշամարտի տարբեր պարունակող խաղերի կիրառումը նպաստում է նրան, որ մարզվողները պարբերաբար պայքարի մեջ մտնեն՝ շմտածնելով վերջնական արդյունքի մասին:

Ըմբիշների համար շատ օգտակար են բռնվածքների, նրանցից ազատման, գորգի սահմաններից դուրս բերման և այլնի համար տրվող վարժությունները:

Մեթոդական հնարքներ

Ըմբշամարտի բարդությունը, ուսուցման գործընթացի կանոնները խախտելիս վնասվածքներ ստանալու վտանգը

պահանջում են կիրառել զանազան մեթոդական հնարներ՝ հաշվարկ, մեթոդական ցուցումներ, հրամաններ և հրահանգներ:

Հստակ և ժամանակին արված *հաշվարկը* աշխուժացնում է ուսումնական գործընթացը: Հաշվարկը հատկապես արդյունավետ է կիրառել դասի նախապատրաստական մասում: Հաշվարկը նպատակային չի համարվում հատողի մասնագիտական վարժությունների կատարման ժամանակ:

Մեթոդական ցուցումներն ուղղված են դասի ընդհանուր խնդիրների լուծմանը: ՈՒսուցման ժամանակ, հաճախ կապված մասավոր առաջացման կամ վնասվածքների ստացման դեմ նախականխման միջոցների կիրառման հետ, անհրաժեշտություն է առաջանում վերանայել դասի կառուցվածքային առանձնահատկությունները: ՈՒսուցման գործընթացի ամբողջականությունը պահպանվում է մեթոդական ցուցումների միջոցով, որոնք կիրառվում են նրանց նկատմամբ ում դա վերաբերվում է:

Հրամանները և հրահանգները հաճախ կիրառվում են դասի սկզբում մարզվողների ուշադրությունը կննտրոնացնելու և կարգապահությունը պահպանելու նպատակով:

Հրամաններ և հրահանգները մարզչին հնարավորություն են տալիս ուսումնական խմբի գործողությունները արագ և հստակ կառավարել:

6.4. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՈՒսուցման գործընթացում լուծվում են որոշակի մանկավարժական խնդիրներ: ՈՒսուի այն կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի փուլերի:

Ծանոթացում հնարքի հետ: Այս փուլը կարող է կրել մի քանի ձևեր: ՈՒսուցանվող հնարքի հետ կարելի է ծանոթանալ մասնագիտական գրականության, մրցումների և մարզումների, տեսաժապավենների դիտման, պլակատների միջոցով և այլն:

Ծանոթացման արդյունքում մարզվողները ընդհանուր պատկենացում են կազմում հնարքի մասին: Ծանոթացման խնդիրը կայանում է մարզվողների մոտ հնարքի տեսողական պատկերի ստեղծումը, նրա կատարման տեխնիկայի վերաբերյալ գիտելիքների հաղորդումը: Ծանոթացման փուլում սկսնակների պայմանների հիմնական պատճառներից մեկն այն է, որ նրանք չեն պատկերացնում տվյալ հնարքի տեղը և նշանակությունը ըմբառապատճենում կատարելու համար: Ուսուցման այս փուլում խորհուրդը չի տրվում անդրադառնալ պաշտպանություններին և հականարքներին:

Մանրակրկիտ ուսուցում: Ըմբռապատճենությունների ուսուցման ժամանակ մարզվողները յուրացնում են հնարքի հիմնական մասերը, հնարքի կատարման տարրեն փուլերում ճիզերի ներդրման աստիճանը, արգույթունը և լայնույթը: Հնարքի ուսուցման այս փուլում կիրառվում է նրկու նղանակ՝ ամբողջական և մասնատված:

Ամբողջական մեթոդ: Այս մեթոդը կիրառվում է պարզ հնարքների ուսուցման ժամանակ, իսկ բարդ հնարքների ուսուցման ժամանակ այն հաջորդում է մասնատված մեթոդին: Ամբողջական մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ այս դեպքում հնարքի ամբողջականությունը չի խախտվում, սակայն բարդ հնարքների ուսուցման ժամանակ այն պեսոք է կիրառել մասնատված մեթոդից հետո, քանի որ առանց հնարքի մասնատման կդժվարանա հնարքի ուսուցումը:

Մասնատված մեթոդ: Այս մեթոդը կիրառվում է բարդ հնարքների ուսուցման ժամանակ: Այն իրականացվում է հնարքը առանձին մասերի կամ փուլերի մասնատման միջոցով:

1. մուտեցում, բռնվածք,
2. հավասարակշռությունից դուրս բերման փուլ,
3. հնարքի իրազործման փուլ (գցումների ժամանակ այն կոչվում է նաև ճախրման փուլ).

4. Վերջնական դրույթուն:

Մասնատված մեթոդը հեշտացնում է բարդ հնարքների ուսուցումը, սակայն այս դեպքում խախտվում է հնարքի ամբողջականությունը:

Այս մեթոդի կիրառման ժամանակ խորհուրդը է տրվում առաջին փուլի յուրացումից հետո, նրկորդ փուլը յուրացնել առաջինի հետ մեկտեղ, նրբորդը՝ առաջին նրկուսի հետ մեկտեղ և չորրորդը՝ առաջին նրեր փուլի հետ մեկտեղ:

Հմտության ամրապնդում և կատարելագործում: Ուսուցման նրբորդ փուլի խնդիրը մարզվողների կողմից յուրացված հնարքը մրցակցական պայմաններում մատչնի դարձնելն է: Հմտությունները ամրապնդվում են ինչպես ուսումնական, ուսումնամարզական և մարզական գոտեմարտերի, այնպես էլ մրցակցական գոտեմարտերի ժամանակ:

Ըմբիշները գիտեն շատ հնարքներ, բայց մրցումների և, անգամ, մարզումների ժամանակ նրանք կիրառում են դրանցից միայն մի քանիսը: Հնարքաբար, նշանակում է, որ նրանք հիմնավորապես անցել են միայն ծանոթացման և մանրակրկիտ ուսուցման փուլերը, իսկ ամրապնդման և կատարելագործման փուլը անցել են մակերեսորեն:

Յուրացվող հնարքների կատարելագործման համար կիրառվում են մի շարք մեթոդներ և մեթոդական հնարքներ, որոնց մեջ կանդրադառնանք հաջորդ գլխում:

ԳԼՈՒԽ 7

ՄԱՐԶՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Մարզումը բազմավյա գործընթացը է՝ ուղղված ֆիզիկական կատարելությանը և սպորտային բարձր նվաճումների ձեռքբերմանը:

Այս գործընթացը ննթարկվում է որոշակի սկզբունքների և իրականացվում է հիգիենիկ ռեժիմի պահպանման և բժշկամանկավարժական հսկողության պայմաններում:

Մարզման նպատակը՝ ֆիզիկական կատարելությունը և մարզական բարձր արդյունքների նվաճումը իրականացվում է լուծելով հետևյալ խնդիրները՝

1. ամրապնդել և կատարելագործել մարզիկի տեխնիկան և տակտիկան.

2. մշակել և կատարելագործել շարժողական ընդունակությունները.

3. բարձրացնել օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները.

4. կատարելագործել հոգեբանական և բարոյակամային հատկանիշները.

5. հարստացնել տեսական գիտելիքները:

7.1. ՄԱՐԶՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Խոսքի մեթոդ: Իր մեջ ընդգրկում է դասախոսությունները, զրոյցները, ցուցումները, հաշվնտվությունները, բացատրությունները և այլն:

Զննական մեթոդ: Այս մեթոդն ընդգրկում է անձնական ցուցադրումը, ալակատների, նոնսաժապավենների, ուսումնական ֆիլմերի ցուցադրումը և այլն:

Պրակտիկ (գործնական) մեթոդ: Սպորտում առավել կարևոր են և ավելի մեծ նշանակություն ունեն պրակտիկ մեթոդները՝ խաղային, մրցակցական և վարժությունների:

Մարզչի աշխատանքում մեծ տեղ է գրավում վարժությունների մեթոդը, որը հաճախ կոչվում է նաև մարզման մեջող։ Այս մեթոդի դասակարգման համար կիրառվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ ուղղվածությունը, բնոնվածությունը և գիլայնությունը։

Հստ ուղղվածության մարզման մեթոդները լինում են.

1. **մրցակցական՝** համալիր կերպով ծանրաբեռնում են այն օրգան համակարգերը, որոնք գործում են մրցակցական գործունության ժամանակ,

2. **հատուկ նախապատրաստական՝** նպատակառուղյած ագդում են միայն օրգանիզմի այն համակարգերի վրա, որոնք մասնակցում են մրցակցական գործունության ապահովմանը,

3. **ընդհանուր նախապատրաստական՝** մարզում են օրգանիզմի այն համակարգերը, որոնք չեն ծանրաբեռնվում մրցուների ժամանակ և նպաստում են աշխատունակության արագ վնրականգմանը։

Մարզման մեթոդները ըստ բնոնվածության լինում են.

1. **հեշտացված՝** բնութագրվում է բնոնվածության և հանգստի այնպիսի հերթագայմամբ, որը մարզիկին թույլ է տալիս արագ վնրականգնվել,

2. **օպտիմալ՝** բնութագրվում է բնոնվածության և հանգստի այնպիսի հերթագայմամբ, որի դեպքում օրգանիզմը համեմատաբար դանդաղ է վնրականգնվում,

3. **դժվարացված՝** համարվում է շատ ծանր և օրգանիզմի վնրականգնման համար բավական երկար ժամանակ է հարկավոր։

Հստ գիլայնության մարզման մեթոդները լինում են՝

1. **միանգամյա.**

2. համայիր.

3. բազմակի անգամ կրկնվող համալիրներ:

7.2. ՄԱՐԶՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մարզման հիմանական միջոցները ֆիզիկական վարժություններն են: Բոլոր վարժությունները միավորված են երեք խմբերում:

1. ընդհանուր նպաստառաստուական.
2. հատուկ նպաստառաստուական.
3. հիմանական մրցակացական:

7.3. ՄԱՐԶՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈԽՅԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարզում՝ բարդ գործնաց է և ունի իր օրինաչափությունները, որոնց հիմքում ընկած են ուսուցման սկզբունքները: Դրանք, կապված մարզման առանձնահատկություններից նորովի արտացոլում են ստանում: Առանց մարզման օրինաչափությունների դժվար է ճիշտ մարզում կազմակերպել:

Գոյություն ունեն մարզման վեց օրինաչափություններ:

1. բարձր մարզական նվաճումների ուղղածությունը.
2. ընդհանուր և հատուկ պատրաստության միասնությունը.
3. մարզման գործընթացի անընդհատությունը.
4. մարզական պահանջների աստիճանական և առավելագույն աճը.
5. բնոնկածության դինամիկայի ալիքաձևությունը.
6. մարզման գործընթացի ցիկլայնությունը:

Բարձր մարզական նվաճումների ուղղածությունը: Մարզման ընթացքում յուրաքանչյուր մարզիկ բացի առողջությունը ամրապնդելու, աշխատունակությունը բարձրացնելու և ակտիվ նրկարակնեցություն ապահովելու խնդիրներից, ձգտում է նաև

մարզական բարձր նվաճումների: Հենց այդ նպատակավայր ձգտում է մարզմանը բնորոշ օրինաչափություն:

Այս օրինաչափությունը մարզման բազմամյա փուլերում տարբեր ձևով է դրսորվում: Որպես կանոն, մարզման սկզբնական փուլում այն ավելի թույլ է արտահայտված, քան մյուս փուլերում:

Բարձր մարզական նվաճումների ուղղածությունը մեծ չափով պայմանավորված է ըմբիշի անհատական առանձնահատկություններով: Այն մարզիկներից պահանջում է ակտիվություն, գիտակցական և ստեղծագործական մոտեցում մարզումներին:

Այս օրինաչափության հիմքում ընկած են ակտիվության և գիտակցականության սկզբունքները:

Հնդիանուր և հատուկ պատրաստության միասնությունը: Մարզական բարձր նվաճումների համար անհրաժեշտ է ընդհանուր և հատուկ պատրաստության միասնություն: Այս պահանջը համարվում է մարզման կարևոր օրինաչափություններից մեկը:

Հնդիանուր պատրաստությունը հիմք է հանդիսանում հատուկ պատրաստության համար: Նրանց փոխհարաբերությունը բազմամյա մարզման փուլերում տարբեր է: Եթե մարզման սկզբնական փուլերում գնրակշռում է ընդհանուր պատրաստությունը, ապա կատարելագործման փուլում՝ հատուկ պատրաստությունը:

Այստեղ արտացոլվում են անհատականության և գիտակցականության սկզբունքները:

Մարզման գործընթացի անընդհատությունը: Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր մարզումից հետո օրգանիզմում տնդի են ունենում որոշակի փոփոխություններ: Ճիշտ կազմակերպված մարզումները նպաստում են, որ այդ դրական տեղաշարժերը գումարվելով միմիանց նպաստեն մարզվածության աճին և մարզական բարձր արդյունքների նվաճմանը: Այստեղից պետք է

նզրակացնել, որ մարզման գործընթացը պետք է լինի անընդհատ: Սա մարզման օրինաչափություններից մեկն է: Մարզման անընդհատությունը նենդադրում է շուրջուարյա մարզումներ: Սակայն մարզումների միջև պետք է ըստրել հանգստի այնպիսի ժամանակահատվածներ, որպեսզի հերթական մարզումից ստացած դրական փոփոխությունները գումարվեն նախորդ մարզումների փոփոխություններին:

Օրգանիզմի լրիվ վերականգնումը ստացած քեռնվածությունից կարող է տևել 2-3 ժամից մինչև 2-3 օր: Սակայն ժամանակակից սպորտը պահանջում է մեծացնել մարզումների ծավալը և կատարել օրական 2-3 մարզում: Բնականաբար, իրար հաջորդող մարզումները քեռնվածությամբ չպետք է իրար նման լինեն: Սրանից ենթով տարբերում են հիմնական և լրացուցիչ մարզումներ: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս վերականգնել և բարձրացնել աշխատունակությունը, որի համար կիրառվում են նաև վերականգնման լրացուցիչ միջոցներ:

Այս օրինաչափության հիմքում ընկած են անհատականության և համակարգման սկզբունքները:

Մարզական պահանջների ասոժճանական և առավելագույն աճը: Հայտնի է, որ օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները կախված են նրան ներկայացվող ծանրաբնույթածության մնանությունից: Յուրաքանչյուր նոր նվաճում ստիպում է բարձրացնել մարզման քեռնվածության մակարդակը: Ընդ որում քեռնվածությունը պետք է մեծացնել օրգանիզմի հնարավորությունների աճի հետ մեկտեղ՝ այսինքն աստիճանաբար:

Մարզական պահանջների աստիճանականությունը և առավելագույն աճը սնրուուն կապված են միմյանց: Սակայն քեռնվածությունը կարելի է մեծացնել մինչև այն սահմանակետը, որը որ ներում են օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները: Հնտևաբար, ըմբիշի քեռնվածության առավելագույն

չափը որոշելիս պետք է հաշվի առնել նրա անհատական առանձնահատկությունները և մարզվածության աստիճանը: Ընդ որում այս հանգամանքը պետք է նկատի ունենալ ոչ միայն մեկ մարզման՝ այլև շաբաթական, ամսական, տարեկան և բազմամյա ցիկլերի քննվածությունը որոշելիս:

Մարզման այս օրինաչափության մեջ իրենց արտացոլումն են գտնում մատչելիության, անհատականության և համակարգման սկզբունքները:

Քեռնվածության դինամիկայի ալիքածնությունը: Մարզման օրինաչափություններից մեկն էլ քեռնվածության դինամիկայի ալիքածնությունն է: Մարզական գործունեությունում հայտնի են նաև քեռնվածության զարգացման այլ ուղիներ՝ աստիճանական, թոփքածև և այլն: Սակայն քեռնվածության մեծացման առավել տարածված և ընդունելի նղանակը՝ ալիքածև աճն է:

Գերմարզվածությունից խուսափելու համար անհրաժեշտ է մարզման քեռնվածությունը մեծացնել ալիքային անկումների միջոցով, որոնք մարզիկմերին հնագտանալու և ուժնը վերականգնելու հնարավորություն են տալիս:

Մարզական գործունեությունում տարբերում են երեք տեսակի ալիքներ՝ փոքր (1-7 օր), միջին (1-3 ամիս) և մեծ (6-12 ամիս):

Քեռնվածության դինամիկայի ալիքածնության հիմքում ընկած են համակարգման և մատչելիության սկզբունքները:

Մարզման գործընթացի ցիկլայնությունը: Մարզման գործընթացի ցիկլայնությունը համարվում է մարզման օրինաչափություններից մեկը:

Մարզական գործունեությունում կապված ժամանակի մասշտաբների հետ մարզման գործընթացը բաժանում են՝

1. միկրոցիկլերի (շաբաթական մարզման կառուցվածքը).
2. մեզոցիկլերի (մի քանի միկրոցիկլերի կամ մարզման

փուլի կառուցվածքը).

3. մակրոցիկլնի (կեստարյա կամ շուրջտարյա մարզման կառուցվածք):

Այս օրինաչափության մեջ արտահայտված է համակարգման սկզբունքը:

7.4. ՄԱՐԶՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարզման բովանդակության տակ պետք է նկատի ունենալ մարզական պատրաստության տարբեր կողմերի ամբողջությունը. Ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական, քարոյակամային և տեսական: Տակտիկական պատրաստությանն արդեն անդրադարձել ենք «Մարտավարության հիմունքները» գլուխում, իսկ պատրաստության մյուս կողմերի մասին կլսունենք ստորև:

7.5. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մրգակցին հաղթելու համար անհրաժեշտ է հաղթահարել նրա դիմադրությունը, կատարել հնարք կամ հականարք, մրցակցին պատկենցնել թիակների վրա կամ հաղթել միավորներով: Առանց համապատասխան ֆիզիկական պատրաստության անհնար է հասնել քարձ նվաճումների:

Ֆիզիկական պատրաստությունը համարվում է սպորտային մարզման հիմքը: Ընդհանուր մեծ պահանջներ է ներկայացնում շարժողական ընդունակությունների զարգացման մակարդակին: Առաջնակարգ մարզիչները և մարզիկները մեծ տեղ են հատկացնում մկանային զգացողությանը, պայթուցիկ ուժին, ռնակցիայի արագությանը, ճարպկությանը և դիմացկունությանը: Սակայն պետք չէ ձգտել շարժողական բոլոր ընդունակությունների մաքսիմալ զարգացմանը: Ըմբիշին պետք չէ ծանրորդի ուժ կամ վազորդի դիմացկունություն: Անհրաժեշտ է

շարժողական ընդունակությունների այնպիսի արդյունավետ համակցումներ, որոնք նպաստում են ըմբիշի կատարելագործմանը:

Ֆիզիկական պատրաստության հիմնական միջոցը համարվում են ֆիզիկական վարժությունները: Նրանց կարելի է բաժանել չորս հիմնական խմբի՝

1. ընդհանուր պատրաստության վարժություններ.
2. ընդհանուր զարգացող վարժություններ.
3. մրցակցային վարժություններ.
4. հատուկ մասնագիտական վարժություններ:

Հնդիանուր ֆիզիկական պատրաստություն: Հնդիանուր ֆիզիկական պատրաստությունը համարվում է ըմբիշի շուրջության ֆիզիկական բնոնվածության միջոց: Ըմբիշն իր ամենօրյա մարզման ժամանակ կատարում է ֆիզիկական պատրաստության զանազան վարժություններ: Հնդիանուր ֆիզիկական պատրաստությունը հիմք է հանդիսանում հատուկ ֆիզիկական պատրաստության համար: Սակայն չպետք է չարաշահել ընդհանուր ֆիզիկական պատրաստությունը, քանի որ ընդհանուր ֆիզիկական պատրաստության չափազանց բարձր մակարդակը արգելակում է հատուկ ֆիզիկական պատրաստության կատարելագործմանը: Հնդիանուր ֆիզիկական պատրաստության միջոցները ընդհանուր նախապատրաստական և ընդհանուր զարգացնող վարժություններն են:

Հնդիանուր նախապատրաստական վարժությունները թեև իրենց կառուցվածքով, ուժային և ժամանակային բնութագրենրով չեն համապատասխանում ըմբշամարտի տեխնիկական գործողություններին, սակայն նպաստում են նրանց կատարելագործմանը:

Հնդիանուր նախապատրաստական վարժությունների խմբին պետք է դասել տարբեր տարածության վազքերը, որոնք կատարվում են տարբեր արագությամբ և տևողությամբ, մեկ

կամ նրկու ոտքով ցատկերը (նստարանի կամ տարբեր արգելքների վրայից), ցատկապարանով կատարվող ցատկերը, բարձրացատկը, հեռացատկը, գլուխկոնծինները (տարբեր արգելքների վրայից), տարբեր վարժությունների կիրառումով շրջանաձև մարզումը, ծանրացված գնդակի համար պայքարը, ֆուտբոլը, ռեգբին, թիվաբարությունը, դահուկավազքը, լողը և այլն:

Հնդիանուր զարգացնող վարժությունների խմբին են պատկանում մկանները տարացնող և օրգանիզմը հիմնական աշխատանքին նախապատրաստող վարժությունները: Հաշվի առնելով ըմբամարտի այն առանձնհատկությունը, որ անսպասելիորեն և հաճախակի փոփոխում են մկանային ճիգերի ուղղությունները, որ պեսոր է անընդհատ հաղթահարել մրցակցի դիմադրությունը, կատարել արագ և անսպասելի տեղաշարժեր՝ վնասվածքից խուսափելու համար, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել բոլոր մկանախմբերը զարգացնող վարժություններին: Հնդիանուր զարգացնող վարժություններն են՝

1. քայլքը.
2. փազքը.
3. ակրոբատիկ վարժությունները և այլն:

Հատուկ ֆիզիկական պատրաստություն: Ինչպես բոլոր մարզաձևներում, այնպես էլ ըմբամարտում կարևորվում է հատուկ ֆիզիկական պատրաստությունը:

Հատուկ ֆիզիկական պատրաստությունը համարվում է մրցակցական պատրաստության անբաժան բաղադրիչներից մեկը, ավելին՝ հատուկ ֆիզիկական պատրաստությունը մարզման մրցակցական շրջանի բնոնվածության հիմնական միջոցն է: Հատուկ ֆիզիկական պատրաստության միջոցները մրցակցական՝ և հատուկ մասնագիտական վարժություններն են:

Մրցակցական վարժությունների խմբին են դասվում մրցակցական, ստուգողական, մարզական գոտնմարտերը, որոնք իրենց տևողությամբ համապատասխանում են մրցակ-

նուններին: Գոտնմարտերը անցկացվում են նույն քաշն ունեցող ըմբիչների միջև: Խորհուրդ է տրվում, որ գոտնմարտող ըմբիչների մարզական պատրաստության մակարդակները շատ չտարրենրվեն իրարից:

Հատուկ մասնագիտական վարժությունների խմբին են պատկանում ուսումնամարզական և մարզական այն գոտնմարտերը, որոնց տևողությունը չի համապատասխանում մրցականուններին: Գոտնմարտի համար ընտրվում են ինչպես տարբեր պատրաստություն՝ այնպես էլ տարբեր քաշներ ունեցող ըմբիչներ:

Այս խմբին են դասվում ծանրություններով և մարզասարբերով կատարվող այն վարժությունները, որոնք կատարման բնույթով համապատասխանում են որոշակի հնարքների կատարմանը, ինչպես նաև այն վարժությունները, որոնք նպաստում են հնարքի կատարմանը մասնակցող առանձին մկանախմբերի զարգացմանը: Հատուկ մասնագիտական վարժությունների խմբին են դասվում նաև այն վարժությունները, որոնք ոչ անմիջականորեն ազդում են ենթանիկական գործողության որակի վրա: Օրինակ, ծանրացված գնդակի արտակորված նետումները նպաստում են արտակորված զցումների կատարմանը:

Այլ հնարքների կատարելագործման նպատակով կիրառում են ըմբամարտ ծնկների վրա, պայքար իրանի, ձնորի կամ ոտքի բռնվածքի համար, մրցակցին իրենով որոշակի տարածքից դուրս բերում և այլն:

Հատուկ մասնագիտական վարժություններին են պատկանում բոլոր հնարքները, կամուրջ դրությունում կատարվող վարժությունները և այլն:

7.6. ԾԱՐԺՈՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Մարդու առանձին շարժողական հնարավորությունները ընդունված է անվանել շարժողական ընդունակություններ: Մարդու շարժողական ընդունակություններն են համարվում ուժը, արագությունը, դիմացկունությունը, ճկունությունը և ճարպկությունը: Այս բոլոր ընդունակությունները սերտորեն կապված են միմյանց հետ, այսինքն՝ մեկի կատարելազորությունը նվասում է մյուսի լավ արտահայտմանը: Օրինակ, առանց ուժի զարգացման հնարավիր չեւ հաջողությամբ զարգացնել արագությունը: Նոյն ըմբիշը հավասար պայմաններում քաշով ավելի թերեւ մրցակցի վրա նոյն հնարքը ավելի արագ կատարի, քան ծանր քաշ ունեցող մրցակցի վրա: Հետևաբար, որքան ուժեղ է ըմբիշը, այնքան ավելի լավ կարող է արտահայտել իր արագությունը: Բայց, մյուս կողմից էլ ուժի չափից ավելի մշակումը կարող է բացասաբար անդրադառնալ արագաշարժության վրա: Ուստի շարժողական ընդունակությունների մշակման ժամանակ պետք չեւ շնչորդ դնել այս կամ այն ընդունակության վրա, այլ անհրաժեշտ է այն մշակել համագործակցելով մյուսների հետ:

Շարժողական ընդունակությունների մշակման հիմնական միջոցը ֆիզիկական վարժությունների սիստեմատիկ կատարումն է:

Ֆիզիկական վարժությունները պայմանականորեն բաժանվում են նրկու խմբի՝ հատուկ և ընդհանուր (կախված ըմբշամարտի հնարքների հետ ունեցած նմանությունից):

Առաջին խմբում դասվիր են ընդհանուր զարգացնող վարժությունները և ըմբշամարտում օգտագործվող շարժումների առանձին տարրերը:

Երկրորդ խմբում դասվիր են մոտենալող վարժությունները, ուսումնական, ուսումնամարզական, մարզական գոտենմար-

տերը, շրջավագրերը, շրջադարձները, ըմբշամարտի հնարքները և այլն:

Հատուկ վարժությունների միջոցով կարելի է յուրացնել ըմբշամարտի տեխնիկան և զարգացնել ըմբիշի շարժողական ընդունակությունները:

Շարժողական ընդունակությունները մշակվում են ըմբշամարտի պարապմունքների գրեթե բոլոր ձևերում:

Շարժողական ընդունակությունների մշակման համար կարելի է կիրառել նաև վարժություններ այլ մարզաձևերից (ծանրամարտ, ակրոբատիկա, բասկետբոլ, աթլետիկա և այլն):

ՈՒԺԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Քանի որ ըմբշամարտը մրցակցի դիմադրությամբ բնութագրվող մարզաձևն է, ուստի այստեղ մեծ նշանակություն է ձեռք բերում մկանային ուժը: Մկանային ուժը նշանակալի չափով որոշում է նաև արագությունը, դիմացկունությունը և ճարպկությունը:

Ըմբիշի ուժը մկանների լարվածությամբ մրցակցի դիմադրությունը հաղթահարելու կամ նրան դիմակայելու ընդունակությունն է:

Մկանային ուժը արտահայտվում է նրկու ձևով. լարվածությամբ՝ ստատիկ և կծկման արագությամբ՝ դինամիկ: Ըմբշամարտում մենք հանդիպում ենք ուժի արտահայտման նրկու ձևերին էլ: Եթե զցումները որպես օրենք կատարվում են դինամիկ ճիգնիքի շնորհիվ, ապա ըմբիշի դիրքը կամուրջ դրությունում կամ մրցակցին կամուրջ դրությունում պահելը ըմբիշից պահանջում է առավելապես մկանային ստատիկ ճիգներ:

Կախված այն բանից, թե ինչ տեխնիկական գործողություն է կատարում ըմբիշը, նրա մկանային ճիգները ըստ լարվածության աստիճանի կարող են լինել փոքր, միջին, մեծ և մարզիմալ, իսկ ըստ տևողության՝ կարճատև և երկարատև:

Այս ամենը չի կարող չանդրադառնալ ուժի մշակման մեթոդների և միջոցների վրա: Ենթակա այն բանից, որ մկանային ուժը արտահայտվում է նրկու ծևով՝ դինամիկ և ստատիկ, ուժային վարժությունները պայմանականորեն բաժանվում են նրկու խմբի: Բուն ուժային և արագագության:

Բուն ուժային վարժությունների խմբին պատկանում են այն վարժությունները, որոնց կատարման ժամանակ ուժը հասնում է մաքսիմալ արտահայտության (օրինակ, հատուկ և ընդհանուր զարգացնող վարժությունների կատարումը մեծ և սահմանային ծանրությամբ):

Արագագության կոչվում են այն վարժությունները, որոնց կատարման ժամանակ ուժը մեծ արագացման դեպքում հասնում է մաքսիմալ արտահայտության: Այս խմբում կարենի է դասել մեջքի վրայից և արտակրոված գցումները (համեմատաբար փոքր քաշ ունեցողների հետ) և այլն:

ՈՒժային ընդունակությունները զարգանում են մկանային ջանքների մաքսիմալ արտահայտման պայմաններում:

Ըմբշամարտում կիրառվող ուժը անընդհատ փոփոխվում է մեծությամբ, ուղղությամբ և քնությով: Սա պայմանավորված է գոտումարտի ընթացքում իրավիճակների փոփոխմամբ: ՈՒստի, ըմբշամարտում ուժը հաճախ արտահայտվում է մյուս շարժողական ընդունակությունների հետ համակցված: ՈՒժը պայմանավորված է նաև ըմբիշի կամային հատկանիշներով, իրեն մորֆիզացնելու ընդունակությամբ:

ՈՒժի մշակման համար կիրառվում են հետևյալ մեթոդներ՝ հաղթահարման, զիջող և իզոմետրիկ:

Հաղթահարման մեթոդ: Հաղթահարման մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ըմբիշը կատարում է հաղթահարող քնությի աշխատանք: Այս մեթոդն ունի մի քանի տարատեսակներ. կրկնողության մեթոդ, մեծ կամ մաքսիմալ ճիգների մեթոդ, աճող դիմադրության մեթոդ:

Կրկնողության մեթոդ: Վարժությունը պնդում է կատարել ոչ սահմանային քաշերով (անձի հնարավորությունների մաքսիմումի 40-60%-ը) մինչև կրամարվելը: Վարժությունը պնդում է կրկնել 2-5րոպն հանգստից հետո: Հանգստի ժամանակ խորհուրդ է տրվում կատարել թուլացնող վարժություններ: Այս մեթոդով կատարվող վարժությունները նպաստում են ուժային դիմադրության զարգացմանը:

Մեծ կամ մաքսիմալ ճիգների մեթոդ: Վարժությունները կատարվում են մեծ (անձի հնարավորությունների մաքսիմումի 60-80%-ը) և մաքսիմալ (անձի հնարավորությունների 90-100%-ը) ծանրություններով 1-3 անգամ: Վարժությունները կրկնվում են կարճ ժամանակահատվածից հետո, մինչև արագության զգալի կորուստը:

Աճող դիմադրության մեթոդ: Վարժությունը սկսում են փոքր և վնրջացնում մեծ կամ մաքսիմալ դիմադրությամբ: Դիմադրության աճը տեղի է ունենում մինչև կամ վարժությունների համալիրը 2-3 անգամ կրկնելուց հետո:

Իզոմետրիկ մեթոդ: Վարժությունները կատարվում են որևէ ստատիկ դրությունում քազմակի (5-10 անգամ) պահումներ (2-8վրկ.) կատարելով: Այս վարժությունները նպաստում են այն տեխնիկական գործողություններին, որոնք քնութագրվում են ստատիկ ճիգներով, օրինակ, արտակրոված գցումների ժամանակ մեջքի և ուղենիքի մկանները, որոնք կրում են հիմնական քնությամբ:

Զիջող մեթոդ: Մարզման գործընթացում ընդունված է նաև ուժի զարգացման այսպես կոչված «զիջող մեթոդը»:

Սրա էությունը կայանում է նրանում, որ մարզվող զիջներով մրցակցի քաշին կամ ջանքներին ծալում է մարմնի այս կամ այն մասը: Օրինակ, ձնոքների համար՝ ծանրաձողի դանդաղ իջնցումը, ոտքի մկանների համար բարձրությունից ցատկները: Այս մեթոդի կիրառման ժամանակ ավելի մեծ ծանրություններ են կիրառվում

քան հաղթահարող մեթոդի ժամանակ: Ուստի այս մեթոդը պետք է կիրառել լավ մարզվածություն ունեցող մարզիկներին նկատմամբ:

Զիջող մեթոդի կիրառման ժամանակ նկատվել է, որ մարզիկների մկանների ակտիվ դիմադրությունը մարզիմայ և գերմարզիմայ քաշին նպաստում է լարվածության աստիճանի ավելացմանը:

ՈՒժի հաջող զարգացման համար անհրաժեշտ է հետևել հետևյալ պահանջներին.

1. ՈՒժի աստիճանական և կանոնավոր զարգացմանը կարելի է հասնել յուրաքանչյուր պարապմունքին ուժային վարժություններ կատարելով:

2. ՈՒժային վարժությունների բազմակի կրկնություն: Որքան հեշտ է վարժությունը այնքան ավելի շատ պետք է կրկնել այն: Վարժությունները պետք է ընտրել այնպես, որ մարզման ընթացքում երկար ժամանակ չհատկացվի միևնույն մկանախմբին: Մարզիմայ լարվածություն պահանջող վարժություններին պետք է հաջորդեն փոքր կամ միջին լարվածությամբ կատարվող վարժությունները:

3. ՈՒժային վարժությունների բազմակողմանի ներգործություն: Պետք է մշակել վարժությունների այնպիսի համակրներ, որը հնարավորություն կտա ուժը զարգացնել հիմնական մկանախմբներում:

Արագության մշակումը

Հմբայամարտում արագությունը՝ շարժումները կամ հնարքները միջիմայ ժամանակում կատարելու ընդունակությունն է:

Հմբայամարտում բարձր նվաճումներն անհնար է պատկերացնել առանց արագության: Արագությունը ըմբայամարտում կրում է ալայթուցիկ, արագառնային բնույթը: Հմբիշի գոր-

ծողությունների մեծ մասը հանդիսանում են ստեղծված իրավիճակի կամ մրցակցի գործողությունների պատասխան ռնակցիան: Հետևաբար արագության որակը կախված է շարժումների և պատասխան ռնակցիայի արագությունից:

Արագությունը մեծ չափով պայմանավորված է ուժով, մկանների էլաստիկությամբ և հողների շարժունակությամբ, նյարդային համակարգի վիճակով, տեխնիկական վարպետության աստիճանով, իսկ երկարատև աշխատանքի ժամանակ նաև դիմացկունությամբ:

Իրադրությունն ընկալելու համար պահանջվող ժամանակը մեծ չափով կախված է այն բանից, թե ուժայի իրավիճակը ինչ չափով է ծանոթ ըմբիշին: Դրա համար էլ արագության մշակման համար կիրառվող կարևոր միջոց նև հանդիսանում գոտեմարտները, որոնց ընթացքում ըմբիշը ձեռք է բերում նաև իրավիճակների փորձ:

Երկրորդ ուղին, ըմբայամարտում հանդիպող իրավիճակների և նախապես հայտնի պատասխան ռնակցիաների արինսուական ստեղծումն է:

Մկանների կծկման արագությունը (շարժման արագությունը) շատ բանով կախված է սկզբնական արագացումից, որը պայմանավորված է մկանների ուժով և նրանով, թե ինչ ֆոնի վրա է առաջանում այդ արագացումը:

Մկանները գործողությունից առաջ պետք է թուլացած լինեն, որովհետև միայն թուլացած և հանգիստ մկաններն են ընդունակ արագ կծկման:

Արագությունը մշակվում է զանազան մեթոդներով և մեթոդական հնարքներով:

Վեշտացված մեթոդ: Վարժությունները կրկնվում են բազմակի անգամ, մարզիմայ արագությամբ և հեշտացված ալայմաններում: Օրինակ, հնարքների կատարում կամ գոտեմարտի

վարում՝ քաշով ավելի թերև մրցակցի հետ՝ շնչտը դնելով արագործական վրա:

Դժվարացված մեթոդ: Վարժությունները կատարվում են մարսխմալ արագործական դժվարացված պայմաններում, քան այն պայմանները, որ հանդիպում են մրցումների ժամանակ։ Օրինակ, ըմբշամարտ ավագի վրա, ավելի ծանր մրցակցի հետ և այլն։

Այս վարժությունները կատարվում են մինչև հոգնածության երևան գալը։ Հաշվի առնելով այդ հանգամանքը արագորժությունը զարգացնող վարժությունները պետք է կիրառել դասի նախապատրաստական մասում կամ հիմնական մասի սկզբում։ Իսկ մարզման շաբաթական ցիկլը պետք է կառուցնել այնպես, որ արագործական ուղղված մարզումները անցկացվնեն լրիվ վերականգնված վիճակում։

Ծարժողական ռեակցիայի արագործական մշակումը: Այստեղ մեծ տեղ են հատկացվում այն վարժություններին, որոնք կատարվում են անսպասելի ազդանշանով։ Ազդանշանը կարող է լինել լսողական, տեսողական և մաշկային գրգիշների կիրամամբ։ Տեսողական ազդանշանները ավելի ընդունված են, քանի որ գոտեմարտի ժամանակ ստեղծված իրավիճակները ըմբիշը ընկալում է տեսողորժամբ, սակայն չպետք է անտեսվեն նաև լսողական և մաշկային ազդանշանները, որովհետև մրցավարը գոտեմարտին միջամտում է մրցավարական տերմիններով և սուլիչով։ Գոտեմարտին ծայնային ազդանշանով միջամտում է նաև մարզիչը (հուշումներ), իսկ ծնկադիր դրությունում՝ ներքում գտնվող ըմբիշը մրցակցի գործողորժուններն ընկալում է մաշկային գրգիշներով։

Ոնակցիայի արագործական մշակման վարժությունները պայմանականորեն կարելի են բաժանել երեք խմբի։

1. մեկ պայմանական ազդանշանով վարժություններ

(պարապրդները տեղում ցատկուենին ի պատասխան պայմանական նշանի անցնում են արագ վագրի),

2. երկու կամ ավելի պայմանական նշանով վարժություններ (մեջքի վրա պառկած մարզիկները ի պատասխան ծափի ցատկում են ուղի, իսկ ի պատասխան ձեռքի թափահարման շրջում են փորի);

3. մարզիկի պատասխանը կախված է մի քանի նշանների գուգորդումից (խաղներ)։

Մարզման շաբաթական ցիկլում արագորժունը մշակվում է ակտիվ հանգստից կամ փորի և միջին բնունվածությունից հետո։

Դիմացկունության մշակումը

Դիմացկունությունը հոգնածությանը դիմակայելու ընդունակությունն է: Այն անմիջականորեն կապված է օրգանիզմի արագ վնրականգնման, արյան շրջանառության, շնչառական համակարգի և տենինիկական վարպետության աստճանի հետ։

Դիմացկունությունը ըմբիշին հարկավոր է ոչ միայն մրցումների ժամանակ, այլև մարզման ընթացքում մեծ բնունվածությամբ աշխատանք կատարենին։

Դիմացկունությունը մշակվում է բնունվածության աստիճանական մեծացմամբ։ Մարզական գործունությունում տարբերում են ընդիհանուր և հատուկ դիմացկունություններ։

Ընդիհանուր դիմացկունությունը երկար ժամանակ ֆիզիկական լարված աշխատանք կատարելու ընդունակությունն է :

Հատուկ դիմացկունությունը ըմբշամարտում բարձր լարցածությամբ մեկ կամ մի քանի գոտեմարտ անցկացնելու ընդունակությունն է։ Հատուկ դիմացկունությունը զարգանում է ընդիհանուր դիմացկունության պահպանման և հնտագա կատարելագործման հիման վրա։

Ընդիհանուր և հատուկ դիմացկունությունը պետք է մշակն պարբերաբար, որոշակի մեթոդական հաջորդականությամբ։

Հնդիանուր դիմացկունության մշակման համար հիմնականում կիրառում են հավասարաչափ մեթոդ:

Հնդիանուր դիմացկունության մշակման համար միջոց են ծառայում կրոսավազքը, լողը, դահուկավազքը, թիավարությունը և այլն:

Հատուկ դիմացկունության մշակման համար կիրառում են հետևյալ մեթոդները՝

1. ծավալի մեծացման մեթոդ.
2. լարվածության մեծացման մեթոդ.
3. փոփոխական մեթոդ.
4. ժամանակահատվածային մեթոդ.
5. կրկնողության մեթոդ:

Հատուկ դիմացկունության զարգացման համար մեծ նշանակություն են ձնոր բնրում վերականգնման գործընթացները, որոնք ընթանում են բնոնվածությունից հետո: Մարզման ընթացքում պետք է պայմաններ ստեղծնել սիստեմատիկ վերականգնման և գնրվերականգնման համար: Ուստի մարզման շաբաթական շիկլը պետք է այնպիս կազմել, որ մեծ բնոնվածությամբ մարզումները, որոնց ընթացքում տեղի է ունենում օրգանիզմի ֆունկցիաների ժամանակավոր անկում, պետք է հետևն միջին, փոքր բնոնվածությամբ մարզումներով և հանգստյան օրներով:

Ժարվայի մեծացման մեթոդ: Այս մեթոդի կիրառման ժամանակ աստիճանաբար, մարզումից մարզում մեծացնում են վարժության կատարման (գոտնմարտի) ժամանակը: Սա ենթադրում է նաև մարզումների քանակի ավելացում:

Լարվածության մեծացման մեթոդ: Այս մեթոդի կիրառման ժամանակ աստիճանաբար, մարզումից մարզում մեծացնում են վարժության կատարման (գոտնմարտի) լարվածությունը:

Փոփոխական մեթոդ: Այս մեթոդի կիրառման ժամանակ վարժությունները կատարվում են տարբեր լարվածությամբ: Հնդիանում մարզում մարզում փոքր լարվածությամբ գոտնմարտների քանակը կրճատվում է, իսկ մեծ լարվածությամբ գոտնմարտների քանակը՝ ավելանում:

Ժամանակահատվածային մեթոդ: Այս մեթոդի կիրառման ժամանակ վարժությունները կատարվում են ակտիվ և պասիվ հանգստի որոշակի ժամանակահատվածներով: Հանգստի տևողությունները կախված են մարզման խնդիրներից, վարժության ծավալից և լարվածությունից, մարզվածության աստիճանից և ինքնազգացողությունից:

Կրկնողության մեթոդ: Մեկ կամ մի քանի մարզումների ընթացքում կրկնվում են միևնույն ծավալով և լարվածությամբ կատարվող վարժությունները:

Մարզման գործընթացում այս բոլոր մեթոդները կիրառվում են զանազան համակցումներով:

Ճարպկության մշակումը

Ճարպկությունը հատուկ տեղ է գրավում շարժողական ընդունակությունների շարքում: Այն բազմակողմանիորեն կապված է մյուս շարժողական ընդունակությունների հետ: Սա բացատրվում է նրանով, որ ճարպկությունը համալիր շարժողական ընդունակություն է և համարվում է կենսորունական նյարդային համակարգի բարձր զարգացած կոռորդինացիոն հնարավորությունների արդյունք՝ հիմնված շարժողական ընդունակությունների և պահուստային շարժումների վրա:

Ժամանակակից գոտնմարտին բնորոշ է դինամիկ իրավիճակների փոփոխությունը և ըմբիշից պահանջում է կատարնելագործել ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու և

ստնոթված իրավիճակին համապատասխան գործողություններով արագ հակագդելու կարողությունը:

Հմբիշի ճարպկությունը բարդ կոռոդինացիոն շարժումների ժամանակ մարմինը տիրապետելու և գոտնմարտի փոփոխվող իրադրություններում արագ կողմնորոշվելու ընդունակությունն է:

Ճարպիկ ըմբիշը արագ է տիրապետում և կատարելագործում ըմբշամարտի տեխնիկան, ավելի հնշու է դուրս գալիս վտանգավոր դրությունից, ավելի հնարամիտ է, ավելի վճռական և ավելի փստահ:

Ճարպկության կատարելագործման համար հարկավոր է դաստիարակելի այնպիսի հատկություններ, որոնց ամրոցությունը և կատարելությունը բնութագրում են այդ հատկության զարգացման չափը: Դրանց են վերաբերվում իրադրության չլանջատենաված փոփոխություններին արագ և նպատակային հակագդումը, բարդ շարժումները ճշտորեն կառավարելու ընդունակությունը, բարդ իրադրություններում և շարժումներում տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունը:

Եթե ուժը, արագությունը և դիմացկունությունը կարելի է մշակել սահմանափակ քանակով վարժությունների կատարման միջոցով, ապա ճարպկությունը մշակվում է բազմաթիվ վարժություններով, որոնք կատարվում են զանազան տարբերակներով և տարբեր կապակցություններով:

Ճարպկությունը պայմանավորված է շարժողական կարողությունների և հմտությունների զինանցով: Այդ զինանցը հարստացնելու միակ ճանապարհը նոր շարժումների յուրացումը և կատարելագործումն է:

Ճարպկությունը կարելի է մշակել հնարքը երկու կողմի վրա, տարբեր ելման դիրքներից և անսպասնի իրավիճակներից, տարբեր արագությամբ կատարելով և այլն:

Ճարպկությունը կարելի է զարգացնել այլ մարզաձևների վարժություններով՝ ակրոբատիկա, բասկետբոլ, ֆուտբոլ և այլն:

Ճկունության մշակումը

Ճկունությունը մեծ լայնույթով շարժումներ կատարելու ընդունակությունն է:

Ճկունությունը որոշվում է հոդերի շարժունությամբ, որը կախված է մկանների և կապանների էլաստիկությունից:

Ճկունությունը ըմբիշին հարկավոր է բազմաթիվ տեխնիկական գործողությունների կատարման համար: Ճկունության մշակման համար կիրառում են մրցակիցներով, գործիքներով և առանց գործիքների կատարվող ընդհանուր զարգացնող և հատուկ մասնագիտական այն վարժությունները, որոնք պնդում են կատարել մեծ լայնույթով:

Մկանների և կապանների էլաստիկությունը մեծացնող վարժությունները կատարվում են ամեն օր, բանի որ դրանց թեկությունը կարճատև դադարը բացասաբար է անդրադառնում ճկունության վրա: Այս վարժությունները խորհուրդ է տրվում կատարել 3-5 սիթմիկ կրկրնությամբ:

Վարժությունները չպետք է միանգամից մեծ լայնույթով կատարել, դա կարող է բացասաբար անդրադառնալ մկանների և կապանների վրա: Այս վարժությունները պնդում են կատարել լայնույթի մեծացմանն ուղղված լրացուցիչ շարժումներով:

Ճկունության վարժությունները կատարվում են առավելացնական նախավարժանքի ժամանակ, պարապմունքի նախապատրաստական և նզրափակիչ մասներում:

7.7. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հմբիշի տեխնիկական պատրաստությունը ըմբշամարտում կիրառվող հատուկ վարժությունների, հնարքների և նրանց կատարվող հատուկ վարժությունների հարցերի և այլն:

բազմաթիվ համակցությունների կատարման տեխնիկայի ձևափորման գործընթացն է: Ըմբշամարտում տարբերում են ընդհանուր և հատուկ տեխնիկական պատրաստություն:

Ընդհանուր տեխնիկական պատրաստությունը գանձան շարժողական ունակությունների և հմտությունների ձևափորման գործընթաց է՝ ուղղված մարզական և մանկավարժական տարբեր խնդիրների լուծմանը:

Ընդհանուր տեխնիկական պատրաստությունը ուղղված չէ մարզական բարձր արդյունքների ձեռքբերմանը: Նրա նպատակն է ամուր հիմքներ ստեղծել հատուկ տեխնիկական պատրաստության համար, յուրացնել մեծ թվով տեխնիկական գործողություններ և նպաստել շարժողական հմտությունների ձևավորմանը:

Ընդհանուր տեխնիկական պատրաստության միջոցներն են հնարքները, նրանց համապատասխան պաշտպանությունները և հականարքները:

Ենթադրվում է յուրացված տեխնիկական գործողությունների նրկվողմանի կատարում՝ աջ և ձախ կողմերի վրա:

Ըմբիշների ընդհանուր տեխնիկական պատրաստությունը բնութագրվում է 2-3 տարվա ուսումնամարզական աշխատանքների մակարդակով:

Հատուկ տեխնիկական պատրաստությունը մարզական գործունեության տարբեր պայմաններում տեխնիկական գործողությունների կատարման մեջ հմտանալու գործընթացն է՝ համապատասխան յուրաքանչյուրի առանձնահատկությանը:

Այն անմիջականորեն կապված է տակտիկական պատրաստության հետ և ուղղված է մարզական բարձր արդյունքների նվաճմանը:

Ի տարբերություն ընդհանուր տեխնիկական պատրաստության, հատուկ տեխնիկական պատրաստությունը դժվար է պլանավորել:

Հիմնական տեխնիկայի ընտրությունը յուրաքանչյուր մարզիկի համար, նրկարատն ուսումնամարզական աշխատանքի ընթացքում նրբնմն տեղի է ունենում ոչ պլանային ձևով:

Մարզիշները նախապատվություն են տալիս այն հնարքներին, որոնք ավելի հեշտ են կատարվում և համակցվում այլ հնարքների հետ: Որոշակի հնարքների պարբերաբար կիրառումը նպաստում է նախասիրած հնարքների ձևավորմանը: Նախասիրած հնարքի կատարման նղանակը բնորոշ է միայն տվյալ մարզիկին:

Ընտրված տեխնիկայի կիրառման արդյունավետությունը ամբողջովին կախված է հնարքների համակցությունների տիրապետուման ընդունակությունից: Առանձին հնարքների կիրառումը, որպես կանոն արդյունք չի տալիս, հաջողության համեմուտ համար անհրաժեշտ է որոշակի նախապատրաստական աշխատանքներ տանել կամ կիրառել համակցված հնարքներ:

Նախասիրած հնարքների տեխնիկան ննթադրում է հնարքի կատարմանը նպաստող մկանախմբների գարգացման բարձր մակարդակ: Զարգացնելով համապատասխան մկանախմբներ, մարզիշը նպաստում է տեխնիկայի կատարելագործմանը: Միևնույն ժամանակ հնարքների անընդհատ կրկնությունները նպաստում են համապատասխան մկանախմբների նպատակառողպատճեն զարգացմանը: Հենց սրանով էլ պայմանավորված է ֆիզիկական և տեխնիկական պատրաստության փոխադարձ կապը ըմբշամարտում: Հնարքների կատարման բազմաբնույթ շարժումները, պաշտպանական շարժումների մեջ համակարգը առաջ են բնրում բազմաթիվ մկանախմբների լարվածություն և նպաստում են համակրողմանի ֆիզիկական զարգացմանը:

Ըմբիշների տեխնիկական պատրաստությունը հիմնականում կառուցվում է նրանց շարժողական ընդունակությունների և բարոյակամային հատկանիշների հիման վրա: Եթե ըմբի-

Հի շարժողական որևէ ընդունակություն գերազանցում է մյուսներին, ապա հնարքների և համակցությունների անհատական համալիրի ընտրության ժամանակ պետք է նախապատվությունը տալ այն հնարքներին, որոնց կատարումը պահանջում է հենց այդ ընդունակությունների բարձր մակարդակ:

Տեխնիկապես լավ պատրաստված պետք է համարել այն ըմբիշին, որը կարող է վայրկենապես պատասխանել մրցակցի շարժումներին, մինչմայ ճիգերի գործադրումով կատարել արյունավետ գործողություն:

Սպորտային վարպետության բարձրագույն չափանիշ է համարվում բազմակողմանի և արյունավետ տեխնիկական պատրաստությունը: Բազմակողմանիության տակ պետք է հասկանալ կատարելագործված հնարքների քանակը, որոնք միմյանցից տարբերվում են կատարման բնույթով և յուրահատկությամբ:

Հաճախ պատահում են ըմբիշներ, որոնք ուժեղ են միայն որոշակի դրություններում: Օրինակ, ուժեղ են այն ժամանակ, երբ մրցակիցը գոտենմարտում է աջակողմյան կանգնվածքով: Բայց բավական է առաջ դնել ձախ ոտքը և ըմբիշը կորցնում է իր վտանգավորությունը:

Կան ըմբիշներ, որոնք ուժեղ են կանգնած դրությունում, բայց թույլ են ծնկադիր դրությունում՝ կամ հակառակ: Այսպիսի ըմբիշները գոտենմարտը տանուի են տալիս, երբ ընկնում են ծնկադիր դրություն կամ, երբ մրցակիցը չի ընկնում ծնկադիր դրություն:

7.8. ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒԴԻՆԵՐԸ

Յուրաքանչյուր ըմբիշ ձգտում է հարստացնել իր տեխնիկական զինանոցը տեխնիկատակտիկական նոր գործողություն-

ներով և նախկինում յուրացվածների կատարման նոր տարբերակներով:

Դրան նրանց մղում է ըմբշամարտին բնորոշ առանձնահատկություններից մեկը, ինչն արտահայտվում է նրանում, որ ըմբիշները ուսումնասիրում են բոլոր հնարավոր մրցակիցների թույլ և ուժեղ կողմերը և համապատասխան պաշտպանությունները և հականարքներ մշակում: Առանց տեխնիկայի մշտական կատարելագործման ըմբիշների հաջողության հնարավորությունները սաստիկ նվազում են:

Հնարքների, պաշտպանությունների և հականարքների նոր, ավելի արյունավետ տարբերակների յուրացման ժամանակ պետք է հաշվի առնել ֆիզիկական հնարավորությունները, մրցակիցների վարպետության առանձնահատկությունները և այլն:

Ըմբիշի տեխնիկայի կատարելագործումն ընթանում է հենտևյալ ուղղություններով.

ա) սխալների ուղղում և տեխնիկատակտիկական գործողությունների կատարման արյունավետության բարձրացում,

բ) տեխնիկատակտիկական գործողությունների կատարում տարբեր մրցակիցների վրա, տարբեր դինամիկ իրավիճակներից,

գ) նախասիրած հնարքների կատարմանը մասնակցող մկանախմբների զարգացում,

դ) կամային հատկանիշների ամրապնդում (վստահություն, համառություն, համարձակություն և այլն), որոնք վճռող դեր են խաղում հնարքների կատարման ժամանակ,

ե) ըմբիշի տեխնիկայի համապատասխանեցում նրա անհատական առանձնահատկություններին,

զ) համակցությունների մշակում, որոնք ավարտվում են նախասիրած հնարքների կատարմամբ:

ՏԵՂԱԿԱՎԱՀԻ ԿԱՏԱՐԵՆԼԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԻՐԱՎՈՒՄ ԵՆ ՄԻ ՉԱՐՔ ՄՆԹՈՂՆԵՐ և ՄՆԹՈՂԱԼԱՆ ՀՆԱՐՔՆԵՐ:

Կրկնողության մեթոդ: Սրա էությունը կայանում է միևնույն տեխնիկատակտիկան գործողության բազմակի կրկնության մեջ, որը հնարավորություն է տալիս ամրապնդել շարժողական հմտությունը և հասցնել կատարման ավտոմատացման:

Պայմանների փոփոխման մեթոդ: Սա նշանակում է, որ ըմբիշը միևնույն հնարքը կատարում է տարբեր պայմաններում և հրավիճակներում: Այս մեթոդը մեծ նշանակություն ունի տեխնիկայի և տակտիկայի ամրապնդման և հնտագա կատարելագործման գործում:

Պետք է նկատի ունենալ, որ պայմանները սկզբում հեշտացվում են, այնուհետև աստիճանաբար բարդացվում:

Հնարքի կատարման պայմանների փոփոխման հիմնական միջոցներն են՝

ա) պարապմունքի վայրի, կահավորման և գույքի փոփոխությունը.

բ) վարժությունների փոփոխումը.

գ) հատուկ ցուցումով գործող մրցակիցը.

դ) հնարքների կատարումը տարբեր նվազա դրություններից.

ե) հնարքների կատարումը տարբեր ֆունկցիոնալ և հոգեկան վիճակներում:

Պարապմունքի վայրի, կահավորման և գույքի փոփոխություն: Պարապմունքները կարող են կազմակերպվել տարբեր չափսի և չորության գորգների վրա: Եթե անհրաժեշտ է բարդացնել հնարքի կատարման պայմանները, մարզումները կազմակերպվում են փափոկ գորգների վրա: Կիրառվում են վարժություններ ծանրացված գնդակներով, մարզական մանևրներով և այլն:

Ըմբիշի գործողությունները հաճախ սահմանափակվում են գորգի չափսերով: Գորգի աշխատանքականությունը կախված է հաճախականությունից:

Մանաների մոտ պայքարի տակտիկայի մշակման համար հարկադիր է մարզումը կազմակերպել փոքր չափսի գորգների վրա:

Մարզման պայմանների փոփոխման նպատակով կարելի է մարզումները կազմակերպել դրսում՝ մարզասերների ներկայությամբ:

Մարզման պայմանների փոփոխումը շատ բանով պայմանափոփոխ է մարզչի հնարամտությունից:

Վարժությունների փոփոխություն: Մրցակցի հնտ կատարվող վարժությունները, նմանողական վարժությունները, ուսումնական ուսումնամարզական և մարզական գոտնմարտները համարվում են պայմանների փոփոխման յուրահատուկ միջոցներ: Ըմբշամարտի յուրահատկություններից մեկն էլ կայանում է նրանում, որ ըմբիշը գործում է անընդհատ փոփոխվող պայմաններում: Տարբեր բռնվածքները, ելման դրությունները, մրցակցի գործողությունները նպաստում են ըմբշամարտում կիրառվող հնարքների կամ վարժությունների փոփոխմանը:

Հատուկ ցուցումով գործող մրցակից: Հատուկ ցուցումով մրցակիցը համարվում է անփոխարինելի «մարզասարք»: Մրցակցի առջև դրվում են հնարքների, պաշտպանությունների և հականարքների կիրառման վերաբերյալ տարբեր խնդիրներ:

Հնարքների կատարումը տարբեր ելման դրություններից: Ըմբշամարտում միևնույն հնարքը շատ հաճախ կատարվում է տարբեր ելման դրություններից և տարածություններից: Դա պայմանավորված է ինչպես մրցակցի առանձնահատկություններով, այնպես էլ անընդհատ փոփոխվող իրավիճակներով:

Հնարքների կատարումը տարբեր ֆունկցիոնալ և հոգեկան վիճակներում: Ըմբիշը հնարքները կատարում է թարմ ուժնորով կամ հոգնած վիճակում: Հնարքների կատարումը տարբեր հոգեկան իրավիճակներում ևս կիրառվում է ըմբիշների պատրաստության գործընթացում: Այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են վճռականությունը, համառությունը, համարձակությունը ի հայտ

Են գալիս տեխնիկատակտիկական գործողությունների կատարման ժամանակ: Գործնականում հաճախ անհրաժեշտություն է առաջանում մարզիկին օգնել վախի կամ հոգնբանական այլ արգելքների հաղթահարման գործում:

Մասնատում: Այս մեթոդը կիրավում է տեխնիկայի հետագա կատարելագործման նպատակով: Սրա էլույթունը կայանում է նրանում, որ ըմբիշը մասնատում է հնարքի տարրը կամ փուլը և այն կատարում է առանձնացված: Սա իրազրծվում է նաև և առաջ այն տարրերի մշակման համար, որոնք չեն ստացվում: Այդ նպատակով կիրավում են զանազան մեջողական հնարքներ:

Վերլուծություն: Մարզիչը անցկացնում է տեսական և գործնական վերլուծություն՝ օրինակներ բնընլով մրցումներից և մարզումներից, ցուցադրելով պլակատներ և տեսաժապավեններ:

Շեշտադրված ուշադրություն: Մարզիչը մարզվողների ուշադրությունը կենտրոնացնում է հնարքի առանձին տարրերի կատարման կամ գոտեմարտի առանձին դրվագների վրա:

Այս մեթոդական հնարքը կիրավում է այն դեպքում, եթե ամբողջ հնարքի դժվար է անշատել մշակվող տարրը:

Գոտեմարտի դրվագներ: Մարզիչը կազմակերպում է գոտեմարտի այն դրվագների վերլուծությունը, որտեղ ըմբիշը զիջել է մրցակցին: Սա հնարավորություն է տալիս մշակել տեխնիկատակտիկական գործողությունների համալիրներ:

Տարրերակում: Մարզիչն այնպես է առում, որ մարզվողն ինքը որոշի գոտեմարտի բարենպաստ պայմանները և համապատասխան միջոցներ ձեռնարկի: Ակգրում հատուկ ցուցումով գործող մրցակիցը պարբերաբար ստեղծում է որոշակի իրավիճակ, որին պետք է արձագանքի մարզվողը: Այնուհետև, մրցակիցը ստեղծում է մշակվող հնարքի բարենպաստ պայման-

ներին մոտ իրավիճակներ, իսկ մարզվողն ընտրում է դրանցից ամենաբարենպաստը և իրազրծում է մշակվող հնարքը:

Ամրագրում: Մարզիչը որորշակի ազդանշանով գոտեմարտը կանգնեցնում է այն պահին, որն անհրաժեշտ է մշակել:

Զափազանցում: Մարզիչը միտումնավոր գործողությունը կատարում է սխալով և ցույց է տալիս, թե դա ինչի կարող է հանգեցնել:

Լրացուցիչ կողմնորոշիչ: Կիրավում են լրացուցիչ տեսադրական, լսողական և մաշկային գրգիշներ, որոնք մարզվողին օգնում են ճիշտ կատարել հնարքի առանձին մասերը, համապատասխանեցնել իր գործողությունները մրցակցի գործողությունների հետ:

7.9. ԸՄԲԻԾԻ ԲԱՐՈՅԱԿԱՄԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐԸ

Ըմբշամարտի պարապմունքները մեծապես նպաստում են զանազան հոգնեկան հատկանիշների դաստիարակմանը և ամրապնդմանը: Հենց սա էլ համարվում է ըմբշամարտում մարզման և դաստիարակման գործընթացների անքակտնի կապի հիմքը:

Մարզաձևի նկատմամբ մեծ հնտարրության, ըմբիշների նպատակավացության, ընկերասիրության, հայրենասիրության մթնոլորտում ձևավորված պայմանները ենթադրում են մանկավարժական գործոնների բարենպաստ ազդեցություն անձի ձևավորման վրա:

Մարզման ժամանակ լուծվող յուրաքանչյուր խնդիր ուղղված է մրցակցական գործունեության ժամանակ դժվարությունների հաղթահարմանը: Նման պատրաստությունը հիմնականում իրականացվում է համանման դժվարությունների հաղթահարման ճանապարհով, որոնք միտումնավոր ձևով ստեղծվում են մարզման պայմաններում: Այդ պայմանները

կոչված են ըմբիշների մոտ զարգացնելու նպատակաս-լացություն, մարզական տարրեր խնդիրներ իրականացնելու կարողություն, նոր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ընդունակություն և այլն:

Ըմբիշների բարոյակամային պատրաստվածությունը ձևավորվում է մարզումների և մրցումների ընթացքում: Սակայն ըմբիշների պատրաստության բոլոր կողմերը (ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական) զարգանում են յուրաքանչյուրին բնորոշ հոգեկան առանձնահատկությունների ազդեցությամբ:

Բարոյակամային հատկանիշների դաստիարակումը ավելի արդյունավետ է տեղի ունենում լավ կողեկտիվի և ավանդույթների պայմաններում:

Նպատակալացությունը. Արտահայտվում է մոտակա և հեռանկարային խնդիրները որոշելու և նրանց լուծման համար անհրաժեշտ մեթոդներ և միջոցներ ընտրելու կարողությամբ: Զերծ բնրված արդյունքների ճիշտ զնահատումը մեծ նշանակություն ունի ծրագրված պլանների կատարման համար և նպաստում է նպատակալացության հետագա դրսորմանը:

Համառությունը և հաստատակամությունը. Սրանք արտահայտվում են առաջադրված նպատակին հասնելու ձգտման, դժվարությունների հաղթահարման կարողության մեջ:

Համառության և հաստատակամության առկայությունը մարզփոնների մոտ բացահայտվում է ձեռք բնրված հաջորդությունների պահպանման և կորցրած վնրանվաճման ժամանակ:

Ըմբշամարտի պրակտիկայում այս հատկանիշները արտահայտվում են տեխնիկատակատիկական կոնկրետ գործողությունների ժամանակ:

Ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը. Արտահայտվում են գործնական խնդիրների լուծման ստեղծագործական մոտենացման ժամանակ:

Ինքնուրույն գործող և նախաձեռնությունն իր ձեռքը վերցնող ըմբիշը օգտագործում է ամենափոքր հնարավորությունը, որ իր առջև դրված խնդիրը ժամանակին իրագործի և կատարի ինչ-որ նոր քան:

Այս հատկանիշները թույլ են տալիս քննադատաբար մոտենալ սնվական անձին և ուշադիր լինել մյուս մարզիկների դատողությունների, գործողությունների նկատմամբ: Այդ անձը ընդունակ է նկատել և վիրացնել սնվական թերությունները:

Վճռականությունը և համարձակությունը. Սրանք բացահայտում են մարզիկի ակտիվությունը և առանց նրկմտելու գործելու կարողությունը: Այս հատկանիշները հնարավորություն են տալիս ժամանակին և մտածված որոշումներ ընդունել: Սպորտային ըմբշամարտում վճռականության և համարձակության դրսորման համար հիմք են հանդիսանում տեխնիկայի և տակտիկայի կատարելագործմանն ուղղված ուսումնամարզական աշխատանքները: Առանձին դեպքներում տեխնիկակատակտիկական գործողությունների կիրառման ժամանակ վճռականության և համարձակության դրսորումը կապված է մտածված դիսկի հետ:

Տոկունությունը և ինքնատիրապետումը. Սրանք արտահայտվում են փոփոխվող իրավիճակներին հանգիստ արձագանքելու, հատակ մտածելու, կրիտիկական իրավիճակներում զգացմունքներին և գործողություններին տիրապետելու, վախը, նյարդային գրգռվածությունը, շփոթմունքը հաղթահարելու կարողության մեջ:

Քարոյակամային պատրաստության օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները

Քարոյակամային պատրաստությունը իրականացվում է սպորտային գործունեության ընթացքում առաջացող դժվարությունների հայթահարման միջոցով: Դժվարությունները բաժանվում են երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ դժվարությունների խմբին են դասվում:

1. մրցման ժամանակ հանկարծակի և անսպասնի ծագած դժվարությունները (օրինակ, երբ մրցակիցը կիրառում է ըմբիշին անհայտ հնարք: Նման դեպքերում ըմբիշի կամային ճիգերը բնութագրվում են կողմնորոշման և գործողությունների համապատասխան վերակառուցման արագությամբ),

2. անբարենպաստ պայմաններում գոտենմարտելու անհրաժեշտությունը (ժամանակից շուտ կամ ուշացած հրավերը գորգ, մրցակիցի ուշացումը, մրցավարական սխալները և այլն),

3. հնարքի արագ կատարման դժվարությունները,

4. մկանային մաքսիմալ ճիգեր դրսուրելու անհրաժեշտությունը,

5. ճիշտ պահին ուժային և արագային ճիգերը մորիլիքացնելու անհրաժեշտությունը,

6. ցավի և վնասվածքի առկայության դեպքում գոտենմարտը շարունակելու անհրաժեշտությունը,

7. գործողության անսովոր պայմանները և այլն:

Սուբյեկտիվ դժվարությունների խմբին են դասվում:

1. վախի և անվտահության հայթահարումը, որն առաջնում է անհաջողությունից (օրինակ, ըմբիշը պարտություն է կրել ուժեղ մրցակիցի և խուսափում է նրա հետ հանդիպումից),

2. մարզիկի վերաբերմունքը հանդիսատեսի ռեսակցիային,

3. գորգ դուրս գալիս շփոթվածությունը:

Այս դժվարությունները հնարավոր է հաղթահարել միայն համապատասխան ֆիզիկական, տեխնիկական և տակտիկական պատրաստության հիման վրա: «Նարքի կատարման ժամանակ ոչ մի ըմբիշ չի կարող կամային հատկանիշներ դրսուրել, եթե նա չունի ֆիզիկական պաշտամ պատրաստություն, չի տիրապետում տեխնիկային և չունի բավարար տակտիկական պատրաստություն: Ֆիզիկական, տեխնիկական և տակտիկական պատրաստության թերությունների առկայության պայմաններում ըմբիշը չի կարող հաղթահարել գոտենմարտի ժամանակ ծագող դժվարությունները և չի կարող անհրաժեշտ չափով դրսուրել կամային հատկանիշները: Այսպես, միավոր վաստակելու համար ըմբիշը պետք է տիրապետի մի շարք հարձակութական հնարքների: Որքան մեծ է ըմբիշի տեխնիկական գինանոցը, այնքան ավելի մեծ է միավոր վաստակելու հնարավորությունը:

Կամքը դաստիարակվում և ամրապնդվում է դժվարությունները հաղթահարելու միջոցով: Ա.Ա.Մակարենկոն նշում է, որ անհնար է քաջությունը դաստիարակել, եթե անհատին չնս դնում այնպիսի պայմանների մեջ, որտեղ նա կարողանա դրսուրել քաջություն:

Կամքի դաստիարակման հիմնական միջոցը կամային ճիգեր պահանջող վարժությունների սխատեմատիկ կատարումն է, որոնք յուրահատուկ են տվյալ մարզաձևին:

Որպեսզի մարզիկը սովորի հաղթահարել մարզաձևին բնորոշ դժվարությունները, հարկավոր է մարզման գործընթացում ընդգրկել այնպիսի վարժություններ, որոնք պահանջում են հատուկ կամային հատկանիշներ: Նման վարժությունների խմբին են դասվում:

1. Վարժություններ, որոնք ուղղված են սահմանային ցուցանիշների ձեռք բերմանը և պահանջում են բավականաչափ մկանային ճիգեր, կատարման սահմանային արագություն:

2. Վարժություններ, որոնք ուղղված են հոգնածության հաղթահարմանը: Խորհուրդ է տրվում առանձին պարապմունքներ կամ գոտնմարտեր անցկացնել երկարացված ժամանակով:

3. Վարժություններ, որոնք ուղղված են հաղթահարելու այն հոգական վիճակները, որոնք բացասաբար են անդրադառնում մարզիկի աշխատունակության վրա (որսկի հետ կապված վարժություններ, ուժեղ մրցակցի հետ գոտնմարտեր):

4. Վարժություններ, որոնց կատարման ժամանակ պահանջվում է հաղթահարել անսպասելի ծագող կամ անսովոր դժվարություններ (բացօթյա մարզումները, արհեստականորեն դժվարացված պայմանները և այլն):

7.10. ՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Տեսական պատրաստությունն ուղղված է մարզական գործունեությամբ անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերմանը:

Տեսական պատրաստության նպատակը ընթիշների կրթական մակարդակի բարձրացումն է (սպորտի տեսության և մշտադիմության, սպորտի պատմության, ֆիզիոլոգիայի, հոգեբանության, հիգիենայի և այլնի բնագավառից):

Ընթիշների տեսական պատրաստվածության բարձրացումը մարզիչներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ և արդյունավետությամբ բացահայտել և իրականացնել մարզման նպատակն ու խնդիրները:

Տեսական պատրաստությունը իրենից ներկայացնում է սպորտային մարզման հետ առնչվող գիտելիքների, մտավոր կարողությունների և հմտությունների մի համակարգ, որը նպաստում է մարզական գործունեության ընթացքում ճանաչողական ընդունակությունների զարգացմանը և մարզական արդյունքների բարելավմանը:

Տեսական պատրաստությունն ընթանում է նրկու ուղղություններով՝ ընդհանուր և հատուկ:

Հնդիանուր տեսական պատրաստությունն ուղղված է ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմանը և օժանդակ գիտություններից (կենսաբիմիա, ֆիզիոլոգիա, հոգեբանություն, սպորտային բժշկություն և այլն) գիտելիքների ձեռք բերմանը:

Հատուկ տեսական պատրաստությունը նմանադրում է մասնագիտական գիտելիքների ձեռք բերում և խորացում:

Տեսական պատրաստությունն իրագործվում է դասախությունների, բանավաների, քննարկումների, վերլուծությունների միջոցով:

Մարզական գործունեությունում տեսական պատրաստությունը սնրառուեն կապված է պատրաստության մյուս կողմերի (տեխնիկական, տակտիկական, ֆիզիկական և հոգեբանական) հետ: Այն անցկացվում է շուրջտարյա մարզման բոլոր շրջաններում և փուլերում:

Տեսական պատրաստության նշանակությունը և տեսակարար կշիռը շուրջտարյա մարզման տարբեր փուլերում տարբեր է: Օրինակ, սկսնակների մոտ, այն ըստ նշանակության գտնվում է վերջին տեղում և հիմնականում ուղղված է հիգիենայի մասին գիտելիքների ձեռք բերմանը: Իսկ ահա բարձրակարգ մարզիկների մոտ այն ունի առաջնակարգ նշանակություն: Նրանք պետք է քաջատեղյակ լինեն մարզման մեջողական առանձնահատկություններին, բնոնվածության ազդեցությամբ օրգանիզմում տեղի ունեցող տեղաշարժներին, վերականգնման պրոցեսներին և այլն:

7.11. ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՄԱՆ ՊԱՐՔԵՐԱՅՈՒՄԸ

Ինչպես մյուս մարզաձևերում, այնպես էլ ըմբշամարտում ընդունված է մարզական տարին բաժանել երեք մարզա-

Մարզման երկգագաթ ցիկլ

Մարզա-շրջաններ	Ամիսները											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Նախապատռաստական	X	X	X				X	X				
Մրցակցական				X	X	X			X	X	X	
Անցման												X

Մարզման եռագագաթ ցիկլ

Մարզա-շրջաններ	Ամիսները											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Նախապատռաստական	X	X			X	X			X			
Մրցակցական			X	X			X	X		X	X	
Անցման												X

Ընդհանուր պատրաստության փուլում լուծվում են հետևյալ խնդիրները՝

1. օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացում.

2. ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության բարձրացում և անհրաժեշտ շարժողական ընդունակությունների մշակում.

3. նոր հնարքների, հակահնարքների, պաշտպանությունների և նախկինում յուրացվածների նոր տարբերակների յուրացնում:

Ընդհանուր պատրաստության խնդիրների կատարման միջոց են այն վարժությունների լայն համալիրները, որոնք

շրջանների՝ նախապատրաստական, մրցակցական և անցման: Մարզման նման պարբերացումը անմիջականորեն կապված է մրցումների օրացուցային պլանի հետ, որտեղ պատրաստվածության ամենաբարձր մակարդակը պնտը է՝ ձնոր բնրվի մրցակցական շրջանում, իսկ մարզավիճակի գագաթնակետը՝ պատրաստանատու մրցումների ժամանակ: Մարզաշրջանների ժամկետները որոշվում են ոչ թե ինչ որ ձևական թվով, այլ՝ այն ժամանակով, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր շրջանում մարզման խնդիրները լուծելու համար:

Հստ Ա.Զ.Կատուիխինի և Ն.Ս.Գալկովսկու մարզաշրջանները ունեն հետևյալ ժամկետները՝

1. նախապատրաստական՝ 80 օր.
2. մրցակցական՝ 8 ամիս.
3. անցման՝ 25-30 օր:

Հստ Ա.Պ.Կուպցովի մարզաշրջաններն ունեն հետևյալ ժամկետները՝

1. նախապատրաստական՝ 3-4 ամիս.
2. մրցակցական՝ 7-8 ամիս.
3. անցման՝ 1-1.5 ամիս:

Ա.Վ.Մեդվեդյան և Ե.Ի.Կոչուրկոն իրենց երկգագաթ (աղյուսակ 2) և եռագագաթ (աղյուսակ 3) ցիկլերում մարզաշրջանները բաժանում են հետևյալ կերպ՝

1. նախապատրաստական՝ 5 ամիս.
2. մրցակցական՝ 6 ամիս.
3. անցման՝ 1 ամիս:

Նախապատրաստական շրջան

Նախապատրաստական շրջանը բաժանվում է 2 փուլի՝ ընդհանուր և հատուկ պատրաստության փուլ: Նախապատրաստական շրջանի նպատակն է ամուր հիմք ստեղծել մրցակցական շրջանում մարզիկի հաջող գործունության համար:

շարժման բնույթով տարբերվում են մրցակցական վարժություններից: Ընդհանուր պատրաստության փուլի տևողությունը 40-50 օր է:

Մարզիչը ծավալի և լարվածության մեծությունների փոփոխման ճանապարհով կարող է դանդաղեցնել կամ արագացնել մարզավիճակի ձեռք բերումը: Մեծ լարվածությամբ կատարվող վարժությունները խորը փոփոխություններ են առաջ բերում օրգանիզմում և դրանով կրծատում են մարզավիճակի ձեռք բերման ժամանակը: Առանց բավականաչափ հիմքի ձեռք բերված մարզավիճակը կայուն չէ, և դժվար է վերականգնելու:

Հատուկ պատրաստության փուլում լուծվում են հետևյալ խնդիրները՝

1. տեխնիկատակտիկական գործողությունների հետագա կատարելագործում.

2. բարոյակամային հատկանիշների դաստիարակում.

3. հատուկ ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացում.

4. տեսական գիտնիքների ընդլայնում:

Այս փուլում բնոնվածությունը մեծանում է լարվածության բարձրացման հաշվին: Այս շրջանի տևողությունը մոտավորապես 1 ամիս է:

Նախապատրաստական շրջանի մարզման շաբաթական ցիկլի օրինակներ տարրերակ

Երկուշաբթի: ուսումնամարզական պարապմունք ըմբշամարտից: Ուղղվածությունը տեխնիկայի և տակտիկայի ուսուցմանը և կատարելագործմանը, արագաշարժության և ճարպկության մշակում:

Բնոնվածությունը՝ միջին:

Երեքշաբթի:

Չորեքշաբթի:

Վինգշաբթի:

Ուրբայթ:

Շաբայթ:

Կիրակի:

ֆիզիկական պատրաստություն:

Բնոնվածությունը՝ փոքր:

ուսումնամարզական պարապմունք ըմբշամարտից: Ուղղվածությունը տեխնիկայի և տակտիկայի ուսուցում և կատարելագործում, ուժի և արագության մշակում: Բնոնվածությունը՝ միջին:

ֆիզիկական պատրաստություն: Բնոնվածությունը՝ փոքր:

ուսումնամարզական պարապմունք ըմբշամարտից: Ուղղվածությունը տեխնիկայի և տակտիկայի ուսուցում և կատարելագործում, ուժի և դիմացկունության մշակում: Բնոնվածությունը՝ մեծ:

սաունա, մերսում: Բնոնվածությունը՝ փոքր:

ակտիվ հաճգիստ:

Մարզման մրցակցական (հիմնական) շրջան

Սա մրցումների պատրաստության և մասնակցության շրջանն է: Այն բնութագրվում է մարզական բարձր արդյունքներ նվաճելու մարզիկների պատրաստվածությամբ:

Մրցակցական շրջանի հիմնական խնդիրներն են հանդիսանում մարզվածության ձեռք բերումը, տեխնիկայի և տակտիկայի նոր տարրերակների յուրացումը և կատարելագործումը, մրցումների մասնակցության, գոտնմարտի վարման տակտիկայի կատարելագործումը, շարժողական ընդունակությունների, բարոյակամային հատկանիշների կատարելագործումը և այլն:

Մրցակցական շրջանը իր կառուցվածքով իրենից ննրկայացնում է բնոնվածության պարբերական վերնլրներ և վայրէջքներ:

Բնոնվածության վերնլրների և վայրէջքների քանակը պնտք է համապատասխանի մրցումների քանակին:

Մարզման մրցակցական շրջանը բաժանվում է հետևյալ փուլերի՝ մրցումների նախնական պատրաստության, անմիջական պատրաստության, մրցումների մասնակցության և հետմրցակցական:

Նախնական պատրաստության փուլ: Այս փուլը պլանավորվում է այն դեպքում, եթե մինչև մրցումները կա ավել ժամանակ, քան հարկավոր է անմիջական պատրաստության համար:

Նախնական պատրաստության փուլի խնդիրներն են՝

1. մարզիկների ընդհանուր և հատուկ աշխատունակության պահպանումը՝ որպես հիմք լավագույն մարզավիճակի պահպանման համար.

2. շարժողական ընդունակությունների կատարելագործումը.

3. բարոյակամային հատկանիշների բարելավումը.

4. տեխնիկատակտիկական գործողությունների կատարելագործումը և նրանց նոր տարրերակների մշակումը.

5. տեխնիկատակտիկական թերությունների շտկումը և այլն:

Այս փուլում մարզման հիմնական միջոցներն են՝

1. ընդհանուր զարգացնող վարժությունները.

2. այլ մարզաձևերի օժանդակող վարժությունները (սպորտային խաղներ, լող, թիավարություն, դահուկավագք և այլն).

3. ուսումնամարզական և մարզական գոտեմարտերը:

Վարժությունների լարվածությունը պնտք է լինի միջին, իսկ ծավալը՝ միջինից քարձը:

Աշխատանքի հիմնական ձևը համարվում են ուսումնամարզական պարապմունքները:

Մրցումների նախնական պատրաստության փուլի շարաթական ցիկլի օրինակների տարբերակ

Երկուշաբթի. ուսումնամարզական պարապմունք ըմբշամարտից: Ուղղվածությունը. տեխնիկայի և տակտիկայի ուսուցում և կատարելագործում, արագության և ճարպկության զարգացում: Բնոնվածությունը՝ միջին:

Երեսքաբթի. ուսումնամարզական պարապմունք ըմբշամարտից: Ուղղվածությունը. տեխնիկայի և տակտիկայի ուսուցում և կատարելագործում, արագության և ուժի զարգացում: Բնոնվածությունը՝ միջին:

Փիզիկական պատրաստություն:

Բնոնվածությունը՝ փոքր: նույնը ինչ որ երկուշաբթի: Բնոնվածությունը՝ միջին:

մարզական պարապմունք ըմբշամարտից: Ուղղվածությունը. տեխնիկական և տակտիկական վարպետության կատարելագործում, ուժի և դիմացկունության զարգացում:

Բնոնվածությունը՝ մեծ: սառնա, մերսում: Բնոնվածությունը՝ փոքր: ակտիվ հանգիստ:

Մրցումների պատրաստության անմիջական փոլ: Այս փոլն ուղղված է առաջիկա մրցմանը ըմբիշների հաջող մասնակցությունն ապահովելուն:

Նրա տևողությունը կախված է ըմբիշների անհատական առանձնահատկություններից, մրցումների մասշտաբից և անցկացման պայմաններից (մասնակիցների քանակը և որակը), ըմբիշի կամ թիմի առջև դրված խնդիրներից:

Միջին հաշվով մրցումների անմիջական պատրաստությունը կարող է տևել 20-30 օր:

Այս փոլի հիմնական խնդիրներն են՝

1. հատուկ աշխատունակության բարձր մակարդակի ձեռքբերումը.

2. գոտենմարտի վարման վարպետության կատարելագործումը՝ հաշվի առնելով կոնկրետ մրցակիցներին.

3. նախասիրած տեխնիկայի և տակտիկայի ամրապնդումը և հետագա կատարելագործումը.

4. շարժողական ընդունակությունների կատարելագործումը.

5. բարոյակամային հատկանիշների կատարելագործումը:

Այս խնդիրների լուծման ժամանակ պետք է հաշվի առնել հիմնական մրցակիցների պատրաստության աստիճանը, մրցման պայմանները, քաշի կարգավորումը, առաջիկա մրցման և մրցակիցների առանձնահատկությունների ուսումնասիրումը և այլն:

Անմիջական պատրաստության հիմնական միջոցներն են համարվում մարզական գոտենմարտերը և մրցակցի հետ կատարվող հատուկ վարժությունները:

Մարզման հիմնական ձևը մարզական պարապմունքներն են:

Այս փոլում ըմբիշը մեծ ուշադրություն դարձնելով նախասիրած տեխնիկային և տակտիկային, որոշակի ժամանակ էլ

հատկացնում է նախօրոք յուրացվածների կիրառման նոր տարրերակների մշակմանը: Այդ նպատակով մարզական պարապմունքների հետ մեկտեղ՝ շաբաթական մեկ կամ երկու անգամ անցկացվում են ուսումնամարզական պարապմունքներ:

Մրցումներին լիարժեք պատրաստվելու նպատակով անհրաժեշտ է անընդհատ մարզվել, պլանավորել քննվածությունը, ընտրել համապատասխան միջոցներ և մնթողներ՝ նպատակ հետապնդելով, որ պատրաստության պայմանները մոտ լինեն մրցակցականին:

Մրցումների մոտենալուն գուգընթաց մեծ նշանակություն է, ձեռք բերում ըմբիշների նկատմամբ անհատական մոտեցումը: Բնունվածության բնույթը և մեծությունը (ծավալը և լարվածությունը) որոշելիս պետք է հաշվի առնել յուրաքանչյուր ըմբիշի ֆիզիկական և կամային առանձնահատկությունները, տեխնիկական և տակտիկական պատրաստվածությունը, տվյալ պահին օրգանիզմի վիճակը:

Աշխատանքի ծավալը և լարվածությունը փոլի սկզբում բնականաբար պետք է բարձրանան: Վերջին 12-15 օրերին աշխատանքի ծավալը իշնում է, իսկ լարվածությունը կամ մնում է նոյն մակարդակին կամ շարունակում է աճել:

Բնունվածության աստիճանական աճը ապահովում է նաև և առաջ հատուկ վարժությունների կատարման և մարզական գոտենմարտերի ժամանակի ավելացման հաշվին:

Հատուկ վարժությունների և գոտենմարտերի ժամանակի մեծացմանը գուգընթաց հարկավոր է մեծացնել նաև նրանց կատարման լարվածությունը և կրծատել հանգստի ժամանակը:

Հատուկ պատրաստության փոլում մեծ նշանակություն են ձեռք բերում ինքնահսկումը և քժկամանկավարժական հսկողությունը: Ըմբիշի, մարզչի և քժկի համագործակցությունը հնարավորություն է տալիս ընտրել ճիշտ քննվածություն և խուսափել գնրլարվածությունից և գերմարզվածությունից:

Եթե մանկավարժական դիտումների, ինքնահսկման և բժշկական հսկողության արդյունքները ցույց են տալիս բնոնվածության թուլացման անհրաժեշտությունը, ապա մարզումները պետք է փոխարինվեն ակտիվ հանգստով կամ մեծ և մարսում բնոնվածությամբ մարզումները՝ միջին կամ փոքր բնոնվածությամբ մարզումներով:

Հատուկ պատրաստության փուլում պետք է խստորեն պահպանել ռեժիմը և հոգ տանել մարզիկի օրգանիզմի վնրականգնման համար: Օրգանիզմի արագ և լիարժեք վնրականգնումը ապահովում են սառնան, մերսումը, դեղորայքային միջոցները և վիտամախնները:

Մրցումներից 12-15 օր առաջ սկսվում են ստուգողական գոտնմարտները: Նրանց բանակը կախված է մրցման բնույթից և պայմաններից:

Այդ գոտնմարտներից հետո պետք է վերլուծել դրանք, որպեսզի որոշվեն այն սխալները, որոնք պետք է շտկել: Ստուգողական գոտնմարտներից 1-2 օր առաջ և հետո ալլանավորում են փոքր բնոնվածությամբ մարզումներ:

Ստուգողական գոտնմարտներին հաջորդող օրերին մարզական գոտնմարտները անցկացվում են ըստ մրցականուններով նախատեսված կանոնակարգի: Սա հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ զգալ ժամանակը, տակտիկապես ճիշտ բաշխել ուժերը:

Մրցումներից 2-3 օր առաջ մարզման բնոնվածությունը չպետք է լինի միջինից բարձր: Բնոնվածությունը առավել ճշգրիտ որոշվում է հաշվի առնելով մարզիկի անհատական առանձնահատկությունները և ինքնազգացողությունը:

Մրցումներից առաջ ըմբիշը պետք է շատ ժամանակ անցկացնի մարուր օդում: Ծառ օգտակար են անտառում և այգում կատարվող զրոսանքները, սպորտային խաղերը:

Քաշը պակասնցնող ըմբիշներին խորհուրդ է տրվում վերջին 2-3 մարզումներն անցկացնել այնպիսի քաշով, ինչը մոտ է այն քաշային կարգին, որում նրանք պատրաստվում են մասնակցել:

Մրցումների մասնակցության փուլ: Այս փուլում տնիկ է ունենում ըմբիշի վարպետության հետագա կատարելագործումը: Այս փուլի առաջնային խնդիրն է հանդիսանում հաջող մասնակցությունը և մարզական բարձր արդյունքների ցուցադրումը:

Ըմբիշի հաջող նլույթները շատ բանով պայմանավորված են նրա ճիշտ վարքով: Մրցման ժամանակ հարկավոր է ուժերը խնայողաբար ծախսել, խուսափել ավելացրդ հուզմունքից, օգտագործել ուժերի վնրականգնման յուրաքանչյուր հնարավորություն:

Օրվա ռնմիմը չպետք է կտրուկ տարբերի սովորականից: Լավ ինքնազգացողության համար մեծ նշանակություն ունի նրեկոյան զրոսանքը և հանգիստ քունը (8-10 ժամ): Զրոսանքը հանգստացնում է նյարդները և նպաստում հանգիստ քննլուն:

Հետո մրցակցական փուլ: Մրցումների մասնակցությունը ուղեկցվում է ֆիզիկական և հոգեկան ուժերի մեծ ծախսներով: Այդ պատճառով, ուժերի վնրականգնման և մարզավիճակի պահպանման համար, մրցումներից հետո պլանավորում են ակտիվ հանգիստ (2-7 օր): Ակտիվ հանգստի տևողությունը պայմանավորված է մրցման ժամանակ ըմբիշի կրծք բնոնվածությամբ և նրա ինքնազգացողությամբ: Մրցումների ավարտից հետո խորհուրդ է տրվում կազմակերպել սառնա և մերսում: Հաջորդ օրերին ցանկալի է անցկացնել բացօթյա մարզումներ օժանդակ մարզաձեներից (թիավարություն, լող, սպորտային խաղեր, դահուկավազք և այլն):

Ակտիվ հանգստի փուլում խորհուրդ է տրվում ամփոփել մրցման արդյունքները:

Անցման շրջան

Սա մարզման շուրջտարյա գիլի անբաժան մասն է: Շուրջտարյա գիլում այս շրջանը հաջորդում է մրցակցական շրջանին: Անցման շրջանի տևողությունը (25-30 օր) կախված է ըմբիշի անհատական առանձնահատկություններից: Նախընտրելի է այս շրջանը համատեղել արձակուրդների հետ: Բնոնվածությունը այս շրջանում շատ ցածր է: Այն իրականացվում է առավտոյան մարզումների, սպորտային խաղերի, որսորդության, արշավների միջոցով: Կարելի է կազմակերպել վերականգնողական հավաքներ:

Եթե ըմբիշն ունի վնասվածքներ, ապա պետք է բուժել դրանք: Առանձին դեպքերում բժիշկի և մարզչի խորհրդով կազմակերպվում է հանգիստ: Անցման շրջանի ճիշտ պլանավորումը, նախադրյալներ է ստեղծում օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավությունների բարելավման և ըմբիշի հատուկ պատրաստության աճի համար:

ԳԼՈՒԽ 8

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Պարապմունքները անցկացվում են ըմբշամարտի խմբակներում:

Ըմբիշների պատրաստման գործընթացում տարբերում են դասային՝ մարզչի գլխավորությամբ անցկացվող և ինքնուրույն՝ մարզչի հանձնարարությամբ կամ մարզվողների նախաձեռնությամբ անցկացվող պարապմունքներ:

Դասային պարապմունքները լինում են տեսական և գործնական:

Պարապմունքի տարբեր ձևերը նպաստում են նոր նյութի արագ յուրացմանը և հետազա պարապմունքներում ամրապնդմանը: Պրակտիկայում կիրառություն են ստացել այն պարապմունքները, որտեղ յուրացնում, կատարելագործում և ստուգում են անցած նյութը:

8.1. ՏԵՍԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Տեսական պարապմունքները անցկացվում են մարզչի գլխավորությամբ: Տեսական պարապմունքների ժամանակ ըմբիշները ձևում են բերում գիտելիքներ ըմբշամարտի զարգացման պատմության, դասակարգման, մրցականունների, ուսուցման և մարզման մեթոդիկայի, տակտիկայի վերաբերյալ և այլն: Ըմբշամարտի տեսության հետ մեկտեղ ձևում են բերվում գիտելիքներ ֆիզիոլոգիայից, անատոմիայից, հոգեբանությունից, մանկավարժությունից և հիգիենայից: Տեսական պարապմունքները անց են կացվում դասախոսությունների, գրույցների, քննարկումների և այլ ձևերով: Այս պարապմունքները կարելի է կազմակերպել

նաև գործնական պարապմունքի սկզբին՝ 10-20 րոպե տևողությամբ:

Տեսական պարապմունքների յուրօրինակ ձև է հանդիսանում ապագա մրցակիցների մարզական վարպետության վերլուծությունը, մարզումների և մրցումների դիտումների ամփոփումը և վերլուծությունը:

Մրցակիցների մարզական վարպետության վերլուծությունը: Պատասխանատու մրցումներից առաջ մարզիչը պետք է կազմակերպի պարապմունքներ, որտեղ կուտումնասիրվեն մրցակիցների մարզական վարպետության մակարդակը և առանձնահատկությունները: Այստեղ պետք է հաշվի առնել մարզական վարպետության բոլոր կողմերը, անզամ հասակը և տարիքը: Պետք է որոշնել նրանց ֆիզիկական, տեխնիկական և հոգեբանական պատրաստության թույլ և ուժեղ կողմերը: Այնուհետև մարզիչը ըմբիշների հետ միասին մշակում է գոտումարտի տակտիկական պլանը: Այսպիսի մարզումները ավելի արդյունավետ և հետաքրքիր դարձնելու նպատակով անհրաժեշտ է ընդգրկն նաև այլ մարզիկների:

Մարզումների և մրցումների ամփոփում և վերլուծություն: Մարզումների և մրցումների ամփոփումը և վերլուծությունը պետք է կատարել մոտակա պարապմունքի ժամանակ: Ակզրում մարզիչը տալիս է ընդհանուր գնահատականը, այնուհետև վերլուծում է յուրաքանչյուր ըմբիշի նլոյթն առանձին, նշնով նրա թերությունները և դրանց վերացման ուղիները:

Վերլուծության ժամանակ պետք է ձգտել նրան, որ ըմբիշները ակտիվորեն մասնակցն վերլուծությանը:

Յուցումները մրցումներից առաջ: Մրցումների նախապատրաստման հատուկ պարապմունքներ, որտեղ մարզիչը ցուցումներ է տալիս, թե ըմբիշները ինչպես պետք է գո-

տնմարտեն յուրաքանչյուր մրցակցի հետ, մրցումներում՝ ընդհանրապես և այլն:

Այս պարապմունքների ժամանակ մարզիչը տալիս է մրցումների բնութագիրը, կոնկրետ խնդիրներ է դնում ըմբիշների առջև, ցուցումներ է տալիս քաշի իջնցման, սննդի ռեժիմի պահպանման վերաբերյալ և այլն:

8.2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՔՆԵՐ

Գործնական պարապմունքները լինում են ուսումնական, ուսումնամարզական և մարզական: Յուրաքանչյուր պարապմունքի տևողությունը և բովանդակությունը պայմանավորված է ինչպես խմբի առջև դրված խնդիրներով, այնպես էլ մարզվողների պատրաստվածության աստիճանով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ պարապմունքների ժամանակ մարզվողները ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Պարապմունքը կազմված է չորս մասից, ներածական, նախապատրաստական հիմնական և նորափակիչ:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ: տևողություն՝ 5-10 րոպե, խնդիրներն են. խմբի շարում, հաշվարկ, գնելույց, դասի խնդիրների բացարում, մարզվողների հուզական վիճակի բարձրացում:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՍ: տևողություն՝ 20-40 րոպե, խնդիրներ են. բարձրացնել մարզվողների աշխատունակությունը, նախապատրաստել պարապմունքի հիմնական մասին: Ընդհանուր զարգացնող և հասուն մասնագիտական վարժությունների օգնությամբ զարգացնել և կատարելագործել արագությունը, ճկունությունը, ճարպկությունը, ուժը, համարձակությունը, համառությունը, վճռականությունը և այլն:

ՀԱՍՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ կիրառում են ընդհանուր զարգացնող վարժություններից հետո՝ 10-15 րոպե

տևողությամբ: Նախապատրաստական մասն ավարտվում է 3-5 րոպե տևողությամբ ակտիվ հանգստով:

Հիմնական մաս. տևողությունը՝ 40-60 րոպե, խնդիրներն են. սովորել ըմբշամարտի տեխնիկան և տակտիկան, դաստիարակել կամային հատկանիշները:

Սովորում են նոր, հատուկ մասնագիտական վարժությունները, հնարքները, պաշտպանությունները, հականարքները և տակտիկական պատրաստության միջոցները: Յուրացվող տեխնիկատակտիկական գործողությունները ամրապնդվում են ուսումնական գոտինարտերի միջոցով: Հիմնական մասի վերջում կարենի է ժամանակ հատկացնել ինքնուրույն աշխատանքի համար, որը տրվում է մարզչի հանձնարարությամբ: Կարենի է կազմակերպել շարժախաղնը:

Եղրափակիչ մաս. տևողությունը՝ 5-10 րոպե, խնդիրներն են. բնոնվածության աստիճանական իջնցում, օրգանիզմի վերականգնողական գործընթացների ակտիվացում, դասի արդյունքների ամփոփում, տնային առաջադրանքների հանձնարարում:

ՈՒսումնամարզական պարապմունք: Սա պարապմունքի անցկացման ամենատարածված ձևն է: Սրա էությունը կայանում է նրանում, որ հիմնական մասի սկզբում կատարելագործվում է նախկինում յուրացված նյութը, որից հետո սովորում են նոր տեխնիկատակտիկական գործողությունները: Ուսումնամարզական պարապմունքի տևողությունը 120-150 րոպե է, խնդիրներն են. սովորել և կատարելագործել ըմբշամարտի տեխնիկան, տակտիկան, կատարելագործել շարժողական ընդունակությունները և կամային հատկանիշները:

ՈՒսումնամարզական ռպարապմունքը կազմված է չորս մասից. ներածական, նախապատրաստական, հիմնական և ներափակիչ:

Մերժածական մաս. տևողությունը՝ 3-7 րոպե, խնդիրները և միջոցները նույնն են, ինչ-որ ուսումնական պարապմունքինը:

Նախապատրաստական մաս. տևողությունը՝ 20-40 րոպե, խնդիրները և միջոցները նույնն են, ինչ-որ ուսումնական պարապմունքինը:

Հիմնական մաս. տևողությունը՝ 10-20 րոպե, խնդիրներն են. սովորել նոր և կատարելագործել նախկինում սովորած տեխնիկատակտիկական գործողությունները, կատարելագործել շարժողական ընդունակությունները և կամային հատկանիշները:

Հիմնական մասը կարող է ավարտվել ուժը, մկոնությունը կամ դիմացկանությունը զարգացնող հատուկ վարժություններով:

Եղրափակիչ մաս. տևողությունը՝ 3-7 րոպե, խնդիրները և միջոցները նույնն են, ինչ-որ ուսումնական պարապմունքինը:

Մարզական պարապմունք: Այս պարապմունքների ժամանակ նոր տեխնիկատակտիկական գործողությունները չեն ուսուցանվում, այլ միայն կատարելագործվում է նախկինում յուրացված նյութը:

Պարապմունքի տևողությունը 120-180 րոպե է, խնդիրներն են. կատարելագործել մարզիկների տեխնիկան, տակտիկան, շարժողական ընդունակությունները և կամային հատկանիշները, գոտնմարտի վարման վարպետությունը, ի հայտ բներել լավագույն ըմբիշներին մրցումների մասնակցության համար:

Մարզական պարապմունքը կազմված է երեք մասից. նախավարժանք, որը միավորում է ներածական և նախապատրաստական մասերը, հիմնական և ներափակիչ մասն:

Նախավարժանք. տևողությունը՝ 15-25 րոպե, խնդիրներն են. ըմբիշներին ծանոթացնել պարապմունքի բովանդակությանը, անցկացման կարգին, ծանոթացնել զույգերի հաջորդականությանը, օրգանիզմը նախապատրաստել հիմնական մասի

բնոնվածությանը: Նախավարժանքը կազմված է լնդիանուր և հատուկ վարժություններից: Հատուկ վարժությունները նպատակահարմար է կատարել մրցակիցներով:

Հիմնական մաս. տևողությունը՝ 90-160 րոպե, լնդիրներն են. կատարելագործել հատուկ ֆիզիկական, կամային, տեխնիկական և տակտիկական պատրաստությունը, որոշել շարժողական ընդունակությունների զարգացման մակարդակը:

Հիմնական մասը սկսվում է մարզական գոտնմարտերով: Մարզիչը յուրաքանչյուր ըմբիշի համար կարող է պլանավորել երկու մարզական կամ մեկ մարզական և մեկ ուսումնամարզական գոտնմարտ: Գոտնմարտերից հետո հանձնարություն է տրվում տեխնիկատակտիկական գործողությունների, դիմացկունության, ուժի և ճկունության կատարելագործման համար:

Եզրափակիչ մաս. տևողությունը՝ 3-5 րոպե, լնդիրները նույն են, ինչ-որ ուսումնական և ուսումնամարզական պարապմունքինը: Այն կարելի է անցկացնել ամբողջ խմբի համար, բայց ավելի հաճախ անցկացվում է ըստ մարզի անհատական հանձնարարության:

Ուսումնական, ուսումնամարզական և մարզական պարապմունքները հիմնականում անցկացվում են խմբակային մեթոդով: Մարզական պարապմունքներում նախավարժանքը կարելի է կատարել ինքնուրույն:

8.3. ԱՐՏԱԴԱՍՍՅԻՆ (ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ) ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Այս պարապմունքներն իբենց մեջ ներառում են մրցավարական աշխատանքները, առավոտյան մարզումը, երեկոյան գրուանքը, այլ մարզաձևերով պարապմունքները, ցուցադրական

նյույթները, մրցումների և մարզումների դիտումները և մասնագիտական գրականության ուսումնասիրումը:

Մրցավարական աշխատանքներ: Մրցավարությունը նպաստում է ըմբշամարտի մրցականունների յուրացմանը և մրցավարական հմտության ձեռք բերմանը: Բացի դա, ուշադրությամբ հետևելով գոտնմարտերի ընթացքին, ըմբիշը հարստացնում է տեխնիկայի և տակտիկայի վերաբերյալ գիտելիքները:

Մրցավարական աշխատանքները դաստիարակում են սկզբունքայնություն, հստակություն և կարգապահություն:

Առավոտյան մարզում: Խնդիրներն են. արագացնել քնից առույգ վիճակի անցնելու գործընթացը, ակտիվացնել օրգանիզմի գործունությունը նախատեսված աշխատանքն ավելի արդյունավետ կատարելու համար, կատարելագործել շարժողական ընդունակությունները և ըմբշամարտի տեխնիկան:

Ելնելով պայմաններից նախավարժանքը կարող է տևել 20-60 րոպե: Նախավարժանքը նպատակահարմար է անցկացնել բացօթյա: Նախավարժանքը կազմված է 2 մասից: Առաջին մասում կատարվում են լնդիանուր զարգացնող վարժությունները, իսկ երկրորդ մասում՝ հատուկ մասնագիտական վարժությունները: Առավոտյան նախավարժանքի բնոնվածությունը չպետք է ըմբիշների մոտ առաջ բերի հոգնածություն:

Երեկոյան գրուանք: Խնդիրներն են. հանգստացնել օրգանիզմը, պայմաններ ստեղծել լավ քնի համար: Երեկոյան գրուանքը պետք է անցկացնել ամեն օր: Նման գրուանքներից հետո խորհուրդ է տրվում ընդունել տաք ցնցուղ:

Պարապմունքներ այլ մարզաձևերով: Այս պարապմունքները անցկացվում են հաշվի առնելով կոնկրետ պայմանները և մարզվողների անհատական առանձնահատկությունները:

Մրանց նպատակն է ամրապնդել առողջությունը, զարգացնել շարժողական ընդունակությունները:

Հաճախ կիրառվում են մարմնամարզական վարժություններ, բասկետբոլ, ֆուտբոլ, ռեգբի, թիավարություն, դահուկավագք, ծանրամարտ, կրոսավագք, ակրոբատիկա:

Այս մարզումները ավելի նպատակահարմար է անցկացնել բացօթյա:

Պարապմունքները պետք է սկսն կարծ վազքով և ընդհանուր զարգացնող վարժություններով: Այս կարելի է ավարտել հատուկ վարժություններով՝ կիրառելով բնական միջոցները, քարեր, ծառ, ավազոտ ափ, ջուր և այլն:

Յուցադրական նյույթներ: Մրանք հիմնականում կապված են ըմբամարտի պրոպագանդայի հետ: Մրանք լավ միջոց են հանդիսանում տեխնիկայի և տակտիկայի կատարելագործման համար: Յուցադրական նյույթների ժամանակ պետք է ձգտել նրան, որ հանդիսատեսը տեսնի տեխնիկայի հիմնական տարրերը, գնահատի գնդեցկությունը, ուստի որոշ վարժություններ պետք է կատարվեն դանդաղ տեմպով:

Մրցումների և մարզումների դիտումներ: Մրանք հնարավորություն են տալիս ծանոթանալու բարձրակարգ մարզիկների պահվածքին գրտեմարտից առաջ և հետո, նրանց մարզման առանձնահատկություններին: Դիտումներից հետո պետք է կատարել վերլուծություն: Վերլուծությունը կատարվում է մարզչի հետ համատենի:

Մասնագիտական զրականության ուսումնասիրում: Գրականության ուսումնասիրումը օգնում է ըմբիշներին ավելի լավ պատկերացնել կազմել ըմբամարտի մասին: Ըմբիշները պետք է ուսումնասիրեն ըմբամարտի զարգացման պատմությունը, ուսուցման և մարզման մեթոդիկան, ըմբամարտի տակտիկան և այլն:

ԳԼՈՒԽ 9

ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՃՎԱՌՈՒՄԸ

9.1. ԸՄԲԵՇԱՄԱՐՏԻ ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՈՒսումնամարզական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը համարվում է ըմբամարտի խմբակը: Ըմբամարտի խմբակը հիմնականում կազմակերպվում է մարզադպրոցներում, մարզական թերումով գիշերօթիկ դպրոցներում, ըմբամարտի մասնագիտացված մարզադպրոցներում և մարզական ակումբներում: Ըմբամարտի խմբակի նպատակն է բարձրակարգ ըմբիշների պատրաստումը, մատադ սերնդի առողջության ամրապնդումը և հայրենիքի պաշտպանության համար ֆիզիկապես կոփկած նրիտասարդության դաստիարակումը: Ըմբամարտի խմբակ ընդունվելուց առաջ պատաճիները պետք է անցնեն բժշկական ստուգում: Պարապողների առողջական վիճակը և ֆիզիկական զարգացումը բնութագրող տվյալները գրանցվում են նրանց անձնական քարտներում:

Ըմբամարտի խմբակը ձևավորվում է հաշվի առնելով մարզվողների տարիքը և ֆիզիկական զարգացման մակարդակը: Ըմբամարտի խմբակը պետք է ունենա:

ա) սկզբնական պատրաստության խումբ I-II տարի՝ 12 անդամ,

բ) ուսումնամարզական խումբ I-II-III տարի՝ 10 անդամ, IV-V տարի՝ 8 անդամ,

գ) մարզական կատարելագործման խումբ՝ 6 անդամ,

դ) մարզական բարձրագույն վարպետության խումբ՝ 4 անդամ:

9.2. ԸՄԲԱՄԱՐՏԻ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Հմբամարտի խմբակի աշխատանքների հաջողությունը շատ բանով պայմանավորված է աշխատանքների ճիշտ պլանավորմամբ:

Խմբակի աշխատանքները իրականացվում են համաձայն հետանկարային, տարեկան և ամսական պլանների: Կարևոր նշանակություն ունի օրացուցային պլանը, ինչպես նաև՝ միջոցառումների պլանը:

Հեռանկարային պլանը մշակվում է մի քանի տարվա համար: Այդ պլանով նախատեսվում է նյութատեխնիկական բազայի բարելավում (ըմբամարտի դահլիճի հիմնանորոգում, վերանորոգում, մարզագույրով հագեցում, ջնուցում և այլն), մարզվադարձում, բարձրակարգ մարզիկների պատրաստում:

Տարեկան և ամսական պլանավորումը համարվում է ընթացիկ և ընդգրկում է հետևյալ բաժինները. դասիարակչական, ուսումնամարզական, մարզական, ազիտացիոն զանգվածային, քժկական հսկողության:

Դասիարակչական աշխատանքներ: Պլանավորման այս բաժինը ընդգրկում է դասախոսություններ, հաշվետվություններ, հասարական զանգվածային միջոցառումներ, հավաքույթներ, երսկուրսիաներ, կուլտարշավներ, մրցումների խմբակային դիտումներ և այն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ աշխատանքներ: Այս բաժնում որոշվում է խմբների և խմբում ընդգրկվողների քանակը, կազմվում է դասացուցակը: Զերոր են բերվում անհրաժեշտ ուսումնական փաս-

տաթղթենրը, կազմակերպվում են մեթոդական խորհրդակցություններ և այլն:

Մարզական աշխատանքներ: Այստեղ կազմվում է մրցումների օրացուցային պլանը, մշակվում է կանոնադրությունը, ընտրվում և հաստատվում է մրցավարական հանձնաժողովի կազմը, նշվում է բարձրակարգ մարզիկների և մրցավարների պատրաստման քանակը և ժամկետը:

Ազիտացիոն զանգվածային աշխատանքներ: Սա ընդգրկում է ցուցադրական նկույթների և մարզական նրեկոնների կազմակերպումը, մրցումների մասնակցությունը, մրցումների վայրի և մարզադահլիճի գնդարվեստական ձևափորումը, ֆոտո ցուցափեղկերի, աֆիշների և պլակատների տեղադրումը և այլն:

Քժկական հսկողություն: Քժկական ստուգման կազմակերպում: Քժկի հետ գրույցի կազմակերպում ստուգման արդյունքների, հիգիենայի, հնքնահսկողության վերաբերյալ:

Տնտեսական աշխատանքներ: Այստեղ պետք է կազմել ծախսների նախահաշիվ վերանորոգման, գույքի ձեռք բերման, զանազան միջոցառումների անցկացման, մարզարահների վարձակալման համար և այլն (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Հմբամարտի խմբակի տնտեսական աշխատանքային պլան
20..... - 20..... ուս. տարի

Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետները	Պատասխանատուն	Նշումներ կատարման մասին

9.3. ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Խմբակի ուսումնամարզական գործընթացը բավական բազմակողմանի և երկարատև է, քանի որ ժամանակակից ըմբշամարտը, մեծ պահանջներ է դնում ըմբիշների առջև և հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է երկար տարիների քրտնացան ու նպատակալաց աշխատանք:

Այդ գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ճիշտ պլանավորմամբ, որն իր մեջ ընդգրկում է ուսումնական նյութի հետանկարային, ընթացիկ և օպերատիվ բաշխումը:

Հեռանկարային պլանավորումը ննթադրում է կազմակերպչական և մեթոդական միջոցառումների ընդհանուր համակարգի ստեղծում մի քանի տարվա համար, որը պնտը է կառուցված լինի պահանջների աստիճանական բարդացման և բարձրացման սկզբունքով:

Բազմամյա պլանավորումն իրականացվում է ինչպես ողջ խմբի համար, այնպես էլ առանձին ըմբիշների համար և ունի իր կոնկրետ նպատակը և խնդիրները:

Հեռանկարային պլանը ստորաբար ննթադրում է ուսումնամարզական աշխատանքների հատակ կազմակերպում մեկ կամ մի քանի օլիմպիական ցիկլի համար: Այս պլանում առանձնանում են աշխատանքների շորս փուլ:

1. հավաքականի թեմենածուների բացահայտում, նրանց անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում և մարզման գործընթացի կատարելագործում,

2. հավաքականի թեմենածուների նախնական ընտրություն, մարզական վարպետության կատարելագործում, մրցակցական փորձի ձեռք բերում, կամային հատկանիշների և հոգեկան կայունության ստուգում,

3. տեխնիկատակտիկական վարպետության կատարելագործում, ֆիզիկական և ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացում, հավաքական թիմի հիմնական կազմի վերջնական ձևավորում,

4. մարզվածության, հոգեկան կայունության և մորիլիգացիոն հնարավորությունների բարձրագույն մակարդակի ապահովում:

Հեռանկարային պլանը ննթադրում է մարզական բնույթածության աստիճանական ավելացում ի հաշիվ մարզման օրենքի բանակի ավելացման, բնույթածության ծավալի և լարվածության մեծացման:

Այուսակ 5

Մեկ օլիմպիական ցիկլի մարզական և մրցակցական բնույթածության բաշխման գծապատկերի օրինակելի ձև

Ցուցանիշները	Պատրաստության փուլները (տարիները)		
Մարզումների քանակը			
Մրցակցական գոտինմարտների քանակը			
Ընդհանուր ժամաքանակը			

Հեռանկարային պլանում պնտը է տեղ գտնեն ինչպես մարզական պատրաստության կողմերի կատարելագործմանն ուղղված միջոցառումները, այնպես էլ վերականգնողական միջոցները և բժշկական հսկողությունն ապահովող միջոցառումները:

Ըմբիշների հնոանկարային անհատական պլանները կազմվում են ողջ խմբի համար նախատեսված հնոանկարային պլանի հիման վրա:

Աղյուսակ 6

Հնոանկարային անհատական պլանի գծապատկերի օրինակելի ձև

Պատրաստության կողմերը	Հիմնական թերությունների հիմնական բնութագիրը	Կատարելագործման հիմնակարային խնդիրները	Կատարելագործման հիմնական միջոցները	Պատրաստության փուլերը (տարիները)

Հնոանկարային պլանի հիման վրա կառուցվում են տարեկան պլանները (ցիկլեր), որտեղ կարող է նախատեսվել 2-3 մրցակցական շրջան իրենց միկրոցիկլերով՝ նախապատրաստական, մրցակցական, հետմրցակցական:

Սկսնակների և զարուհարք մարզիկների հետ տարբեր աշխատանքները կառուցվում են ուսումնական պլանների և ծրագրերի հիման վրա: Որտեղ շարադրված է ուսումնական գործնթացի բովանդակությունը մոտակա տարիների համար:

Ուսումնական պլան: Այն որոշում է ուսումնական աշխատանքների հիմնական ուղղվածությունը և տևողությունը: Այստեղ նախատեսվում է նյութի յուրացման հաջորդականությունը և իր մեջ ներառում է առանձին բաժինների բովանդակությունը, ինչպես նաև ժամարանակը և յուրաքանչյուր մարզման տևողությունը:

Ուսումնական պլանը բաժանվում է երկու հիմնական բաժինների. տեսական և գործնական:

Ուսումնական ծրագիր: Այն կազմվում է ուսումնական պլանի հիման վրա, որի մեջ ամփոփվում է գիտելիքների, ուսակությունների և հմտությունների այն ծավալը, որը պետք է յուրացվի մարզվողների կողմից:

Աղյուսակ 7

Խմբակի ուսումնական տարեկան պլանի աղյուսակի օրինակելի ձևը

Բովանդակությունը	Ժամերի բանակը					
	Ուսումնական խմբներ			Սկզբանական պատրաստության		
	I տարի	II տարի	I տարի	II տարի	III տարի	
Տնական պարապմունքներ						
Ժամերի հանրագումարը						
Գործնական պարապմունքներ						
Ստուգաբներ						
Ժամերի հանրագումարը						
Ընդամենը						

Տնական բաժնում ընդգրկվում են ըմբշամարտի պատմության, մարզիկների հիգիենայի, կուփման, բժշկական հսկողության, տնիսնիկայի և տակտիկայի հիմունքների, մարզման պլանավորման, դասակարգման, համակարգման, տնրմինաբանության և այլնի վերաբերյալ թեմաները:

Գործնական պարապմունքների բաժնում ընդգրվում են ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստությունը, տնիսնիկայի և տակտիկայի յուրացումն ու կատարելագործումը, մրցումների մասնակցությունը, սոուզողական նորմերը և այլն:

Խմբակի աշխատանքային պլան գրաֆիկ

----- ըմբցամարտ ----- 20 թ.

ՈՒսում-ական նյութը	Դասի համարներ և ամսաթվերը														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	և այլն
	1	3	5	8	10	12	15	17	19	22	24	26	29	1	

Աղյուսակ 9

Ընդհանուր զարգացնող և հատուկ մասնա- գիտական վարժութե- յուններ	Ըմբցամարտի տեխնիկան		Մեթո- դական ցուցումներ	ՈՒսումնա- մարզական գոտինմար- տերի բռվան- դակությունը և տևողությունը
	Ծնկադիր դր.	Կանգ. դր.		

*Մարզական զանգվածային միջոցառումների
օրացուցային պլան*

Միջոցառ- ման անվա- նումը	Անցկաց- ման ժամ- կնոր	Անցկաց- ման վայրը	Մասնա- կիցները	Պատաս- խանառուն

Ժամատախտակ: Սա ցույց է տալիս պարապմունքների օրենքը, ժամը, անցկացման վայրը, պարապմունքն անցկացնող մարզչի անունը:

ՈՒսումնական պլանի գրաֆիկ: Սա ընթացիկ պլանավորման հիմնական փաստաթղթերից մեկն է: Այն համարվում է մեթոդական փաստաթղթուղթ, որը պարունակում է որոշակի ժամանակահատվածի (տարի, ամիս) աշխատանքի բովանդակությունը:

Աշխատանքային պլան: Աշխատանքային պլանը որոշում է ուսումնամարզական որոշակի ցիկլի պարապմունքների կոնկրետ բովանդակությունը:

Այստեղ պլանավորվում է ուսուցման և կատարելագործման մեթոդիկան՝ համապատասխան ծրագրի և ուսուցման պլանի գրաֆիկ:

Այս փաստաթղթում տես ներկայութեան դաստիարակչական և ինքնուրույն աշխատանքների, մարզական զանգվածային միջոցառումների բաժինները, ինչպես նաև նշվում է յուրաքանչյուր մարզման և պլանավորված ողջ ցիկլի բնոնվածության ծավալը:

Ուսումնական նյութը աշխատանքային պլանում արտահայտվում է գրաֆիկորեն կամ տեքստային (աղյուսակներ 8, 9):

Մարզական զանգվածային միջոցառումների օրացույց:

Մրցումները ուսումնամարզական գործընթացի անբաժան մասն են հանդիսանում և համարվում են նրա որակի յուրօրինակ ստուգում: Անհնար է պատկերացնել մարզիկի մարզական վարպետության մակարդակը առանց մրցումների մասնակցության: ՈՒստի մրցումների պլանավորումը պնտը է բխի ուսումնամարզական աշխատանքի խնդիրներից: Յուրաքանչյուր մրցում պնտը է լինի որոշակի խնդիրների տրանսպարանական ավարտը: Մարզական զանգվածային միջոցառումների պլանը կազմվի հաշվի է առնվում վերադաս կազմակերպությունների պլանը:

Մարզական զանգվածային միջոցառումների օրացույցին պլանի օրինակնի ձևը ներկայացված է աղյուսակ 10-ում:

Ժամատախտակը խմբակի աշխատանքների կազմակերպման սկիզբն է և այն կազմնիս պնտը է հաշվի առնել մարզվողների գրադադարությունը աշխատանքի կամ ուսման վայրում։ Ըստ կարևոր է, որ այն կազմի նրկար ժամանակի համար և չկրի փոփոխություններ։ Ժամատախտակը սովորաբար կազմվում է մեկ ուսումնական տարրա համար։

Աղյուսակ 11
Ժամատախտակ
20---- 20---- ուս. տարի

ՈՒՍՏԱՄ-ՆԱԿԱՆ ԽՈՒՄՔԸ	Պարապմոնքների օրենքը և ժամենը						Պարապ- մոնքի վայրը	Մարզիքը
	I	II	III	IV	V	VI		

Դասի կրնապելք: Աշխատանքային պլանի հիման վրա կազմվում է դասի կոնսավելքություն, որտեղ մանրակրկիտ կերպով արտահայտվում են դասի խնդիրները, յուրաքանչյուր մասի բովանդակությունը, միջոցները, վարժությունների ծավալը, մեթոդական ու կազմակերպչական հնարները և այլն։ Ճիշտ կազմված պլան կոնսավելքությունը մարզշին օգնում է կազմակերպված ու արդյունավետ լուծել ուսուցման և մարզման խնդիրները, ստեղծագործաբար մոտենալ առաջարկված խնդիրների լուծմանը։ Յուրաքանչյուր դասից հետո անհրաժեշտ է ի մի քերել արդյունքները և գրանցել հիմնական նկրակացությունները։ Հնագայում, մարզիքների որակակիրման բարձրացման համար, դրանք կարող են ծառայել որպես մեթոդական նյութ։

Աղյուսակ 12

Պարապմոնքի կրնապելք

Խմբի անվանումը-----
Ամսաթիվը ----- Անցկացման վայրը-----
Խնդիրները -----
Գույքը -----

Դասի մասերը և տևողությունը	Բովանդա- կությունը	Զափա- փորումը	Մեթոդա- կան ցուցում- ներ

Խշումներ անցկացված պարապմոնքի վերաբերյալ -----

Մարզչի ստորագրությունը -----

9.4. ԸՄԲԾԱՄԱՐՏԻ ԽՄԲԱԿԻ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՃՎԱՌՈՒՄԸ

Խմբակի աշխատանքների ժամանակին և ճիշտ հաշվառումը հնարավորություն է տալիս դնելավարել և ուղղորդել մանկավարժական գործընթացը, բարելավել կազմակերպչական աշխատանքները, կատարելագործել պլանավորումը, ընդլայնել փորձը և այլն։ Հաշվառումը լինում է նախնական, ընթացիկ և գումարային։

Որպեսզի պարզ պատկերացում կազմվի խմբակի յուրաքանչյուր անդամի մասին, ինչպես նաև բնութագրվի բարձրակարգ մարզիքների պատրաստության ընթացքը և արդյունքները, անհրաժեշտ է ունենալ հաշվառման փաստաթուղթ (մատյան կամ օրագիր)։ Մատյանը պետք է ունենա չորս բաժին։

Առաջին բաժնում գրանցում են տնդեկություններ մարզ-վողների մասին. անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, տան հասցեն, հեռախոսահամարը, ազգությունը և այլն:

Երկրորդ բաժնում գրանցում են հաճախումները և մրցումների մասնակցությունը: Մրցումների մասնակցությունը պետք է գրանցել ոչ միայն գրաված տնդերով, այլև՝ անցկացրած բոլոր գոտումարտերով:

Աղյուսակ 14 Մարզական արդյունքների գծապատկեր

Մրցման ան- փանումը, անց- կացման ժամ- կներ և փայրը	Սասնակիցը, նրա սպորտա- յին կարգը և քա- շային կատե- գորիան	Մրցակիցը, նրա սպորտային կարգը և կազ- մակերպութ- յունը	Գոտենմար- տերի արդ- յունքները և գրաված տները	Մասնակ- ցութ. վեր- լուծություն և եզրակա- ցություններ
--	---	---	--	--

Երրորդ բաժնում նշվում է ուսումնական նյութը, ֆիզիկական և տեխնիկական պատրաստության ցուցանիշները, նորմերի հանձման ընթացքը և այլն:

Չորրորդ բաժնում նշվում են խմբակի մարզական նվաճումները: Յուրաքանչյուր մարզական կողմերի վում ժամանակի ընթացքում կուտակվում է որոշակի դրական փորձ և ձևավորվում են ավանդույթներ:

Խմբակի նվաճումները յուրօրինակ մարզական տարեգրություն են: Դրանք պետք է գրանցել հասուն գրքում: Այնտեղ գրանցվում են առանձին մարզիկների և թիմի նվաճումները:

Մնած նշանակություն ունի՝ գումարային հաշվառումը, որն իրականացվում է ուսումնամարզական տարվա վերջում և իրենից ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների մասին: Այստեղ պետք է գրանցվեն առողջության և

ֆիզիկական զարգացման մասին տվյալները, մարզական նվաճումները, մասնակցած և բաց թողած դասերի քանակը, անցկացված մարզական զանգվածային, դաստիարակչական և կազմակերպաչական միջոցառումները:

Աղյուսակ 15

Գումարային հաշվառման ձևը

Պարապ- մունքնե- րի բա- նակը	Հաճա- խում- ները (%)	Բարձրակարգ մարզիկների պատրաստում			Սպորտային միջոցառումները	
		Սպորտի վաստա- կավոր վարպետ	Միջազ- գային կարգի սպորտի վարպետ	Սպորտի վարպետ	Մրցում- ների քանակը	Մասնա- կիցների քանակը

ԳԼՈՒԽ 10

ԸՄԲԻՇՆԵՐԻ ՔԱԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

10.1. ՄԱՐԴՈՒ ՆՈՐՄԱՆ ՔԱԾՈ ԵՎ ՆՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ

Մարդաբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ առողջ մարդու նորմալ քաշը պայմանավորված է հասակով, կրծքավանդակի ընդգրկման ու ֆիզիկական զարգացման այլ ցուցանիշներով, որոնք կարող են տատանվել տվյալ մարդուն հատուկ ֆիզիոլոգիական որոշակի սահմաններում: Բացի այդ հայտնի է, որ մարմնի քաշը պայմանավորված է սեռով, տարիքով, կենսապայմաններով, սննդով, բնակավայրով, գործունեության տևականությամբ: Մարմնի քաշի համար համեմատաբար կայուն շրջան է համարվում 25-45 տարեկան հասակը: Ծնբունական հասակում մարմնի քաշը պակասում է 10-15 կգ-ով, որը, զլլսավորապես կախված է օրգանիզմի ջրազրկման հետ:

Բ.Ն.Քաշկիրովը մանրամասնորեն ուսումնասիրներ է մարդու նորմալ քաշի որոշման քազմաթիվ բանաձևեր և նեղանակներ:

Առավել տարածում ունի Քրոկի մեթոդը, որի համաձայն մարդու մարմնի քաշը պետք է հավասարվի նրա հասակի չափից հանած հարյուր միավոր: Քրոկուշը Քրոկի ցուցիչում մտցրեց ուղղում, համաձայն որի մինչև 165 սմ հասակի դեպքում հարկ է հանել 100, 166 սմ-ից մինչև 175 սմ հասակի դեպքում՝ 105, իսկ 175 սմ հասակի դեպքում՝ 110 միավոր:

Գործնականում կիրառվում է նաև Քրեյտմանի ցուցիչը, որի ժամանակ հասակի չափը (սմ) բազմապատկում են 0.7-ով և հանում 50: Օրինակ 180 սմ հասակի դեպքում քաշը պետք է լինի $180 \times 0.7 - 50 = 76$ կգ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մի շարք դեպքներում առողջ մարդու մարմնի փաստացի քաշը գերակշռում է ֆիզիոլոգիական նորմային: Դա առավելապես արտահայտված է մարզիկների, գերմկանուու անհատների մոտ:

Տարբենք հեղինակների կողմից առաջադրվել են մարմնի բաղադրության զանազան մոդելներ:

Օրինակ, չեխ մարդաբան Ի.Մաթեյկայի կողմից առաջարկված մարմնի բաղադրության մոդելը դիտարկում է մարմնի քաշը որպես՝

քիմիանուր ճարպ + կմախրի քաշ + ներթամաշկային ճարպ (մաշկի հետ) + կմախրային մկաններ + չհաշվարկված մնացորդ:

Ուժնդագույն ըմբիշների նրկարատու դիտարկումները ցույց են տվեն, որ որոշակի թվով ըմբիշների մոտ նախապատրաստման տարեկան ցիկլի գործընթացում մարմնի քաշը զգալի ծասակություն է: Այդ դեպքում երկու հիմնական հյուսվածքների զանգվածների միջև տեղի է ունենում փոխարինում՝ ճարպային և մկանային: Առավել անկայուն հյուսվածք է համարվում նեթամաշկաճարպային բջջանյութը: Ըմբիշի մարզվածության բարձրացման հետ նեթամաշկային ճարպաշներու նվազում է, իսկ ոչ մարզվածության դեպքում՝ ավելանում: Մարմնի քաշի փոփոխություն տեղի է ունենում նաև ջրի ընդհանուր պարունակության փոփոխության հաշվին, մարզումների քննության և ռեժիմի խախտման դեպքում:

Հայտնի է, որ ջուրը զբաղեցնում է մարմնի զանգվածի 63-75 %-ը, այսինքն՝ մարմնի յուրաքանչյուր բջիջ պարունակում է ջրի որոշակի քանակ, և բոլոր բջիջները շրջապատված են հեղուկով, որտեղ և կատարվում է նյութափոխանակությունը: Մարդու օրգանիզմում ջուրը կուտակված է հիմնականում մարմնի ճարպագորկ զանգվածում:

Զքի օրական պահանջը մարդու մոտ կազմում է 2-3 լ, որի մոտ 50 տոկոսը խմելու ջուրն է, իսկ մնացածը կազմում է պինդ և հեղուկ սննդանյութերի բաղադրության մեջ մտնող ջուրը: Բացի դրանից, օրվա ընթացքում օրգանական նյութերի օրինական և վնասական ճնշեման չնորիհիվ, մարդու օրգանիզմում տռացանում է ևս 0.3-0.8 լ ջուր:

Օրգանիզմի համար բարենպաստ չէ ինչպես չափից շատ, այնպես էլ ոչ բավարար ջրի մուտքը: Զքի ավելորդ ընդունումը ծանրացնում է երիկամների գործունեությունը:

Վնդուկի անբավարար օգտագործումը հանգեցնում է օրգանիզմում ազոտական փոխանակության դանդաղեցմանը, որը ծայրահետ անբարենպաստ է, քանի որ այդ նյութերը համարվում են թունավոր:

10.2. ՔԱՇԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԳՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՇԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Սկսած վաղնջական ժամանակներից, երբ մարզիկները մրցում էին մենապայքարային մարզաձևերում (բռնցքամարտ, ըմբամարտ, պանկրատիոն) մարտերի տևողությունը սահմանված չէր և շարունակվում էր մինչև մրցակիցներից մենքի հաղթանակը:

Նշված մենապայքարային մարզաձևերում չկային քաշային կարգեր, և բոլոր մարզիկները, անկախ սնվական քաշների գգալի տարբերությանը, պարտավոր էին մրցել միմյանց հետ: Եվ, եթե առաջին դեպքում մարտի տևողությունը չէր կարող որոշակի ազդեցություն ունենալ նրա ելքի վրա, քանզի մրցակիցները գտնվում էին միանման պայմաններում, ապա երկրորդ դեպքում առավելությունը հիմնականում ստանում էր առավել

ծանր քաշ ունեցող մարզիկը, և բնականաբար նա ավելի հաճախ էր հաղթանակ տոնում:

Ազատ ըմբամարտում առաջին անգամ քաշային կարգեր սահմանվել են III օլիմպիական խաղերի ժամանակ, որն անցկացվում էր ԱՄՆ-ի Սենտ-Լյուիս քաղաքում:

Քաշային կարգերի ստեղծումը նաև հավասարություն մտցրեց մրցակիցների միջև, լրջորեն պակասնցրեց ծանր վնասվածքների քանակը, ըմբամարտը դարձրեց ավելի հասանելի շատերի համար, զարկ տվեց մարզաձի մասսայականությանը և ըմբիշների մարզական վարպետության բարելավմանը: Ըմբամարտում քաշային կարգերն անփոփոխ չեն: Ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով նրանք ենթարկվել և ներկայում ել շարունակվում են ենթարկվել փոփոխությունների: Այդ քաշային կարգերի թիվը երբեմն ավելանում է, երեմն պակասում:

Ժամանակի ընթացքում որոշակի փոփոխության ենթարկվեց նաև ըմբամարտի տևողությունը, գոտենմարտերի մրցամասների քանակը, գոտենմարտերի ընթացքում տևող ընդմիջումների քանակը և դրանց տևողությունը, գոտենմարտի ընդհանուր ժամանակը և այլն:

Գոտենմարտի տևողության սահմանումը և քաշային կարգերի ստեղծումը նոր խնդիրներ առաջադրեցին մասնագետների և առաջին հերթին, տարբեր քաշային կարգերի ըմբիշների առջև. կարգավորներ սնվական քաշը՝ այն հարմարեցնելու տվյալ քաշային կարգի նորմերին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև պակասնցնել քաշը:

Այսպիսով՝ մրցումների նախապատրաստման ժամանակահատվածում ըմբիշների անձնական քաշի կարգավորման խնդիրը առաջնային նշանակություն ստացավ: Մարզիկը, հանդիս գալով իրեն ամենահարմար քաշային կարգում, հնարավորություն է ստանում հասնել մարզական առավել մեծ հաջողու-

թյունների: Այդ իսկ պատճառով, առանց օրգամիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների կորստի, մարզիկների «ավելորդ» կիլոգրամների բնուաթափումը դառնում է մարզական մեծ նվազումների հասնելու կարևոր նախապայման: Եվ պատահական չե, որ այդ խնդրով մտահոգված են ինչպես մարզիկները, այնպես էլ մարզիչները:

Գիտական մի շարք հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ մենապայքարային մարզաձևների խոշոր մրցումներում (օլիմպիական խաղեր, Եվրոպայի և աշխարհի առաջնություններ) հանդես եկող մարզիկների 60 տոկոսից ավելին ինքնակամ ազատվել են իրենց անձնական քաշի «ավելորդ» կիլոգրամներից: Ցանկալի քաշին հասնելու համար մարզիկից պահանջվում է ամուր կամք, հմտություն, տեսական և գործնական գիտելիքներ:

Եվ, չնայած այդ բնագավառում նդած հաջողություններին, այնուամենայնիվ, դեռևս շեն լուծվել այս խնդրի մի շարք անհատներ:

Այսպիս:

1) պարզված չե, թե յուրահատուկ ֆունկցիոնալ հոգեբանական հատկանիշներով օժտված մարզիկները քաշը իջնենելու համար ինչպիսի^o ծննդը և մեթորքներ պեսոր է օգտագործեն.

2) անձնական քաշի քանի^o տոկոսից կարենի է հրաժարվել՝ պահպանելով օրգանիզմի ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստության անհրաժեշտ մակարդակը.

3) ինչպիսի^o կապ կա օրգանիզմի մորֆոլոգիական վիճակի և գոյություն ունեցող այն ծննդի ու մեթորքների միջև, որոնք նպաստակառուղիված են անհատի քաշի իջնեցմանը:

Դեռևս լրիվ պարզված չէ, թե ինչ ազդեցություն է ունենում քաշի իջնցումը ըմբիշի տեևնիկատակակիկական հնարքների կատարման ընդհանուր մակարդակի վրա:

Անչափ կարևոր են նաև հետևյալ հարցենքը.

ա) որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ «ավելորդ» կիլոգրամներից ազատվելու համար,

բ) միցումների ավարտից անմիջապես հետո պեսոր է վերականգնել իջնեցված քաշը, թե ոչ, եթե այդ, ապա ի՞նչ մեթոդներով և որքան ժամանակում:

Վեր նշված հարցերի գիտական բացատրության պակասի պատճառով բարձրակարգ շատ մարզիկների անձնական քաշը իջնենելու համար շատ դեպքերում օգտվում են իրենց մարզիչների կամ հանրահայտ մարզիկների անձնական փորձից: Սակայն անձնական փորձը, որքան էլ օգտակար լինի, չի կարող չափանիշ լինել մեկ ուրիշի համար:

10.3. ՔԱՇԻ ԻՉԵՅՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ուսումնասիրությունների և անվանի մարզիկների ու մարզիչների անհատական կարծիքների ամփոփումը բնրում է եզրահանգման, որ մարմնի քաշի իջնեցման համար կարող են կիրառելի լինել հետևյալ նշանակները՝

1. հավասարաչափ.
2. արագացված.
3. տարահամախմբված.
4. աստիճանական.
5. դանդաղնեցված.
6. հարվածային.
7. ալիքաձև:

1) Քաշի իջնեցման **հավասարաչափ** անվանվող նշանակը նախատեսում է քարձր ծանրաբեռնվածության մարզումներ՝ սննդի ընդունման որոշակի ռեժիմով (ջրալի կերակուրների և խմելու ջրի քանակի զգալի պակասնեցում):

2) *Արագացրած* անունը կրող նդանակը նախատեսում է շոգեբաղնիքի օգտագործումը, քաղցած մնալը, ջրի օգտագործումից մասնակի հրաժարվելը:

3) *Տարահամախմբված* նդանակը նախատեսում է շոգեբաղնիք, սխտոնմատիկ մարզումներ, ինչպես նաև սննդի և օրվա ռեժիմ:

4) *Աստիճանական* նդանակով քաշը պակասեցնելիս՝ մարզիկը որոշակի ժամանակահատվածի ընթացքում պակասեցնում է քաշը՝ ասենք 2 կգ-ով և այնուհետև որոշ ժամանակ պահպանում: Այնուհետև նորից իջնցնում է քաշը և նորից պահպանում: Եվ այսպես շարունակ՝ մինչև զանկալի քաշին հասնելը:

5) *Դանդաղեցված* նդանակով քաշը իջնցնելիս՝ մարզիկը քաշը իջնցնում է տևական ժամանակահատվածում, որը սկսվում է առնվազն մեկ ամիս առաջ, երբեմն էլ ավելի շուտ:

6) *Հարվածային* նդանակով քաշը պակասեցնելիս՝ մարզիկը մեկ-երկու օրվա ընթացքում քաշը իջնցնում է 3-4 կգ-ով՝ միաժամանակ օգտագործելով շոգեբաղնիք, մերսում, ծանրաբեռնված պարապունքներ՝ պակասացնելով սննդի և ջրի քանակը:

7) *Ալիաքձն* նդանակով քաշը իջնցնելիս՝ մարզիկը որոշակի օրենքի ընթացքում քաշը պակասեցնում է, ապա օրգանիզմը հարմարեցնում այդ քաշին, այնուհետև, նորից կրկնելով նույնը, հասնում է զանկալի քաշին:

Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ յուրաքանչյուր մարզիկ, անկախ այն քանից, համապատասխանում է իր քաշը գոյություն ունեցող քաշային կարգին, թե՛ն ոչ, պետք է մրցմանը մասնակցի մինչև 2 կգ-ի սահմաններում քաշը իջնցրած, իսկ կիսածանը և ծանր քաշայինները՝ 3 կգ: Այս փեճակում մեծանում է օրգանիզմի շարժունակությունը, մկանային զգացողությունը, իսկ հարձակողական և պաշտպանողական գործողությունները դառնում են ավելի արագ: Այսինքն մրցման

նախապատրաստական փուլում մինչև 3 կգ քաշի իջնցումը մարզիկին հնարավորություն է տալիս մրցման ընթացքում գործել ավելի արագ և վստահ: Եթե մարմնի քաշը իջնցված է 2-3 շաբաթվա ընթացքում (ընդունված ջրի և ջրալի ճաշատեսակների քանակի պակասեցման հաշվին), ապա մրցումների ընթացքում քացասական երևոյթներ չեն նկատվում: Մինչդեռ քաշի իջնցման դաշտադաշված նդանակից օգտվեն օրգանիզմին կարող է հասցնել հոգնածության և նյարդային լարված վիճակի:

Մրցումներից 3-4 օր առաջ մարզիկների անձնական քաշը պետք է գերազանցի գոյություն ունեցող քաշային կարգի սահմանները 1.5-2 կգ-ով: «Ավելորդ» քաշից ազատվելու ամենադյուրին միջոցը շոգեբաղնիքն է:

Եթե մրցումներից 2-3 օր առաջ մարզիկի ավելորդ քաշը գերազանցում է պահանջվածից, ապա կարենի է օգտագործել արագացված նդանակը: Անհրաժեշտ է հիշել, որ շոգեբաղնիք պետք է գնալ մրցումներից երկու օր առաջ: Դա թույլ կտա վերականգնել օրգանիզմի նրբեմնի ֆունկցիոնալ հնարավորությունները: Նշված նդանակների ճիշտ ընտրությունը կարող է նպաստել քաշի իջնցմանը՝ պահպանելով օրգանիզմի նորմալ գործունեության վիճակը:

Քաշի իջնցման գոյություն ունեցող նդանակների օգտագործման ժամանակ որոշակի փոփոխություններ են առաջանում օրգանիզմում:

ՈՒսումնասիրությունները ցույց են տվել, որ շրջապատի շնչրմաստիճանը նպաստում է օրգանիզմի շնչրմաստիճանի բարձրացմանը, արագացնում է սիրտանթային համակարգի աշխատանքը, մեծացնում է գազափոխանակությունը, կենսուրունական նյարդային համակարգը դարձնում է ռյուրագրգիտ: Նման փոփոխությունները պայմանավորված են օրգանիզմի շնչրմակարգավորիչ ապարատի ակտիվ աշխատանքով:

Անսովոր բարձր ջերմաստիճանը խախտում է նաև մարդու ջերմակարգվորման ապարատի գործունեությունը, որը դառնում է ներփն օրգան-համակարգների, ինչպես նաև կենտրոնական նյարդային համակարգի անկանոն աշխատանքի պատճառ: Օրգանիզմի ջերմաստիճանի 1.5-2 աստիճան բարձրացումը բացասաբար է անդրադարձում օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ վիճակի վրա:

Ծոգ միջավայրում մկանային մեծ աշխատանք կատարելիս՝ խախտվում է հատկապես սիրտանոթային և կենտրոնական նյարդային համակարգների աշխատանքը, որը բացասական հետևանքներ կարող է ունենալ:

Իսկ մի քանի հեղինակների (Ն.Լուսովինովա, Մ. Ռիտկինա, Վ. Չունցով, Ա. Մասսարսկի, Ն. Պոպովա, Ն. Սորոկին) կարծիքով շոգեբաղնիք մտնելուց 5 րոպե անց նկատվում է նաև օրգանիզմի ջերմաստիճանի ցածրացում: Դա պայմանավորված է օրգանիզմի պաշտպանական ռեակցիայով, այսինքն ջերմակարգվորման համակարգի գործունեության վիճակով: Պաշտպանական ռեակցիայով են պայմանավորված նաև օրգանիզմի ջերմաստիճանի բարձրացման և բրտնարտադրության պրոցեսները:

Միջավայրի բարձր ջերմաստիճանը ներգործում է նաև շնչառական ապարատի վրա: Բացահայտված է, որ շոգեբաղնիքի բարձր ջերմաստիճանի դեպքում, սկզբնական շրջանում, պակասում է ներփն օրգան-համակարգների կրողմից թթվածնի յուրացումը: Ծոգ պայմաններում բարձրանում է օրգանիզմի պահաջկությունը C, B, B₁₂ և այլ վիտամինների նկատմամբ, որը պայմանավորված է նշված վիտամինների ոչնչացմամբ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ շրջապատող միջավայրում 40-42 աստիճանի առկայության պայմաններում նկատվում են կենտրոնական նյարդային համակարգի որոշակի խանգա-

լումներ: Միարժամանակ պես է նշնլ, որ շոգեբաղնիքում, ի տարրերություն չոր օդային բաղնիքների, համեմատաբար արագ է բարձրանում օրգանիզմի ջերմաստիճանը, իսկ նրա վերականգնումը ընթանում է ավելի դանդաղ:

Հայտնի է, որ յուրաքանչյուր օրգանիզմ պարունակում է 2-3 և «պահենստային հեղուկ», որը կարծ ժամանակամիջոցում կարելի է հեռացնել:

Այս ամենից կարելի է նզրակացնել, որ շրջապատի բարձր ջերմաստիճանի ներգործությունը օրգանիզմի վրա ունի սուրյանկությունը: Օրինակ, տարբեր մարդկանց բրտնարտադրությունը, կապված շրջապատող միջավայրի բարձր ջերմաստիճանի հետ, սկսվում է տարբեր ժամանակամիջոցներում, տարբեր է նաև նրա քանակությունը:

Սա կապված է նաև մաշկի տակ գտնվող ճարպաշարակցական շերտի հատության, օրգանիզմում նղած հեղուկային մասի պարունակության և ընդունված սննդի բաղադրական քանակության հետ:

Այսպիսով, քաշը իջնցնելու առաջին պայմաններից մենքը բրտնարտադրությունն է, որը մեծապես պայմանավորված է ընդունվող հեղուկի քանակով:

Որոշ հետազոտողների կարծիքով մարմնի քաշի 7 %-ով և ավելի իջնցումը օրգանիզմում բացասական նրևույթներ կարող է առաջ բերել:

Պրակտիկան ցույց է տալիս, որ չոր բաղնիքում քաշի պակասնեցումը ավելի արդյունավետ է, քան շոգեբաղնիքում:

Լուրջ կարևորություն է ներկայացնում նաև այն հարցը, թե մարմնի քաշի իջնցումը ինչ ներգործություն ունի մկանային ուժի վրա: Հայտնի է, որ շրջապատի բարձր ջերմաստիճանը թուլացնում է մկանների կծկման ուժը, իջնում աշխատունակությունն ու դիմացկունությունը, բարձրացնում է մաշկի զգացողությունը և մկանների կծկման արագությունը: Այն մարգիկները, ովքեր 3-4

օրում շղերադնիքի օգնությամբ իջնցնում են իրենց քաշը (7 %-ի սահմաններում), ունենում են մկանային ուժի թուլացում, նյարդային ջղաձգություն, քնի խանգարում և ինքնազգացություն անկում:

Ժամանակակից սպորտում մարմնի քաշի իջնցման նղանակները ու միջոցները ուսումնասիրների՝ հանգում ենք այն նզրակացության, որ տարբեր քաշային կարգնում հանդես եկած մարզիկների ճնշող մեծամասնությունը ստիպված է ազատվել իր անձնական քաշի «ավելորդ» կիրոգրամներից:

Ուսումնասիրությունները վկայում են, որ առ այսօր գոյություն չունի որևէ չափանիշ, որ հնարավորություն ընձնող պարզաբանել, թե, ասենք, տվյալ սահմանից ավելի քաշ իջնցնելը կարո՞ղ է բացասաբար անդրադառնալ օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ վիճակի վրա: Հենց դա է պատճառը, որ շատ անվանի մարզիկներ, իրենց մարզական կարիերան ավարտելուց հետո, հետագայում բողոքում են առողջությունից, գանգատվում աղեստամորսային տրակտի այս կամ այն հիվանդությունից:

Պրակտիկան ցույց է տալիս, որ ըմբիշների մեծ մասը, քաշն իջնցնելու համար, օգտվում են հիմնականում նրկու նղանակից:

Ընդ որում որոշ ըմբիշներ, շղերադնիքից 3 ժամ առաջ լրիվ հրաժարվում են սննդի ընդունումից: Ումանք էլ նախընտրում են միջին արագությամբ վազքը, մյուսները մարզախաղները, ումանք՝ թերթի գոտնմարտենը գորգի վրա, մի մասն էլ զերադասում է օրգանիզմի հանգիստ վիճակը, այսինքն, մինչ շղերադնիք մտնելը չեն զբաղվում ֆիզիկական վարժություններով: Տարբեր քաշային կարգնում հանդես եկող մեծ թվով ըմբիշներ գնրադասում են ֆիզիկական քննությունից անմիջապես հետո շղերադնիք գնալ: Մինչ շղերադնիք մտնելը՝ ըմբիշների մեծ մասը գնրադասում են 4-8 րոպե տաք լոգանք՝ չթրջնելով գլուխը: Շղերադնիք մտնելով՝ ըմբիշների մեծ մասը մնում է

ներքեում (հատակին) 10-15 րոպեի սահմաններում: Այնուհետև 1-2 աստիճան քարձրանալով մնում են ևս 5-7 րոպե:

Ըմբիշների 50 %-ը օգտվում է ընկերություններից (մերսում, կեչու ճյուղներից պատրաստված ավելով հարվածներ մաշկին): Շղերադնիքում գտնվող մեծ թվով ըմբիշներ գնրադասում են սառը ջրի օգտագործումը (լվացվել, շվել մաշկը, հատկապես պարանոցը), որը բարձրացնում է օրգանիզմի դիմացկունությունը:

Հատկանշական է, որ շատ ըմբիշներ առաջին անգամ շղերադնիք մտնելուց հետո աստիճանաբար պակասնենում են այնտեղ լինելու ժամանակը: Այսպես՝ վերջին մուտքի տևողությունը չի գնրազանցում 2-3 րոպե: Լավագույն զնրմաստիճանը շղերադնիքում տատանվում է 80-ից 100 աստիճան:

Շղերադնիքի պայմաններում քաշի կորուստը միջին հաշվարկներով կազմում է 1.5-2 կգ: Մարզիկներին խորհուրդ է տրվում, քաղնիքից դուրս գալով, փաթաթվել բրդն ծածկոցով, ինչը գործնականում հաճախ է կիրառվում ըմբիշների կողմից՝ քաշի պակասնեցման շրջանում: Քրտնարտադրության պայման է նաև մերսումը, որի տևողությունը կարող է հասնել 40 րոպեի: Մերսումը պետք է սկսն շղերադնիքից դուրս գալուց 2-3 րոպե հետո, եթե մարմնի արտաքին զնրմաստիճանը բարձր է, նորմայից և դեռ շարունակվում է քրտնարտադրությունը: Մարզիկների մեծ մասի կարծիքով՝ մերսման օգնությամբ կարելի է կորցնել մինչև 1 կգ քաշ:

Քաշի իջնցման օրերի ընթացքում մեծ թվով ըմբիշներ իրենց սննդից լրիվ հանում են կարտոֆիլի օգտագործումը: Զրի օգտագործումը մեկ օրվա ընթացքում չանուր է գնրազանցի 600-900 գ: Օրվա սննդի ռեժիմի մեջ են թողնում միս և ձուկ, կաթնաշոռ, կարագ, մնիր, սոխ, սխտոր, խնձոր, սալոր, կիտրոն, նարինչ, որոնք օգտագործվում են սահմանափակ քանակությամբ: Որոշ ըմբիշներ ընդունում են նաև վիտամիններ:

Կան ըմբիշներ, որոնք գնրադասում են մարմնի քաշը մրցումներից առաջ իջնենել ոչ ավել քան 1-3 կգ: Նրանց կարծիքով «ավելորդ» կիլոգրամներից ազատվելը բացասաբար է անդրադառնում օրգանիզմի ընդհանուր զգացողության վրա: Քաշ իջնենող շատ ըմբիշների մոտ նկատվում է դյուրագրգություն, անքնություն և նման այլ նրանություն: Մեծ թվով մարդիկների և մարդիկների կարծիքով մարմնի քաշը իջնենելուց հետո հետևում է մկանային ուժի թուլացումը, ընկնում է նաև օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը, որը հաճախ բացասաբար է անդրադառնում մրցումների ընթացքում տնիսնիկատակիլկան հնարքների վրա:

Դրակիլկան ցույց է տալիս, որ մրցման ընթացքում որոշակի փոփոխություններ են կատարվում քաշ իջնենող ըմբիշների մոտ: Նրանց մոտ որոշակիորեն ընկնում է մարտ վարելու ակտիվությունը, որը բացասաբար է անդրադառնում հնարքների կատարման ընդհանուր արդյունավետության վրա:

Հավասարաշափ նեղանակով քաշը իջնենելը առաջ է բերում ձնոքների, ոտքների և իրանի տարածիչ մկանների ուժի, ուժային դիմացկունության որոշակի անկում:

Այս փոփոխությունները չեն նկատվում քաշի իջնեման հարվածատարահամախմբված նեղանակի կիրառման դնապրում:

10.4. ՔԱՇԻ ԻԶԵՑՄԱՆ ԱՐԱԳԱՅՎԱԾ ԵՂԱՍԱԿՈ

Մարմնի քաշը իջնենելու համար օգտագործվող նեղանակների ընտրությունը պայմանավորված է «ավելորդ» կիլոգրամների քանակից: Այսպես, արագացված նեղանակը նպատակահարմար է օգտագործել, եթե մրցումից մեկ կամ երկու օր առաջ մարգիկից պահանջվում է մարմնի քաշը իջնենել մինչև 3 կգ սահմաններում:

Այս նեղանակը կարենի է օգտակործել տարախմբված նեղանակի վերջին փուլում:

Արագացված նեղանակով քաշը իջնենելուց 4 ժամ հետո փորձարկվող ըմբիշների մոտ զգացվել է դաստակի և իրանի տարածիչ մկանների ուժի պակասում, ինչպես նաև հիշյալ մկանախմբների դիմացկունության անկում, բացառությամբ մեջքի տարածիչ մկանների, որոնք որոշ ըմբիշների մոտ փոփոխության չեն նենթարկվել: 24 ժամ հետո նմանատիպ սոուգումների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը. վերը նշված մկանների ուժը և դիմացկունությունը լրիվ չեն վերականգնվել:

Օրգանիզմի փունկցիոնալ հնարավորությունների լիարժնք վերականգնումը տեսուի է ունենում միայն 48 ժամ հետո:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ըմբիշների տեխնիկատակտիկական հնարքների դիմամիկայի վերլուծությունը: Պարզվում է, որ մրցումներում գործածված հնարքների արդյունավետությունը, հուսալիությունը, ըմբիշների տեխնիկատակտիկական հնարքների դիմամիկան մնապես պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. իջնցվող քաշի չափով.
2. քաշային կարգով.
3. քաշ իջնենող մարգիկի մորֆոլոգիական կառուցվածքով.
4. մրցման մաշտարով:

Բացահայտված է նաև, որ մինչև 63 կգ քաշ ունեցող ըմբիշները հեշտ են տարել քաշի 6-7 % իջնցումը: Այս դեպքում տեխնիկական հնարքների տարրերությունը համարյա մնում է անփոփոխ, հարձակման որակը, այսինքն՝ շահած միավորների միջին քանակը, մրցման ընթացքում մեծ թվով ըմբիշների մոտ կամ ավելանում է, կամ մնում նույնը: Պաշտպանության արդյունավետությունը նշված քաշային կարգի ըմբիշների մոտ գործնականում մնում է նույն մակարդակի վրա:

Որոշ դեպքերում քաշի իջնցնումը բացասաբար է ազդում այն ըմբիշների վրա, ովքեր օգտվել են հարվածային նորանակից: Այս ըմբիշների մոտ գոտնմարտի ակտիվության պահպանման հետ մեկտեղ, նկատվել է հնարքի կատարման արդյունավետության որոշակի բացասական փոփոխություն:

Մրցման նախապատրաստական շշանում իրենց քաշը մինչև 11% իջնցրած ըմբիշների մոտ նկատվում է հնարքների կատարման ակտիվության անկում: Ընկնում է նաև հարձակողական և պաշտպանողական գործողությունների հուսալիությունը: Նկատվում է նաև շարժունակության, հնարքների կատարման արագության անկում, որը հատկապես բացասական է արտահայտվում պաշտպանական գործողություններում:

Այսպիսով, նկատի առնելով քաշ իջնցնող մարզիկի առանձնահատկությունները, պետք է գիտենալ հետևյալը.

1. Ընտրել յուրաքանչյուր մարզիկի օրգանիզմին համար քաշի իջնցման նախընտրելի տարրերակ:

2. Հսկողություն սահմանել մարզիկի առողջական և հոգեկան վիճակի վրա:

3. Մարզիկը, քաշը իջնցնելուն զուգահեռ, պետք է պարբռուար մարզումներ անցկացնի՝ օրգանիզմի ֆիզիկական հնարավորությունները բարձրացնելու համար: Մինչև քաշի իջնցումը և դրանից հետո համակողմանիորեն ստուգվի բժշկի կողմից:

4. Բացահայտված է, որ մարմնի քաշի իջնցումը մինչև 7%-ի սահմաններում օգտագործելով հարվածահամախմբված և հավասարաչափ նորանակները, ընդհանրապես չի իջնցնում աշխատունակությունը, բացասաբար չի ազդում մարզական վարպետության վրա: Միաժամանակ անհրաժեշտ է գիտենալ, որ հարվածահամախմբված նորանակը առաջ է բերում սրտի զարկերակի հաճախականության ավելացում և ֆիզիկական աշխատունակության նվազում, վերականգման գործընթացների աստիճանական դանդաղում և հնարքների կատարման սահմա-

նափակում, իսկ հավասարաչափ քաշ իջնցնող ըմբիշների մոտ նկատվում է սրտի զարկերակի հաճախականության անկում (միաժամանակ բարձրանում է շնչած թթվածնի օգտագործման քանակը), ձնորնի, ուստի և իրանի մկանների բացարձակ ուժի թուլացում: Դրա հետ մեկտեղ բարձրանում է հնարքների կատարման հուսալիությունը թե հարձակման, թե պաշտպանության ընթացքում:

5. Բացահայտված է, որ (օգտագործելով հարվածահամախմբված և հավասարաչափ նորանակները) մինչև 7 %-ի սահմաններում մարմնի քաշի իջնցումը կապվում է ճարպային հյուսվածքների քացման, իսկ որոշ մասը օրգանիզմի ջրի պակասնցման հետ:

Այն ըմբիշները, որոնք այս կամ այն քաշային կարգում իջնցնել են իրենց քաշի մինչև 11 %-ը, զգալիորեն թուլացնում են հարձակման և պաշտպանության հուսալիությունը: Նրանց հարձակողական գործողությունների արդյունավետությունը նվազում է 30-40 %-ով: Բացի այդ, ընկնում է հնարքի կատարման արագությունը, որը մնանակ արտահայտվում է հատկապես միջին ու կիսածանր քաշային կարգերում հանդեն նկող ըմբիշների մոտ:

10.5. ՄԱՐՁԻԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՇԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Մարզական գործունեության ընթացքում մարզիկների մարմնի քաշի կարգավորման հիմնահարցների հնտագոտությունը ցոյց է տալիս, որ տարբեր քաշային կարգերի մարզիկների մոտ քաշի իջնցումը միանման չի կատարվում: Մարմնի քաշը ավելի շատ իջնցնում են թերթ քաշային մարզիկները և ավելի քիչ՝ ծանր քաշայինները: Այդ տարբերությունը կազմում է 3 %:

Տարբեր քաշային կարգի մարզիկների մոտ մարմնի քաշի իջնցումը տատանվում է 9.6-5 % -ի սահմաններում:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ տարբեր քաշային կարգերի մարզիկները միջին տվյալներով, մինչև 7% ավելորդ քաշը իջնցնում են 9-10 օրվա ընթացքում:

Սակայն որոշ հեղինակներ հանդես են գալիս իրարամերժ առաջարկություններով: Այսպես Ն.Կ.Պոպովսն առաջարկում է 5 կգ-ից ավելի քաշը իջնցնել 1-2 ամսվա ընթացքում, Վ.Ա.Գեսելիսիչը՝ 14-20 օրվա ընթացքում՝ մինչև մեկնարկը: Նա միաժամանակ նշում է, որ 2 ամիս առաջ պետք է նախապատրաստվել քաշ իջնցնելուն: բնոնվածությունը կրել տաք մարզական հագուստով:

Մարզիկների քաշի իջնցումը կատարվում է հեղուկի սահմանափակման, սննդի ուժիւմի և մարզումների հաշվին: Վերջին 2 կգ քաշը իջնցվում է մրցումներից 2-4 օր առաջ, Վ.Պ.Կոֆմարսկու կարծիքով տվյալ սխեման քաշի իջնցման համար ամենանպատակահարմարն է: Որոշ գիտնականներ (Վ.Բ.Առաքելյան) գտնում են, որ քաշի իջնցումը մրցումներից 2-3 օր առաջ պետք է գերազանցի մեկ կիլոգրամից: Մարզիկների աշխատունակությունը շատ ավելի բարձր կլինի, ներանք իջնցնեն մարմնի քաշի 7 %-ից ոչ ավելին: Այս նորակացությունը համապատասխանում է Կ.Պ.Լևենկոյի հետազոտության տվյալներին, ըստ որոնց մարմնի քաշի 4-5 %-ի իջնցումը առաջացնում են սիրտանոթային համակարգի և կենսաքիմիայի ցուցանիշներով արտահայտված փոփոխություններ և աշխատունակության անկում:

Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, ավելի ցածր քաշային կարգի մարզիկները մարմնի քաշի 7-9 %-ը կորցնում են ավելի կարծ ժամանակում, քան ավելի ծանր քաշայինները: Այս փաստը բացատրվում է մարմնի քաշի կազմի տարբերությամբ: Որպես կանոն, ցածր քաշայիններն ունեն մարմնի մկանային զանգվածի ավելի քիչ բացարձակ և ավելի շատ հարաբերական

մեծություններ, այն դնապրում, եթե մարմնի ճարպային զանգվածի քացարձակ և հարաբերական մեծությունները ավելի քիչ են:

Քանի որ թերթ քաշայինների մոտ ճարպային զանգվածի հաշվին մարմնի քաշի իջնցումը չի կարող ապահովել ծրագրավորված քաշային կարգը, իսկ մկանային զանգվածը, որն իր մեջ է պարփակում օրգանիզմի ջրի հիմնական քանակը (մոտ 50 %, երբեմն նաև 53-65 %), ապա քաշի կորուստը մեծամասամբ ապահովում է օրգանիզմի որոշ ջրազրկման հաշվին: Այն արտայատվում է ջրի կորուստով, առաջին հերթին մարմնի մկանային զանգվածով, որը հեշտությամբ է ջուր անջատում:

Նկատվում է, որ մարզիկների մարմնի քաշի իջնցումից հետո, մկանային զանգվածի բացարձակ նշանակությունը նվազում է: Ակնհայտ է, որ ցածր քաշային կարգում մարմնի քաշի իջնցումը նպատակահարմար է կատարել կարծ ժամանակում:

Ծանր քաշային կարգի մարզիկները պետք է մարմնի քաշը իջնցնեն ավելի երկար ժամանակահատվածում: Որքան շատ ժամանակ ունի մարզիկն իր տրամադրության տակ, այնքան ոյուրին է ազատվել «ավելորդ» քաշից՝ ճարպային բաղադրամասի հաշվին: Մյուս կողմից պարզ է դառնում, որ ծանր քաշայինները ավելի դժվար են իջնցնում նոյն հարաբերական քաշը և իրենց վաստ են զգում: Դա բացատրվում է նրանով, որ նորանք, ունենալով ավելի քիչ ջրի հարաբերական պահենատներ և հարաբերական մկանային զանգված, օգտվում են նոյն սխեմաներով և նոյն ժամանակում, ինչպես ցածր քաշայինները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այս նորակար նրանց համար անընդունելի է: Ծրագրի ընտրության և քաշի իջնցման ժամկետների որոշման համար կարևոր ցուցանիշներից է մարզիկի մարմնի կազմի բնութագիրը՝ բացարձակ, հարաբերական և ճարպային զանգվածների մեծությունները և ջրի քանակը:

Զնայած, որ վերջին տարիներին հրատարակվել են բազմաթիվ հնտաքրքիր աշխատանքներ մարզիկների քաշի իջնցման վերաբերյալ, այդ թվում նյութափոխանակության գործընթացի ուսումնասիրությունը ջրազրկման տարրեր պայմաններում (սառնա, դինտա, քաշի իջնցման համալիր նղանակներ և այլն), դեռևս չեն տրվել բոլոր հարցերի պատասխանները: Հնտագայում ուսումնասիրման կարիք ունեն, այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպեսիք են.

1. Մարմնի քաշի ինչպիսի՞ մեծություններն են համարվում սահմանային և լավագույն մարմնի քաշի իջնցման ժամանակ՝ տարրեր քաշային կարգի և մարմնակազմության մարզիկների մոտ:

2. Ինչպես է փոփոխվում մարզիկի օրգանիզմի ներքին միջավայրը և ընթանում մարմնի ջրաղային փոխանակության դինամիկան մարմնի քաշի իջնցման պայմաններում:

3. Մարզիկի հատուկ սննդային ռացիոնի մշակում, որ հաշվի է առնվում մարմնի քաշի իջնցման ընթացքում փրկությունների և աշխատունակությունը ապահովող քիմիական տարրերի հետացումը օրգանիզմից:

Դրոֆենոր Վ.Բ.Առաքելյանն իր նրկարամյա դիտարկումների և գիտափորձների հիման վրա, մարզիկներին և մարզիչներին խորհուրդ է տալիս քաշի կարգավորման հարցերը լուծել առավել ընդունելի նղանակով, առանց վնաս պատճառնուու մարզիկների առողջությանը և հաշվի առնել հնտկյալը.

1. Զի կարելի մարմնի քաշն իջնցնել ավելի քան 7 %, քանի որ դա կհանգնեցնի մարզիկի աշխատունակութան և մարզական վարպետութան գուցանիշների զգալի վատթարացմանը:

2. Քաշը իջնցնելու գործընթացը պետք է ընգրկի որոշակի միջոցառումների պարտադիր համալիր՝

ա) անհատական հաշվեկշռված դինտա.

բ) կանոնավոր մարզումներ.

գ) տարացնող գործընթացներ (վերականգնողական մերսուու և քաղնիք).

դ) ամենօրյա ինքնահսկողություն մարմնի ընդհանուր վիճակի և քաշի նկատմամբ:

3. Մարզիկի մարմնի քաշի իջնցմանը պետք է նախորդեն նախական մարզումները՝ ոչ պակաս, քան 2-3 ամիս տևողությամբ:

Նախապատրաստական ողջ ժամանակահատվածում պետք է կատարվեն մեծ ծավալի ընդհանուր ֆիզիկական և հատուկ վարժություններ, որոնք նպատակ են հնտապնդում քարձրացնելու մարզիկների անրոր պատրաստվածությունը (նրկարատու զրոսանք, կրոսավազք, լող օրգանիզմի ընդհանուր զարգացմանն ուղղված վարժություններ):

4. Եթե մարզիկի «ավելորդ» քաշը անմիջականորեն կապված է մարմնի ճարպային քաղաքրամասի ավելցուկի հետ (ճարպի քանակը կազմում է մարմնի քաշի 15 %-ից ավելին), ապա քաշի իջնցումը պետք է սկսն մրցումներից 20-30 օր առաջ: Այս դեպքում նպատակահարմաք է կիրառել մարմնի քաշի հավասարաշափ իջնցման նղանակը, այսինքն՝ անհրաժեշտ է հաշվարկել, թե օրական որքան կզ պետք է կորցնի մարզիկը քաշը իջնցնելու օրից մինչև մրցումների սկիզբը: Մարզիկը պետք է խստորեն պահպանի այս սկզբունքով կազմված քաշի կարգավորման գրաֆիկը: Քաշային գրաֆիկի վերահսկումը պետք է կատարվի ամեն օր՝ վաղ առավոտից մինչև նախաճաշը, կշունդը, արթնանալուց և զուգարան գնալուց անմիջապես հետո:

Մարմնի քաշի նկատմամբ հսկողություն սահմանելիս՝ մարզիկը պետք է հաշվի առնի, որ մինչև 70 կգ քաշային կարգի մարզիկների մոտ մեկ զիշերվա ընթացքում պակասում է («այրվում է») մոտ 500-800 գրամ քաշ, իսկ 70 կգ-ից քարձր մինչև 100կգ քաշայինները կորցնում են շուրջ 1000 գրամ քաշ: Այդ

պատճառով ցանկալի է, որպեսզի մարզիկի քաշը իջնենալուց առաջ չգերազանցի նշված պայմանական նորման:

5. Դիտարկումների արդյունքները պետք է ճշտորեն գրանցեն ինքնահսկողության հատուկ օրագրում: Գրառումների վերլուծությունը հնարավորություն կտա մարզիկին ճանաչն իր օրգանիզմը և մտցնել որոշ ուղղումներ մարմնի քաշի իջնեցման ընդհանուր պլանում:

6. Քաշը իջնեցնող մարզիկի սննդի օրաբաժինը պլանավորելիս պետք է հաշվի առնել՝ ինչպես կլիմայաաշխարհագրական և ազգային գործուները, այնպես էլ մարզիկի սովորությունները, նախապատվությունները և նույնիսկ ճաշակը:

ԳԼՈՒԽ 11

ՄՐՅԱԿՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մարզիկների կյանքը և գործունեությունը որոշակի տարիքային շրջանում լիովին ննջարկվում է մարզական պահանջմունքներին: Ըմբիշների մարզական կենսագրությունը սովորաբար ընդգրկում է 10-30 տարիները, որոշ դեպքներում՝ նույնիսկ ավելի, կազմելով ողջ կյանքի մեկ չորրորդ, մեկ հինգերորդ մասը: Եթե հաշվի առնենք մարզիկների սպորտային բարձր նվաճումների ձգտումը, ինչպես նաև մարզումների ազդեցությունը նրանց անհատականության ձևափորման վրա, ապա մարզական կենսագրության դերը դառնում է ավելի նշանակալի:

Հավանաբար ճիշտ է այն ամսումը, որ բազմամյա մարզումների հնտևանքով մարզիկները ձեռք են բերում դժվարությունները հաղթահարելու ընդունակություն: Եվ, նույնիսկ ակտիվ սպորտը թողնելուց հետո էլ, ըմբիշները հնտագա ողջ կյանքի ընթացքում պահպանում են հոգեկան կայունության բարձր մակարդակը, որն արտահայտվում է ուժնդ ընդգծված կամային հատկանիշներով:

Մարզիկների մարզական գործունեությունը բաղկացած է երեք մասներից՝ ուսումնամարզական, արտամարզական և մրցակցական: Մարզական գործունեության այս երեք կողմերը սերտորեն փոխկապակցված են և ուղղված մարզական վարպետության կատարելագործմանը, սակայն նրանցից յուրաքանչյուրն իր ուրույն դերն ունի մարզական բարձր արդյունքների նվաճման գործում:

Նախ պարզենք թե ինչ են իրենցից ներկայացնում մրցումները: Դա ցուցադրման, համեմատման, նվաճումների գնահատման, մարզական մրցակցության կարգավորման, անհատի ձևավորման, մարդկային հնարավորությունների բացահայտման, մարզիկների ընտրության, մարզիկների պատրաստության մի-

զոյ է և շփման գործոն: Նրանք ունեն սոցիալական մնձ նշանակություն, բնութագրվում են ծխականությամբ, ծայրահեղ իրավիճակների բազմազանությամբ, մարզիկի օրգանիզմի պահուստային հնարավորությունների առավելագույն մորթիկացմամբ:


Մրցումները տալիս են ուսումնամարզական և արտամարզական աշխատանքների գնահատականը:

Հանդիսատեսների համար մրցումները տոնական գվարծություններ են՝ լի ցանկալի արդյունքների սպասումով:

Մրցակցական գործունեության գերակայությունը մարզական գործունեության մյուս կրողմերի նկատմամբ ակնհայտ է, քանի որ նրա պահանջներն են ընկած ուսումնամարզական և արտամարզական գործունեության ծրագրերի հիմքում: Այն ի մի է քննում ուսումնամարզական և արտամարզական գործունեության արդյունքները, բացահայտում դրանց թերի կողմերը և ուղղորդում հետագա ընթացքը, իմաստավորում մարզական գործունեությունը:

Մրցակցական գործունեությունը կազմված է երկու փուլից՝ նախնական մրցակցական և բուն մ բցակցական (գծապատկեր 4):


Գծապատկեր 4



11.1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՅԱՆ ՓՈԽԸ

Այս փուլը շարունակվում է 2-3 օր՝ ընդգրկելով վերջին մարզման և կշռման օրվա միջև ընկած ժամանակահատվածը: Այս փուլի աշխատանքների հաջողությունը կախված է մարզիչներից, թիմի ղեկավարներից և մարզիկներից: Նախնական մրցակցական փուլի բաղադրիչները ներկայացված են 5-րդ գծապատկերում:

Գծապատկեր 5



Տաճախող և քունը: Պատասխանատվության բարձր զգացումը հաճախ վերածվելով տագնապի կարող է նվազեցնել մարզիկի հնարավորությունները, ինչն էլ հաճախ ցածր արդյունքների ցուցադրման պատճառ է դաշնում: Ուստի ճիշտ կազմակերպված հանգստի և քնի դերը նախամեջնարկային օրերին կտրուկ մեծանում է: Այն հատկապես կարևոր է սառունայից հետո՝ քաշի կարգավորման ժամանակ:

Դրական հոգական ֆոնի ստեղծում: Անհրաժեշտ է հետևել ըմբիշների նախամեջնարկային վիճակներին. մեկնարկային լրատրաստվածությանը, մեկնարկային տենդին և մեկնարկային ապարատիային: Ծատ կարևոր է ճշտորեն որոշել դրանց առաջացման պահը: Եթե մեկնարկային պատրաստվածությունը ժամանակից շուտ է առաջ գալիս, ապա մարզիկը «այրվում» է և մրցման սկզբում այն վերածվում է մեկնարկային ապարատիայի կամ մեկնարկային տեսնդի:

Այս ամենի կանխարգելման և դրական հոգական ֆոնի ստեղծման գործում մեծ է հոգեբանի և մարզի դերը:

Մուունդը և քաշային ռեժիմը: Ծայրահեռ վտանգավոր է օրգանիզմի կտրուկ ջրազրկումը, ինչը ըմբիշներին ստիպում է հրաժարվել սննդից և չափազանց մեծ քսանակությամբ հեղուկ ընդունել: Իսկ դա նվազեցնում է ֆիզիկական և հոգեկան աշխատունակությունը: Ուստի հսկողության տակ պետք է պահել սննդի կալորիականությունը, համը, ջրային ռեժիմը և մարմնի քաշը՝ որպես էներգետիկ հավասարակշության ցուցանիշ:

Հնասաւածքների և այլ հիվանդությունների վերջնական բուժում: Մրցմանը նախորդող օրերին շատ կարևոր է հետևել մարզիկի առողջական վիճակին: Նախ և առաջ անհրաժեշտ է շարունակել վնասվածքների բուժումը և մրսածության հետևանքով առաջացող հիվանդությունների կանխարգելումը: Պետք է հիշել, որ բարձր մարզվածության վիճակում, մարմնի քաշի պակասնցման և հոգեկան լարվածության ֆոնի վրա ընկնում է

օրգանիզմի դիմադրողականությունը: Դա կարող է ուղեկցվել մրսածությամբ, աղեստամոքսային տրակտի խանգարմամբ և առաջացնել օրգանիզմի անցանկալի թուլացում:


Մարզահագուստի և մարզակոշիկների վերջնական պատրաստում: Ըմբիշի մարզահագուստը և մարզակոշիկները կարգի են քնրվում մրցման նախօրենին: Պետք է սոուզել դրանց ամրությունը, մաքրությունը, համապատասխանությունը մարմնի կազմվածքին և մրցականուններին:

Մրցակիցների մասին նախնական տեղեկությունների հայպարագում: Խիմի դեկավարմերը և անդամները պետք է օգտագործեն բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի նախնական տեղեկություններ հավաքնն մրցակիցների պատրաստվածության և նրանց հավակնությունների մասին: Ծատ կարևոր է, որ այդ տեղեկությունները չգերազանահատվեն և չթերագնահատվեն, քանի որ դրանք կարող են ուժացված լինել մրցակիցներին թյուրիմածության մեջ զցնելու համար: Միայն հետագա վերստուգումները և տեղեկությունների վերլուծությունը թույլ կտան օրյնկտիվ կարծիք կազմել մրցակիցների մասին և ճիշտ պլանավորել նրանց հետ գոտնմարտերի տակտիկան:

11.2. ԲՈՒՆ ՄՐՑԱԿՅԱԿԱՆ ՓՈԽԸ

Բուն մրցակցական գործունությունը իր հերթին կազմված է երկու փուլից. **օժանդակ և հիմնական** (գծապատկեր 6):

Գծապատկեր 6




Օժանդակ փուլ

Օժանդակ փուլի բաղադրիչներն են. մասնակիցների կշռումը և վիճակահանությունը, շրերթը, նախավարժանքը, մրցակիցների գոտեմարտերի ճնպավերլուծությունը, թիմակիցների գոտեմարտերի ճնպավերլուծությունը, մարզումների պլանավորումը, սնունդն ու քաշային ռեժիմը, գիշերային քունը և հանգիստը (գծապատկեր 7):

Գծապատկեր 7

ՕԺԱՆԴԱԿ ՓՈՒԼ



Մասնակիցների կշռումը և վիճակահանությունը: Կշռման և վիճակահանության արարողությունը պետք է կատարվի արագ, կազմակերպված, առանց հոգեկան և ֆիզիկական էներգիայի ծախսների: Ուստի հարկավոր է մարմնի քաշը նախօրոք ստուգել և կարգավորել, պետք չէ ուշանալ կշռումից, ակտիվորեն քննարկել հանպատրաստի ծագող խնդիրները՝ հատկապես մրցակիցների հետ:

Մարզիչները պետք է մինչև վերջ մնան կշռման և վիճակահանության արարողությանը, որպեսզի բացառեն մրցավարական հանձնաժողովի սխալները և պարզեն թե ինչ մրցակիցներ են բաժին ընկել իրենց սանրին:

Մասնակցություն շրերթին: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր մարզիկի և ամբողջ թիմի ընդհանուր տնտեսին, նրանց վարքին, պահկածքին, միմիկային և այլն:

Նախավարժանք: Նախավարժանքը պետք է սկսվի և ավարտվի ժամանակին, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն ընտրված վարժություններին, այլև՝ նախավարժանքից հետո տրվող հանգստին: Այս ամենը կախված է նաև մարզիկների անհատական առանձնահատկություններից: Օրինակ, մարզիչը պետք է գիտենա, թե յուրաքանչյուր մարզիկ գոտեմարտից քանի րոպեն առաջ պետք է սկսի նախավարժանքը՝ և քանի րոպեն առաջ ավարտի:

Մրցակիցների և թիմակիցների գոտեմարտերի ճնպավերլուծություն: Այստեղ պետք է լինել ուշադիր, արդարացի և օրյենկայի: Մեծ տեղ է տրվում ըմբիշների ինքնուրույնությանը, հոգեկան կայունությանը, մտածելակերպին և հետաքրքրասիրությանը:

Հանգիստ՝ գոտեմարտերի և մրցման առավոտյան և նրեկոյան մասնիկ միջև: Այստեղ պետք է հաշվի առնել մարզիկների անհատական առանձնահատկությունները. ումանք ցանկանում են առանձնանալ, ումանք՝ գտնվել ընկերների շրջանում: Ամեն

դեպքում խորհուրդ չի տրվում նրկար ժամանակ գոտնմարտներ դիտել և մնալ մարզադահիճում:

Հարկավոր է ավելի շատ ժամանակ անցկացնել մարուր օդում. այգում, ջրի ափին, կրակի մոտ և այս:

Հանգիստը պետք է նպաստի դրական հուզական ֆոնի ստեղծմանը:

Սնունդը, քաշային ուժիմը և զիշերային քունը: Կշռումից անմիջապես հնտո պետք է կազմակերպն սննդի և հնդուկի նախնական ընդունում:

Շատ թիմեր մրցումներին մասնակցում են սեփական խոհարաններով, ինչը մարզիկներին հնարավորություն է տալիս ռնստորանային ճաշերի և խորտիկների փոխարեն ստանալ անհրաժեշտ և օգտակար սնունդ:

Հարկավոր է հնտեսել, որ մարզիկները չափից շատ սնունդ և հնդուկ չընդունեն, ինչը բացասաբար կանդրադաւնա մարզիկի ֆիզիկական վիճակի վրա և կյանգարի զիշերային հանգիստ քունը: Քննուց առաջ անհրաժեշտ է կազմակերպն երեկոյան գրուանք:

Մարզումների պլանավորում: Մրցման նախորդ օրը, կշռումից առաջ պետք է պլանավորել մարզում, որը նպաստում է հաջոր օրվա հաջող մնկնարկին: Դրանից բացի այդ մարզման միջոցով կարգավորվում է մարզիկների մարմնի բաշը: Այդ մարզումը ըմբիշներն անվանում են «փուշ-փուշ»: Այն պետք է անցկացնել բավականությանք, ցանկալի է, որ ունենա փորձավալ ու լարվածություն:

Հիմնական փուլ

Հիմնական փուլն իր մեջ ընդգրկում է տեխնիկական գործողությունների կատարման, գոտնմարտի վարման, մրցումների մասնակցության տակտիկան և՝ գոտնմարտները (գծապատկեր 8):

ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼ

Տեխնիկական գործողությունների կատարման տակտիկա

Գոտնմարտի վարման տակտիկա

Մրցումների մասնակցության տակտիկա

Գոտնմարտներ

Տեխնիկական գործողությունների կատարման տակտիկա: Կարելի է առաջադրված հնարքները, հականարքները և պաշտպանությունները անթերի կատարել, սակայն հավասար մրցակիցների հնտ գոտնմարտի ժամանակ հազվադենա հասնել հաջողության: Սա վկայում է այն մասին, որ ըմբիշը վատ է յուրացընել այն տակտիկական գործողությունները, որոնք ուղղված են տեխնիկական գործողությունների կատարման համար անհրաժեշտ բարենպաստ պայմանների ստեղծմանը: Դա բացատրվում է նաև նրանով, որ ըմբիշի ուժը, դիմացկունությունը, ճկունությունը կամ արագությունը ցածր է անհրաժեշտ մակարդակից: Նման դեպքներում, բնականաբար, անհրաժեշտ է զգալի շոկումներ կատարել մարզման ծրագրի այն մասում, որն ուղղված է ըմբիշների ֆիզիկական պատրաստության բարելավմանը:

Ժամանակավից ըմբշամարտում և ընդհանրապես սպորտում առաջային պլան է մղված տակտիկական պատրաստու-

թյունը, որի բաղկացուցիչ մասերից մեկն էլ տեխնիկական գործողությունների կատարման տակտիկան է:

Պետք է նշել, որ «մեծ» սպորտում տեխնիկական գործողությունների կատարումը առանց տակտիկական հնարքների կիրառման գրեթե անհնար է: Ուստի տեխնիկական գործողությունները և տակտիկական հնարքները ավելի հաճախ հանդեն են զայլս միաձուլված՝ քան առանձին և ըմբշամարտի պրակտիկայում էլ ավելի շատ կիրառվում են տեխնիկատակտիկական գործողություններ, տեխնիկատակտիկական պատրաստություն արտահայտությունները:

Ըմբշամարտում բազմաթիվ հնարքներ արդեն իսկ հայտնագործված են և հաջողության հասնելու համար ոչ թե նոր հնարքներ է պետք հայտնագործել, այլ՝ տիրապետություն ունեցող հնարքներին և կատարելագործել դրանց կատարման տակտիկան:

Քարձրակարգ մարզիկների հաջողություններից մեկն էլ կայանում է նրանում, որ նրանք յուրաքանչյուր մրցմանը ներկայանում են մի քանի տեխնիկատակտիկական գործողությունների կատարման նոր, մշակված և կատարելագործված տարբերակներով:

Գոտենմարտի վարման տակտիկա: Ըմբիշը կարող է անթերի տիրապետություն տեխնիկատակտիկական գործողություններին, քայլ, այնուհանդեռձ ավելի շատ պարտվել՝ քան հաղթել մրցակիցներին: Սա բացատրվում է գոտենմարտի վարման համարի հմտության բացակայությամբ: Այդ հմտությունը բնութագրվում է կոնկրետ մրցակցի հետ գոտենմարտի վարման տակտիկայի նպատակահարմարությամբ և արդյունավետությամբ:

Գոյություն ունի գոտենմարտի վարման տակտիկայի նրեք ձև, հարձակողական, հակահարձակողական և պաշտպանողական: Ըմբշամարտի պրակտիկայում այս նրեք ձևերը առանձին առանձին գրեթե չեն կիրառվում: Դրանք կիրառվում են միմ-

յանց համակցված, սակայն նրանց տեսակարար կշիռը, բնականաբար տարբերությունը պայմանավորված է ըմբիշների անհատական առանձնահատկություններով, գոտենմարտի ընթացքում ստեղծվող փոփոխական իրավիճակներով:

Որքան ճկուն է ըմբիշի տակտիկական մտածողությունը, այնքան արագ է նա կարողանում ճիշտ կողմնորոշվել և իրավիճակին համապատասխան որոշումներ կայացնել:


Մրցումների մասնակցության տակտիկա: Այստեղ պետք է ճշտել այն նպատակը և խնդիրները, որոնք տվյալ մրցման ժամանակ պետք է դրվեն ըմբիշի առջև: Նպատակը և խնդիրները որոշելիս պետք է իրատես լինել, որպեսզի դրանք համապատասխանեն ըմբիշների հնարավորություններին: Զնայած, նրենմ որոշակի հոգեբանական խնդիրների լուծման նպատակով դրանք կարող են մի փոքր գերազանցել՝ կամ ավելի զածը լինել ըմբիշի հնարավորություններից:

Գոտենմարտեր

Ըմբիշների հոգեկան հատկանիշներին ներկայացվող պահանջները գոտենմարտի ժամանակ: Գոտենմարտի ժամանակ նպաստավոր իրավիճակների ստեղծման և արդյունավետ վերահսկման կարությունը մեծապես պայմանավորված է ըմբիշների հոգեբանական պատրաստվածության աստիճանով: Գոյություն ունեն հոգեբանական գործուների նրեք խումբ (գծապատկեր 9), որոնք նպաստում են նման կարողության ձևավորմանը և կանխորոշում են մարզական բարձր նվաճումները:

Հնածին հոգեբանական գործուները (բարձրագույն նյարդային համակարգի գործունեության տեսակը, խառնվածքի տեսակը, եռանդունության և ագրեսիվության մակարդակը) բնորոշում են ըմբիշների մտավոր, զնղագիտական և տեսական պատրաստվածության աստիճանը:

**ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՐՈՇՈՂ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**



Ջևալուրիկող հոգնբանական գործոնները (բմբշամարտով զբաղվելու շարժադիթը, աշխարհայացքը և գաղափարական համոզմունքները) բնորոշում են բարոյակամային պատրաստվածության մակարդակը:

Իրավիճակային գործոնները (ժամանակի և տարածության ընկալումը, տակտիկական մտածողությունը, կանխորշման ընդունակությունը) բնորոշում են տակտիկական և կամային պատրաստվածությունը:

Գոտնմարտը համարվում է բնավորության շատ արժեքավոր գծերի (խիզախություն, վճռականություն, նպատակավացություն, համառություն, ինքնատիրապետում, հարգանք մրցակցի հանդեպ, ազնվություն, դժվարությունները հաղթահարելու ընդունակություն և այլն) դաստիարակման միջոց:

Գոտնմարտի պահանջները ըմբիշների տեխնիկական պատրաստվածությանը: Տեխնիկական պատրաստվածության կարևորագույն ցուցանիշներից մեկը համարվում է բարդ կոորդինացիոն շարժումների տիրապետումը, ինչը հնարա-

վորություն է տալիս կառավարել սնվածական մարմնի շարժումները տարածության երեք հարթություններում (ուղղաձիգ, հորիզոնական և նետաձիգ), բարդ հետագծով շարժումների ժամանակ, ինչպես նաև շարժումներ կատարել հենման տարրեն պայմաններում (կոշտ, փափուկ, շարժական, լարձուն և այլն): Կարելի է ասել, որ կոորդինացիոն ընդունակությամբ օժտված ըմբիշը շարժողական հմտության մակարդակով ավելի շատ շարժումների է տիրապետում, դրանք կատարում է կայուն և ընկալում է համարդի կնքառվ, այսինքն՝ միանգամից մի քանի զգայարանով:

Գոտնմարտի ընթացքում լայնորեն կիրառվում են մարմնի շարժման իներցիայի ուժը, մարմնի քաշը, շփման ուժը, հենման ունակցիայի ուժը, կնճտրունախույս ուժները:

Շարժումների բազմազանությունը նպաստում է կոորդինացիոն ընդունակությունների ձևավորմանը:

Ըմբիշը գրոհելիս կատարում է բարդ կոորդինացիոն շարժումներ, որոշ դեպքերում նաև անսովոր դիրքերից, միաժամանակ կանխվելով և հետ մրցնելով մրցակցի գրոհները: Ըմբիշը բավական ժամանակ է ծախսում մաներելու, մրցակցին կաշկանդնելու, հավասարակշռությունից հանելու, հնարքի կատարման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, նպատակահարմար հեռավորություն ընտրելու համար: Այս ամենը տեղի է ունենում մրցակցի դիմադրության, ժամանակի սղության և մրցավարական ճնշման պայմաններում:

Ըմբիշի համար շատ կարևոր է դիմամիկի իրավիճակներում հավասարակշռության պահպանումը: Այս կարևոր հատկանիշը ձևոր է բնրվում ոչ միայն գոտնմարտների ընթացքում, այլև՝ հատուկ վարժությունների, ակրոբատիկայի և խաղերի միջոցով:

Ըմբիշների տեխնիկական պատրաստվածության մակարդակը որոշելիս պետք է պարզել, թե մարզիկը յուրացըն է արդյոք ճակատային, աջակողմյան և ձախակողմյան կանգնվածքները,

տնդաշարժները, ձնոքների, ոտքների և իրանի միջոցով կատարվող հարձակողական և պաշտպանողական շարժումները, յուրացված տեխնիկական գործողությունների որ մասն է վերածվել շարժողական հմտության:

Գոտնմարտի պահանջները ըսմբիշի ֆիզիկական պատրաստվածությանը: Ըմբիշների գոտնմարտները ընթանում են շատ մեծ արագությամբ և լարվածությամբ, իսկ հավասար մրցակիցների դեպքում ուժների գերազույն ծախսով:

Հաղթելու համար անհրաժեշտ է արագառնային ընդունակությունների և դիմացկունության զարգացման բարձր մակարդակ: Բարձրակարգ մարզիկը տարբերվում է ուսցիությամբ, ընդունում՝ միաժամանակ մկանային աշխատանքի երեք ռեժիմով (հաղթահարող, զիջող և ստատիկ), գործելու, մկանային սահմանային լարվածությունը թուլացմամբ հաջորդելու կարողությամբ: Այսպիսի աշխատանքը նպաստում է անաէրօք էներգոապահովման գործընթացների ակտիվացմանը:

Գոտնմարտի 3-4-րդ բուգեններին ակտիվանում են էներգոապահովման աէրոր գործընթացները: Գոտնմարտի վերջն ընթանում է թթվածնային նշանակալի պարտքի պայմաններում: Այսպիսով, գոտնմարտերը նպաստում են օրգանիզմի էներգոապահովման բոլոր երեք գործընթացների (աէրոր, անաէրոր լակտատ, անաէրոր ալակտատ) կատարելագործմանը:

Աէրոր աշխատունակությունը թույլ է տալիս դիմանալ մարզումների, միկրոցիկլների բնափածությանը, իսկ աճակրոր աշխատունակությունը՝ առանձին գոտնմարտների բնոնփածությանը:

Գոտնմարտները հատուկ պահանջներ են ներկայացնում ըմբիշների ձկունությանը, որն արտահայտվում է աշխատանքի դինամիկ և ստատիկ ռեժիմներում:

Դժվար է նախապատվությունը տալ որևէ շարժողական ընդունակության, դրանք բոլորն ել անհրաժեշտ են ըմբիշին և հարկավոր է զարգացնել համալիր կերպով:

11.3. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մրցումների համակարգը բազմակողմ հասկացություն է: Այն պատկերացում է տալիս մրցումների տարատեսակների, մարզական տարրում նրանց բանակի և վայրի մասին:

Մրցումները կարելի է դասակարգել ըստ երեք հատկանիշների. ըստ նպատակի (գծապատկեր 10), ըստ հաղթողների որոշման կարգի (գծապատկեր 11) և անցկացման կարգի (գծապատկեր 12):

Հասակարգման մրցումները անցկացվում են մարզիկների կողմից մարզական նորմների լրացման նպատակով:

Ստուգողական մրցումների նպատակն է ստուգել մարզման տվյալ մնացողիկում մարզիկների պատրաստության ընտրված ուղղվածության ճշտությունը և հավաքական թիմի կոմպլեկտավորումը:

Գլխավոր մրցումներն անցկացվում են մարզական տարրա արյունքների ամփոփման նպատակով: Բանի որ գլխավոր մրցումները համարվում են ամենակարևորը, ուստի նրանք առանձնանում են հոգեկան և ֆիզիկական մեծ լարվածությամբ: Լարվածության աստիճանը կախված է մրցակիցների որակավորումից: Որքան բարձր է մրցակիցների որակավորումը և որքան շատ է նրանց քանակը, այնքան մեծ է լարվածությունը: Որպեսզի մրցումները նպաստեն բարձրակարգ մարզիկների դաստիարակմանը, անհրաժեշտ է, որ մրցումները անցնեն հոգեկան և ֆիզիկական սահմանային լարվածության պայմաններում: Մրցումների նպատակահարմար համակարգը ննթադրում է այսպիսի մրցումների առկայություն:

Գծապատկեր 10

ՄՐՅՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԻ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ

ԳԼԽԱՎՈՐ

Գծապատկեր 11

ՄՐՅՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՌԹՈՂՆԵՐԻ
ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԻ

ԹԻՄԱՅԻՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ

ԹԻՄԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ

Գծապատկեր 12

ՄՐՅՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՄՐՅԱԾԱՐԱՅԻՆ

Միջաշարային մրցումների տարատեսակներն են առաջնությունները և ավանդական մրցաշարները:

Առաջնությունները լինում են տարբեր մասշտաբի. ուսումնական խմբի, մարզադպրոցի, քաղաքի, շրջանի, մարզի, երկրի, աշխարհամասի և այլն:

Ավանդական մրցաշարները անցկացվում են մեծ տոնակատարությունների ժամանակ, նվիրված են պետական այս կամ այն գործչին, որը մեծ ծառայություն ունի երկրի համար, ազգային հերոսներին, փառապանծ մարզիկներին և այլն:

Եթեն այս կարգի մրցումները համապատասխանում են միջազգային չափանիշներին, ապա ընդգրկվում են Միջազգային սիրողական ըմբշամարտի ֆեդերացիայի (FILA) մրցումների օրացուցային պլանում:

Հնկերական հանդիպումները կազմակերպվում են տարբեր մարզիչների խմբների, մարզադպրոցների, մարզական ընկերությունների, քաղաքների, երկրների թիմների միջև: Նման մրցումները բարեկամական կապերի հաստատման, աշխատանքային փորձի փոխանակման, մարզական վարպետության բարձրացման, քարոյակամային հատկանիշների դաստիարակման հնարավորություն են ընձեռում:

Մրցումների քանակը և նրանց տեղը մարզական տարրում: Մրցումների քանակը մարզական տարրում տատանվում է 6-9-ի միջև: Սա կախված է մարզիկի տարիքից, ընկերական հանդիպումների և լարված մրցումների քանակից: Օրինակ, որքան մեծ է մարզիկի տարիքը, այնքան ավելի քիչ մրցումների նաև կարող է մասնակցել: Մրցումների քանակը կարելի մեծացնել ընկերական հանդիպումների և թիմային մրցաշարների հաշվին, քանի որ այստեղ լարվածությունը մեծ չէ: Եվ հակառակը, մրցումների քանակը պետք է նվազեցնել, եթե լարված մրցումների քանակը շատ է:

Ամեն դեպքում գլխավոր մրցումների քանակը մնում է անփոփոխ. դրանք սովորաբար երեքն են: Օրինակ, հավաքական թիմի անդամների համար գլխավոր մրցումները՝ երկրի, աշխարհամասի և աշխարհի առաջնություններն են՝ կամ օլիմպիական խաղերը:

11.4. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

Ինչպես բոլոր մարզաձևերում, այնպես էլ ըմբշամարտում մրցումների նպատակն է ի հայտ բերել ուժնեագույն ըմբիշներին (ըստ բաշային կարգերի), ուժնեագույն թիմին, նպաստել ըմբիշների վարպետության հետագա կատարելագործմանը, ինչպես նաև ըմբշամարտի մասսայականացմանը:

Ըմբշամարտի մրցումները լուծում են մանկավարժական, դաստիարակչական և ազիտացիոն մի շարք խնդիրներ:

Մրցումների մանկավարժական նշանակությունը կայանում է նյանում, որ այստեղ ամփոփվում են ուսումնամարզական և դաստիարակչական աշխատների արդյունքները, բացահայտվում ուսումնամանկավարժական գործընթացի թերի կողմերը, նպաստում դրանց որակի բարձրացմանը, ցույց տալիս մարզական կոլեկտիվների, մարզիչների և մարզիկների նվաճումները:

Մրցումները համարվում են նաև փորձի փոխանակման լավագույն միջոց:

Այստեղ մարզիչը կարող է հետևել իր սանի նկույթներին, իսկ մարզիկը՝ մորիլիզացնել իր բոլոր ընդունակությունները, ինչպես նաև այնպիսի գիտելիքներ ձնոր բերել, ինչը անհնար է ստանալ սովորական ուսումնամարզական աշխատանքի ժամանակ:

Մրցումները հանդիսանում են բարոյակամային պատրաստության մարտական հատկանիշների յուրօրինակ քննություն և նպաստում են դրանց դաստիարակմանն ու կատարելագործմանը:

Մրցումների դաստիարակչական նշանակությունը կայանում է նրանում, որ դժվարին պայմանները, մարզասերների ներկայությունը մարզիկից պահանջում են մնած պատասխանատվություն, կարգապահություն, սնվական շահերի ենթակում կոլեկտիվի շահերին:

Այստեղ դաստիարակվում են նաև բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են համարձակությունը, ինքնատիրապետումը, ընկերասիրությունը, մրցակցի նկատմամբ հարգանքի զգացումը և այլն:

Մրցումները իրենց հետաքրքիր մրցակցությամբ, անակնկալի և անսպասելի արդյունքներով ոչ միայն հետաքրքիր ժամանցի միջոց են, այլև տվյալ մարզաձևի և առողջ ապրելակերպի պրոպագանդման միջոց: Ուստի մրցումները պետք է կազմակերպներ գանգվածային հանգստի վայրերում. մարզադաշտներ, մշակույթի պալատներ և այլն:

Ճիշտ և բարձր մակարդակով կազմակերպված մրցումները նպաստում են վերը նշված խնդիրների ամբողջական լուծմանը:


Մրցումների կազմակերպման և անցկացման հաջողությունը շատ բանով կախված է խորը և մանրակրկիտ կատարված նախապատրաստական աշխատանքներից և անաշառ մրցավարությունից:

Նախապատրաստական աշխատանքները նպատակահարմար է քաժանել մի քանի փուլերի:

Մրցումների կազմակերպման առաջին փուլն իր մեջ ընդգրկում է հետևյալ աշխատանքները. մրցումների անցկացման վայրի և ժամկետի որոշումը, կանոնադրության և ծալսների

նախահաշվի կազմումն ու հաստատումը, կազմկոմիտնի հաստատումը (որը պատճառաբանաւոր է մրցման անցկացման համար), գլխավոր մրցավարի և քարտուղարի հաստատումը (գծապատկեր 13):

Գծապատկեր 13



Կանոնադրությունը պետք է լինի մանրակրկիտ մշակված և պարունակի տեղեկություններ հետևյալ կետերի վերաբերյալ՝

1. մրցման անվանումը.
2. նպատակը և խնդիրները.
3. մրցման դեկավարությունը (ով է կազմակերպում և անցկացնում).
4. անցկացման վայրը և ժամկետը.
5. մասնակցող կազմակերպությունները և մասնակիցները (ինչ թիմներ, ինչ տարիքի և կարգի մարզիկներ կարող են մասնակցել).

6. անցկացման կարգը (թիմային, անհատական, թիմային անհատական, շրջանաձև կամ համաձայն միջազգային ֆեդերացիայի կողմից հաստատված կանոնակարգի).

7. հայտերի ներկայացման ժամկետը (նշվում է նախական և վերջնական հայտերի ներկայացման ժամկետները).

8. ծախսները (նշվում է թե գործուղման, գիշերավարձի և սննդի հետ կապված ծախսների որ մասն են իրենց վրա վերցնում մրցման կազմակերպիչները).

9. պարզեատրումը (հաղթողներին և մրցանակակիրներին սպասվող պարզեները):

Կանոնադրությունը կազմվում և հաստատվում է անցկացնող կազմակերպության կողմից:

Այն համարվում է ուսումնամարզական աշխատանքների ուղղվածությունը և պատրաստության փուլը որոշող մեթոդական փաստաթուղթը:

Մասնակցող կազմակերպություններին մրցման մասին պետք է տեսյակ պահեն մրցումից 3-4 ամիս առաջ:

Կանոնադրության հետ մեկտեղ կազմվում է նաև մրցումների նախահաշվիվը: Նախահաշիվը պետք է ընդգրկի հետևյալ կետերը՝

1. մրցման անվանումը.
2. անցկացման վայրը և ժամկետը.
3. մրցավարների քանակը և նրանց ծախսները (ճանապարհածախս, գիշերավարձ, սնունդ կամ աշխատավարձ).
4. մասնակիցների քանակը և նրանց ծախսները (ճանապարհածախս, գիշերավարձ, սնունդ).
5. շենքի վարձակալության վարձը.
6. մրցման վայրի գնդարվեստական ձևավորման ծախսները.
7. գովազդային ծախսներ.
8. սպասարկող անձնակազմի ծախսները (բժիշկ, բան-

վորներ).

9. տրանսպորտային ծախսեր:

Մրցումների նախապատրաստական աշխատանքների նրբորդ փուլը իր մեջ ընդգրկում է մրցման տնηի ընտրությունը, մրցման ծրագրի կազմումը, մրցավարական հանձնաժողովի համալրումը, մրցման մասին նախնական տեղակատվության ապահովումը (գծապատկեր14):

Գծապատկեր 14

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ Բ ՓՈԽԸ

Մրցման տնηի ընտրություն

Մրցման ծրագրի կազմում

Մրցավարական հանձնաժողովի համալրում

Մրցման մասին նախնական տեղակատվության ապահովում

Մրցումների վայրը պետք է համապատասխանի ընդունված նորմերին (սանիտարահիգինիկ պահանջներ, մասնակիցների և մարզասերների համար առավելագույն հարմարություններ):

Հարկավոր է պատրաստել գովազդային վահանակներ, աֆիշներ, ֆոտոցուցափենիկներ և այլն:

Մրցումների մասին նախնական տեղեկությունները պետք է տրվի մամուլի, ռադիոյի, հեռուստատելսության և աֆիշների միջոցով:

Մրցումների նախապատրաստական աշխատանքների նրբորդ փուլը ներառում է մասնակիցների ընդունումը և տեղավորումը, անհրաժեշտ փաստաթղթերի ստուգումը և մասնակիցների բժշկական զննումը, մասնակիցների ծանոթացումը մրցման ծրագրի հետ, մրցավարական հանձնաժողովի վերջնական ձևափորումը, կշռման մրցավարների նշանակումը, մրցավարական խորհրդակցության անցկացումը (գծապատկեր15):

Գծապատկեր15

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ Յ ՓՈԽԸ

Մասնակիցների ընդունում և տեղավորում

Անհրաժեշտ փաստաթղթերի ստուգում և մասնակիցների բժշկական զննում

Մասնակիցների ծանոթացումը մրցման ծրագրին

Մրցավարական հանձնաժողովի վերջնական ձևափորում, կշռման մրցավարների նշանակում, մրցավարական խորհրդակցության անցկացում

11.5. ՄՐՑԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գլխավոր մրցավարը ղեկավարում է մրցավարական հանձնաժողովի աշխատանքները: Նա բոլոր աշխատանքները կատարում է մրցումներն անցկացնող կազմակերպության հետ խիստ համաձայնեցված: Գլխավոր մրցավարի փորձից, կազմակերպական ընդունակություններից, նրա անաշառությունից, սկզբունքայնությունից և հավասարակշռվածությունից է կալսված մրցումների հաջող ընթացքը: Հենց սկզբից նա պարտավոր է ստեղծել հանգիստ աշխատանքային մթնոլորտ:

Մրցման նախապատրաստական փուլերում գլխավոր մրցավարը պարտավոր է ուսումնասիրն լ մրցականունները, մրցման տեղի և կահավորման համար տալ անհրաժեշտ ցուցումներ, անմիջական մասնակցություն ունենալ մարցավարական հանձնաժողովի ձևավորմանը:

Մինչ մրցումները գլխավոր մրցավարը կազմկոմիտնի անդամների և քժշկի հետ մեկնում է մրցումների վայր, ստուգում անցկացման տեղի սահմանափակիչների պայմանները, գորգի, կշնորի և մյուս սարքավորումների վիճակը: Եթե ամեն ինչ համապատասխանում է մրցականուններին, ապա նա համապատասխան ակտով ձևակերպում է մրցման վայրի ընդունումը:

Գլխավոր մրցավարը անցկացնում է մրցավարական խորհրդակցություն, որտեղ մրցավարներին ծանոթացնում է մրցականունների փոփոխության հետ, կատարում է աշխատանքի բաժանում մրցավարների միջև, ձևավորում է կշռման հանձնախումբը և մրցավարական խմբերը, ինչը հնարավորություն է տալիս գոտեմարտի վարման աշխատանքներում ընդգրկել ավելի փորձառու մրցավարներին:

Գլխավոր մրցավարը պարտավոր է անընդհատ հետևել մրցման ընթացքին և մրցավարական աշխատանքներին: Գլխավոր մրցավարի պարտականությունները հաջող իրականացնելու

համար նրանից պահանջվում է մրցականունների գերազանց խմացություն: Մրցավարական սխալների բացահայտման ժամանակ շատ կարևոր է պարզել դրանց միտումը, եթե դրանք կատարվել են շահադիտական նպատակներով, ապա գլխավոր մրցավարը պարտավոր է պատասխանատվության ննջարկել այդ մրցավարին (մրցավարներին):

Գլխավոր մրցավարի բացակայության ժամանակ նրա պարտականություններն իրականացնում է գլխավոր մրցավարի տեղակալը:

Մրցումների ավարտից հետո, եթե օրվա ընթացքում գլխավոր մրցավարը, գլխավոր քարտուղարը և քժիշկը պետք է մրցումները ղեկավարող կազմակերպությանը ներկայացնեն գրավոր հաշվետվություն: Այդ հաշվետվությունը ներառում է հետևյալ կետերը՝

1. մրցման անվանումը.
2. անցկացման վայրը և ժամկետը.
3. մասնակցող կազմակերպությունները և մասնակիցները.
4. թիմերի և մասնակիցների քանակը.
5. հաղթողները և մրցանակակիրները.
6. մասնակիցների կարգապահությունը.
7. մասնակիցների բողոքները.
8. նյութատելինիկական բազան.
9. վնասվածքները:

Գործի ղեկավարը կազմակերպում է մրցավարական աշխատանքները տվյալ գորգի վրա: Նա ապահովում է մրցավարական խմբերի ժամանակին փոփոխումը, կարող է դադարեցնել գոտեմարտը, մասնակցել ըմբիշի կամ ըմբիշների հետացմանը, գլխավոր մրցավարին զեկուցել տվյալ գորգի մրցավարական աշխատանքների ընթացքի մասին:

Ավագ միջավարը դնկավարում է գոտեմարտի ընթացքը: Եթե գորգի վրայի և նզրային մրցավարների միջև կա տարածայնություն, ապա ավագ մրցավարը պարտավոր է, խնդրի լուծման համար միանալ նրանցից մեկի կարծիքին: Ուստի ավագ մրցավարը պետք է ուշադիր հնտևի գոտեմարտի ընթացքին, քանի որ միջամտության դնարում նրա որոշումը վերջնական է և նրա անաշառ որոշումից է կախված մրցման հաջող ընթացքը:

Գորգի վրայի մրցավարը գոտեմարտի ընթացքում կատարում է ամենապատասխանատու աշխատանքը: Նա պետք է գտնի անընդհատ շարժման մեջ, որպեսզի կարողանա տեսնել և ճշտորեն արձագանքնել ըմբիշների բոլոր գործողություններին (հնարքներ, արգելված գործողություններ և այլն): Գորգի մրցավարի վարպետությունը կախված է նրա զիտելիքներից, անկողմնակալությունից, զսպվածությունից, սառնասրտությունից, արագ կրողմնորշվելու ընդունակությունից և այլն: Նա որոշումներ կայացնելիս չպետք է ընկնի հանդիսատեսի և մարզաներների ազդեցության տակ, այլ պետք է առաջնորդվի մրցականոններով: Նրա աշխատանքը սկսիւմ է այն պահից, ենք ըմբիշները մտնում են գորգ: Գորգի վրայի մրցավարը պարտավոր է ստուգել, որ մարզիկները լինեն գոտեմարտին պատրաստ (մարմինը յուղով օծված կամ քրտնած չլինի, մարզիկների հագուստը, ծնկակալները չունենան մնաւաղական մասն և այլն): Նա սուլիչով ազդարարում է գոտեմարտի սկիզբը և հասուկ ժեստերով դեկավարում գոտեմարտի ընթացքը: Նա իրավոնք ունի ըմբիշի մարտավկային անվայնուց պահվածքի համար զգուշացնել դեղին՝ կամ հեռացնել կարմիր քարտ ցույց տալով:

Եզրային մրցավարը գնահատում է ըմբիշի տեխնիկական գործողությունները, օգնում է գորգի վրայի մրցավարին բացահայտելու խախտումները: Նա պետք է լինի ուշադիր և ժամանակին հայտնի իր կարծիքը:

Հաղորդավարը մրցավարը հայտարարում է հանդիպումների կարգի, ծրագրի փոփոխությունների մասին: Նա կարող է հայտարարել սպասվող հետաքրքիր հանդիպումների մասին, տնդեկություններ հաղորդել մարզիկների անձնական նվաճումներից և այլն: Լավ ներկայացված տնդեկատվությունը մարզասերներին օգնում է ճիշտ կողմնորշվել և ըմբշամարտը նրանց համար դառնում է ավելի մատչելի և հասկանալի:

Բժիշկը պատասխանատու է մրցման բժշկական սպասարկման համար: Նա է որոշում, թե վնասվածքը ստացած մարդկար կարո՞ղ է արդյոք շարունակել գոտեմարտը:

Բժիշկը պետք է կանխարգելի միջոցներ ձեռնարկի հիվանդությունները և վնասվածքները կանխելու համար: Այդ նպատակով նա նախօրոք ստուգում է հյուրանոցային պայմանները, մրցումների անցկացման մարզադահիճը և ճաշարանը:

ԳԼՈՒԽ 12

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԵՏԱՐՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍԻ ԱՐԱԿՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՎԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ըմբշամարտը ուժեղ և առնական մարդկանց մարզաձև է: Սակայն դա չի նշանակում, որ ըմբշամարտով կարող են գրադիմ միայն ֆիզիկապես ուժեղ մարդիկ: Ուժը, արագությունը, ճարպկությունը, դիմացկունությունը, ճկունությունը, համարձակությունը, վճռականությունը, համառությունը և ամուր առողջությունը ձևավորվում են ըմբշամարտով սիստեմատիկ գրադիմով ընթացքով:

Ըմբիշների բաժանումը քաշային կարգների, հնարավորություն է տալիս տարբեր քաշի մարդկանց հաջողությամբ մրցել միմյանց հետ:

Իսկ ըմբիշների բաժանումը տարիքային խմբների, հնարավորություն է տալիս միմյանց հետ մրցել տարբեր տարիքի մարդկանց:

Գոյություն ունեն հետևյալ տարիքային խմբներ՝

Ըմբշամարտում պատանեկան խմբներն առաջացել են դեռևս 1930-ական թվականների կեսերին: Պատանեկան մարզադպրոցի մասին առաջին կանոնադրությունը հաստատվել է 1939 թ., որտեղ պաշտոնապես թուլատրվում էր գրադիմ նաև ըմբշամարտով:

Պատանեկան համամիութենական առաջին մրցումները հունահոռմեական ըմբշամարտից անց են կացվել 1947 թ., իսկ ազատ ըմբշամարտից՝ 1948 թ.:

Բարձրակարգ ըմբիշների պատրաստման գործում մեծ նշանակություն ունի ըմբշամարտի լայն տարածումը պատանիների շրջանում:

Ներկայումս ըմբշամարտը մեր հանրապետությունում ամենատարածված և ամենասիրված մարզաձևներից մեկն է: Ըմբշամարտի խմբակներ կան հայաստանի գրեթե բոլոր մարզերում և քաղաքներում:

1996 թ. առաջին անգամ հայաստանում ստեղծվեց ըմբշամարտի ակումբ, որը կրում է Հայաստանի ազատ ըմբշամարտի ազգային ֆեդերացիայի նախկին նախագահ Վ. Զատիկյանի անունը:

Ժամանակակից մարզական գիտության զարգացումն առաջ քաշեց ուսուցման և մարզման մեթոդիկայի հետ կապված բազում հարցեր՝ տեխնիկայի տիրապետման, տակտիկական խնդիրների լուծման, շարժողական ընդունակությունների մշակման, մարզման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների և այլ հարցեր:

Մեծ նշանակություն ձեռք բերեցին այն հիմնահարցերը, որոնք կապված են պատանեկան սպորտի հետ:

12.1. ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՆԱՑՈՄՈՒՔԻ ՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԱՎԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատանիների հետ ըմբշամարտի պարապմունքներ կազմակերպելիս և անցկացնելիս պետք է հաշվի առնել նրանց օրգանիզմի անատոմիկական և հոգնբանական առանձնահատկությունները:

Պատանիները ըմբշամարտով կարող են գրադիմ 12 տարեկանից: Այդ տարիքից նրանց մոտ սկսվում է օրգանիզմի բուռն զարգացում: Այդ գործընթացն ընթանում է որոշակի

օրինաչափություններով: Նրանց օրգան-համակարգերի զարգացումը տեղի է ունենում ոչ թե առանձին-առանձին, այլ՝ սնրությունն միահյուսված:

Առանձին օրգան-համակարգերի աճի գործընթացում դիտվում են ոչ միայն քանակական փոփոխություններ, այլ նաև որակական տեղաշարժեր:

Ավելին, միևնույն տարիքում կարող են դիտվել որոշակի անհատական տարբերություններ, ինչը կապված է ֆիզիոլոգիական գործընթացների ընթացքի տարբեր տեմպերի հետ:

Այդ պատճառով նույն տարիքում կան տարբեր ֆիզիկական զարգացում, քաշ և խառնվածք ունեցող դեռահասներ: Այս ամենը դժվարացնում է ըմբշամարտի խմբակի ճիշտ կոմպլեկտավորումը: Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ ավելի նպատակահարմար է դեռահասներին և պատանիներին ըստ տարիքային առանձնահատկությունների բաժանել 3 խմբի, դեռահասներ՝ 12-13 տարեկան, կրտսեր պատանիներ՝ 14-15 տարեկան, ավագ պատանիներ՝ 16-17 տարեկան:

12-17 տարեկան հասակը համընկնում է սեռական հասունացման շրջանի հետ: Այդ տարիքում սեռական հասունացման հետ կապված փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողնում ողջ օրգանիզմի վրա: 12-15 տարեկանում տեղի է ունենում օրգանիզմի բուրն աճ նրկարությամբ (տարում 9-10 սմ) ինչը համընկնում է հիպոֆիզի և վահանագնդի ֆունկցիաների ուժնեցման հետ: Ողնաշարի, կրծքավանդակի, կոնքի և վերջավորությունների ոսկրացումը դեռևս ավարտված չէ: Կապահներն ավելի էլաստիկ են, քան տղամարդկանց մոտ, ուստի հարկավոր է ավելի զգուշորեն կիրառել ուժ և ձկունություն զարգացնող վարժությունները, այլապես վնասական կարող են բացասական ազդեցություն ունենալ ոսկրերի աճի և կեցվածքի վրա:

16-18 տարեկանում աճի տեմպերը դանդաղում են տարեկան 3 սմ: Այս հանգամանքը թույլ է տալիս անցնել մեծ ծանրություններով վարժությունների կիրառման:

Մկանային հյուսվածքը 12-15 տարեկանում աճում է ավելի շատ նրկայնքով, քան լայնքով: Մկանային համակարգի փունկցիոնալ հնարավորությունները դեռևս ավելի ցածր են, քան մեծահասակների մոտ:

Պրոֆեսոր Ֆարֆելի հետազոտությունները ցույց են տալիս, որ 15 տարեկանում ավարտվում է շարժողական անալիգատորների ձևավորումը և հնարավորություն ստեղծվում ուժի մշակման համար:

Դեռահասների հետ տարվող աշխատանքների մեթոդիկայում պնտը է հաշվի առնել նրանց սիրտանոթային համակարգի առանձնահատկությունները:

Այս տարիքում համեմատաբար դանդաղ է մեծանում զարկերակի լուսանցքը, իսկ գլխուղեղի կողմից սրտի և անորթների գործունության կարգավորումն անբավարար է: Դեռահասների մոտ նկատվում է արյան ճնշման բարձրացում: Մեծ բնուվածությունից նրանց մոտ կարող է առաջանալ առիթմիա և գլխապտույտ: Արագ առաջ է գալիս հոգնածություն:

Սիստեմատիկ մարզումների հետևանքով այս բացասական նրեւույթները վերանում են:

Մեծ դիմացկունություն պահաջող վարժությունները կարող են առաջացնել սրտամկանի գնրած (հիպերտրոֆիա): Ուստի բնուվածությունը պնտը է ավելացնել աստիճանաբար:

Պատանիների մոտ սրտի զարկերակի հաճախականությունն ավելի մեծ է: Ավագ տարիքի պատանիների մոտ սրտի զարկերակի հաճախականությունն ավելի է դանդաղում, ինչը նախադրյալներ է ստեղծում հատուկ դիմացկունության մշակման համար:

Պատանիների օրգանիզմը արագ հոգնում է և արագ է վերականգնվում: Ընդ որում ուժների վնասականգնումը տնդի է ունենում միայն այն դեպքում, եթե նրանք ստանում են փոքր կամ օպտիմալ բնոնվածություն:

12-15 տարեկանում փոփոխություններ են տնդի ունենում նաև պատանիների հոգեկան աշխարհում: Նրանք ձգտում են ինքնուրույնության, նրանց մոտ զարգանում է տրամաբանական մտածողությունը, սեփական արարքները և վարքը վերլուծնելու կարողությունը: Զգտելով մեծ երևալ, նրանք կարող են ի հայտ ընդել բնափրության բացասական գծեր՝ կոպտություն, ջղագրգռություն, մեծամտություն և այլն: Մարզչի խսդիրը կայանում է նրանում, որ նպաստի դրական հատկանիշների զարգացմանը և արմատավիլ անի բացասական հատկանիշները:

12-15 տարեկանում պատանիների օրգանիզմում գերակշռում են զրգուման պրոցեսները, որոնք պատճառ են դառնում կարգապահական խախտումների:

16-18 տարեկանում պատանիները դառնում են ավելի հանգիստ, հավասարակշռված:

12.2. ԲԺՇԿԻ ԵՎ ՄԱՐԶՉԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Դժվար է թերագնահատել բժշկի և մարզչի համատեղ աշխատանքի կարևորությունն աճող սերնդի առողջ և համակողմանի զարգացման գործում: Բժշկի և մարզչի համատեղ աշխատանքը սկսվում է նոր խումբ հավաքնելուց առաջ: Հարկավոր է, կրկին անգամ ուսումնասիրեն ըմբշամարտով զբաղվելու հակացուցումների այցուակը, ևս մեկ անգամ վնասային ուժի, արագության և ճարպկության ստուգողական փորձառությունների համակարգը:

Երեխային ըմբշամարտի խմբակ ընդունելուց առաջ մարզիչը ալսոր է նկատի ունենա, որ առողջության թեկութ աննշան

շնորհմանները հետագայում կարող են բնրել լուրջ հիվանդությունների և պարապմունքների երկարատև ընդհատման:

Հայտնի է, որ ֆիզիկական մնացք բնոնվածությունների կիրառումը կարող է իշեցնել օրգանիզմի դիմադրողականությունը: Բնականաբար, առավելագույն բնոնվածության աստիճանը պետք է իշեցնել, եթե օրգանիզմը թուլացնել է որևէ քրոնիկ հիվանդության պատճառվ: Բազմաթիվ հայտնի մարզիկներ ստիպված են նդել երկար ժամանակով խախտել կազմված մարզումների պլանը կամ շմասնակցնել կարևոր մրցմանը՝ նշիկների բորբոքման կամ ատամնացավի պատճառվ: Վտանգավոր են ոչ միայն հիվանդ ատամները կամ լնդերը, այլև՝ ականջի, ստամոքսի, աղիների քրոնիկ հիվանդությունները:

Ըմբշամարտի խմբակը ձևավորենիս հարկավոր է ընտրել միատարր խումբ, որտեղ ոչ մի դեռահաս անհատական ոնժիմի կարիք չի ունենա՝ կապված առողջական վիճակի հետ:

Մարզման գործընթացում կապված հիվանդությունների կամ այլ պատճառների հետ, մարզման անհատական ոնժիմն առաջարկվում է որոշակի ժամանակով: Դա որոշում է բժիշկը մարզիչի հետ մեկտեղ՝ հիմնվելով լրացուցիչ ստուգումների արդյունքների վրա:

Բնոնվածության ճիշտ չափավորումը հնարավոր է միայն բժիշկի և մարզչի ամենօրյա շփման հետևանքով:

Բժշկական ստուգումների տվյալների, ստուգողական նորմների և մրցումների արդյունքների, մարզումներից ստացած տպափորությունների վերլուծության միջոցով հնարավոր է ոչ միայն կարգավորեն դեռահասի առողջության պահպանման հարցը, այլև բարեկավել դաստիարակչական աշխատանքները:

Եթե այնուամենայնիվ, որոշակի հանգամանքների բնրումով առաջ է գալիս գերլարվածություն կամ գերմարզվածություն, ապա մարզիչը պարտավոր է նկատել դրանց զարգացման առաջին նշանները և անմիջապես խորհրդակցնել բժշկի հետ:

Հարկավոր է անմիջապես պարզն դրանց առաջացման պատճառները, որոնք կարող են լինել մեծ բնոնվածությամբ և լարվածությամբ անցկացվող մարզումների, ռեժիմի խախտման, հիգանդության կամ մարզումներից սխտնմատիկ քացակայնությունը:

Սովորաբար գնրիոնածության առաջին նշանը համարվում է քնի խանգարումը: Պատաճին դառնում է ջղագրիո, կորցնում է արագությունը, խանգարվում է շարժումների կոռորդինացիան, փոխվում է մաշկի գույնը, կարող է առաջ գալ ալարկուություն:

Ի տարբերություն տղամարդկանց, դնուահասների մոտ բողոքներ ավելի ուշ են հայտվում և սիրած մարզաձևի նկատմամբ հետաքրքրությունը կարող է չկորչել: Սա պայմանափորված է նրանց նյարդային համակարգի առանձնահատկություններով:

Լինում են դնապնը, նրբ մեծ բնոնվածությունից հետո առաջանում է զլիսացավ, զլիսապտույտ, սրտխառնոց, ցավնը սրտի շրջանում, արիթմիս և այլ երևոյթներ:

Գնրլարվածությունն ավելի հաճախ կապված է մրցակցական բնույթի մեծ և լարված բնոնվածության հետ, որը գնրագանցում է օրգանիզմի հնարավորությունները: Սա հատկապես արտսահայտվում է այն ժամանակ, երբ օրգանիզմը թուլացած է քաշի պակասեցման կամ որևէ հիվանդության պատճառով:

Ամեն դնապում, գնրլարվածության կամ գնրմարզվածության առաջին նշանների հայտնաբերումից հետո պնտը է դիմել բժշկին և նրա հետ միասին մշակել մարզման անհատական ռեժիմ:

Մարզիչ-մանկավարժի նշխատանքում մնած դժվարություններ են առաջանում պատաճինների սնուական հասունացման շրջանում: Դա բնութագրվում է նրանով, որ բարձր տեխնիկայով և ճարպկությամբ աշքի ընկնող պատաճին կարող է

կորցնել իր լավագույն կողմնը, շուտ հոգնել և կորցնել շարժումների կոռորդինացիան:

Ճիշտ չեն այն մարզիչները, որոնք հաշվի չառնելով սեռական հասունացման ֆիզիոլոգիական պրոցենները, մեծացնում են բնոնվածությունը: Դա կարող է ազդել մարզիկների տաղողության և մարզական արդյունքների հետագա աճի վրա:

Բժշկի և մարզիչ համատեղ աշխատանքը հատկապես կարևոր է ուսումնամարզական հավաքների ժամանակ: Այստեղ մեծ ուշադրություն պետք է դարձնել բնոնվածությունից հետո ընթացող վնրականգման պլոյցների ուսումնասիրմանը:

Վերջին տարիների բժշկաֆիզիոլոգիական դիտումները ցույց են տվել, որ որոշ մարզիչներ պատաճինների մարզումների ժամանակ (հատկապես 17-18 տարեկան պատաճինների) կորորեն պատճենում են ավագ ըմբիչների ուսումնամարզական գործընթացը: Շատ պատաճիններ մարզման բոլոր փուլներում պարագում են չվնրականգնված վիճակում: Իրավիճակը բարդանում է նրանով, որ նախամրցակցական գործունեության պլանները կազմելիս հաշվի չի առնվում պատաճինների ուսումնական և արտադրական բնոնվածությունը:

Պատաճնեկան հասակում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել քաշային ռեժիմին, քանի որ օրգանիզմի աճի շրջանը դեռ ավարտված չէ:

12.3. ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Բազմայա դիտարկումները ցույց են տվել, որ վնասվածքների պատճառ կարող են դառնալ ոչ ճիշտ մեթոդիկայով անցկացվող մարզումները, տարբեր տարիքի, քաշի և պատրաստվածության ըմբիչների հետ անցկացվող գոտնմարտերը, մասնակցությունը ավագ տարիքի ըմբիչների մրցումներին: Վնասվածքի պատճառ կարող են դառնալ տնխնիկական վատ

պատրաստվածությունը, իիվանդության կամ չբուժված վնաս-վածքների ժամանակ անցկացվող մարզումները կամ մրցումների պատրաստությունը, ինչպես նաև մարզչի ներկա չգտնվելը պարապունքներին, կարգապահության բազակայությունը, ան-քավարար նախավարժանքը, մարզվողների մեծ քանակը, մարզ-ման վայրի սանհիտարահիգիենիկ պահաջների չպահպանումը և այլն:

ԳԼՈՒԽ 13

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐԶԸ ՄՈԴԵԼ

Հասարակության պատմական զարգացման ընթացքում առաջացել են քազմաթիվ արհեստներ և մասնագիտություններ, որոնք կապված են անհրաժեշտ խնդիրների լուծման և կոնկրետ նպատակների կատարման հետ:

Մասնագետի մոդելը մարդու ընդհանրացված կերպար է, նրա հասարակական, մասնագիտական, գործնական և սոցիալ-հոգեբանական հատկությունների միագումարը: Մարզչի մոդելի մշակումը հեշտ գործ չէ: Մոդելի մեջ պետք է ընդգրկվեն այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ծիրքները, խառնվածքը, ինտե-լեկտը, հնտաքրքրությունները, պահանջմունքները, գիտելիք-ները, համոզմունքները, աշխարհայացքը և այլն:

Մոդելի մշակման գործընթացը չի սահմանափակվում հատկությունների նման հավաքածուի որոշմամբ: Մարզչի մոդելի ձևավորման համար անհրաժեշտ է ունենալ՝

1. նրա բարոյակամային հատկանիշների մոտավոր ցուցանիշները.

2. պատկերացում նրա մասնագիտական և մանկավար-ժական ընդունակությունների վիրաբենյալ.

3. պատկերացում սաների, գործընկերների, դեկավարու-թյան, մրցավարների հետ նրա փոխհարաբերությունների մասին:

13.1. ՄԱՐԶԸ ԱՌԱՋՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՍՁՆԵՐԸ

Մարզչի աշխատանքը հազեցած է դժվարություններով և հոգական լարվածությամբ. նրանց շրջագայություններով լի կյանքը, բազմաթիվ ուղևորությունները, սիստեմատիկ անքնո-

թյունները, անվնրջանալի հիմնախնդիրները բացասաբար են անդրադառնում առողջության վրա:

Անգլիացի մարզիչների 60 % -ը գնահատելով իրենց մասնագիտական գործունությունը նշել են, որ աշխատանքը իրենց ընտանեկան պարտականությունները մղել է նրկրորդ պլան: Իսկ նրանցից շատերի կարծիքով սպորտից իրենց մնացել են միայն հիվանդ նյարդերը:

Հարց է ծագում. ինչպիսին պետք է լինի մարզի առողջությունը:

Դասական բժշկության ներկայացուցիչները 1987 թ. առաջարկեցին մարդու առողջությունը գնահատել ֆիզիոլոգիական հինգ գործոններով, որոնք կազմում են «առողջության անձնագիրը»՝

1. մարմնի քաշը (զերծ ավելորդ քաշից).
2. զարկերակային ճնշումը (120/80).
3. խոլեստերինի քանակը արյան մեջ (150-200 մգ).
4. շաքարի քանակը արյան մեջ (անոթի՝ 4.4 մմոլ/լ, 100 գ զյուլովա ընդունելուց 2ժ հետո 65-100 մմոլ/լ).
5. լիպոլիպոտեհների (110-125 պ/մ) և գլիցերիդների (0,6-1,0 մմոլ/լ) քանակը արյան մեջ:

Ըողովորդական բժշկության մեջ «առողջության անձնագիրը» ձևավորում է ոչ այնքան ֆիզիոլոգիական հատկանիշներով, որքան բարոյաէթիկական նորմերով:

Եվ այսպես, առողջ մարդը պետք է ունենա՝

1. կյանքի հասարակական օգտակար նպատակ.
2. լավ հիշողություն, արագ մտածելակերպ, ազնվություն, համբերություն, ինքնաճանաչման և շրջապատող աշխարհը բացահայտելու ձգտում.
3. հանգիստ քուն, լավ ախորժակ.
4. մարզված ճկուն մարմին՝ առանց ճարպային ավելցուկների:

Եթեն ժողովրդական բժշկության պահանջներին ավելացնենք նաև դասական բժշկության պահանջները, ապա մարզի առողջական վիճակը պետք է համապատասխանի «առողջության անձնագրի» ինը կետերին:

Այս ամենն ապահովելու համար անհրաժեշտ է վարել առողջ ապահովակերպ. զերծ մնալ վատ սովորություններից (ծխնլ, խմել, նարկոտիկների կիրառություն և այլն), պահպանն օրիս ուցիչնալ ռեժիմ՝ այն ենթարկելով ցերեկվա և գիշերվա հաջորդականության դիմում, ճիշտ սննդն, պահպանն անձնական հիգիենայի կանոնները, կոփել օրգանիզմը և այլն:

13.2. ՄԱՐԶԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարզին անհրաժեշտ կարևորագույն հատկանիշներից հարկավոր է ընդգծել համոզվածությունը, վստահությունը, ակտիվությունը, կոլեկտիվիզմը, պատվի և պարտքի ընդգծված զգացողությունը, ինքնասիրությունը, բարյացկամությունը, պահանջկոտությունը, պատասխանատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, համեստությունը, ինքնատիրապետումը, ինքնաքննադատությունը և հաղորդակցվելու ընդունակությունը:

ԽՍՀՄ վաստակավոր մարզի Ս.Միջերը ընդգծում է մարզի արհեստավարժ գործունության հաջողությունն ապահովող հետևյալ պայմանները:

1. Սաներին հարկավոր է սիրել անկնդորեն:
2. Անհրաժեշտ է ընտրել նրանց պատրաստության միակ ճիշտ տարրերակը, այսինքն՝ հիմնական ուշադրությունը դարձնել պատրաստության ուժեղ կողմերի կատարելագործմանը և չափից դուրս ուշադրությունը շդարձնել սխալների վերացմանը: Դա կարող է առաջ բերել ուժեղ կողմերի զգալի կորուստ, ինչը սաներին կվերածի «միջակության»: Թերությունները պետք է

շտկնի ուժնի կողմերի կատարելագործման հետ համատեղ, առանց չափից դուրս կրապուրվելու սխալների ուղղմամբ:

3. Մեծ ուշադրություն պետք է դարձնել սաների տեսական պատրաստությանը: Եթե հաշվի առնենք, որ ըմբիշների գոտնմարտը ընթանում է լարված իրավիճակներում և ժամանակի սղության պայմաններում, ապա կարելի է ընդգծել, որ շատ բան կախված է ճշգրիտ և ժամանակին ընդունած որոշումներից: Նման պայմաններում տեսական պատրաստությունը կարող է դառնալ հաջողության վճռական գործոն:

4. Մարզիչը պետք է մշտապես գտնվի այնպիսի իրավիճակում, որը նրան կթենադրի նվաճելու նորանոր մարզական բարձունքներ:

5. Մարզիչ մասնագիտությունը և նրա նախասիրությունը պետք է կազմեն անբաժան միասնություն:

6. Մարզիչը պետք է կարողանա գնդեցիկ և հասկանալի արտահայտել իր մտքները:

7. Հանրահայտ մարզիկից լավ մարզիչ կարող է ստացվել միայն երկու դնապրում:

ա) եթե մարզիկը նոյնի է «ստեղծագործող»,


բ) եթե չփորձի իր աշխարհայացքը, իրեն հաջողություն քննած պատրաստության մեթոդները և միջոցները պարտադրեն աշակերտներին: Չի կարելի սաներին դարձնել սնվական պատճեն:

Ծառ կարևոր է, նրբ մարզիչը մշտապես փորձում է սովորել՝ սովորել գործընկերներից և մինչև անգամ սնվական աշակերտներից:

13.3. ՄԱՐԶԻ ԱՐԵՍՏԱՎԱՐԺ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարզիչներին կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. անձնական մարզիչներ և հավաքական թիմների մարզիչներ (գծապատկեր 16):

Գծապատկեր 16



13.4. ՄԱՐԶԻ ԱՐԵՍՏԱՎԱՐԺ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԸ

Մարզիչ արհեստավարժ գործունեության մոդելն իր մեջ ներառում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է իմանալ բարձրակարգ մարզիկների պատրաստման գործընթացում:

Հմբամարտի մարզի արհեստավարժ գործունեությունում կարելի է առանձնացնել մի քանի ուղղություններ.

1. կազմակերպչական (ֆինանսավորման, դահլիճների, մարզաբազմաների կառուցման, նյութատեխնիկական ապահովման հարցեր և այլն),

2. ուսումնական (մարզիկների, մարզիչների և մրցավարների պատրաստում),

3. մեթոդական-պրոպագանիստական (տեխնիկատակտիկական պատրաստության բարելավում, մրցումների, ցուցադրական նլույթների կազմակերպում),

4. առողջարարական և հասարակարադարական (մարզփողների առողջության ամրապնդում, շարժողական ընդունակությունների մշակում, մասնակցություն տարածաշրջանային ֆեներացիաների, հասարակական այլ կազմակերպությունների աշխատանքներին):

13.5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բարձրակարգ մարզի համարվում է այն մասնագետը, որը քաջածանոթ է մարզաձևի տեխնիկատակտիկական նրբություններին, քացարձակ ճշգրտությամբ կարող է ցուցադրել զանազան հնարքներ և նրանց համակցություններ:

Տեխնիկատակտիկական պատրաստության կառավարումն իրականացվում է քազմայա մարզման ողջ ընթացքում: Այդ ճանապարհին մարզիչը հաջորդաբար որոշում է տեխնիկական գործողությունների և տակտիկական պատրաստության միջոցների հավաքածուն, որն անհրաժեշտ է յուրացնել և կատարելագործել:

13.6. ՄԱՐԶԻ ԱՐՔԵՍՏԱՎԱՐԺ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

Մշտական ինքնակրթությունը և կուտակված գիտելիքների պաշարը մարզին հնարավիրություն են տալիս լինել նորարար, որի շնորհիվ մարզումները դարձնում են տարաբնույթ և բարձրացնում են մարզվողների հնտարքրությունը մարզումների նկատմամբ:

Քանի որ մարզիչը հաճախ օրինակ է ծառայում սաների համար, ուստի կարևորվում է նաև նրա կուլտուրական և ինտելեկտուալ մակարդակը:

13.7. ԴԱՍԻԱՐԱԿՎԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Դաստիարակչական աշխատանքները պայմանավորված են բարոյակամային, ինտելեկտուալ և էսթետիկական պատրաստության խնդիրների լուծմամբ: Խնդիրների այս խումբը համարվում է մարզական աշխատանքի ամենադժվար կողմերից մեկը: Այստեղ գլխավորը մարզվողների մոտ լայն աշխարհացքի, հնտարքրասիրության, աշխատասիրության, հայրենասիրության և այլնի ձևավորումն է:

13.8. ՊԱՏՐԱՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Մարզիչը պետք է կարողանա բավական ճշգրտությամբ կանխագուշակել սաների մարզական վարպետության աճի տևմանը: Որքան ճշգրիտ է կանխագուշակումը, այնքան ճշգրիտ է մարզման պլանը: Այստեղ պետք է հաշվի առնել ֆիզիոգիական, հոգեվան բնոնվածության դինամիկան, մարզվածության աստիճանը, մարզական արդյունքները և այլն: Բացի

դա յուրաքանչյուր մարզիկի համար պետք է կազմվի նաև մարզման անհատական պլան:

Մարզման տարեկան պլանը կազմվում է հաշվի առնելով մարզական միջոցառումների օրացուցային պլանը, ուսումնամարզական հավաքների քանակը, վերականգնողական միջոցները, հանգստի օրենքը և այլն: Տարեկան պլանը կազմելիս հարկավոր է ճշգրտորեն հաշվարկել լավագույն մարզավիճակի ձնոր բնրումը, որը պետք է համընկնի գլխավոր մրցումների հետ:

13.9. ԿԱՄԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ինչպես հայտնի է ըմբշամարտում քարձը արդյունքների նվաճումը շատ բանով պայմանավորված է ըմբիշի կամային պատրաստվածությամբ: Բազմամյա մարզումների ընթացքում մարզիկները ձնոր են բնրում դժվարությունները հաղթահարելու կարողություններ: Այստեղ շատ կարևոր է հաջողության նկատմամբ փատահության ձևավորումը: Կամային պատրաստվածությունը հանդիսանում է տեխնիկատակտիկական և ֆիզիկական պատրաստվածության վերնաշննը:

13.10. ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՎԻՃԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Նման հսկողությանը հնարավորություն է տալիս համադրել պլանավորված և կատարված բնոնվածությունը (մեծությունը, ուղղվածությունը, դինամիկան) պլանավորված և փաստացի ձնոր բնրված մարզվածությանը: Ենթով արդյունքներից մարզիչը համապատասխան փոփոխություններ է մտցնում մարզման պլաններում:

13.11. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ֆիզիկական պատրաստության գործընթացի կառավարումը մարզչից պահանջում է գիտելիքներ ըմբշամարտի բժշկակենսաբանական հիմունքների վերաբերյալ: Մարզիչը ոչ միայն պետք է ամրապնդի մարզվողների առողջությունը, այլև կատարելագործի շարժողական ընդունակությունները: Այս առումով մարզչին պետք են գիտելիքներ սպորտային բժշկությունից, պատկերացում մարզվողների տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ, ըմբշամարտում հաճախակի հանդիպող վնասվածքների պատճառների և մեխանիզմների մասին:

13.12. ՄՐՑԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Մարզչի գլխավոր խնդիրը կայանում է մարզվածության վիճակի, քաշային ռեժիմի, քնի, սննդի ռեժիմի հսկողության և մրցումների մասնակցության տակտիկայի մշակման մեջ:

Բուն մրցումների ընթացքում հարկավոր է վերահսկել մարզիկների աշխատունակության վերականգնման գործընթացները, օգնել գոտնմարտի վարման տակտիկայի ընտրության, նախավարժանքի կատարման, գոտնմարտին տրամադրվելու հարցերում և այլն:

13.13. ՄԱՐՁԿՆԵՐԻ ՇՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճիշտ ընտրությունը մեծացնում է շնորհավի նրեխանների ներգրավման և քարձրակարգ մարզիկների պատրաստման հավանականությունը:

Մարզիկների ընտրության գործընթացում կարելի է առանձնացնել նրենք քածիններ.

1. Երեխանների սպորտային կողմնորոշում (սկզբնական ընտրություն),
2. հավաքական թիմների թերզնածուների ընտրություն,
3. հավաքական թիմների կոմալնկտավորում:

13.14. ՄԱՐԶԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Մարզչի այս ֆունկցիան հատկապնս կարևորվում է քարձակարգ մարզիկների պատրաստման ժամանակ:

Այստեղ հարկավոր է մի կողմից առավելագույնս ծանրաբեռնել մարզիկներին, իսկ մյուս կողմից՝ նրանց ապահովագրել լարվածությունից և գնրմարզվածությունից:

Մարզիչը պետք է կարողանա հաջողությամբ կիրառել և համադրել աշխատունակության վնրականգնման հոգներանական, մանկավարժական և բժշկակենսաբանական միջոցները: Նա պետք է տիրապետի էներգուապահովման անրոր և անանրոր գործընթացները կատարելագործող պրոցեդուրաներին:

13.15. ՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Տեսական քարձը պատրաստվածություն ունեցող մարզիկը դառնում է մարզչի համախոհը, իսկ դա նպաստում է մարզական քարձը նվաճումների ձեռքբերմանը: Տեսական պատրաստությունը օժանդակում է նաև տակտիկական խնդիրների արդյունավետ լուծմանը, գոտենմարտի ընթացքում հաճախակի փոփոխվող իրավիճակներում ճիշտ որոշումների կայացմանը:

13.16. ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պատասխանատու մրցումներից առաջ անց են կացվում ուսումնամարզական հավաքներ: Դրանց հիմնականում մասնակ-

ցում են հավաքական թիմի թերզնածուները: Հավաքի վերջում առաջիկա մրցմանը մասնակցենու համար վերջնականորեն կոմպլեկտավորվում է հավաքական թիմը:

13.17. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ

Մարզչի կազմակերպչական գործունեությունը շատ լայն է:

1. մարզաբազաների ստեղծում.
2. նյութատեխնիկական մատակարարում.
3. վնրականգնողական կենսորունի ստեղծում.
4. մարզչական սեմինարների կազմակերպում.
5. մասնագիտացված մարզադպրոցների, մարզական թերումով գիշերօթիկ դպրոցների ստեղծում և այլն:

13.18. ԱՌԱՋՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ

Ըմբշամարտում հաճախ են պատահում կոտրվածքներ, մկանների ձգումներ և կտրվածքներ, հոդախախտումներ, արյունահոսություն, շոկային իրավիճակներ և մարզիչը պարտավոր է կատարել առաջին բժշկական օգնությունը:

13.19. ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սա մարզչական գործունեության դժվարին և շատ կարևորագույն կողմներից մեկն է: Լավ կազմակերպված մրցումները դաստիարակման անփոխարինելի միջոց են: Մրցումներն ամփոփում են ուսումնամարզական գործընթացի արդյունքները և համարվում են դրա անբաժանելի մասը:

13.20. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ

Մարզվողների ճնշող մնամամանությունը սովորում է տարբեր ուսումնական հաստատություններում:

Մարզի գլխավոր խնդիրներից մեկը սաների հաճախումների և առաջարիմության հսկողությունն է:

13.21. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Մարզի բոլոր ֆունկցիաների արդյունավետ իրականացումը պահանջում է նրանց գործունեության խստագույն հաշվառում: Սա հաշվառման մատյաններից բացի ննթադրում է նաև մարզվողների մարզական անձնագրերի առկայություն, որտեղ արձանագրվում նն բազմամյա դիտարկումները, փոփոխությունները, մրցումների մասնակցության արդյունքները և այլն:

13.22. ԳԻՏԱՄԵԹՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մարզական աշխատանքը միաժամանակ նաև ստեղծագործական գործունեություն է: Եթե մարզիչը այևս իրեն հուզող հարցեր չունի, ապա նրա աշխատանքից մեծ ակնկալիքներ չպնտք է սպասել: Անընդհատ փնտրությունները մարզական գործունեության ողջ ընթացքում պնտք է ուղնկցեն նրանց:

Ցանկալի է, որ մարզիչները պարբերաբար մասնակցեն որակավորման բարձրացման կուրսների, անցկացնեն հնտագուտություններ, գրեն հոդվածներ և այլն:

13.23. ՄՐՑԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծատ մարզիչներ փորձում են համատեղել մարզական գործունեությունը մրցավարական աշխատանքի հետ: Սա ցանկալի չէ, այն առումով, որ մարզիչը մրցավարությամբ զքաղվնելով մրցումների ժամանակ չի կարողանում լիարժեք կառավարել մրցակցական գործունեությունը, ինչը բացասաբար է անդրադառնում սաների մարզական արդյունքների վրա: Հենց այս հանգամանքը էլ կարևորում է մրցավարների պատրաստման անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր մարզիչ պնտք է կարողանա պատրաստել մրցավարներ, որոնք համապատասխան կուրսեր անցնելուց հետո կզբաղվեն մրցավարությամբ, ինչը մարզիչներին հնարավորություն կտա ամբողջությամբ կենտրոնանալ մարզական աշխատանքների վրա:

13.24. ՄԱՐԶԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարզիչը միշտ ստիպված է ընտրություն կատարել պատրաստության այս կամ այն նղանակների միջև: Բարձրակարգ մարզիկների պատրաստության գործընթացը շատ բանով պայմանավորված է այս հարցի օպտիմալ լուծումից:

Բարձրակարգ ըմբիշների պատրաստության նղանակն ընտրենիս պնտք է հաշվի առնել նրանց մրցակցական, մարզական և արտամարզական գործունեության առանձնահատկությունները: Այստեղ լուծվում են հնտելյալ խնդիրները.

1. ընհանուր և հատուկ մարզական աշխատունակության ձևավորում,

2. հատուկ մրցակցական աշխատունակության ձևավորում:

Պատրաստության նղանակն ընտրենիս պնտք է հաշվի առնել, որ մարզումից անմիջապես հետո և մարզումից որոշակի

Ժամանակ անց մարզում այսին արդյունավետությունը տարբեր է: Մասնագիտացված մարզումները շատ արագ քերում են մարզական արդյունքների աճի և կայունության, բայց զգալիորեն նվազեցնում են դրանց հետագա աճը: Եվ, ընդհակառակը, ընդհանուր պատրաստությանն ուղղված մարզումները սկզբում մեծ արդյունք չեն տալիս, բայց ամուր հիմք են ստեղծում մարզական արդյունքների հետագա աճի, կայունության և հետանկարի համար:

Քանի որ մարզական նվաճումները 50-60 %-ով կախված են ըմբիշների տեխնիկատակտիկական պատրաստվածությունից, ուստի մարզում այսին ժամանակի 50-60 %-ը պետք է հատկացնել տեխնիկատակտիկական պատրաստությանը:

Ըստիշների վարպետության բարձրացմանը զուգընթաց սկսում է մեծ նշանակություն ձեռք քերել պատրաստության անհատական նորանակը:

Հատուկ պատրաստության շրջանակներում կիրառվում են պատրաստության նրկու տարրեր նորանակներ:

1. ուժնել կողմերի կատարելագործում,
2. թույլ կողմերի աննշան ուժնեցում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ թույլ կողմերի ուժնեցումը չի նպաստում մարզական արդյունքների բարձրացմանը, բայց դրանում է ավելի կայուն: Իսկ ուժնել կողմերի կատարելագործման ժամանակ թենի մարզական արդյունքները աճում են, սակայն կայուն չեն: Ուստի յուրաքանչյուր ըմբիշի համար պետք է գտնել պատրաստության ուժնել կողմերի կատարելագործման և թույլ կողմերի աննշան ուժնեցման օպտիմալ փոխարաբերությունը:

13.25. ՄԱՐԶԱՇՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Մարզական գործունեությունում գոյություն ունեն մարզվածության հետևյալ փոխանցումները. դրական, բացասական,

միածին, բազմածին, միակողմ և երկպողմ:

Դրական փոխանցումը վկայում է այն մասին, որ կիրառվում որևէ վարժություն, արդյունքների աճ է նկատվում մեկ այլ վարժությունում, իսկ, եթե երկրորդ վարժությունում արդյունքները նվազում են, ապա այդ երկու վարժությունների միջև գոյությունն ունի բացասական փոխանցում:

Միակողմ փոխանցումը (դրական կամ բացասական) ենթադրում է փոխանցում միայն մեկ ուղղությամբ՝ Ա վարժությունից Բ վարժություն, իսկ Բ վարժությունից Ա վարժություն փոխանցում չի նկատվում: Բայց մարզական գործունեությունում բազմաթիվ են այն դեպքերը, երբ փոխանցում նկատվում է ինչպես Ա վարժությունից Բ վարժություն, այնպես էլ հակառակը: Այսպիսի փոխանցում ընդունված է անվանել երկկողմ:

Միածին փոխանցումը բնութագրվում է նրանով, որ որևէ շարժողական ընդունակության մշակման ժամանակ մեկ վարժությունը քերում է նոյն շարժողական ընդունակության արդյունքների աճի մեջ այլ վարժությունում:

Բազմածին փոխանցման ժամանակ մի շարժողական ընդունակության մշակումը նպաստում է մեկ այլ շարժողական ընդունակության զարգացմանը:

Պետք է միշտ հիշել, որ մարզվածության փոխանցումը բազմաբնույթ է և մարզի վարպետությունը կայանում է մարզման տարրեր փուլերում դրանց ճիշտ համակցման մեջ:

Այսպիսով, անդրադառնալով մարզի-մանկավարժի մոդելի նկարագրմանը անհրաժեշտ է արձանագրել, որ միայն նման մարզիշներին է հասու ապագա մարզիկների ճիշտ ընտրության կատարում, մարզման արդյունավետ գործընթացի կազմակերպում, բարձրակարգ մարզիկների պատրաստում, միջազգային արենայում մարզական խոշոր արդյունքների նվաճում, ըմբիշների մի ողջ սերնդի դաստիարակում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Վ.Բ., Մարզիկների բաշի իջնցման հիմնահարցներ, Երևան, 2000
2. Առաքելյան Վ.Բ., Մենապայքարային մարզաձևերում մարմնի բաշի կարգավորման հիմնահարցները, Երևան, «Սոս և Վոգա», 2001
3. Աթոյան Կ.Պ., Ռազմա-սպորտային մենամարտերը Հայաստանում, Երևան, 1965
4. Գալստյան Հ.Գ., Դասակարգումը, համակարգումը և տերմինաբանությունը սպորտային ըմբշամարտում, Երևան, 2004
5. Խափիրյան Մ.Ս., Օլիմպիական շարժումը և հայերը, Երևան, 1988
6. Ղազարյան Ֆ.Գ., Կուպալյան Յու.Ե., Սպորտային մարզման տեսություն, Երևան, 1980
7. Սալյան Բ.Զ., Գալստյան Հ.Գ., Մարտավարությունը սպորտային ըմբշամարտում, Երևան, 2002
8. Алиханов И.И., Техника вольной борьбы, Мос., ФиС, 1977
9. Алиханов И.И., Техника и тактика вольной борьбы, Мос., ФиС, 1986
10. Гавриленко В.А., Психологическая характеристика борьбы. Сб. Психология спорта, М., ФиС, 1953
11. Галковски Н.М., Катулин А.З., Спортивная борьба, Мос., ФиС, 1968
12. Галковски Н.М., Катулин А.З., Чионов Н.Г., Спортивная борьба, Мос., ФиС, 19
13. Геселевич В.А., Медицинский справочник тренера, Мос., ФиС, 1976
14. Дякин А.М., Юношам о борьбе, Мос., ФиС, 1966
15. Купцов А.П., Спортивная борьба, Мос., ФиС, 1978

15. Ленц А.Н. Тактика в спортивной борьбе, Мос., ФиС, 1967
17. Медведь А.В., Коцурко Е.И., Минск, 1985
18. Преображенский С.А., Вольная борьба, Мос., ФиС, 1976
19. Преображенский С.А., Борьба – занятие мужское, Мос., ФиС, 1983
20. Тотоонти И.Х., Все о вольной борьбе, Орджоникидзе, 1989
21. Туманян Г.С., Спортивная борьба, Мос., ФиС, 1985
22. Туманян Г.С., Спортивная борьба, Мос., “Советский спорт”, 1997
23. Туманян Г.С., Гожин В.В., Профессия – тренер, Мос., “Советский спорт”, 2000
24. Туманян Г.С., Гожин В.В., Соревновательная деятельность, Мос., “Советский спорт”, 2000
25. Турин Л., Борьба – спорт сильных, Мос., ФиС, 1966

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՄԲԵԱՄԱՐՏԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈԱԿԱՆԱՐԿ	3
1.1. Ըմբշամարտը հայատանում9	
1.2. Հայ անվանի ըմբիշները12	
1.3. Ազատ ըմբշամարտ15	
1.4. Ազատ ըմբշամարտը հայատանի հանրապետությունում17	
1.5. Միջազգային սիրողական ըմբշամարտի ֆեդերացիա (ՖԻՀԱ)20	
ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՏԵՐ- ՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏ ԸՄԲԵԱՄԱՐՏՈՒՄ	22
2.1. Հասկացությունների բնորոշումը, դասակագման, համակարգման և տերմինաբանության ընդհանուր նշանակությունը23	
2.2. Ազատ ըմբշամարտի տեխնիկայի դասակարգման էվոլյուցիան28	
2.3. Ազատ ըմբշամարտի տեխնիկայի դասակարգման վերլուծությունը30	
2.4. Ազատ ըմբշամարտի տերմինաբանությունը32	
2.5. Հնարքների անվանումների առաջացման կարգը35	
ԳԼՈՒԽ 3. ԸՄԲԵԱՄԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԵՆՍԱՍՄԵԽԱ- ԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	38
3.1. Տեխնիկական գործողությունների կենսամեխանիկական օրինաչափությունները38	
3.2. Հավասարակշռության պահպանումը40	
3.3. Հնարքի կատարման ժամանակ առաջացող ուժերը42	
3.4. Պաշտպանություններ46	

3.5. Հակահնարքներ48	
3.6. Համակցված հնարքներ49	
3.7. Դինամիկ իրավիճակ50	
ԳԼՈՒԽ 4. ԱԶԱՏ ԸՄԲԵԱՄԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՆ	52
4.1. Հիմնական դրույթունները52	
4.2. Ազատ ըմբշամարտի տեխնիկան կանգնած դրույթունում54	
4.3. Ազատ ըմբշամարտի տեխնիկան ծնկադիր դրույթունում102	
ԳԼՈՒԽ 5. ԱԶԱՏ ԸՄԲԵԱՄԱՐՏԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹ- ՅՈՒՆԸ	129
5.1. Մարտավարության կառուցման փուլերը132	
5.2. Հնատախուզում133	
5.3. Իրադրույթյան գնահատումը135	
5.4. Հնարքների կատարման մարտավարություն141	
5.5. Գոտեմարտի վարման մարտավարություն143	
5.6. Մրցումների մասնակցության մարտավարություն144	
5.7. Մարտավարական պատրաստության ձևերը145	
5.8. Մարտավարության ուսուցումը149	
ԳԼՈՒԽ 6. ՈՒՍՈՒՅՆԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ	153
6.1. Ըմբիշի գիտելիքները, կարողությունները և հմտությունները154	
6.2. ՈՒսուցման սկզբունքները159	
6.3. ՈՒսուցման մեթոդները և միջոցները161	
6.4. ՈՒսուցման գործընթացի կառուցվածքը165	
ԳԼՈՒԽ 7. ՄԱՐԶՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ	168
7.1. Մարզման մեթոդները168	
7.2. Մարզման միջոցները170	
7.3. Մարզման օրինաչափությունները170	
7.4. Մարզման բովանդակությունը174	

7.5. Ֆիզիկական պատրաստությունը	174
7.6. Շարժողական ընդունակությունների մշակումը	178
7.7. Տեխնիկական պատրաստությունը	189
7.8. Տեխնիկայի կատարելագործման ուղիները	192
7.9. Ըմբշի բարոյակամային հատկանիշները	197
7.10. Տնական պատրաստությունը	202
7.11. Սպորտային մարզման պարբերացումը	203
ԳԼՈՒԽ 8. ՊԱՐՍՊՄՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ	215
8.1. Տնական պարապմունքներ	215
8.2. Գործնական պարապմունքներ	217
8.3. Արտադասային (ինքնուրույն) պարապմունքներ	220
ԳԼՈՒԽ 9. ՈՒԽՈՒՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՃՎԱ ՈՒԽԸ	223
9.1. Ըմբշամարտի խմբակի կազմակերպումը	223
9.2. Ըմբշամարտի խմբակի աշխատանքների պլանավորումը	224
9.3. Ուսումնամարզական գործընթացի պլանավորումը	226
9.4. Ըմբշամարտի խմբակի աշխատանքների հաշվառումը ...	233
ԳԼՈՒԽ 10. ԸՄԲԻՇՆԵՐԻ ՔԱՇԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՐՅՅԵՐԸ	236
10.1. Մարդու նորմալ քաշը և նրա բաղադրամաները	236
10.2. Քաշային կարգների առաջացման պատմական անհրաժեշտությունը և քաշի կարգավորման հիմնահարցը	238
10.3. Քաշի իջնցման նղանակները	241
10.4. Քաշի իջնցման առաջացված նղանակը	248
10.5. Մարզիկների անձնական քաշի կարգավորման հիմնահարցները	251
ԳԼՈՒԽ 11. ՄՐՅԱԿՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	257
11.1. Նախնական մրցակցական փուլ	259

11.2. Բուն մրցակցական փուլ	261
11.3. Մրցումների համակարգը	271
11.4. Մրցումների կազմակերպումն ու անցկացումը	274
11.5. Մրցավարության կազմակերպումը	280
ԳԼՈՒԽ 12. ԴԵՌԱՀԱՍՄԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՈՒԽՈՒՄՆԱՄԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՎԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	284
12.1. Դեռահասների և պատանիների անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները	285
12.2. Բժշկի և մարզչի համատնη աշխատանքը	288
12.3. Վնասվածքների կանխարգելումը	291
ԳԼՈՒԽ 13. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՁՎԱ ՄՈԴԵԼԸ	293
13.1. Մարզչի առողջության ներկայացվող պահանջները	293
13.2. Մարզչի անհատական հատկությունները	295
13.3. Մարզչի արհեստավարժ գործունեության առանձնահատկությունները	297
13.4. Մարզչի արհեստավարժ գործունեության մոդելը	297
13.5. Տնական պատրաստվածության կառավարումը	298
13.6. Մարզչի արհեստավարժ և կուլտուրական մակարդակի բարձրացումը	299
13.7. Դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը	299
13.8. Պատրաստության գործընթացի պլանավորումը	299
13.9. Կամային պատրաստության կառավարումը	300
13.10. Մարզական գործունեության և մարզավիճակի հսկողությունը	300
13.11. Ֆիզիկական պատրաստության կառավարումը	301
13.12. Մրցակցական գործունեության կառավարումը	301
13.13. Մարզիկների տնտրությունը	301
13.14. Մարզիկների աշխատունակության վնրականգնումը և բարձրացումը	302

13.15. Տնստական պատրաստության կառավարումը	302
13.16. Ուսումնամարզական հավաքների կազմակերպումը ..	302
13.17. Կազմակերպչական հարցերի լուծումը	303
13.18. Առաջին բժշկական օգնության գուցադրումը	303
13.19. Մրցումների կազմակերպումը...	303
13.20. Հսկողություն մարզվողների ընդհանուր կրթական մակարդակի բարձրացման վրա	304
13.21. Հաշվառման և հաշվետվության անցկացում	304
13.22. Գիտամեթոդական աշխատանքների մասնակցություն	304
13.23. Մրցավարություն	305
13.24. Մարզիկների պատրաստությունը	305
13.25. Մարզվածության փոխանցումը	306
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	308

**Վ.Բ.ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հ.Գ.ԳԱԼՍՅԱՆ,
Խ.Թ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱԶԱՏ ԸՄԲԱԾԱՐԸ

(ուսումնական ձեռնարկ)

<i>Խմբագիր՝</i>	պրոֆեսոր Մ.Ս.Խապիրյան
<i>Տեխ. խմբագիր՝</i>	Ս.Գ.Գալստյան
<i>Դամակարգչային</i>	
<i>ձևավորումը՝</i>	Լ.Ա.Մեծոյանի

Ստորագրված է տպագրության 05.09.2008 թ.
Չափը՝ 60x84, 1/16: Տպագրությունը՝ օֆսեթ
19,7 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 300

Տպագրված է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական
ինստիտուտի տպարանում